THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
H. ACHARIAN INSTITUTE OF LANGUAGE

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

NEW WORDS

Volume 7

НОВЫЕ СЛОВА

Выпуск 7

Yerevan – 2022 – Ереван

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Է պրակ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Խմբագիր՝ բ. գ. դ. Վ. Լ. Կատվալյան
Գրախոս՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Գ. Թելյան

Ն 930 Նոր բառեր / Կազմողներ՝ Ա. Ս.Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ի. Մ. Մարգարյան, Ա.Ա. Մկրտումյան, Ն. Մ. Սարգսյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2022.
Է պրակ.- 260 էջ:

«Նոր բառեր» մատենաշարի հերթական պրակում ներկայացվում են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ գործածված բառեր, որոնք վկայված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում: Բառարանը կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառապաշարով հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգմանիչներին:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-9298-4-2
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2022

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառեր. Է պրակը» պարունակում է շուրջ 2000 բառամիավոր, որոնք գրանցված չեն պրակի վերջին էջում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Արվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բառարանը կազմել են Ա. Ս. Գալստյանը, Ս.Ա. Գալստյանը Գ. Կ. Հովսեփյանը, Ի. Ա. Մարգարյանը, Ա. Ա. Մկրտումյանը, Ն. Մ. Սարգսյանը:

ՀՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած.- ածական
անհնձնր. - անհանձնարարելի
արվ. – արվեստ, արվեստագիտություն
բ. - բայ
բժշկ. - բժշկական
բնստ. – բանաստեղծական
բսբ. - բուսաբանական
բրբ. - բարբառային
գ. – գոյական
գղտնտ. – գյուղատնտեսական
գրկն. – գրականագիտական
դրձվ. - դարձվածք
դիպվ. –դիպվածային
երժշտ. – երաժշտական
ժրգ. - ժարգոնային
իմ.նորբ. – իմաստային նորաբանություն
իրավ. – իրավաբանական
լեզվբ. –լեզվաբանական
խսկց. - խոսակցական
կենս. –կենսաբանական
կր. և չբ. – կրավորական և չեզոք բայ
հեգն. – հեգնական
հեռ - հեռուստատեսություն
հզվդ. – հազվադեպ
հմց – համացանց

հոգբ. - հոգեբանական
հպվ. – հապավում
հրկտր դ. – հարակատար դերբայ
մարզ. – մարզական
մկբ. – մակբայ
մսնգ. - մասնագիտական
նբ. – ներգործական բայ
նվազափղքշ. - նվազափաղաքշական
շին. – շինարարական
պատմ. – պատմական, պատմագիտական
ռազմ. – ռազմական
սնոտ. - սնոտիապաշտական
տեխ. - տեխնիկական
տնտգ. – տնտեսագիտական
փխբ. – փոխաբերական
քիմ. - քիմիական
քղք. - քաղաքական

Ա

ԱԳՐՈԱՆՏԱՌԲԱՐԵԼԱՎՈՒՄ, գ. **Ագրոանտառները բարելավելը:** Ագրոէկոհամակարգերում **ագրոանտառբարելավման** փորձը ցույց է տվել, որ մշակաբույսերի բերքատվությունը բարձրանում է .... *(ՍԹ, էջ 129):*

ԱԳՐՈԲԱՐԵԼԱՎՈՒՄ, գ. (գղտնտ.): **Հողի գյուղատնտեսական բարելավում:** Հողատարման դեմ ամենաարդյունավետ պայքարը կանխարգելումն է, ... որի համար անհրաժեշտ միջոցառումները բաժանվում են երեք խմբի՝ անտառբարելավում, ջրաբարելավում, **ագրոբարելավում** *(ՍԹ, էջ 30):*

ԱԳՐՈԲՈՒՍԱՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. (գղտնտ.): **Ագրարային և բուսական համակեցություն:**Բույսերի մոնիթորինգի համար տեղեկություններ են հավաքում բերքի .... ձևավորման հարաշարժ ցուցանիշների (կենսազանգվածի կուտակում, ..., **ագրոբուսահամակեցության** կազմի փոփոխություն և այլն) վերաբերյալ *(ՍԹ, էջ 140):*

ԱԳՐՈԼԱՆԴՇԱՖՏ, գ. (գղտնտ.): **Ագրարային լանդշաֆտ:** Բնապահպանական առումով շատ կարևոր է .... **ագրոլանդշաֆտներում** ագրոէկոհամակարգերին հատկացվող տարածքների հարցերի հստակ տարբերակումը *(ՍԹ, էջ 81):*

ԱԳՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ, ած. (գղտնտ.): **Ագրարային տնտեսությանը բնորոշ:** Չնայած անտառբարելավման **ագրոտնտեսական** բարձր արդյունավետությանը՝ այն մեր հանրապետությունում առայժմ լայն տարածում չունի *(ՍԹ, էջ 129):*

ԱԳՐՈՔԻՄԻԿԱՏ, գ. (գղտնտ.): **Գյուղատնտեսության մեջ օգտագործվող քիմիական նյութ:** Հողի բերրիության պահպան-

ման և մշակաբույսերի բերքատվության բարձրացման ամենաազդեցիկ միջոցներից են .... **ագրոքիմիկատները** .... *(ՍԹ, էջ 109):*

ԱԴԱՄԱՆԴԱԶՕԾ, ած. **Ադամանդներով զօծված՝ պատված:** Ռեքսի լայն վզափոկից կախված էին թուրքական սուլթանի օսմանիե **ադամանդազօծ** շքանշանները և թանկարժեք այն ծխատուփը, որ դարձյալ իր՝ սուլթանի նվերն էր *(Վագ., էջ 552):*

ԱԴԱՄԱՆԴԱԼԻՑ, ած. (բնստ., փխբ.): **Ադամանդներով լըցված՝ լի:** Ձեզ տամ պալատներ **ադամանդալից**// Եվ մի անսահման երկիր ու երկինք *(Սարմեն, էջ 183):*

ԱԴԱՄԱՆԴԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Ադամանդին բնորոշ կապույտ գույն ունեցող**: .... Գնացին վե՛ր ու ավելի վե՛ր, մինչև մխրճվեցին խաղաղ, **ադամանդակապույտ** երկնքի մեջ. չորս կողմն արևոտ էր ու վճիտ .... նորաբրդի պես երկար, ճերմակ շղարշով *(ՋՀ, էջ 193)*:

ԱԴԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Ադամ լինելը, նրա հատկանիշները ունենալը:** Ապա և Ադամն է իր **ադամությամբ** և դարձյալ՝ Կինը, Եվան իր կնոջական ինքնուրույնությամբ .... *(Նիկ., էջ 18):*

ԱԶԱՏԱԳՐՎԵԼԻՔ, ած. **Ազատագրվելու, ազատագրման ենթակա:** .... Կարմիր մատիտով շրջագծում էր **ազատագրվելիք** մեր հողերը Հայաստանի մեծ քարտեզի վրա *(Սուր., էջ 307):*

ԱԶԱՏԱՇԽՈՒՅԺ, ած. **Ազատ և աշխույժ:** .... Աննան դժգոհ էր **ազատաշխույժ** այն տոնից, որը կար նրա և Վեսելովսկու միջև .... *(Տոլ., էջ 279):*

ԱԶՆՎԱԿԱՆԻԿ, գ. **Անարժան, ոչ բարձրարժեք անվական:** «Ո՞վ է այդ Դյուման .... Այդ **ազնվականի՛կը,** մարկի՛զը» .... *(Մոր., էջ 310-311):*

ԱԼԵԳԻՍԱԿ, գ. **Սպիտակ գիսակներով:** .... Ավետյաց երկրի հորիզոնում տեսնում էի նրա բոկոտն-ճերմակ-**ալեգիսակ** կերպարանքը *(Նիկ., էջ 43):*

ԱԼԻՔԱՆԱԽՇ, գ. **Ալիքանման նախշ:** Նստարանի մեջքի թիկնակի **ալիքանախշերը** կապված են ջրի պաշտամունքի հետ *(Հմգ, nurblog. info):*

ԱԼՄԱՍՏԱՁԱՐԴ, ած. **Ալմաստով զարդարված, որպես զարդարանք ալմաստապատ**: .... **Ալմաստազարդ** գլխարկը գեղեցիկ գանգուրներին դրած .... այնքան էր գեղեցիկ .... *(Ուայլդ, էջ 306):*

ԱԼՅՈՒՄԻՆԱՓԱՅԼ, ած. **Ալյումինի պես փայլող**: .... Հիպնոսացածի պես բոլորը առաջ թեքվեցին՝ հայացքները սևեռած վեր՝ դեպի **այլումինափայլ** էկրանը *(ՋՀ, էջ 333):*

ԱԼՐԱՀՈՏ, գ. **Ալյուրի հոտ:** Իսկ այն ժամանակ՝ Զավենի հացատան տաք **ալրահոտի** ու քչփչոցի մեջ կանայք առաջարկել էին՝ փորից ազատվել է պետք *(Կայարան, 2015, թ.4):*

ԱԽՈՐԺԱՀԱՅԱՑ, ած. **Ախորժելի՝ հաճելի՝ դուրեկան հայացքով:** Տեսա, որ աչքերը խորիմաստ են, **ախորժահայաց** .... *(Նիկ., էջ 132):*

ԱԽՏԱԺԱՌԱՆԳԱԿԱՆ, ած. (դիպվ.): **Ախտը ժառանգելուն բնորոշ՝ հատուկ:** Ու կերակուրն այդ հին, **ախտաժառանգական** // Որդու ձեռքով պիտի հոր բազուկը ծալի *(Տոն.², էջ 75):*

ԱԽՏԱՐԳԵԼԱԿՈՒՄ, գ. **Ախտարգելում, ախտը կանխելը:** Ինձ մտահոգում է, թե արդյոք **ախտարգելակում** ձեռք բերե՞լ եմ, թե՞ ոչ *(XX դար, էջ 70):*

ԱԽՏՈՐՈՇԱՅԻՆ, ած. **Ախտորոշմանը համապատասխան:** Ժանի օրինակը **ախտորոշային** չէ, օրինաչափ չէ *(XX դար, էջ 336):*

ԱԾԽԱՄՈՒԹ, ած. **Ածուխի նման սև՝ մութ:** Մոռացված, ջնջված մի վայրում// մանկություն եմ կիսել՝// տխուր ու **ածխամութ** *(ՎՀ[1], էջ 250):*

ԱԾԽԱՊՂՏՈՐ, ած. **Ածուխից պղտորված**: .... Ամրացնող բուրումնավետ քսուքով կոկել էր **ածխապղտոր** մազերը *(ՋՀ, էջ 392):*

ԱԿԱՆՋԱՄԱՍ, գ. **Ականջի մաս՝հատված:** Երբ մարդը քորում է ծոծրակը կամ գլխի **ականջամասի** հետևը, ապա սա խոսում է անձի անվստահության մասին ... *(Տան., էջ 125):*

ԱԿՆԱԼՈՒՅՍ, գ. (բնստ., փխբ.): **Ջինջ, զուլալ: Ակնալույս** են կամարակապ աղբյուրները իմ ոստանի *(գուս. Աշ.[4], էջ 147):*

ԱԿՆՀԱՅՏԱՊԵՍ, մկբ. **Ակնհայտ կերպով, ակնհայտաբար:** Նա **ակնհայտապես** հավատացած էր ...., որ կատարում է հերոսական գործ *(Տոլ., էջ 479):*

ԱԿՈՍԱՇԻԹ, գ. (գղտնտ.): **Ակոսի շիթ, բարակ՝ նեղ շերտ**: Փոքր **ակոսաշիթով** ջրելիս ջրման ժամանակը թեև երկարաձգվում է, բայց ջուրը լավ է ներծծվում, և հողատարումը կանխվում է (*Սաֆ., էջ 50*):

ԱԿՈՒՆԹԱԶԱՐԴ, գ. (արվ.): **Ակունթներով (խոշոր տերևներով) զարդ:** Եվ ինչպես **ակունթազարդերը,** սրանք ևս իրենց բաց երանգներով փայլփլում են կանաչի ու կապույտի մուգ գույնի վրա *(Հակ., էջ 42):*

ԱՂԱՅԱՎԱՅԵԼ, ած. **Ինչպես վայել է աղային, աղայանման, ինչպես կվայելեր աղային:** Նա **աղայավայել** կյանք էր վարում .... *(Մոր., էջ 538):*

ԱՂԱՐՏՈՒՆ, ած. (հին) **Արհամարհական:** Լսելով Աննայի ձայնը .... անդուրեկան դեմքով և **աղարտուն** արտահայտությամբ անգլուհին .... մտավ դռնից .... *(Տոլ., էջ 259):*

ԱՂԲԱԽԱՐՈՒՅԿ, գ. **Աղբի խարույկ, վառվող աղբակույտ:** Սանձերը, ակնակապերը, քթապարկերը շպրտվեցին բակում վառվող **աղբախարույկի** մեջ *(Օրուել, էջ 22):*

ԱՂԻՃԱՆՈՑ, գ. **Աղջիկների՝ դեռատի կանանց հավաքատեղի:** «Այ այստեղ **աղիճանոց** է» *(Նիկ., էջ 39):*

ԱՂՄԿԱՀԵՂՁՎՈՂ, բ. (դիպվ.): **Աղմուկից խեղդվող՝ հեղձվող:** .... Որպես մի ջութակ **աղմկահեղձվող** .... *(Տոն.[1], էջ 6):*

ԱՂՅՈՒՍԱԿԱԴԱՇՏ, գ. (արվ.): **Աղյուսակների զբաղեցրած տարածք:** Քիվի հետ միասին գլխազարդերի բարձրությունը գրեթե հավասար է համաբարբառի **աղյուսակաղաշտին,** այսինքն ամբողջ խորանը բաժանվում է երկու համաչափ հատվածների *(Հակ., էջ 39):*

ԱՂՈԹԱՇՈՐ, գ. **Աղոթքի դեպքում օգտագործվող շոր:** Բոլորը ոտքի կանգնեցին և **աղոթաշորերը** գլխներին գցելով՝ այնպես, որ աչքերը ծածկվեն, սկսեցին ծոր տալով կրկնել կանտորի արտասանած խոսքերը *(Վագ., էջ 80):*

ԱՂՈԹԱՊԱՐ, գ. **Աղոթելու արարողություն հիշեցնող պար:** .... Ես փոքրիկ տեղում կարողանում եմ պարել իմ մեծ պարը: **Աղոթապար** է: Հայուհիների թևապարը չկա *(Նիկ., էջ 108):*

ԱՂՋՆԱԿԱՅԻՆ, ած. **Փոքրիկ աղջիկների, նրանց բնորոշ՝ հատուկ հատկանիշներով, այդպիսիք ունեցող:** .... Հարկ եմ համարում զիջողամիտ լինել այդ **աղջնակային** հավերժահարսերի կապակցությամբ .... *(XX դար, էջ 168):*

ԱՂՎԱՄԱԶԻԿ, ած. **Նուրբ աղվամազով պատված**: Բայց ամենաշքեղը պոչն էր: Հաստլիկ, փափլիկ, **աղվամազիկ**… *(Դար., էջ 76)*:

ԱՂՎԵՍԱՀԱՄ, գ.(մսնգ.): **Արատ, որը բնորոշ է խաղողի կոնկրետ տեսակից ստացված գինիներին:** Մորու համն ու հոտը հիշեցնող **աղվեսահամը** դիտվում է խաղողի հիբրիդային սորտերից պատրաստած գինիներում *(Դասագիրք, էջ 260)*:

ԱՂՎԵՍԱՌՐՍ, գ. **Աղվեսի որս: Աղվեսաորսը** անխոհեմ հաճույք էր, և դրա մոդայամոլ գրավչությունը չէր արդարացնում սեփական անձը վտանգի ենթարկելը *(ՋՔ, էջ 154)*:

ԱՃՅՈՒՆԱՇԱՂԱԽ, ած. **Աճյունով՝ աճյունի հետ շաղախված**: .... Երբ բոլոր նրանք, ովքեր ...., շտապում են մայթերով, սոսկ ոսկորներ կլինեն **աճյունաշաղախ** .... *(Վուլֆ, էջ 22)*:

ԱՄԲՈԽԱՀԱՃ, ած. **Ամբոխին հաճո:** Հայ քաղաքական պատմության մեծագույն պոպուլիստն ու ***ամբոխահաճ*** կերպարն է *(Հմգ, livenews.am)*:

ԱՄԲՈԽԱՑՈՒՄ, գ. **Վերածում ամբոխի:** Ահավորը թուրքի **ամբոխացումն** է, առանձին թուրքը նույնիսկ կարգին մարդ է.… *(Հմգ, Lur.am. 19.10.2021)*:

ԱՄԵՀԱՉԱՓ, ած. **Հսկայական չափեր ունեցող:** .... Մի **ամեհաչափ** ու ամրակուռ նավ էր ոտնատակ տալով անցել *(ԱԱ, էջ 166)*:

ԱՄՊԱԳԻԾ, գ. **Ամպի՝ ծխի գծանման շերտ:** Ծայրին հայտնվեց նետ-ինքնաթիռը, որն իր հետևից ձգում էր **ամպագիծը** *(Բակուր, էջ 225)*:

ԱՄՊԱՇԵՐՏ, գ. **Ամպի շերտ:** Քիչ անց մի երկար ու ձիգ **ամպաշերտ** դուրս էր հոսում ձյունապաշտ դաշտից *(Բակուր, էջ 224):*

ԱՄՊԱՊՆԱԿ, գ. **Ամպեղեն՝ ոչ իրական պնակ: Ամպապնակների** փոխարեն թղթապանակներ (մանեթներ), պնակներ, դրամապանակներ ու կենացատու, կենացասաց ըմպանակներ, ըմպանակներ, ըմպանակներ *(Նիկ., էջ 74):*

ԱՄՊՈՒՄ, գ. **Ամպի վերածվելը:** Ծովափի երկայնքին գորշ կապտավուն երիզը հենց այդ է երևի՝ այդ անդադրում տիտանական երկունքը փլուզումներով, ջրի ահռելի ցայտքերով, ջրափոշու **ամպումներով** *(Սուր., էջ 227):*

ԱՄՐԱՀԱՏԻԿ, ած. **Ամուր հատիկներով**: **....** Մարագից դեպի շտեմարանի նախասենյակն էր տանում պարկերը՝ լի ցորենով, **ամրահատիկ** և պինդ, կարմիր ոսկու երանգի *(Շոլ., էջ 255):*

ԱՄՐԱՀՈՂ, գ. **Ամուր՝ մշակման համար ոչ պիտանի հող:** - Չենք ուզում այդ **ամրահողը**: - Ինչո՞վ պիտի վարենք: - Փափուկ հող տվեք *(Շոլ., էջ 298):*

ԱՄՐՈՑԱՆՄԱՆ, ած. **Ամրոցի նմանություն ունեցող:** Հետո էլ, ինչպես բոլորը, ասես մերկացվելիք հանցավորի նման, կանգնում էր իր **ամրոցանման** խցիկում …. *(Սուր., էջ 261):*

ԱՄՐՈՑԱՏԻՊ, ած. **Ամրոցի նմանվող**: Երկար տարիներ է, ինչ մշտապես փակված էր իր **ամրոցատիպ** տանը .... *(Ռուշդի, էջ 8):*

ԱՅԳԱՓԱՅԼ, ած. (բնստ.): **Այգաբացին փայլող**: Եվ այնժամ // Ինչպիսի՜ **այգափայլ** արցունքներ // Պիտի հղանան մեր աչքերը ....*(Տոն.[1], էջ 17):*

ԱՅԳԵՄՇԱԿՈՒՄ, գ. **Այգու մշակում, այգին մշակելը՝ մշակելու գործընթացը**: Նյութեր են պաշտպանված նաև այգեգործության մեջ եղած սովորությունների, **այգեմշակման** ձևերի... և այլ հարցերի վերաբերյալ *(Հակ., Սիմ.,էջ 36):*

ԱՅՍԲԵՐԳԱՏԻՊ, ած. **Այսբերգի ձև ունեցող**: .... Անմիջապես աչքիս առաջ է գալիս «Հենզելի ու Գրետելի» կախարդի տունը՝ լցված .... **այսբերգատիպ** ադամանդներով .... *(Աթք., էջ 435):*

ԱՅՑԵԹՌԻՉՔ, գ. (բնստ.): **Թռչելով այցելելը՝ մոտենալը:** Տե՛ս ԵՐԿՆԱԾԱՐԻՐ-ի օրնակը:

ԱՆԱՆՈՒԽԵ, ած. **Անանուխից պատրաստված**: Հենց այդտեղ ննջած է կոնյակի շիշն ու ձկների .... տեսքով ծաղկավոր **անանուխե** քաղցրաբլիթներով կողմ թեքված կապոցը .... *(ԿՎ, էջ 174):*

ԱՆԱՌԱԿԱՎԱՅՐ, գ. **Անառականոց:** Գրիգետուհին .... Փարիզի բոլոր **անառակավայրերում** պարում էր ուսանողների հետ .... *(Մոր., էջ 250):*

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԵԼ, նբ. **Անասուններին բուժել:** .... Երբեմն գնում էր, ինչպես ինքն էր ասում, **անասնաբուժելու**,- բժշկելու որևէ մեկի հիվանդացած կովը կամ ոչխարը *(Շոլ., էջ 229):*

ԱՆԲՆԱՋՆՋԵԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Անբնաջնջելի լինելը, բնաջնջելու անհնարինություն:** Նյութի **անբնաջնջելիություն** *(Տոլ., էջ 493):*

ԱՆԳԼԻԱՄԵՏ, գ. **Անգլիականին միտված:** Կայսրության ֆինանսական վիճակն այնքան լի էր վտանգներով, որ Ջավիդն ու **անգլիամետ** նոր մեծ վեզիր Հաքքը Փաշան հետ գնացին .... *(ՋՔ, էջ 89):*

ԱՆԴԱԼԻՍԱՅԻՆ, ած. (գղտնտ.): **Այնտեղ, որտեղ պիտի անդալիս կատարվի**: Տնկարանի **անդալիսային** դաշտում տընկում են մայր բույսերը .... (*Սաֆ., էջ 57*):

ԱՆԴՐՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ, ած. **Մայր ցամաքից անդին**: Պարզ է, որ վայրէջք է կատարել որևէ **անդրմայցամաքային** լայներ, որը մեկ ժամ հետո կշարունակի թռիչքը *(Բեեկ., էջ 5)*:

ԱՆԴՐՅԱ, ած. **Այն կողմում գտնվող, անդրենական:** Երբ երկիրն է քեզ արդեն ճանաչում, // Աճում են հոգուդ թևերն **անդրյա** .... *(Տոն.[4], էջ 22)*:

ԱՆԸՆՏՐԱՐԺԱՆ, ած. **Ընտրելու ոչ արժանի:** .... Մարդիկ դժկամորեն են այդ բառերն ընդունում որպես անարժանահավատ, **անընտրարժան**, շինծու *(Ռուշդի, էջ 402)*:

ԱՆԾԱՂՐԵԼԻ, ած. **Որը՝ որին չի կարելի ծաղրել:** Ո՞վ կարող էր գուշակել, որ .... քսաներորդ կոչված դարում կլինի սովետական երկիր ...., որի պորտում նստած կլինի ահեղ **անծաղրելին,** բոլորի հայրը ... *(Սուր., էջ 101-102)*:

ԱՆԿԵՂԾՈՒՀԻ, ած. (դիպվ.): **Անկեղծ աղջիկ, անկեղծություն անող աղջիկ:** Հետո **անկեղծուհիները** խոստովանելու էին, որ իրենց ձեռ-մեռ է գցում, իսկ բերանփակները **անկեղծուհիներին** թեթև բշտելու էին *(Նիկ., էջ 25)*:

ԱՆԿՅՈՒՆԱԿԵՏ, գ. **Հայեցակետ, տեսանկյուն, մոտեցում:** .... Խոուին .... Ռուզվելտների ընտանիքին նայում էր իր հիմնական նպատակի՝ Ֆրանկլինին պրեզիդենտ դարձնելու **անկյունակետից** *(Յակ., էջ 133)*:

ԱՆԿՅՈՒՆԱՎԱՆԴԱԿ, գ. (արվ.): **Անկյունների վանդակաձև զարդամոտիվ:** .... Զույգ պարանի խաչաձև օղակահյուս-

վածքը Թորոս նկարիչն օգտագործել է գրեթե բոլոր խորանների գլխազարդերի **անկյունավանդակներում** *(Հակ., էջ 42):*

ԱՆԿՈՂՆԱՐԱՆ, գ. **Անկողնասենյակ:** Քո մտքում անգամ մի անիծիր թագավորին, և քո **անկողնարանում** մի անիծիր հարուստին *(Շախ., էջ 139):*

ԱՆՀԱՐԻՐՈՐԵՆ, մկբ. **Անհարիր կերպով, անհարիրաբար:** - Նա հիմա կգա,- ասում էր Դոլլին **անհարիրորեն՝** չկարողանալով սուտ ասել *(Տոլ., էջ 455):*

ԱՆՁՆԱԿԱՆԱՑՆԵԼ, բ. **Անձնական դարձնել:** .... Սրանով ուզում էին **անձնականացնել** Գրիգոր Լուսավորչի անունը և ցույց տալ, որ սուրբ առաքյալների հետ Հայ եկեղեցին ոչ մի կապ չունի.... *(ԱԳ, էջ 118):*

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՐԵՆ, մկբ. **Անձնասպան կերպով**: .... **Անձնասպանորեն** կտրում է իր հոգևոր զարկերակը *(ՎԱ, էջ 51):*

ԱՆՁՐԵՎԱԳԻԾ, գ. **Անձրևակաթիլների գիծ՝ իրար հաջորդող գծանման շարք:** Քամին փորձում էր քշել, տանել անձրևը: Անձրևակաթիլների գծերը թեքվեցին: .... Քամին դադարեց: **Անձրևագծերն** ուղղվեցին *(Բակուր, էջ 31):*

ԱՆՁՐԵՎԱԳՐՈՇ, ած. **Անձրևների նման հորդ գրոշ(ներ):** Աստծո շողաշեղջերի դիմաց՝ ոսկիներ, **անձրևագրոշների** դիմաց՝ արծաթեղեն (*Նիկ., էջ 74):*

ԱՆՁՐԵՎԱԹԱՆՁՐ, ած. **Անձրևով ծանրացած՝ թանձրացած**: **Անձրևաթանձր** մառախուղների ետևում .... *(ՎՀ², էջ 291):*

ԱՆՁՐԵՎԱԼՈՂ, գ. **Հորդառատ անձրևի տակ թրջվելը՝ լողանալը:** Չգիտեմ, կարճ թե երկար տևեց **անձրևալողի** մեր այդ խրախճանքը, հանկարծ երկինքը բացվեց կապույտ-կապույտ .... *(Սուր., էջ 244):*

ԱՆՁՐԵՎԱՎԻՐՈՒՍ, գ. **Անձրևային՝ անձրևների միջոցով տարածվող վարակիչ հիվանդությունների հարուցիչ:** …. Նոր ստեղծված **անձրևավիրուսները** կանեն իրենց գործը *(Բակուր, էջ 92):*

ԱՆՁՐԵՎԱՏԵՆՉ, ած. **Անձրև տենչացող:** Եվ … այնպես եմ խշշում, այնպե՛ս եմ խշշում, որ … **անձրևատենչ** դիցուհու՝ ծառի՛ եմ նմանվում *(Նիկ., էջ 55):*

ԱՆՃԱՐԱԿՈՐԵՆ, մկբ. **Անօգնական, անսփոփ կերպով**: … Նա ժամեր շարունակ արտասվել էր հուսաբեկ, **անճարակորեն** տխուր …. *(ԱԻՊ[1], էջ 111):*

ԱՆՄԱՆԵՎՐԵԼԻ, ած. **Մաններելը՝ այլ կերպ գործելը անհնար:** Կան բաներ մեր կյանքում, որ անշրջանցելի, **անմաններելի** ու անփոփոխելի են *(Նիկ., էջ 107):*

ԱՆՄՈՌՈՒԿԱԳՈՒՅՆ, ած. **Անմոռուկի գույն ունեցող**: Ծովի **անմոռուկագույն** կապույտը վերաճեց մուգ կարմրագույն խավարի …. *(Աթք., էջ 345)*:

ԱՆՈՉՆՉԱՆԱԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Չոչնչանալը, ոչնչանալու անհնարինություն, անոչնչանալի լինելը:** Նախասկզբնական տարերային մատերիալիզմի բովանդակությունը եղել են պատկերացումները աշխարհի մասին՝ որպես մի անվերջանալի հոսանքի, որը չունի ոչ սկիզբ, ոչ վերջ, տիեզերքի **անոչնչանալիության** մասին …. *(Շախ., էջ 77):*

ԱՆՎԱՆԱՊԻՏԱԿ, գ. **Անունը կրող պիտակ**: Եվ մշտապես անբաժան էր բարձրակարգ գրքից, նույնիսկ անկողնում պառկած, երբ վրան ոչինչ չկար՝ բացի Յոսարյանից ու Դորի Դազի **անվանապիտակից** *(ՋՀ, էջ 94)*:

ԱՆՎԱՇՅՈՒՂ, գ. **Անիվի շյուղը:** .... **Անվաշյուղերի** մեջ ծածանվում էր ճակնդեղի տերևուքը *(Հանդէ[1], էջ 102):*

ԱՆՏԱՌԱԿԱՆԱՉ, ած. **Անտառին բնորոշ կանաչ գույն ունեցող**: .... Հռհռաց նա՝ գոհունակությամբ ափահարելով սպայական բաճկոնի լայնկեկ, **անտառականաչ** փեշերը *(ՋՀ, էջ 373):*

ԱՆՏԱՌԱՇՈՒՐԹ, գ. (փխբ.): **Անտառի եզր՝ ծայրամաս:** Մինչ այդ բլուրներ էին, գետ, արձակ հորիզոնը՝ անհամաչափ **անտառաշուրթով** *(Դով., էջ 151):*

ԱՆՏԱՌԱՐԴՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. (հպվ.): **Անտառարդյունաբերության տնտեսություն:** Տուրբազայի բանվորներն էին, հոգեբուժարանի սանիտարներն ու **անտառարդտնտեսության** ձիապանները *(Դով., էջ 217):*

ԱՆՏԱՌՄԵԼԻՈՐԱՏԻՎ, ած. (գղտնտ.): **Անտառհողաբարելավմանը վերաբերող:**.... Գրեթե անհնար է հակաէրոզիային, **անտառմելիորատիվ** միջոցառումների իրականացումը .... *(ՍԹ, էջ 37):*

ԱՆՑԱԲԱԿ, գ. **Բակ, որտեղով մի տեղից անցնում են մյուսը:** Հետո **անցաբակերով** հասանք տաքսու կանգառ *(Դով., էջ 190):*

ԱՆՑՈՂԱԿԻՈՐԵՆ, մկբ. **Անցողակի կերպով, անցողակիաբար, հարևանցիորեն:** .... Լյուբիշկինն **անցողակիորեն** բաց էր թողել մի նախադասություն *(Շոլ., էջ 219):*

ԱՆՑՈՒՇԱՐԺ, գ. **Անցուդարձ, գնալ-գալ:** Արջերը քաշվել են հերվա որջերի մեջ՝// անխոս դուրս մնալով **անցուշարժերից** *(ՎՀ[2], էջ 140):*

ԱՆՈՒՐԵՔՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Անհայտություն:** .... Ու մարմնամաշկող հուշի կեռերին // Նեռն հոգին մեր դեռ որպես նյութ ունի // **Անուրեքության**, որ Սիրտը թեքի .... *(Տոն.[4], էջ 18):*

ԱՆՓՐԿԱՏՈՒ, ած. (բնստ.): **Փրկություն չտվող:** Սեր եմ հայցում անզոր մուրացկանի նման,// Ու փրկություն տենչում **անփրկատու** ափից *(ԳՋ, էջ 109):*

ԱՇԽԱՏԱԲԱՇԽԻՉ, ա., գ. **Աշխատանքները բաշխող՝ կատարողներին հանձնարարող (անձ):** Հենց այդտեղ էլ խմբվել էին **աշխատաբաշխիչի** կողմից խոտ կրելու նշանակված կոլխոզնիկները *(Շոլ., էջ 184):*

ԱՇԽԱՏԱԹՈՂ, ած. **Աշխատանքը թողած՝ չունեցող:** Ստամբուլում ծագած հեղափոխության շնորհիվ այս **աշխատաթող** կյանքը շատ ավելի բազմազբաղ դարձավ *(ՋՔ, էջ 82):*

ԱՇԽԱՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Աշխատապարտույթ, իբրև պարտույթ կատարվող աշխատանք:** Ընդհանուր **աշխատապարտության** վերաբերյալ օրենքը .... *(Յակ., էջ 653, ծնթ.36):*

ԱՇԽԱՐՀԱՐԱՐՈՒՄ, գ. **Աշխարհաստեղծում:** .... Քանզի ամեն պահ հրամցնում է օձը մեզ խնձոր,// Ու դեռևս չի ավարտվում գործը **աշխարհարարման** *(Տոն.[2], էջ 40):*

ԱՇԽԱՐՀԻԿԱՑՆԵԼ, բ. **Աշխարհիկ դարձնել:** .... Քրիստոնեությունը **աշխարհիկացրեց** սրբազնությունը *(Ակ, էջ 104)*:

ԱՇՆԱՆԱԴԵՄ, գ. **Աշունը մոտենալու ժամանակը:** .... Միայն **աշնանադեմին** են փայլում և ստանում եղյամի հպարտ սպիտակություն *(Շոլ., էջ 368):*

ԱՇՏԱՐԱԿԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Աշտարակի տեսք ունեցող:** Ուրարտական մեհենագրության մեջ ամենից շատ կցա-

գրեր են կազմվել **աշտարակատեսք** հիերոգլիֆներով *(Մով.[1], էջ 35)*:

ԱՊԱԱԷՐԱՑԻԱ, գ. (մնգ.): **Ապաօդավորում՝ օդի հեռացում հեղուկից:** .... Այդպիսի մշակման դեպքում տեղի է ունենում **ապաաէրացիա** .... *(Դասագիրք, էջ 308)*:

ԱՊԱԱԷՐԱՑՈՒՄ, գ. (մնգ.): **Ապաօդավորելը:** .... Գինիների մշակման տեխնոլոգիական սխեման բաղկացած է հետևյալ փուլերից՝ միաժամանակյա սոսնձումից, խառնումից, տաքացումից, սուլֆիտավորումից, **ապաաէրացումից** և տաք շշալցումից *(Դասագիրք, էջ 308)*:

ԱՊԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. **Ոչ առասպելական համարելը:** .... Բուրժուական որոշ գիտնականներ .... գտնում են, որ հին փիլիսոփայության պատմությունը կարելի է մեկնաբանել որպես նրա **ապաառասպելականացման** պատմություն *(Շախ., էջ 51)*:

ԱՊԱԱՌԱՍՊԵԼԱՑՈՒՄ, գ. **Առասպելական վիճակից հանելը, առասպելներին իրական մեկնաբանություն տալը:** .... «**Ապաառասպելացման** հարցերը» գրքում .... հեղինակները կրոնական հավատը փրկելու ուղիներ են որոնում *(Շախ., էջ 142)*:

ԱՊԱԲԱՆԱԽՈՀԱԿԱՆ, ած. **Բանախոհությանը ոչ հատուկ**: Բայց նա բանականությունը հանձնեց **ապաբանախոհական** դողերոցքի ցնցումներին .... *(Ակ, էջ 192)*:

ԱՊԱԴԻՑԱԲԱՆԱՑՈՒՄ, գ. **Դիցաբանությունից զատելը, դիցաբանական բնույթից զրկելը:** Փիլիսոփայությունը ձևավորվում էր կրոնական հայացքների դեմ մղված պայքարում, նպաստելով դրանց մասնակի **ապադիցաբանականացմանը** *(Շախ., էջ 75)*:

ԱՊԱԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ, գ. **Որևէ բանի (ալկոհոլ նն) ազդեցությամբ՝ օգտագործելուն հաջորդող թունավորումը չեզոքացնելը**: Նրանց ականջներով, բերանով, քթով օդը թափանցում էր թոքերը, և ... թեթևություն և ալկոհոլային **ապաթունավորման** զգացում էր տարածվում մարմիններում *(ԱԻՊ[1], էջ 191)*:

ԱՊԱԿԵՍԱՐՔ, ած. **Ապակիներից սարքված՝ պատրաստված:** .... **Ապակեսարք** պանելների ցոլքը արտասովոր լույս էր սփռել *(Յակ., էջ 663)*:

ԱՊԱՀՈՎԱՎՃԱՐ, գ. **Ապահովագրական վճար:** «Նյու Յորք լայֆ ինշուրենս» ընկերությունը կատարել է առաջին **ապահովավճարները** *(Հմգ, azatutyun.am)*:

ԱՊԱՄԱՐՄՆԱՎՈՐՎԵԼ, բ. **Մարմնական վիճակի վերափոխվել**: .... Նույն հնամենի աստվածն է՝ **ապամարմնավորված** .... *(Ակ, էջ 176)*:

ԱՊԱՄԱՐՄՆԱՑՈՒՄ, գ. **Մարմնականից վերացում:** Այն խորհրդանշում է .... **ապամարմնացումը** *(Ակ, էջ 174)*:

ԱՊԱՇԱՄՊԱՅՆԱՎՈՐՈՒՄ, գ. (մնգ.): Բացատրությունը օրինակում: Դրա հետևանքով տեղի կունենա **ապաշամպայնավորում**, շամպայնավորմանը հակառակ գործընթաց *(Դասագիրք, էջ 179)*:

ԱՊԱՈԳԵՂԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ոգեղենությունից զրկված լինելը:** .... Ո՛չ վաթսունական-ութսունականների մարդկանց **ապաոգեղենությունն** ի զորու գտնվեց ճնշելու Հեբելի ու Նիցշեի առաջխաղացումը, ո՛չ էլ .... *(ԱԱ, էջ 275)*:

ԱՊԱՍՈՒԼՖԻՏԱՏՈՐ, գ. (մնգ.): **Ապասուլֆիտացման համար կիրառվող սարք:**Մեթոդներից մեկն է **ապասուլֆիտատոր-**

ների կիրառումը, երբ գործընթացն իրագործվում է տաքացած հյութի ուժեղ օդահարումով *(Դասագիրք, էջ19)*:

ԱՊԱՍՈՒԼՖԻՏԱՑՈՒՄ, գ. (մսնգ.): **Գինուց ծծմբային թթվի հեռացումը:**Ծծմբային թթվի ավելորդ քանակության հեռացման համար **ապասուլֆիտացման** զանազան մեթոդներ են կիրառվում *(Դասագիրք, էջ19)*:

ԱՊԱՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼ, նբ. **Ֆինանսավորումը դադարեցնել:** …. Պետության կողմից ֆերմերական պարտքերը **ապաֆինանսավորելու** ուղղությամբ …. *(Յակ., էջ 266)*:

ԱՊԽՏԱՄԻՍ, գ. **Ապխտած միս: - Ապխտամիս** կցանկանայի՞ք, - հարցրեց մատուցողը *(Դով., էջ 32)*:

ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ, ած. **Ապրանքային և նյութական:** Ընկերության **ապրանքանյութական** արժեքների անալիտիկ և սինթետիկ հաշվառում չի վարվում *(Հմգ, petekamutner.am)*:

ԱՊՐԻԼՄԵԿՅԱՆ, ած. **Ապրիլի մեկին բնորոշ՝ հատուկ**: Նման **ապրիլմեկյան** կատակները նրա մոտ չեն անցնի *(Հանդքե[1], էջ 146)*:

ԱՌԱԾԱԿԵՐՏ, ած. **Առածներ կերտող՝ ստեղծող:** Հին հույների մոտ շատ զարգացած էր **առածակերտ** պոեզիան, որը ասացվածքների միջոցով շարադրում էր կյանքի իմաստության կանոնները *(Շախ., էջ 281)*:

ԱՌԱՁԳԱԹԵԼԻԿ, գ. **Առաձգական թելիկ**: Զախ ոտքիս բթամատի արանքում մի ծիպուկ բանալի հարմարացրի, մազի **առաձգաթելիկով** ամրացրի … *(Նիկ., էջ 50)*:

ԱՌԱՆՁՆԱՆՇԵԼԻ, ած. **Առանձնապես նշելի: Առանձնանշելի** են նաև ֆիդայիներին կերպագծող տարերային պատկերները *(ԳԹ, 22.04.2022)*:

ԱՌԱՆՁՆԱՑՈՒՑԻՉ, գ. (մսնգ.)։ **Խաղողի քամվածքից կորիզները առանձնացնող սարքավորում**։ Մամլված քամվածքից խաղողի սերմերի ՕՎԿ-2 **առանձնացուցիչի** միջոցով առանձնացվում են խաղողի սերմերը *(Դասագիրք, էջ 321)*։

ԱՌԱՆՑՔԱՄԱՍ, գ. (տեխն.)։ **Առանցքի մաս։** Վերջապես …. ստացվեց երկար սպասված գերդիմացկուն պողպատը և երկու քարաջարդ մեքենայի համար նոր **առանցքամասեր** պատրաստեցինք, որոնք շատ դիմացկուն դուրս եկան *(Բեկ., էջ 163)*։

ԱՌԱՋՆԱՀԵՐԹԵԼ, բ. **Առաջնահերթ դարձնել։** Անհրաժեշտ է տնտեսական շահերը ոչ թե **առաջնահերթել**, այլ համաձայնեցնել բնապահպանության գերակա խնդիրներին *(ՍԹ, էջ 3)*։

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՐԵՆ, մկբ. **Որպես առասպել, առասպելի նման, ինչպես առասպելը։** «Նա **առասպելաբանորեն** հանդես է գալիս յոթ իմաստունների մեջ, գործնականորեն՝ Սոկրատի մեջ» (մեջբերում Կ.Մարքսից) *(Շախ., էջ 283)*։

ԱՌԱՍՊԵԼԱԲՆՈՒՅԹ, ած. **Ինչպես նկարագրվում են առասպելներում, առասպելների բնույթ ունեցող՝ բնույթով։** Կան նաև փոքր-ինչ երկար մարմնով և արծվի գլխով կենդանիներ՝ վզերը միահյուսված, կենդանաթռնական **առասպելաբնույթ** պատկերներ …. *(Հակ., էջ 23)*։

ԱՌԱՍՊԵԼԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Առասպելները գործելու՝ իրականում գոյություն ունենալու գործընթացը։** Նա գրեց դիսերտացիա …. կոչ անելով վերադառնալ առասպելագործություն, «լռության ու անդորրի» սրբազան ժամանակներին …. *(Շախ., էջ 35)*։

ԱՌԱՍՊԵԼԱԶԵՐԾՈՒՄ, գ. **Առասպելազերծելը, այն հերքելը, ժխտելը, դրան այլևս չհավատալը:** Երկնքի **առասպելազերծումը** …. չէր բացառում այն, որ մարդիկ դրան հավատում էին որպես մի գերբնական ուժի …. *(Շախ., էջ 187):*

ԱՌԱՏԱՍՆՈՒՆԴ, ած. **Առատ սնունդ ունեցող:** …. Ջրային էկոհամակարգն անցնում է էվտրոֆ (**առատասնունդ,** ծերացող) վիճակի …. *(ՍԹ, էջ 58)*:

ԱՌՆԵՏԱԲՈՒՅՐ, ած. (դիպվ.): **Առնետի բույր ունեցող**: Պետք է իջներ սովորական բնակելի տան **առնետաբույր** ու խավարասերներով լի գետնահարկում տեղակայված նոտարական գրասենյակը …. *(ԱԳ, էջ 44):*

ԱՍԵՂՆԱՀԱՐԵԼ, բ. **Ասեղներով հարվածել**: …. Կարծես **ասեղնահարում** էին …. *(Լեմ, էջ 119):*

ԱՍՏԻՃԱՆԱԹՌԻՉՔ, գ. **Աստիճանաձև թռիչք**: Աղջիկը մագլցել էր հինգ կտրուկ **աստիճանաթռիչքներով** *(ՋՀ, էջ 371)*:

ԱՍՏՂԱԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (պատմ.): **Աստղերի դիրքի, շարժմամբ մեկնաբանվող աստվածաբանություն:** Ժ. Ֆոյերբախը գրել է. «Հոնիական բնափիլիսոփայության ջրի մեջ հանգավ հեթանոսական **աստղաաստվածաբանության** ջահը» *(Շախ., էջ 29):*

ԱՍՏՂԱԳՈՒՇԱԿԱՅԻՆ, ած. **Աստղագուշակությանը առընչվող:** Սովորել եմ տառերը, հունական երկերը չգիտեմ, ոչ հռետորական, ոչ **աստղագուշակային** գրքեր չեմ կարդացել …. *(Շախ., էջ 29):*

ԱՍՏՂԱՃԱՌԱԳ, գ. **Աստղափայլ:** Հազար **աստղաճառագ** է միշտ շափաղում մեր թաղը *(գուս. Սշ.[4], էջ 63):*

ԱՍՏՂԱՅԻՆ, ած. (փխբ.)։ **Աստղերին՝ արտակարգ հռչակավորներին հատուկ։** Արգենտինացին **աստղային** ելույթ էր ունեցել կախարդական երեկոների ընթացքում *(Կայ., էջ 201)։*

ԱՍՏՂԱՆԱՎԱԿ, գ. (բնստ.)։ **Տիեզերանավակ։** Ես սպասում եմ Իր **աստղանավակին՝** // Որպես Տիեզեր մեկնող աբեղա .... *(Տոն.[3], էջ 14)։*

ԱՍՏՎԱԾԻՄԱՑԱԲԱՆ, գ. **Աստվածաճանաչողությամբ զբաղվող անձ։** Աստվածորոնողները .... դիմում էին քրիստոնեական **աստվածիմացաբան** Վ.Ս. Սոլովյովի հայացքներին .... *(Շախ., էջ 33-34)։*

ԱՍՈՒՊՎԵԼ, բ. (փխբ.)։ **Մարել՝ խամրել։** Մեր աստղերը վաղուց **ասուպվել** են *(ՎՀ[2], էջ 73)։*

ԱՎԱԶԱԿԱՆՉ, ած. **Թափվող ավազների ձայն հանող։** Հետո խորացա Արաբական ռիթմերի մեջ, ասես քարակաթիլ-**ավազականչ**-դեղնանարինջ ջրերում .... *(Նիկ., էջ 21)։*

ԱՎԱԶԱՀՐԱՊԱՐԱԿ, գ. **Ավազածածկ հրապարակ**։ Երբ փոքր էինք, հատուկ խաղալու օրեր ունեինք՝ **ավազահրապարակում** *(Պալ, էջ 10)։*

ԱՎՇԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Ավշի ստեղծում, ավիշ ստեղծելը՝ արտադրելը։** .... Ծնկոսկրի ամենավերևի կետը պատասխանատու է **ավշաստեղծման** համար *(Տան., էջ 128)։*

ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ, գ. **Ավտոմեքենաների ապահովագրություն։ Ավտոապահովագրման** բարեփոխումները որոշ վարորդների համար «ամենևին էլ բարեփոխումներ չեն» *(Հմգ, azatutyun.am)։*

ԱՎՏՈԲԵՌՆԱԹԱՓԻՉ, գ. (մնգ.)։ **Բեռնաթափող ավտոմատ սարք։** Մասնատիչ-մամլման բաժանմունքում տեղադրած

են 200 մ³ ծավալով լվացարան, պտուղների վերամշակման 4 գիծ, 2 ստացիոնար **ավտոբեռնաթափիչ** *(Դասագիրք, էջ 225)*:

ԱՏԱՄՆԱԶԱՐԴ, գ. (արվ.): **Ատամնաձև զարդ:** Կենտրոնական սյան սև ֆոնի վրա արմավազարդեր են, եզրային սյուներին՝ **ատամնազարդեր** *(Հակ., էջ 53)*:

ԱՏԵԼԱՆՔ, գ. **Ատելություն**: Ի՞նչ կա քո մեջ՝ **ատելա՞նք,** սե՞ր, այդ ամենը մի հաշիվ է *(ՎՀ[1], էջ 163)*:

ԱՐԱԾԱՏԵՂ, գ. Նույնը՝ **արաածելատեղ, արոտ: ... Արաածատեղերում** չաղանում, ուժ էին հավաքում եզներն ու ձիերը .... *(Շոլ., էջ 422)*:

ԱՐԱԾԵԼԱՏԵՂ, գ. **Արաածելու տեղ, որտեղ անասունները արաածում են, արոտ:** Դրա կողքին, **արաածելատեղում** շրջում էին լծարձակ եզները *(Շոլ., էջ 398)*:

ԱՐԱՐԱՏԱՀԱՅ, գ. **Արարատյան դաշտում բնակվող հայ:** Ողբերգություն, մեզ ողբասաց չես դարձնի, // .... Վանահայը՝ քարի պես ծանր ու խոհեմ, // **Արարատահայը՝** լեռան ու դաշտի պես // Ինքնակա և հարակա *(ԳԹ, 22.04.2022)*:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Արարում, ստեղծում:** Այստեղ մենք թերևս կհայտնաբերենք գործողության այն կանոնը, ինչն աբսուրդը չէր կարող մեզ տալ առնվազն այն մասով, ինչը ցուցանշում է սպանության իրավունքի կամ պարտականության մասին, վերջապես՝ **արարչագործումի** հույսը *(Սկ, էջ 24)*:

ԱՐԱՐՉԱԴՈՂ, գ. (բնստ.): .... **Արարման դող՝ սարսուռ:** Հետո վերևն են՝ Աստծո կողմում, // Որ ձմռան ծալ-ծալ ձյունեբով դարձյալ // Աշխարհին հպված **արարչադողում** // Ծնվեն, մարդանան, նորից իջնեն ցած*(Տոն.[4], էջ 17)*:

ԱՐԲՈՒՆՔԱԳԵՂ, ած. (բնստ.): **Արբունքից վարարած, հորդուն:** Համբույրների հովը փոշոտման վարդից անփույթ// թերթիկներ է գլորում **արբունքագեղ** ջրերի ակում *(ՎՀ[2], էջ 140):*

ԱՐԴԱՐԱՆԺԱՐ, ած. **Արդարամիտ, ճշմարտասեր:** Մենք նրա հետ քայլենք՝// Պապ Ֆրանցիսկոսի **արդարանժար**// հայացքի ներքո *(ՎՀ[1], էջ 293):*

ԱՐԵՎԱՁԻԼ, ած. (փխբ.): **Մինչև արև հասնող՝ շատ բարձր՝ սաստիկ:** Սկսեցին **արևազիլ** ղողանջներ// հնչել…. *(ՎՀ[2], էջ 325):*

ԱՐԵՎԱԿԱՐԳ, գ. (բնստ.): **Ընդունված կարգ:** Երկի՛ր մոլորյալ, կարո՞ղ ես դառնալ մի տուն նավարկող, // Այնպես, որ բնավ չխախտենք կշիռն **Արևակարգի** …. *(Տոն.[3], էջ 37):*

ԱՐԵՎԱՀԱՂԹ, ած. (բնստ., փխբ.): **Անհասանելի, արևին հաղթող:** Չէի տենչում գանձեր բազում // Եվ կյանքի փառք **արևահաղթ**….*(ԳՋ, էջ 169):*

ԱՐԵՎԱՆՈՒՇ, ած. (բնստ.): **Ջերմ, հաճելի: Արևանուշ** շող դառնամ, մնամ հավքի տաղերում *(գուս. Աշ.[4], էջ 71):*

ԱՐԵՎԿԱՐԻՔ, գ. **Արևի կարիք ունենալը:** Ձյու՛ն, ձյու՛ն, անվերջ ձյուն ու **արևկարիք** …. *(Տոն.[4], էջ 73):*

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՐԵՆ, մկբ. **Արժանապատիվ կերպով, արժանապատվաբար:** Պետք է ապրել **արժանապատվորեն** *(Տան., էջ 14):*

ԱՐԾԱԹԱԳՈՒՆԴ, գ. **Արծաթից գունդ**: Պարահրապարակները, պտտվող **արծաթագնդերը**, թրթռացող լույսերն ու երիտասարդությունն էին նրա Մեքքան *(Ռուշդի, էջ 183):*

ԱՐԾԱԹԱԿԱՆԱՉ, ած. **Արծաթագույն երանգով՝ արծաթագույնին տվող կանաչ:** …. Առատորեն թափվում էր Կարապետ

վարդապետի հնամենի **արծաթականաչ** ձիթաստանի մեջ *(Սուր., էջ 54)*:

ԱՐԾԱԹԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած., **Արծաթականաչ գույնի**: Գլխին դրել էր ծղոտե հին գլխարկ, որը ժամանակին ստացել էր հաճելի **արծաթականաչավուն** երանգ… *(Դար., էջ 28)*:

ԱՐԾԱԹԱԿՈՂ, նբ. **Արծաթագույն՝ սպիտակ՝ ճերմակ կողքերով:** .... Ձկնորսների կանայք օգնության էին կանչում երեխաներին, ովքեր գալիս և ազնվաբար օգնում էին **արծաթակող**, խլվլան ձուկը կողովները լցնելու *(Վագ., էջ 26)*:

ԱՐԾԱԹԱՆԵՐԿ, գ. **Արծաթի գույնի ներկ:** …. Գծանավերը փայլում էին սպիտակ **արծաթաներկով** *(Յակ., էջ 83)*:

ԱՐԾԱԹԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Արծաթագույնին տվող վարդագույն:** Կերպարներն ասես պարուրվում են **արծաթավարդագույն** թափանցիկ քողով, որի տակից վայելչորեն շողում են զմրուխտ կանաչը, երկնագույնն ու ոսկեզօծ նարնջամանուշակագույնը *(Հակ., էջ 118)*:

ԱՐԾՆԱՊԱԿԵ, ած. **Արծնապակուց՝ արծնից պատրաստված, արծնապակյա**: .... Աջ ձեռքում ծաղիկ կա, ձախում՝ սպիտակ և կարմիր վարդերից **արծնապակե** մանյակ *(Ուայլդ, էջ 202)*:

ԱՐԾՎԱՆԱԼ, բ. (փխբ.): **Խիզախանալ:** Ինչպես քարերը մեր շրջիկ, // Որ խաչակերպ ու սրբազան թափառում են մեր հոգիներում // Եվ **արծվանում** հանդեպ ժամանակի, // Որ հոսում է մեր սրտով՝ որպես Արաքսը հուշահույզ .... *(Տոն.[4], էջ 139)*:

ԱՐԾՎԱՉԱՓ, ած. **Արծվի չափ՝ մեծություն ունեցող:** Այդ պատմության մեջ **արծվաչափ** կտցարներ կլինեն .... *(Դով., էջ 13)*:

ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒՀԻ, գ. **Արկածախնդիր կին՝ աղջիկ: Արկածախնդրուհի** Ե.Փ. Բլավատսկայան …. *(Շախ., էջ 239)*:

ԱՐԿԱՓՈՍ, գ. **Արկի պայթյունից առաջացած փոս:** .... Շարունակում է անթարթ նայել ուղիղ սարերին: Հայացքը աջ՝ դեպի **արկափոսը** չթեքելով *(Սև., էջ 18):*

ԱՐՀԵՍՏԱՎՈՐՈՒՀԻ, գ. **Կին արհեստավոր**: .... Անսուի **արհեստավորուհիների** նմանությամբ նուրբ աշխատանք էր .... *(Ռուշդի, էջ 174):*

ԱՐՁԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Արձան կառուցելը, շինելը**: .... Տուրիստական բազմաթիվ հոսքեր գնալու տեղ չունեն, առաջարկում ենք անհապաղ ընդունել օրենք **արձանաշինության** մասին *(ՉՒ, 12.07.2022):*

ԱՐՁԱՆԱՎԿԱ, գ. (բնստ.): **Միշտ գերեզմաններում գտնըվող:** Ամոթ, որ Երկիրն իմ չեղավ Հոր պես, // Որ չունենք Երկինք մեր Երկրի վրա, // Որ շիրիմներին, երկինքներ որպես, // Մայրերն են միայն **արձանավկա** *(Տոն.[3], էջ 14):*

ԱՐՁԱՆՎԵԼ, բ. **Արձանի նման անշարժ լինել, քարանալ:** Հիմա քարեր եմ փնտրում, որ իմ նմանակը լինեն գոնե:// **Արձանվեմ** *(ՎՀ[2], էջ 146):*

ԱՐՃՃԱԶՕԾ, ած. **Այստեղ՝ արճճագույն, կարծես թե արճճով զօծված:** .... Ձեռքերըի ափերը մետաղի հետ գործ ունենալուց ծածկվել էին **արճճազօծ** մաշկով .... *(Շոլ., էջ 17):*

ԱՐՄԱՎԵՆԱՆԱԽՇ, ած. **Արմավենաձև նախշերով:** .... Բազմում էի մեծ սրահի գահավորակին, 150 դրամանոց ոսկեփուլ իմ թագով ու վարդագույն-**արմավենանախշ** քողով .... *(Նիկ., էջ 101):*

ԱՐՄԱՏԱԿԱԼԵՑՆԵԼ, նբ. (գղտնտ.): **Այնպես անել, որ արմատակալի՝ արմատներ առաջանան**: Մայր բույսից կտրում են

հասուն շիվը .... և **արմատակալեցնելու** համար տնկում են առանձին (*Սաֆ., էջ 55-56*):

ԱՐՄԱՏԱՐԱՆ, գ. **Պատմությունը՝ գրերը պահպանող տեղ՝ վայր:** Արցախը// ծաղկագիր նամակ է լեռների վրա՝ պարզված// հավերժին, և բարևառություն է լուսածեգի,// գրերի **արմատարան**, վանքաղարան… *(ՎՀ², էջ 373):*

ԱՐՅՈՒՆԱԲԵՐԱՆ, ած. (բնստ., փխբ.): **Արյունոտ**: Ու յաթաղանը **արյունաբերան** // Իջավ քեզ վրա աղոթքի պահին …. *(Սարմեն, էջ 121):*

ԱՐՆԱԹՈՒՅՐ, ած. **Արնագույն, արյան գույնի կարմիր:** [Ափսեն] .... արդեն պատած էր այլերանգ, դեղնավարդագույն քափով, որի տակից հոսում էր **արնաթույր** շարապ *(Տոլ., էջ 171):*

ԱՐՆԱԽԱՉ, գ. **Արյունով արված խաչ: Արնախաչ**. խաչը Մեսրոպի ճակատի գիրն էր, խաչի խորհուրդը ժամանակն էր վերծանելու *(Կայարան, 2015, թ.4):*

ԱՐՆԱՔԱՄՎԵԼ, բ. **Արյունաքամ լինել: Արնաքամվում** է հոգին լուռ Մարդու .... *(Տոն.⁴, էջ 72):*

ԱՐՇԱՎԱՔԱՐՏԵԶ, գ. **Արշավի համար նախատեսված քարտեզ**: Դրանք տեղային **արշավաքարտեզներ** չէին.... *(Հանդէ², էջ 177):*

ԱՐՈՏԱԲԱՐԵԼԱՎՈՒՄ, գ. (գղտնտ.): **Արոտավայրերի բարելավում:** .... Արտադրողականության պահպանման և բարձրացման ուղին **արոտաբարելավումն** է .... *(ՍԹ, էջ 106)*:

ԱՐՋԱՄՈՐԹԻ, գ. **Արջի մորթի:** …. Այլևս չէր կարող …. սոսկալի սառնամանիքների ժամանակ գեթ մի **արջամորթով** ծածկված քնել ձյան վրա …. *(Մոր., էջ 30):*

ԱՐՋՈՐՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Արջ որսալը, արջերի որս:** .... **Արջորսության** մեջ Լևինի ընկերը *(Տոլ., էջ 15):*

ԱՐՎԱՐՁԱՆԱՇԱՏ, ած. **Բազմաթիվ արվարձաններ ունեցող**: Անցած 50 տարիների ընթացքում Մոնրեալը գավառական մեծ քաղաքից դարձել է .... **արվարձանաշատ** գերքաղաք *(Ազն., էջ 15):*

ԱՐՏԱԱՐՄԱՏԱՅԻՆ, ած. (բսբ.):**Արմատից դուրս, ոչ արմատային:** Սովորաբար կիրառում են **արտաարմատային** սնուցում՝ շաբաթական մեկ անգամ սրսկում մագնեզիումի և բորի լուծույթով *(ԳՄ,ՎԹ, էջ 16)*:

ԱՐՏԱԴՐԱՇԵՆՔ, գ. **Արտադրական նշանակության շենք:** Փոխարենը՝ այդ քաղաք-գործարանի **արտադրաշենքերի** մուտքերին ավտոմատներով զինվորներ էին կանգնած *(ՎՍ, էջ 355):*

ԱՐՏԱՆԱԽՇԱԶԱՐԴ, գ. (արվ.): **Արտանկարած, արտապատկերած նախշազարդ:** Այս թերթերի ընդհանուր ծանր և հանդիսավոր տպավորությունը մասամբ աշխուժացված է **արտանախշազարդերի** շնորհիվ *(Հակ., էջ 40):*

ԱՐՏԱՊԱՏՄԱԿԱՆ, ած. **Պատմության մեջ չընդգրկված, պատմությունից դուրս եղած:** .... Մի հեղինակ գրում է, որ մեր դարի առաջին տասնամյակներում մարդկային մտածողության անփոփոխ **արտապատմական** բնույթի մասին դոկտրինան խարխլվել էր իր բուն իսկ հիմքում *(Շախ., էջ 64):*

ԱՐՏԱՏՊՎԱԾՔ, գ. **Արտատպություն, տպելով հանված պատճեն**: ...Անվերջալիորեն երկար զննում էր դոլարների ֆրագմենտները, փորձնական **արտատպվածքները**... *(Պետ., էջ 140):*

ԱՐՑԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Արցախը սիրելը:** Իսկ Ն. Փաշինյանի հանկարծահաս խաղաղասիրությունը Հայաստանի և Արցախի համար նույնքան վտանգավոր է, որքան նրա **արցախասիրությունն** էր *(ՀՒ, 25.04.2022):*

ԱՐՑԱԽԱՏՅԱՑ, ած. **Արցախը ատող:** Պատճառը նրա ախոյաններն էին, որոնք երկու դեպքում էլ **արցախատյաց** էին *(Բակուր, էջ 179):*

ԱՐՔԱՅԱՆՈՒՆ, գ. (պատմ.): **Արքայի անուն:** …. Մեր վերծանությամբ ընթերցվեցին երկու **արքայանուններ** …. *(Մով.[2], էջ 65):*

ԱՑԵՏԱԼԱԳՈՅԱՑՈՒՄ, գ. (քիմ.): **Ացետալի գոյացում՝ առաջացում**: …. Որոշակի մասը մասնակցում է **ացետալագոյացմանը** …. *(Դասագիրք, էջ64):*

ԱՓԵԶԵՐՔ, գ. **Ափեզը**: … Ցույց տվեց Իթաքեն, Ուլիսի կըղզին, որի հենց **ափեզերքով** էինք անցնում: *(Անգլ., էջ 47):*

ԱՓՍԵԱԳՈՐԳ, գ. **Ափսե(ներ)ի տակ դնելու համար նախատեսված գորգ:** …. Սեղանին էին հայտնվել բյուրեղապակի, **ափսեագորգ** ու պնակներ կարմիր մրգերի …. *(Վուլֆ, էջ 132):*

Բ

ԲԱԶԿԱԹՈՌԱՅԻՆ, ած. **Բազկաթոռի նման՝ որպես բազկաթոռ պատրաստված:** Միայն ուղևորներն էին այստեղ …., նստել էին **բազկաթոռային** հատվածներով երկար, սևագույն նստարաններին …. *(Սուր., էջ 260):*

ԲԱԶՄԱԲՂԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Բազմազանություն: ….** Հսկայական ներդաշնակության **բազմաբղետությամբ** հնչում են ավտոմոբիլների շչակները …. *(Շող., էջ 176):*

ԲԱԶՄԱԼԵԶՎԱԽՈՍ, ած. **Շատ լեզուներով խոսող:** Աշխարհ շրջած, լավ կրթություն ստացած, **բազմալեզվախոս** …. Գյուլբենկյանները հրաշալի դիրք ունեին …. *(ՋՔ, էջ 9):*

ԲԱԶՄԱԽԱՌՆՈՒՐԴ, գ. **Տարբեր ոճերի խառնուրդ:** Կասկածից վեր է, որ ես կարող եմ հավանել երկու տարբեր ոճ, բայց երբեք չեմ ընդունի դրանց **բազմախառնուրդը** *(Ազն., էջ 142):*

ԲԱԶՄԱՄԱԿԱՐԴԱԿ, ած. **Բազում, շատ մակարդակ ունեցող:** Այս ճյուղավորման շնորհիվ նշահամալիրը սկսում է հակազդել նախքան նեոկորտեքսը, որը զբաղված է լինում տեղեկատվության **բազմամակարդակ** ըմբռնմամբ …. *(ԴԳ, էջ 49):*

ԲԱԿԱՇՈՒՆ, գ. **Բակապան, բակում մնացող, շրջող շուն:** Դռանը մի քանի կուշտուկուռ **բակաշուն** էին պտտվում *(Դով., էջ 159):*

ԲԱՀԱՉԱՓ, ած. **Բահի տարողության չափ:** Ճարտարապետները ….ամեն մի **բահաչափ** դուրս նետված հողի հետ ավելի դժվար էին շնչում …. *(ԱԳ, էջ 136):*

ԲԱՄԲԱԿԱՍԵՂՄԻՉ, ած. **Բամբակը սեղմելով խտացնող:** Գործարանը թուջից և պղնձից կաղապարում էր մեքենայի մասեր..., խաղողաճզմիչ և **բամբակասեղմիչ** մամլակներ ... *(Հակ., Սիմ.,էջ 125):*

ԲԱՄԲՈՒԿԵ, ած. **Բամբուկից պատրաստված, բամբուկյա**... Երիտասարդները դուրս եկան պարտեզ և բարձր դափնեթփի ստվերում նստեցին **բամբուկե** նստարանին *(Ուայլդ, էջ 11):*

ԲԱՆԱԽՈՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Բանախոհական՝ բանական, տրամաբանված մտքին բնորոշ լինելը:** Ընդվզման երկու դարերը .... բացվում են իրապես մեր **բանախոհականության** առջև *(Ակ, էջ 23):*

ԲԱՆԱՍՏԵՂԾԻԿ, ած. (դիպվ.): **Ստեղծագործող:** .... Եղիցի մուշ երկինք՝ ո՛չ չարահույզ հանուր, // Ու՞ր է տանում մեզ այս հույսը **բանաստեղծիկ** *(Տոն.[4], էջ 28):*

ԲԱՆՋԱՐԱՀԱՎԱՔՈՒՄ, գ. **Բանջար հավաքելը:** Մեկը Ադավերում հնարում է մինչ օրս չլսված **բանջարահավաքման** կոմբայններ .... *(Բեեկ., էջ 244):*

ԲԱՆՋԱՐԱՇԱՏ, ած. **Բանջարով՝ կանաչեղենով հարուստ**: ....Վրաստանի **բանջարաշատ** հարավը կապում էին Հայաստանի արդյունաբերական հյուսիսի շրջանների հետ *(ՎՍ, էջ 120):*

ԲԱՆՎՈՐԱՎԱՐԻ, մկբ. **Բանվորի նման, ինչպես բանվորը, բանվորաբար**: .... Քեզ, ընկեր, կասեմ ուղղակի ճակատիդ, **բանվորավարի.** քո գիծը սխալ է, քաղաքականապես սխալ, փաստ է *(Շոլ., էջ 12):*

ԲԱՌԱԹՎԱՅԻՆ, ած. **Բառին և թվին վերաբերող, բառային և թվային**: **Բառաթվային** հմտությունների նեղ շրջանակ, որի վրա, որպես կանոն, հիմնվում է դպրոցական ուսուցումը *(ԴԳ, էջ 72):*

ԲԱՌԱՆՇԱՆ, գ. (պատմ.): **Բառի պայմանական նշանը վանկային գրության դեպքում:** ... Ակրոֆոնիայի կանոնի համաձայն որևէ **բառանշան** վանկային գրության դեպքում ցույց է տալիս այդ բառի առաջին վանկը (սկզբնամասը) *(Մով.[2], էջ 11):*

ԲԱՌԱՆՋԱՏԻՉ, գ. (պատմ.): **Գրության (արձանագրության նն) մեջ բառերը իրարից անջատելու պայմանական նշան:** Ծավալուն բնագրերի բացակայությունը ներկայումս թույլ չի տալիս պարզելու՝ կիրառվե՞լ են արդյոք **բառանջատիչներ** .... և կետադրական այլ նշաններ, թե ոչ *(Մով.[1], էջ 34):*

ԲԱՌԱՎՈՐԵԼ, բ. **Բառերով արտահայտել:** Ծիծաղելի եմ դառնում ինքս էլ// Ո՞նց **բառավորել** անբացատրելին *(ՎՀ², էջ 179):*

ԲԱՌՀՈԳԵԴԱՐՁՈՂ, բ. **Բառը՝ խոսքը վերակենդանացնող:** Ասացողներիս **բառհոգեդարձող** // Խղճին է արդեն խեղումը հոգու*(Տոն.², էջ 35):*

ԲԱՐԱԿԱՈՏ, ած. **Բարակ ոտներով, ոտները բարակ:** Նրա փոքրամարմին բարակի ետևից .... վազում էր **բարակառոտ,** կոճատեղերը հաստ մի քուռակ *(Շոլ., էջ 386):*

ԲԱՐԱԿԳԼՈՒԽ, ած. **Գլխամասը՝ ծայրը բարակ: Բարակգլուխ** հելունս էր, որ իժավարի գլխիկը պայուսակի գրպանից հանել ու ծակծկում էր ինձ.... *(Նիկ., էջ 92):*

ԲԱՐԱՊԱՆՈՒՀԻ, գ. **Կին բարապան՝ դռան պահապան:** ... Բավական էր որևէ լրացուցիչ հարց տալ ... **բարապանուհու** չարության, քաղաքականության արանքում *(ԱԻՊ¹, էջ 54):*

ԲԱՐԱՍԵՂԱՆ, գ. **Բարի մոտ գտնվող սեղան:** Կինը նստած է **բարասեղանի** մոտ .... *(Ֆրիշ, էջ 403):*

ԲԱՐԵՇՏԿՎԵԼ, բ. **Բարեփոխվել:** Յակոբինյան իդեալիզմը դեռևս չի **բարեշտկվել** այս ազնվական պարոնների կողմից *(Ակ, էջ 214):*

ԲԱՐԵՍԻՐՏԱՆԱԼ, չբ. **Բարեսիրտ դառնալ:** Մարինան **բարեսրտանալով,** տվեց նրան իր ամուսնու բոլոր հագուստները *(Շոլ., էջ 56):*

ԲԱՐԵՎԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Բարև առնելը, ողջույն ստանալը:** Տե՛ս ԱՐՄԱՏԱՐԱՆ-ի օրինակը:

ԲԱՐԿԱԴԵՄ, ած. **Բարկություն արտահայտող դեմքով: ....** Ինչո՞ւ էր տպավորությունը այնպիսին, որ իմ Հիսուսը, փոքր-

ինչ **բարկադեմ** ու ոչ սիրուն, շարժվում է իմ նկարում *(Նիկ., էջ 153):*

ԲԱՐՁՐԱԽՈՍԱՅԻՆ, ած. **Ինչպես բարձրախոսինը, բարձրախոսից հնչող:** - Պարոնայք, - լսվում է **բարձրախոսային** մի ձայն *(Սուր., էջ 342):*

ԲԱՐՁՐԱՑՎԵԼԻՔ, ած. **Բարձրացնելու, որ պիտի բարձրացվի:** .... **Բարձրացվելիք** ծանրությունից էլ առաջ .... *(Նիկ., էջ 19):*

ԲԱՐՁՐԱՓԵՂԿ, ած. **Բարձր փեղկ ունեցող**: .... Կրնկի վրա բացեց երեք **բարձրափեղկ** լուսամուտները .... *(ՋՀ, էջ 207):*

ԲԱՐՈՅԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ, ած. **Բարոյական և գաղափարական:** Թող գիտակցեն այդ հայ մամուլը վարողները և մեծապես օգտվեն անցյալի **բարոյագաղափարական** հարստությունից *(ՎԱ, էջ 70)*:

ԲԱՐՈՒՐԱԿԱՊ, գ. **Բարուրի՝ բալուլի՝ լաթակտորների փաթաթանների, մասնավորապես՝ խանձարուրի կապ:** Բացի .... **բարուրակապեր** գործելուց .... այսօր այնտեղ մուրաբա էին եփում .... *(Տոլ., էջ 170):*

ԲԱՑԲԱՑԵԼ, նբ. **Բազմիցս բաց անել: ....** Չեչոտ այս քարերը **....** ջու՛րն է **բացբացել** նրանց .... *(Նիկ., էջ 19):*

ԲԱՑԴՈՒՌ, ած. **Դուռը բաց՝ ոչ փակ: Բացդուռ** էին մեկ զուգարանը, մեկ էլ .... *(Նիկ., էջ 82):*

ԲԱՑԼԵԶՈՒ, ած. **Բերանը բաց պահելու հետևանքով լեզուն միշտ երևացող, լեզուն բաց:** .... Թե՛ մուտքի մոտ պապիրոս ծխող կեղտոտ համազգեստով զինվորը, ... թե՛ .... **բացլեզու** հավաքարարը .... առաջ բերին Լևինի մեջ ամենածանր զգացում .... *(Տոլ., էջ 81):*

ԲԱՑՈՒՂԻ, գ. **Օդուղի:** Ու մինչ օդային **բացուղի** ելած՝ // Երազանքներով երկրի ու տանու, // Տանում ենք դեպի աշխարհ ու երկինք // Արդար պատմության մեր Խոսքը հորդուն .... *(Տոն.[4], էջ 26):*

ԲԵԿՈՐԱՌՈՒՄԲ, գ. **Ռումբի բեկոր**: .... Վայր ընկավ հետևի թաթը **բեկորառումբից** ջարդուխուրդ եղած *(Աթք., էջ 88):*

ԲԵՄԱՆՄԱՆ, ած. **Բեմի նման, բեմի ձև՝ տեսք ունեցող:** Գնդապետն արդեն թիկն էր տվել ծղոտին, **բեմանման** մի հարթակի վրա *(Օրուել, էջ 4):*

ԲԵՄԱՓՈՐՁ, գ. **Բեմական փորձ**: .... Լիլան վերադառնում է տուն, մահու չափ հոգնած իր մակբեթյան **բեմափորձերից** .... *(Ֆրիշ, էջ 312)*:

ԲԵՅՐՈՒԹԱԲՆԱԿ, ած. **Բեյրութում բնակվող:** Հիշեցինք ու հիշատակեցինք արցախյան ազատամարտին մասնակցած մյուս **բեյրութաբնակ** հայերին *(Կայարան, 2015, թ. 4):*

ԲԵՅՐՈՒԹԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Բեյրութում բնակվող հայություն**: Ցավոք անկարելի է մեկ-երկու օրում քաղաքական կտրվածքով ճանաչել **բեյրութահայությանը** .... *(Կայարան, 2015, թ. 4):*

ԲԵՆԶԱՍՂՈՑ, գ. **Բենզինով աշխատող սղոց:** Միխալ Իվանիչը տնքտնքալով **բենզասղոցն** էր նորոգում *(Դով., էջ 212):*

ԲԵՌՆԱՆԱՎԱՅԻՆ, ած. **Ապրանքատար նավին վերաբերող**: Նրանք քննարկման ներկայացրին բեռնափոխադրման ծրագրեր, որպեսզի վերջ դնեն **բեռնանավային** փոխադրման ծախսատար մրցակցությանը .... *(ՋՔ, էջ 171):*

ԲԵՐԱՆՓԱԿԻՉ, գ. **Այն, ինչով փակել են բերանը, բերանի փակիչ:** Հետո ուշքի գալով, հանկարծ լեզվով դուրս է հրում լորձունքից տաքացած **բերանփակիչը** …. *(Շոլ., էջ 123):*

ԲԵՐԴԱԽՐԱՄ, գ. **Բերդի խրամ՝ բերդի շուրջ փորված խոր փոս:** Նա նստել էր տրամաբանության անառիկ ամրոցում իսկ ես **բերդախրամի** մյուս կողմում կոճտացնում էի ատամներս *(Բեկ., էջ 297):*

ԲԵՐԴԱՊԱՇՏՊԱՆ, ած. **Բերդը պաշտպանող**: Կոտրելով **բերդապաշտպան** պարսկական կայազորի ձեռնարկած փոքրիկ գրոհները... պաշարում է Երևանի բերդը... *(Հակ., Միմ.,էջ 84):*

ԲՁԵԶԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Բզեզի տեսք՝ նմանություն՝ պատկեր ունեցող:** Մյուս չորս կնիքները …. **բզեզատեսք են** *(Մով.[1], էջ 178):*

ԲԹԱՄՌՈՒԹ, ած. **Բութ մռութով, մռութը բութ**: Ի տարբերություն **բթամռութ** ալիգատորների և հզոր ծնոտներով կոկորդիլոսների, գավիալների ծնոտները երկար են ու նեղ… *(Դար., էջ 202):*

ԲԻՏԱՎՈՐ, ած. **Եղջերային ճանկեր ունեցող՝ ճանկերով**: **Բիտավոր** գորտերը գիշերը ձայն են հանում՝ «պիպ-պիպ», կարծես ինչ-որ մեկը եղունգով թեթևակի խփում է բաժակի եզրին: *(Դար., էջ 80):*

ԲԼՐԱԽՈՐՇ, գ. **Ափերը բլուրներով եզերված խորշեր՝ խոր ընկած ջրային տարածքներ:** Ցածրիկ ափերի սահուն ուրվագծերին փոխարինելու էին գալիս ծուռումուռ թփերով ծածկված **բլրախորշեր** *(Վագ., էջ 438):*

ԲԾԱԶԱՐԴ, գ. (արվ.): **Բծերով զարդ:** Իսկ այն դեպքերում, երբ հիմնական գույնը կանաչն է, ... աշխուժացումը կատարվում է սպիտակ և դեղին **բծազարդերով** *(Հակ., էջ 46):*

ԲՅՈՒՐԵՂԱՓԱՌ, գ. **Բյուրեղի տեսք ունեցող փառ**: Հետո, ցից-ցից տնկելով արծաթի իոնների **բյուրեղափառի** փշերը .... *(Լեմ, էջ 124)*:

ԲՆԱԴՐԱՎԱՅՐ, գ.(մսնգ.): **Բնադրման՝ կուտակման վայր:** .... Բույսերի պաշտպանությունն իրականացվում է ինտեգրացված համակարգով, որը ներառում է մի շարք միջոցառումներ՝ նախազգուշական (վնասատուների **բնադրավայրերի** ոչնչացում), մեխանիկական ...., ագրոտեխնիկական ...., կենսաբանական .... *(ՍԹ, էջ 117):*

ԲՆԱԶԴԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Բնազդները զգալը, դրա կարողություն:** .... Ժաննան անճարակ լեզվով մեզ ասաց իր սրտի **բնազդազգացողությունների** մասին .... *(XX դար, էջ 224):*

ԲՆԱԿԱՇՎԵ, ած. (փխբ.): **Բնականոն, բնական ճանապարհով ընթացող, զարգացող:** Վերևում ծաղկած ամպերի երկինքն է, իսկ ներքևում .... **բնակաշվե** մի կյանք ... *(Նիկ., էջ 107):*

ԲՆԱՌԵՍՈՒՐՍ, գ. (մսնգ.): **Բնական ռեսուրս:** Մտահոգիչ չափերի են հասել ընդերքի քաղցրահամ ջրային պաշարների օգտագործման ծավալները ....՝ առանց համալրելու այդ արժեքավոր **բնառեսուրսը** *(ՍԹ, էջ 73):*

ԲՈԼՈՐԱԹՌԻՉՔ, գ. **Բոլորաձև թռիչք**: .... **Բոլորաթռիչքները** ինձ այնքան մոտ էին .... *(Հանդքե², էջ 76):*

ԲՈԼՈՐԱՏԵՐԵՎ, ած. **Բոլորաձև՝ կլոր տերև ունեցող**: [Ծփիները] .... վերուվար էին լինում իրենց **բոլորատերև** հրավառությամբ .... *(Վուլֆ, էջ 30)*:

ԲՈՒԺԱԿԱՐԳ, գ. **Բուժման եղանակ՝ ձև:** Նախկինում մամոգրաֆիայի սարքավորումները սեղմում էին կուրծքը վերևից և ներքևից՝ զննումը կատարելու համար, ինչը **բուժակարգը** բավական ցավոտ էր դարձնում *(Հմմ, med.news.am):*

ԲՈՒՍԱԹՈՒՐՄ, գ. **Բույսերից պատրաստված թուրմ:** Բուրավետացված գինիները պատրաստում են գինենյութերի կուպաժով, **բուսաթուրմերի** օգտագործումով *(Դասագիրք, էջ 28):*

ԲՈՒՍԱԿԱՄԱՐ, գ. **Բուսական, բույսերից կազմված կամար**: ... Հանդիպում էր լոկ ծաղկող դափնեվարդի վախվորած ժպիտին կամ խաղողի որթով հյուսված **բուսակամարի** ուրախ հայացքին *(Պար., էջ 17..):*

ԲՈՒՍԱՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. (գղտնտ.): **Բույսերի համակեցություն: Բուսահամակեցության** աճելավայրերի համապատասխանության սկզբունքի համաձայն .... *(ՍԹ, էջ 124):*

ԲՈՒՍԱՆԱԽՇ, գ. **Բույսի նմանվող նախշ:** Նստարանն ունի զույգ **բուսանախշ** թիկնակներ *(Հմմ, nurblog. info):*

ԲՈՒՐԱՎԵՏԱՑՆԵԼ, բ. **Բուրավետ դարձնել:** Տե՛ս ԲՈՒՍԱԹՈՒՐՄ-ի օրինակը:

ԲՈՒՐԱՐՁԱԿԵԼ, բ. **Բուրել՝ բույր տարածել:** Չի **բուրարձակում** անեղծ մի միտում *(Տոն.³, էջ 36):*

ԲՈՒՐՈՒՄՆԱՎԱՐԴ, գ. **Բուրումնավետ՝ անուշաբույր վարդ: Բուրումնավարդը** գետի տխրեղեգ ափերի վրա// Բացում է իրեն *(ՎՀ², էջ 21):*

ԲՋՋՈՐԵՆ, մկբ. (փխբ.): **Ամենափոքր մանրուքներով՝ մանրամասնությամբ:** Իմ պարին խառնելով ամենը, ինչ գիտեի և ինչ սովորում-յուրացնում էի օրեցօր, **բջջորեն**, նորանոր պարողներից, նաև իմ ներսից .... *(Նիկ., էջ 101):*

ԲՌՆԱԿԱԼԱՆՔ, գ. **Բռնի ազատազրկում:** Ղարաբաղին օգնելու համար ինձ 10 տարի **բռնակալանքի** են ենթարկել *(Հմգ, asekose.am):*

ԲՌՆԱԿԱՎՈՐ, ած. **Բռնակ ունեցող:** Ախր ես իսկապես այն ժամանակ չհասա այդ գրողը տարած **բռնակավոր** անջատոցին *(Բեեկ., էջ 91):*

ԲՐԱԶԻԼՈՒՀԻ, գ. **Բրազիլիայի կին՝ աղջիկ**: Հավատս չի գալիս, որ այդ ժամանակ նրանք այդքան երիտասարդ են եղել՝ հայրիկը հիփփիական տեսքով, մայրիկը՝ պճնամոլ գեղեցիկ **բրազիլուհու** *(Պալ., էջ 95):*

ԲՐՈՆԶԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Բրոնզագույնին տվող կանաչավուն**: Մատների ծայրով շոշափեցի **բրոնզականաչավուն** «Սոլարիսական ատլասը» *(Լեմ, էջ 218)*:

ԲՈՒԺԱԿԱՐԳ, գ. **Բուժման եղանակ՝ ձև:** Նախկինում մամոգրաֆիայի սարքավորումները սեղմում էին կուրծքը վերևից և ներքևից՝ զննումը կատարելու համար, ինչը **բուժակարգը** բավական ցավոտ էր դարձնում *(Հմգ, med.news.am):*

ԲՈՒՍԱԹՈՒՐՄ, գ. **Բույսերից պատրաստված թուրմ:** Բուրավետացված գինիները պատրաստում են գինենյութերի կուպաժով, **բուսաթուրմերի** օգտագործումով *(Դասագիրք, էջ 28)*:

ԲՈՒՍԱԿԱՄԱՐ, գ. **Բուսական, բույսերից կազմված կամար**: .... Հանդիպում էր լոկ ծաղկող դափնեվարդի վախվորած ժպիտին կամ խաղողի որթով հյուսված **բուսակամարի** ուրախ հայացքին *(Պար., էջ 17..):*

ԲՈՒՍԱՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. (գղտնտ.): **Բույսերի համակեցություն: Բուսահամակեցության** աճելավայրերի համապատասխանության սկզբունքի համաձայն .... *(ՍԹ, էջ 124):*

ԲՈՒՍԱՆԱԽՇ, գ. **Բույսի նմանվող նախշ:** Նստարանն ունի զույգ **բուսանախշ** թիկնակներ *(Հմգ, nurblog. info):*

ԲՈՒՐԱՎԵՏԱՑՆԵԼ, բ. **Բուրավետ դարձնել:** Տե՛ս ԲՈՒՍԱԹՈՒՐՄ-ի օրինակը:

ԲՈՒՐԱՐՁԱԿԵԼ, բ. **Բուրել՝ բույր տարածել:** Չի **բուրարձակում** անեղծ մի միտում *(Տոն.³, էջ 36):*

ԲՈՒՐՈՒՄՆԱՎԱՐԴ, գ. **Բուրումնավետ՝ անուշաբույր վարդ: Բուրումնավարդը** գետի տխրեղեգ ափերի վրա// Բացում է իրեն *(ՎՀ², էջ 21):*

Գ

ԳԱԳԱԹԱՎՈՐՎԱԾ, ած. (փխբ.): **Դեպի վեր կեռավորված:** .... Ծիծաղում է Դավիթն ու շոշափում հայկական ասֆալտների պես անհարթ, խրոխտ լեռների պես **գագաթավորված** քիթը .... *(Սև., էջ 90):*

ԳԱԶԱԶԱՆՔ, գ. **Գազազություն, գազազելը, սաստիկ զայրանալը, կատաղելը:** .... Նա սկսեց ծիծաղել իր սոված **գազազանքի** վրա *(Տոլ., էջ 230):*

ԳԱԶԱԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱ, գ. (մսնգ.): **Շամպայնացման համար նախատեսված կաթսաները միմյանց կապող գազի խողովակների համակարգ**: Սարքը բաղկացած է գազա- և գինեկոմունիկացիաներով կապված 5 հիմնական մասերից, որոնք նախատեսված են շամպայնավորման գործընթացների տեխնոլոգիական ռեժիմը, գինու հոսքի ընթացքը, խմորող առանձին պահամաններում ջերմաստիճանը, սարքի ընդունող մասի և **գազակոմունիկացիայում** մշտական ճնշում պահպանելու և կարգավորելու համար *(Դասագիրք, էջ 194)*:

ԳԱԶԱՆԱՎԱՐԻ, ած. **Գազանի նման, ինչպես գազանը:** Դեմիդ Մոլչունը խաղաղ քնել էր ետևի շարքում՝ նստարանի տակ **գազանավարի** պառկած .... *(Շոլ., էջ 91):*

ԳԱԶԱՆԱՎԱՐԻ, մկբ. **Ինչպես գազանը, գազանի նման:** Իսկ Դիմոկը, պատառոտված ոտնաման հագած իր ոտքերը **գազանավարի** փափուկ փոխելով .... գնում էր ցանկապատերի ու պատնեշների մոտով .... *(Շոլ., էջ 351):*

ԳԱԶԱՐՏԱԴՐՈՒՄ, գ. (մսնգ.): **Գազ արտադրելը**: Դա որոշում է **գազարտադրման** գործընթացի երկարատևությունը .... *(Դասագիրք, էջ 178)*:

ԳԱԼԱՐԱՃԿՎԵԼ, բ. **Գալարաձև ճկվել**: .... Առաջ են նետում իրենց երկաթգծերը՝ որպես երկարուկ շոշափուկներով **գալարաճկված** դերձաններ .... *(ԱԱ, էջ 228)*:

ԳԱՀԱՑԱՆԿ, գ. **Գահակալած թագավորների ցուցակ:** Խորհրդային պատմագիտությունն անգամ նրան հայոց արքաների **գահացանկում** կա՛մ չի ներառել, կա՛մ ներառել է որպես Տիգրան Երվանդյան.... *(Հմգ, Vahe Lorents Fb էջ):*

ԳԱՂԱՓԱՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Գաղափարը՝ միտքը յուրացնելը, գողանալը**: Այո՛, սա պլագիատ է, **գաղափարագողություն** .... *(ՉԻ, 11.07.2022):*

ԳԱՂԱՓԱՐԱԶՐԿԵԼ, բ. **Գաղափարայնությունից զրկել:** Ըստ «Ազադլրգ»-ի՝ Ադրբեջանի հասարակությանը **գաղափարազրկել** են *(Հմգ, armenpress.am):*

ԳԱՂԱՓԱՐԱԶՐԿՈՒՄ, գ. **Գաղափարայնությունից զրկելը:** Դա պատճառ դարձավ խարխլման, **գաղափարազրկման** և ամենակարևորը՝ սահման չունեցող հարմարվողականության հետագա խորացման *(Հմգ, avangard.am):*

ԳԱՂԱՓԱՐԱՀՆՉՅՈՒՆԱԳՐԱՅԻՆ, ած. (պատմ.)։ **Գաղափարագրային և հնչյունագրային (արձանագրության բացատրությունը նաև օրինակում)։** Նշանների նման քանակը ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող գրային համակարգը գաղափարագրերի կիրառմամբ վանկային՝ բառա-վանկային **(գաղափարահնչյունագրային)** է *(Մով.[1], էջ 32)։*

ԳԱՂՏՆԱԳԵՆ, ած. **Ոչ բացահայտ ծագում ունեցող։** Երազանքներիդ վե՛րջ տուր, Հայաստա՛ն, // Ժամն է, **գաղտնագեն** զե՛նքդ ստեղծիր .... *(Տոն.[4], էջ 76)։*

ԳԱՂՏՆԱԽՈՒՄԲ, գ. **Գաղտնի խումբ։** 1983թ. Նախաձեռնող **գաղտնախմբի** առաջարկությամբ՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանը հանդիպում է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ *(Հմց, Հայ LIFE, 29.01.2022)։*

ԳԱՂՏՆԻԱՑՎԵԼ, չբ. **Գաղտնի դարձնել. այնպես անել, որ դրա (անձի, դեպքի ևն) մասին ոչ ոք չիմանա։** Դրան մասնակցելու համար Անգլիայից եկած ներկայացուցիչները **գաղտնիացված էին** .... *(Յակ., էջ 515)։*

ԳԱՆԳԱՄԱՍ, գ. **Գանգի մաս, հատված։** .... Որմնանկարներում մենք տեսնում ենք տղամարդու (Հիսուսի պատկերը) գլխի փոքր-ինչ ետ ձգված **գանգամասն** ու սուրուլիկ դեմքը .... *(Հակ., էջ 112)։*

ԳԱՆՁԱՑՈՒՅՑ, գ. (պատմ.)։ **Նշան, որը մատնանշում է գանձի գտնվելու վայրը։** .... Ցանկացած նշանագրված քար նրանք [Թուրքիայի թրքերը և քրդերը] ընկալում են իբրև **գանձացույց,** որին հաջորդած «գանձորոնումների» արդյունքում ոչնչանում են ինչպես այդ քարերը, այնպես էլ դրանց տակ երբեմն հանդիպող հուշարձանները *(Մով.[2], էջ 39)։*

ԳԱՐԵՋՐԱԲՈՒՅՐ, գ. **Գարեջրի բույր**: .... Նա կարող էր իրեն թույլ տալ ամենայն համոզվածությամբ խոսելու զարդեղենի անբարոյականության մասին, հարթ կաղապարների հիգիենայի և վագներյան երաժշտության **գարեջրաբույրի** մասին .... *(ԱԱ, էջ 282)*:

ԳԱՐԵՍՈՒՐՃ, գ. **Գարուց պատրաստված սուրճ:** Այլևս խիստ թանկ արժե **գարեսուրճը** մեկ գավաթ .... *(Տոն.[4], էջ 62)*:

ԳԱՐՇԱԼԻՑ, ած. **Գարշանքով՝ զզվանքով լի:** -... Պասով փրկել հոգին,- **գարշալից** արհամարհանքով ասաց Լիդիա Իվանովնան .... *(Տոլ., էջ 423)*:

ԳԵՂԱՄԵԾԱՐ, ած. **Գեղապաշտ**: Ու՞ր է տանում մեզ այս հույսը շարունակվող՝ // Ողնաշարոցը մեր **գեղամեծար** ցեղի .... *(Տոն.[2], էջ 28)*:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ, ած. **Գեղարվեստական և հրապարակախոսական:** Տվյալ ժամանակաշրջանում գովազդի ձևաչափը հայկական պարբերականներում դառնում է արդիական որևէ խնդրի լուսաբանման համար **գեղարվեստահրապարակախոսական** ժանրի արտահայտամիջոց *(ՊԲՀ, 2021, 1, էջ 98)*:

ԳԵՏԱՔԱՐԵ, ած. **Գետաքարով սալահատակված՝ պատված:** .... Շարժիչը հռնդաց, և եղբայրները սլացան թաց **գետաքարե** ճանապարհով դեպի սևին տվող կաղնուտը *(Կլ., էջ 167)*:

ԳԵՏԱՔԱՐԵ, ած. **Գետաքարերով սալահատակված:** Դա պատահեց կեսօրին .... փայտյա տոլածածկ տնակների լուռ թագավորության մեջ, մաշված սալաքարերով մայթի վրա, **գետաքարե** նեղ փողոցի եզրին .... *(Բեկ., էջ 231)*:

ԳԵՏՆԱՆԻՍՏ, ած. **Շատ ցածր՝ կարճ, գետնին կպած, գետնահար:** Կաթսայատունը մռայլ, **գետնանիստ** շինություն էր՝ հսկա խողովակի ստորոտին *(Դով., էջ 106):*

ԳԵՏՆԱՇԱՐ, ած. **Գետնին շարված**: Աչքիդ են զարնում **գետնաշար**, կարմրին տվող պղնձե ամանեղենը և նրանց աղմկաձայն չխկչխկոցը *(ԱԱ, էջ 159)*:

ԳԵՐԱԶԱՏ, ած. **Չափազանց ազատ, անկաշկանդ: Գերազատ** է նա, ով ինքնահաղթահարել է ու զրկվել ԵՍ-ից *(Հմգ, blognews.am):*

ԳԵՐԱՅԼԱՍԵՐՎԱԾ, 1. Հրկտր. դերբայ: **Գերայլասերվել բայի**: 2. ած. **Արտակարգ, չափից դուրս այլասերված**: Ես հասկանում եմ, որ սա հավասարազոր է **գերայլասերված** տարօրինակության և, այնուամենայնիվ, խոստովանում եմ՝ շատ եմ սիրում սողուններին *(Դար., էջ 193):*

ԳԵՐԱՆԿՈՒՄ, գ. **Չափից ավելի անկում:** Ո՞նց կարող է 40% աղքատություն արձանագրած, 300 հազար մարդու Հայաստանից «խոպան» ուղարկած, եվրաասոցացված, բայց ԵՏՄ-ի գրկում հայտնված իշխանությունը մեկ օրվա ընթացքում ազգային արժույթի **գերանկում** ու գերթռիչք ունենալ *(Հմգ, 7or.am):*

ԳԵՐԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափից ավելի առատ լինելը**: Բացառությամբ **գերառատության** շլացուցիչ պահերի՝ նրանց համար ամբողջ իրականությունն անավարտ է .... *(Ակ, էջ 359)*:

ԳԵՐԱՐՏՈՆՅԱԼ, ած. **Իր արտոնություններով գերազանցող**: Մեր նպատակը ոչ թե այն է, որ մենք տեղական արտադրողների համար **գերարտոնյալ** պայմաններ սահմանենք…., այլ ստեղծել մրցակցային վիճակ *(Հմգ, aysor.am):*

ԳԵՐԲԱՐԴԱՑՈՒՄ, գ. **Չափից ավելի բարդացում**: .... Արտադրության **գերբարդացումը** պատճառ դարձավ, որ բազմաթիվ փոքր գործարաններ բացվեն մեծ ձեռնարկությունների շուրջ *(Ակ, էջ 296)*:

ԳԵՐԴԱՆԴԱՂ, մկբ. ած. **Արտակարգ՝ չափից դուրս դանդաղ:** Երգն այնպիսին է, որ պիտի **գերդանդաղ** հեռանաս *(Նիկ., էջ 109)*:

ԳԵՐԵՐԱԶԱՆՔ, գ. **Բարձրագույն՝ վեհ երազանք:** Երկնքի հուշը մեզ խաբս է տալիս // Հայրենիքների **գերերազանքով** *(Տոն.³, էջ 7)*:

ԳԵՐԹՌԻՉՔ, գ. (փխբ.): **Չափից ավելի առաջընթաց՝ զարգացում:** Տե՛ս ԳԵՐԱՆԿՈՒՄ-ի օրինակը:

ԳԵՐԹՔԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափից ավելի թուք արտադրելը**: Սուֆիա Զինուբիայի մոտ **գերթքարտադրություն** էր .... *(Ռուշդի, էջ 223)*:

ԳԵՐԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափից ավելի իրավասություն ունենալը:** Նախ, որ նա ոչ մի **գերիրավասություն** չի ունենա ծրագրի ընդունման դեպքում .... *(Հմգ, aravot.am)*:

ԳԵՐԽՈՆԱՎԱՆԱԼ, բ. **Չափից ավելի խոնավանալ:** .... Հողը կարող է **գերխոնավանալ** և ճահճանալ *(ՍԹ, էջ 32)*:

ԳԵՐԿԱՐԾՐ, ած. **Չափից ավելի կարծր**: .... Հօդս կժայթքի ուղղընթաց նետի **գերկարծր** ու ազատաբաղձ սլացքը *(Ակ, էջ 422)*:

ԳԵՐԿԵՆՏՐՈՆԱՑՎԵԼ, չբ. **Արտակարգ կենտրոնացվել:** Այդ շրջանում կառավարումը զարգացել է **գերկենտրոնացված** պլանավորման .... համակարգում *(Տան., էջ 203)*:

ԳԵՐՀԱՐՄԱՐԱՎԵՏ, ած. **Արտակարգ հարմարավետ:** Ամերիկյան ընկերությունը կարիճի տեսքով **գերհարմարավետ** բազկաթոռ է ներկայացրել *(Հմ, yelaket.am):*

ԳԵՐՀԵՏԱՔՐՔԻՐ, ած. **Արտակարգ, չափից դուրս հետաքրքիր**: Նրա հետ միասին ապրելը, իհարկե, **գերհետաքրքիր** էր *(Դար., էջ 139):*

ԳԵՐՀՄՈՒՏ, ած. **Արտակարգ հմուտ:** Մեզ մոտ աշխատում են **գերհմուտ** մասնագետներ *(Հմ, m.mamul.am):*

ԳԵՐՇԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտակարգ շատ վիճակ:** Այդ դեպքում գուցե առողջության **գերշատություն** *(XX դար, էջ 325):*

ԳԵՐՇԵՐՏԱՎՈՐՎԱԾ, ած. **Բազում շերտեր ունեցող**: Ստամբուլի պես **գերշերտավորված** քաղաքում շատ էին համալները (բեռնակիրները).... *(ՋՔ, էջ 5):*

ԳԵՐՊԱՀԱՆՋԿՈՏ, ած. **Արտակարգ՝ չափազանց պահանջկոտ:** Մեջքի ցավ ունեցող մարդիկ ներքուստ շատ լարված են, **գերպահանջկոտ** իրենց հանդեպ .... *(Տան., էջ 130):*

ԳԵՐՊՃՆՎԵԼ, բ. **Չափից ավելի պճնվել:** Փնթիներին ու **գերպճնվածներին** լուռ նշավակում էր .... *(Վուլֆ, էջ 111):*

ԳԵՐՍՈՍՆՁՈՒՄ, գ. (մսնգ.): **Գինենյութի չափից ավել սոսընձումը**: Պատահում են դեպքեր, երբ սոսնձումից հետո սպիտակուցային ավելորդ նյութեր են մնում.պրակտիկայում դա **գերսոսնձում** է անվանվում *(Դասագիրք, էջ 269):*

ԳԵՐՏԻԵԶԵՐԱԿԱՆ, ած. **Տիեզերքից վեր գտնվող՝ վերացած:** .... Ու .... **գերտիեզերական** պահմտոցին մեկ գիշեր ու մեկ ցերեկով մթնշաղի տեղակ շամանդաղում էր թրթռուն կերպարանքները *(Նիկ., էջ 40):*

ԳԻՆԵԱՊԱՍՏԱՐԱՆ, գ. (մսնգ.): **Գինու պահման տեղ՝ վայր:** .... Եթե անհրաժեշտ է ձերբազատվել խնձորաթթվից, բարձրացնում են **գինեապաստարանի** ջերմաստիճանը .... *(Դասագիրք, էջ 253)*:

ԳԻՆԵԹԹՎԱԿԻՐ, ած. (քիմ.): **Քիմիական միացություն՝ կալցիումի և գինեթթվի աղ:** Էքստրակտորի արտադրողականությունը ժամում 3,3 տոննա քամվածք է: 1 տոննայից ստանում են 3,1 դալ սպիրտ, **գինեթթվակիր** 1,8 գ *(Դասագիրք, էջ 317)*:

ԳԻՆԵԽՄՈՐԻՉ, գ. (մսնգ.): **Գինու մեջ խմորում առաջացնող (նյութ):** Խնձորի հյութի խմորումն անցկացնում են **գինեխմորիչների** մաքուր կուլտուրաներով *(Դասագիրք, էջ 235)*:

ԳԻՆԵԿԵՏ, գ. (մսնգ.): **Գինու առաջնային մշակմամբ զբաղվող բաժանմունք**: Կարմիր գինիների խմորման համար Արագածի **գինեկետում** (Թալինի շրջան) առանձնացված ձվածրակերպ Արագած-200 խմորիչները բազմանում և ակտիվորեն խմորում են ինչպես ցածր, այնպես էլ բարձր ջերմաստիճանների դեպքում *(Դասագիրք, էջ 22)*:

ԳԻՆԵԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱ, գ. (մսնգ.): **Շամպայնացման համար նախատեսված կաթսաները միմյանց կապող գինու խողովակների համակարգ**: Սարքը բաղկացած է գազա- և **գինեկոմունիկացիաներով** կապված 5 հիմնական մասերից *(Դասագիրք, էջ 193)*:

ԳԻՆԵՉԱՓԻՉ, ած. (մսնգ.): **Տարայում գինու մակարդակը որոշելու համար նախատեսված**: Մեծ տարողությունները լցվում են պոմպով և մակարդակը հսկվում է **գինեչափիչ** պատուհանով *(Դասագիրք, էջ 61)*:

ԳԻՆԵՍՊԻՐՏԱՅԻՆ, ած. (մսնգ.): **Գինեսպիրտի:** Դրանից հետո կշռում են, տեղադրում էմալապատ ամաններում և լցնում **գինեսպիրտային** լուծույթ .... *(Դասագիրք, էջ 144)*:

ԳԻՇԵՐԱԹԱԽԻԾ, գ. (փխբ.): **Գիշերային թախիծ՝ տխրություն**: **Գիշերաթախիծը** դանդաղ սողոսկում է լեռան ճեղքերից *(ՎՀ², էջ 87)*:

ԳԻՇԵՐԱԹՈՒԽՊ, գ. **Գիշերվա թուխպ՝ մշուշ: Գիշերաթուխպը** չի փակում տեսիլքը *(ՎՀ², էջ 267)*:

ԳԻՇԵՐԱԿԵՍ, գ. **Գիշերվա կես**: .... Գոռաց ինքը, ինչպես **գիշերակեսին** արթնացողն է ձեռքը մեկնում խավարին ընդառաջ՝ օգնության հույսով *(Վուլֆ, էջ 60)*:

ԳԻՊՍԱՆՄԱՆ, ած. **Գիպսի նմանվող:** ....Լույսի փայլակներն առկայծում էին է՛լ ավելի կուրացնող սպիտակով, քանի երկնքի **գիպսանման** սպիտակությունը *(Ժիոնո, էջ 28)*:

ԳԻՏԱԿԱՆԱՆՄԱՆ, ած. **Գիտականի նման, գիտականաձև:** Այս հերյուրանքներն ունեին այնպիսի **գիտականանման** ձև, որ դրանց հավատաց Ա.Ա. Բոգդանովը .... *(Շախ., էջ 148)*:

ԳԼԱՆԱԾՐԱՐ, գ. **Գլանաձև ծրար:** Դրանք փաթեթավորում էր **գլանածրարների** տեսքով *(Հանդէ[1], էջ 139)*:

ԳԼԱՎԱՐԵԼ, նբ. **Գլորելով վարել:** Հսկայական ինքնաթիռին **գլավարեց** մի քարշակ .... *(Բեկ., էջ 323)*:

ԳԼՈՒԽԼՑՈՒՄ, գ. (մսնգ.): **Տարբեր պատճառներով երիտասարդ գինու ծավալի նվազման դեպքում տակառում գինու ավելացումը**: Տակառների **գլուխլցումը** կատարում են հատուկ լցիչներով .... *(Դասագիրք, էջ 241)*:

ԳՆԴԱՊԵՏԱՅԻՆ, ած. **Գնդապետական, գնդապետին հատուկ, գնդապետի: Գնդապետային** համազգեստ *(Տոլ., էջ 312)*:

ԳՈԼԱՀԱՐ, ած. (մարզ.): **Գոլ խփող:** Նորմալ իրավիճակներում Ռոնալդուն **գոլահար** մեքենա է .... *(Կայ., էջ 272):*

ԳՈՀԱՐԱԿՈՒՆՔ, ած. (բնստ., փխբ.): **Զուլալ՝ ջինջ՝ մաքուր ակունք ունեցող: Գոհարակունք** ի՛մ աղբյուրներ,// Լուսածաղկուն իմ աղբյուրներ.... *(Գուս.Աշ.[4], էջ 147):*

ԳՈՂԱԹԱՓ ԼԻՆԵԼ, բ. (դիպվ.): **Գողերից ազատվել**: Հայաստանը **գողաթափ է լինում** *(Հմգ, Media Blog News):*

ԳՈՄՇԱՆՄԱՆ, ած. **Գոմեշի տեսք՝ արտաքին ունեցող**: **Գոմշանման** ցիկատա (*Սաֆ., էջ 119*):

ԳՈՅԱՍՏԵՂԾ, ած. **Գոյություն ունեցող, ստեղծված, արարված**: ....Աստծո **գոյաստեղծ** խաչմերուկում այդ պահին ես ինձ մենակ գտա *(Կայարան, 2015, թ. 4):*

ԳՈՅԵԼ, բ. **Գոյություն ունենալ**: .... Լինես և **գոյես** այս աշխարհում *(Ակ, էջ 361)*:

ԳՈՏԱՐՁԱԿ, ած. **Գոտին արձակած: Գոտարձակ** և թիակների մեջտեղում փոշոտված նրա վերնաշապկից գալիս էր քրտնքի, արևի և փոշու հոտ *(Շոլ., էջ 387):*

ԳՈՏԵՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Գոտուն ամրացվող պայուսակ**: Անձնագրերը .... պահվում էին **գոտեպայուսակներում** .... *(Կոելյու, էջ 17):*

ԳՈՏԻԱՁԵՎ, ած. **Գոտու ձև ունեցող:** Նա .... հանեց գրպանից ոչ թե կլոր, սրունքները ցավեցնող ռեզիններ, այլ քաղաքային **գոտիաձև,** կապույտ բոլորակարով *(Շոլ., էջ 132):*

ԳՈՏԿԱՁԵՎ, ած. **Գոտու ձև ունեցող:** Արցունքները.... Գործի են դրվում **գոտկաձև** գալարի միջոցով .... *(ԴԳ, էջ 47):*

ԳՈՏԿԱՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Գոտկատեղին կապվող պայուսակ**: Կարլան **գոտկապայուսակից** հանեց փողն ու մեկնեց «Ճամփորդական գործակալին» *(Կոելյու, էջ 120)*:

ԳՈՐԳԱԴԱՇՏ, գ. (արվ.): **Գորգով, գորգանախշով պատված դաշտ:** Դրանց կապույտը, կանաչը, դարչնագույնը և սպիտակը ստեղծում են **գորգադաշտի** աչք շոյող աշխույժ խաղ *(Հակ., էջ 40)*:

ԳՈՐԳՈՒՂՅԱԿ, գ. **Նեղ ուղեգորգ:** Հետո՝ նախասրահը, լայն մարմարե սանդուղքը, մաշված ծալքատեղերով **գորգուղյակները ....** *(Դով., էջ 38)*:

ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ, ած. **Գործառության հետ կապված, դրանով պայմանավորված:** .... Նշանները, կապված իրենց իմաստային և **գործառութային** բազմանշանակության հետ ձեռք են բերում բազմիմաստություն *(Մով.², էջ 79)*:

ԳՈՐԾԱՐՔԱՌՈՒ, ած. **Գործարք կատարող**: Նա կանխատեսում էր, որ իր մահից րոպեներ առաջ նրանց կգտնեն Լոնդոնի ....Բենթլի **գործարքառուների** «Ջեկ Բարսլեյզի դռան արանքը խցկված»*(ՋՔ, էջ 336)*:

ԳՈՐՇԱԴԵՂՆԱԿԱՐՄԻՐ, ած. **Գորշին տվող դեղնակարմիր**: Ավազաքարը՝ կարմրագորշադեղնավուն, **գորշադեղնակարմիր** և այլն, առաջին հայացքից չափազանց փխրուն է թվում .... *(Հանդէ², էջ 98)*:

ԳՈՐՇԱԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Գորշադեղին գույնին մոտ գույնի**: Ամպամած ցածր երկինքը կախվել էր մեր գլխավերևում ինչպես **գորշադեղնավուն** թաց փալաս... *(Պետ, էջ 48)*:

ԳՈՐՇԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Գորշագույնին տվող կանաչ**: Այսպես սողում էի՝ ինչպես դաշտում հանգիստ ծվարած, սրա-

կտուց ու անշնչացած թռչունի փոքրիկ, **գորշականաչավուն** փետուրը .... *(ԱԱ, էջ 168)*:

ԳՈՐՇԱԿԱՊՏՈՒՄ, գ. (մսնգ.)։ **Արատ, որի դեպքում գինին գունափոխվում է և պղտորվում:** Ծծմբային թթվի բարձր պարունակությունը բարձրացնում է գինու կայունությունը գորշակապտման նկատմամբ *(Դասագիրք, էջ 258)*:

ԳՈՐՇԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. **Գորշ գույնին տվող կարմրավուն:** .... Տարօրինակ **գորշակարմրավուն** մի լույս *(Սուր., էջ 342)*:

ԳՈՐՇԱՍԵՎ, ած. **Գորշին՝ մոխրագույնին տվող սև:** Այդ արդյունքներն իրենցից թանձր մուգ գույնի հեղուկ են ներկայացնում՝ դարչնագույնից մինչև **գորշասև** նրբերանգներով *(Դասագիրք, էջ 296)*:

ԳՐԱԳՐՈՒՀԻ, գ. **Կին գրագիր**: Նրա մահվան լուրը այլևայլության գիրկն էր գցել երկու հոգու՝ իր մութ էջերի **գրագրուհի** Նռանեին և նրա աղջիկ Կառլային *(Կայարան, 2022, թ. 1)*:

ԳՐԱԿԻՐ, ած. (պատմ.)։ **Վրան(երը) գիր՝ գրանշան ունեցող:** Ներկայացնենք **գրակիր** հուշարձանների հիմնական խմբերը ... *(Մով. , էջ 29)*:

ԳՐԱՆԻՏԱՊԱՏ, ած. **Գրանիտով պատված:** Այդուհանդերձ այն բնավ նման չէ կենտրոնի **գրանիտապատ** ջրանցքներին .... *(ԿՎ, էջ 130)*:

ԳՐԱՆՅՈՒԹ, գ. (պատմ.)։ **Նյութ (կավասալ, թուղթ, մագաղաթ, քար ևն) որի վրա գրում են, որի վրա գրանշաններ կան:** .... Մենք վերապահությամբ ենք մոտենում գրի և **գրանյութի** հարցերին *(Մով.[1], էջ 30)*:

ԳՐԱՌԻԹՄ, գ. **Գրի՝ գրվածքի ռիթմ՝ տեմպ:** Երբ առավոտի արծաթե լուսաթաղանթի վրա// **գրառիթմերն** իմաստ են ստանում *(ՎՀ[1], էջ 251):*

ԳՐԿԱԽԵՂԴ ԼԻՆԵԼ, բ. (դիպվ.): **Ամուր գրկախառնությունից «խեղդվել»:** ….Նրանք **գրկախեղդ,** պաչխեղդ **էին լինում**, տունը ուխտատեղի էր հեռու ու մոտ ազգականների համար …. *(ՎՍ, էջ 91):*

ԳՐՈՒՆՏԱԾԱԾԿ, ած., **Բնահողով ծածկված**: Ես կանգնել ու նայում էի այն ամենին, որ իր ամբողջ կյանքն են կազմել՝ անծայրածիր երկնքին, գետակին ..., մի քնած ձիու, **գրունտածածկ** փողոցին .... *(ԱԻՊ[1], էջ 28):*

ԳՐՉԱԿԵՆՏՐՈՆ, գ. (արվ.): **Գրիչների՝ հին ձեռագրերը ընդօրինակողների, արտագրողների կենտրոն:** Արցախ-Ուտիքի մշակութային օջախները, մասնավորապես **գրչակենտրոնները** …. սերտորեն կապված էին հարևան Սյունաց նահանգի մշակույթի հետ *(Հակ., էջ 5):*

ԳՐՉԱԿԵՆՑԱՂ, ած. (փխբ.): **Գրող՝ ստեղծագործող:** Եկել եմ ու դեմ առել **գրչակենցաղ** այս խավին *(Տոն.[2], էջ 74):*

ԳՐՉԱՅԻՆ, ած. **Գրիչով կատարված:** .... Կան մարդիկ, որոնք գրկելու յուրօրինակ ձեռագիր ունեն: Իր **գրչային** ձեռագիրը չեմ տեսել, բայց գրկելու ձեռագիրը գիտեմ *(Սև., էջ 125):*

ԳՈՒՆԱԶՎԱՐԹ, ած. **Ուրախ, պայծառ գույներ ունեցող**: Երազախոսության յոթերորդ օրը ծառերը, որ կանաչ էին, դարձան մուգ շագանակագույն, սաղարթների մեջ սկսեցին լողալ **գունազվարթ** բեկբեկուն շրջանակներ …. *(Կայարան, 2021, թ.2):*

ԳՈՒՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Գույներով տարվելը որպես հիվանդագին վիճակ:** Այսօր **գունամոլությամբ** եք տառապում: Տեսիլներ ունեք. դարձյալ խմել եք *(XX դար, էջ 325):*

ԳՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. (իմ.նորբ.): **Քաղաքական-զաղափարական կողմնորոշումը փոխելը, կուսակցական մի թիմից մյուսին անցնելը:** Որո՞նք են «Օրինաց երկրի» վերջին **գունափոխության** հավանական շարժառիթները *(Հմգ, hraparak.am)::*

ԳՈՒՇԱԿԱՐՇԱՎ, գ. (փխր.); Իրար հաջորդող գուշակությունների բազմություն: Այդ դեպքից հետո նրա գուշակարշավը կանոնավոր դարձավ *(ԱԻՊ[1], էջ 106):*

ԳՐՔԱՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ, գ. **Գրքերը նկարազարդելը: Գրքանկարազարդման** մեջ մեծ հաջողությամբ է հանդես գալիս Գ. Խանջյանը *(Հակ., Սիմ.,էջ 402):*

Դ

ԴԱՒՇԱԿԱՆ, գ. Այդ ուժը ԻՀՊԳ-ի հզոր թևերից է, որը գեներալ Ղասեմ Սոլեյմանիի գլծավորությամբ խորհրդատվական և այլ գործողություններով մասնակցել է Իրաքում ու Սիրիայում **դաիշականների** դեմ պայքարին *(ՀՀ, 11.04.2019):*

ԴԱՆԴԱՂԱՁԱՅՆ, ած. **Դանդաղ՝ ցածր ձայնով արտասանված՝ ասված:** - «Միայն թե ոչ հիմա», -ներքնապես ցնցվեց նա՝ լսելով Սամոխինի **դանդաղաձայն** ճառը *(Շոլ., էջ 333):*

ԴԱՇԻՆՔԱՎՈՐՎԵԼ, բ. **Դաշինքներով՝ կուսակցություններով միավորվել:** Կամ նոր դաշինք են կազմելու, կամ էլ ստիպված են լինելու **դաշինքավորվել** ներսում*(Հմգ, azg.am):*

ԴԱՌՆԱՄՈՐՄՈՔ, ած. **Դառնորեն մորմոքող:** Բայց այդ անարդարության չափազանց ձգձգումը, շատ ավելի **դառնա-**

մորմոք բոցերում հրկիզված՝ «նույնիսկ եթե դու գոյություն ունես»-ը վերածում է «դու արժանի չես գոյություն ունենալու»-ն .... *(Ակ, էջ 147)*:

ԴԱՌՆԱՐՑՈՒՆՔ, ած. **Աղի արցունք:**Սիրահարի **դառնարցունք** ժպիտ ունեմ իմ խորքում *(գուս. Աշ.[4], էջ 87)*:

ԴԱՍԱԴԱԴԱՐ, գ. **Դասամիջոց: Դասադադարների** դասընկերները .... շուրջն էին խմբվում *(ԳԹ, 22.04.2022)*:

ԴԱՍԱԺԽՈՐ, գ. **Դասի աղմուկ:** Եթե եղանակը անձրևային է, գլուխը բռունցքներին դրած ննջում էր քնաբեր **դասաժխորի** տակ.... *(ՎՍ, էջ 166)*:

ԴԱՍԱՎԱՆԴՎԵԼԻՔ, ած. **Դասավանդվելու: Դասավանդվելիք** պատմություն է երեխաների համար *(XX դար, էջ 164)*:

ԴԱՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Դասավորված լինելը, խաղի ընթացքում ինչ դասավորվածություն ունենալը՝ ինչ դիրք գրավելը, որ մասում խաղին մասնակցելը:** Մարզիչը նաև խոստովանում էր, որ ապշել էր, թե ինչպես է տղան, փոխելով թիմերն ու թիմակիցներին, մարզիչներին ու **դասավորվածությունները,** շարունակում ներդնել իր բոլոր ուժերը *(Կայ., էջ 98)*:

ԴԱՏԱՐԿԱԾՈՒԾՔ, ած. (փխբ.): **Չքավոր՝ ընչազուրկ՝ թըշվառ՝ խեղճ:** ... **Դատարկածուծք** այս երկրում կուշտ բխկացող ու երջո *(Տոն.[2], էջ 11)*:

ԴԱՏԱՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Դատարկված լինելը, դատարկված վիճակը:** .... Դատարկված էր թվում իմ այդ անկյունը .... Իմ այդ անկյունի **դատարկվածության** զգացողությունն էր միայն, կարծես, լցվել մշուշի նման *(Սուր., էջ 256)*:

ԴԱՏՈՂՈՒՆԱԿ, ած. **Դատելու ունակություն ունեցող**... Նա կրթված է՝ առանց ցուցամոլության, **դատողունակ**՝ զերծ խորամանկություններից ... *(ԱԻՊ[1], էջ 39):*

ԴԱՐԱՎԱՆԴԱՎՈՐՈՒՄ, գ. **Դարավանդներ շինելը**: .... Օգտագործումը **դարավանդավորման** միջոցով հնարավորություն է տալիս .... պայքարել հողատարման (էրոզիայի) դեմ (*Սաֆ., էջ 83*):

ԴԱՐՉՆԱՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Դարչնագույնին տըվող մանուշակագույն:** .... Սևաթույրը պսպղում էր մուգ **դարչնամանուշակագույն** ցոլքերով *(Լեմ, էջ 208)*:

ԴԱՐՉՆԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Դարչնագույնին տվող շագանակագույն:** Այս ընդհանրության մեջ հիմնականը մուգ թավշականաչն է և **դարչնաշագանակագույնը** .... *(Հակ., էջ 42):*

ԴԱՓՆԵԹՈՒՓ, գ. **Դափնու թուփ**: Տե՛ս ԲԱՄԲՈՒԿԵ-ի օրինակը:

ԴԱՓՆԵԿԵՌԱՍԵՆԻ, գ. **Դափնեկեռասի ծառ**: Խոնավ կտորով մաքրելով պատշգամբի ձախ անկյունում վեր ձգվող **դափնեկեռասենու** ճյուղերի տակ տեղադրված փոքրիկ սեղանը՝ Ռոզին շարեց հախճապակե խոր ամանները .... *(Կայարան, 2014, թ. 3):*

ԴԵՂԱԴԱՐԱԿ, գ. **Դեղերի դարակ. դարակ, որտեղ դրվում՝ պահվում են դեղերը:** Խոզերը նրա համար լողասենյակի **դեղադարակում** գտնված վարդագույն դեղով մի մեծ շիշ էին ուղարկել .... *(Օրուել, էջ 129):*

ԴԵՂՁԱՆԻԿԱՅԻՆ, ած. **Ինչպես դեղձանիկներինը, դեղձանիկների դայլայլը հիշեցնող:** Բենը հիշեց ընկերոջ՝ Ստեփանի **դեղձանիկային** երգերը *(Բակուր, էջ 82):*

ԴԵՂՆԱԲԱՑԱԳՈՒՅՆ, ած. **Բաց դեղին գույնի:** Նա կանգնում է երկար, անշարժ, կարծես **դեղնաբացագույն** մարմարից քանդակված *(Շոլ., էջ 369):*

ԴԵՂՆԱԳՈՐՇԱԿԱՐՄԻՐ, ած. **Դեղինին տվող գորշակարմիր**: .... Դա ավազաքարի գունախաղն է, այս անկրկնելի, **դեղնագորշակարմիր**, կարմրադեղնագորշ և այլ երփներանգումը *(Հանդէ², էջ 99*):

ԴԵՂՆԱԺԱՆԳԱԳՈՒՅՆ, ած. **Դեղինին տվող ժանգագույն:** .... Ծառուղիներում լուսարձակներն արտաշնչում էին իրենց **դեղնաժանգագույն** գոլորշին .... *(Ժիոնո, էջ 124)*:

ԴԵՂՆԱԾԻՐԱՆԱԳՈՒՅՆ, ած. **Դեղինին տվող ծիրանագույն**: Պտուղները .... ունեն տարբեր գունավորում՝ դեղին, **դեղնաածիրանագույն**, երբեմն կարմրագույն երանգով .... (*Սաֆ., էջ 40*):

ԴԵՂՆԱՍԱԹԱԳՈՒՅՆ, ած. **Դեղինին տվող սաթագույն:** .... Եթե դրա վրա նայես առանց ակնոցի, **դեղնասաթագույն** է .... *(Ֆրիշ, էջ 48)*

ԴԵՂՆԱՍԵՎ, ած., **Այստեղ՝ դեղին և սև շերտերով**: Ժամանակ առ ժամանակ կսվում էր պստլիկ **դեղնասև** գորտերի՝ կոռոբորիների (նրանք ծխախոտի մնացորդների չափ են և շերտավոր – իսկը նշանակության թիրախ) բարալիկ, ականջ ծակող ծվծվոցը… *(Դար., էջ 171):*

ԴԻՄԱԶԱՐԿ (ՏԱԼ), գ. **Դիմահարված (տալ):** .... Տվեց նրան այն պարզ ու հպարտ **դիմազարկը**, որը նա գիտեր տալ մարդկանց .... *(Տոլ., էջ 38):*

ԴԻՄԱՆԿԱՐՉՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ դիմանկարիչ:** Նա շատ երաժշտասեր է եղել, նրա դուստրը՝ **դիմանկարչուհին**, նույնպես հրաշալի երաժիշտ է եղել *(Վագ., էջ 309):*

ԴԻՄԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Դեմքի արտահայտություն:** Տանում փողը հանձնում էի մեր հաշվապահին, ապա սրահով մեկ պտտվում մինչև հայելի, չադրաս հարդարում, **դիմարտահայտությունս** հզորացնում - քնքշացնում .... *(Նիկ., էջ 101):*

ԴԻՄԱՓՈՇՈՏ, ած. **Վրան դիմափոշի նստած, հավաքած:** Երբեմն մանրանկարներով (**դիմափոշոտ** կեղծամով տիկին ....) զարդարված ծխախոտատուփերի և .... արանքում որևէ գլուխգործոց կարող է աննկատելի մնալ *(ԱՄ, էջ 17):*

ԴԻՏԱԶՆՆՈՒՄ, գ. **Դիտելը և զննելը**: ՄԱԿ-ը գործարկել է մոլորակում հրդեհների **դիտազննման** ինտերնետ-պորտալ *(Հմգ, armenpress.am):*

ԴԻՏԱԿԵՏԱՅԻՆ, ած. **Որպես դիտակետ ծառայող, դիտակետի: Դիտակետային** հարթակը հնարավորություն էր տալիս նրան դիտելու զբոսայգում զբոսնող հյուրերին *(Մոր., էջ 302):*

ԴԻՏՈՐԴԱՀՈՍՔ, գ. **Ընտրատարածքներում դիտորդների հոսք՝ կուտակում:**Ընտրական մի շարք տեղամասերում **դիտորդահոսքն** ակնհայտ է *(Հեռ., Ֆրի նյուզ, 25.07.2021):*

ԴՂՐԴՈՒՆ, ած. **Դղրդացող, դղրդոց հանող:** Սառույցի վիթխարի բլրանման բեկորներ, որոնք անընդհատ պոկվում են ափի հավերժական սառցալեռներից, **դղրդուն** փլուզումով ընկնում ծովը .... *(Սուր., էջ 326-327):*

ԴՅՈՒՐԱԼՅՈՒՄԻՆԵ, ած. **Դյուրալյումինից պատրաստված:** Հետո վեր կացա. քիչ էր մնում շուռ տայի աթոռը: Ավելի ճիշտ՝**դյուրալյումինե** բազկաթոռը *(Դով., էջ 149):*

ԴՅՈՒՐԱԿՈՒՌ, ած. **Հեշտ կռելի:** Սակայն գլխուղեղի գործառնող սխեմաները զարմանալիորեն **դյուրակուռ** են .... *(ԴԳ, էջ 27):*

ԴՇԽՈՅԱՎԱՅԵԼ, ած. (բնստ.): **Թագուհուն վայել:** Երբ նայում եմ ձեր ծիրանիներին// Ու ձեր կեցվածքին **դշխոյավայել** …. *(Սարմեն, էջ 243):*

ԴՊՐՈՑԱՇԻՆԱԿԱՆ, ած. **Դպրոցաշինությանը վերաբերող:Դպրոցաշինական** աշխատանքներին զուգահեռ մարզի որոշ դպրոցներ համալրվել են կոշտ գույքով *(Հմգ, armenpress.am):*

ԴՌՆԱՊԱԿԻ, գ. **Դռան ապակի:** Աննան ցույց տվեց քիչ առաջ սրբածս **դռնապակին** …. *(Նիկ., էջ 126):*

ԴՐԱՄԱՆՄԱՆ, ած. **Դրամի նմանող՝ արտաքին տեսք ունեցող:** …. Դրամները կամ **դրամանման** իրերը (երկկողմ կնիքներ, մեդալիոններ և այլն) … *(Մով.[1], էջ 47):*

ԴՐԱՄԱՏԵՆԴ, գ. (դիպվ.): **Դրամ ձեռք բերելու՝ վաստակելու հիվանդագին ցանկություն:**Ընդհանրականմիերևույթէլկա՝**դրամատենդ** *(Հմգ, iravunq.am):*

ԴՐՈՇԱԿԱԿՈԹ, գ. **Դրոշաձող, դրոշի ձողը՝ կոթը:** Ֆ. Ռուզվելտը հարձակվեց նահանգի դրոծը բռնած դատավոր Ջ. Մախոնիի վրա և բռնեց **դրոշակակոթից** *(Յակ., էջ 119):*

ԴՐՈՇՄԱԿՏՈՐ, գ. **Դրոշմվածքով՝ վրան դրոշմվածք ունեցող կտոր:** Նրանք պատկերված են հնդկական մի **դրոշմակտորի** վրա աստծուն զոհ մատուցելիս *(Շախ., էջ 285):*

ԴՐՈՇՄԱՆԱԽՇ, ած. **Դրոշմներով նախշված**: Ֆլորենցիայից ստացված էին սրբապատկերներ... Իսպանիայից՝ համեմունքներ, **դրոշմանախշ** սև, արևելյան գորգեր... *(Պար., էջ 6):*

Ե

ԵԶՐԱՇՐՋԱՆԱԿ, ած. **Շրջանակով եզրված:** Թվիդե կոստյումով և **եզրաշրջանակ** ակնոցով *(XX դար, էջ 435):*

ԵԹԵՐԱԶՐԿԵԼ, բ. **Հանրային հեռարձակումից զրկել՝ արգելել:** Պարոն Ամալյանը…. հենց ինքն է ստորագրել Ցայգի լիցենզիան, երբ դեռ ՀՌԱՀ ղեկավարն էր, իսկ հիմա **եթերազրկում** է *(Հմգ, armlur.am):*

ԵԹԵՐԱԶՐԿՈՒՄ, գ. **Հանրային հեռարձակումից զրկելը՝ թույլ չտալը:** Տեղի է ունենում Հ2 հեռուստաընկերության **եթերազրկման** և դրան առնչվող դատական գործընթացի վերաբերյալ ասուլիս *(Հմգ, livenews.am):*

ԵԹԵՐԱՄԱՐՄԻՆ, ած. **Եթերային մարմին ունեցող:** Մի աղջիկ՝ մետաքսե գուլպաներով, փետրազարդ ու **եթերամարմին**, …., իջավ մեքենայից *(Վուլֆ, էջ 70)*:

ԵԹԵՐԱՍԱՀՔ, ած. **Եթերային սահք ունեցող:** Տիմարքոսը հայացքն ուղղելով ներքև՝ տեսնում էր **եթերասահք** կղզիների միջև ամփոփված ծովը երկու խոռոչանցքով…. *(Կայարան, 2014, թ. 3):*

ԵԼԱԿԱԿԱՐՄԻՐ, ած. **Ելակի գույնի կարմիր գույն ունեցող**: …. Ամեն բան շաղվեց **ելակակարմիր** դոնդողի թաղանթի հետևում …. *(ՋՀ, էջ 376)*:

ԵԼԱԿԱ-ՄՈՐԵԳՈՒՅՆ, ած. **Ելակի և մորու գույնի**: Պատրաստի գինին …. մուգ կարմիր գույնի է և վառ արտահայտված **ելակա-մորեգույն** երանգներով*(Դասագիրք, էջ 137)*:

ԵՂԵԳՆԱՁԱՅՆ, ած. (բնստ., փխբ.): **Եղեգների սոսափի նմանվող ձայն ունեցող:** Հե՜յ, սարվորներ, դուք սրտիս մոտ,// **Եղեգնաձայն** սեր, առավոտ,…. *(գուս. Աշ.[2], էջ 51):*

ԵՂՋԵՐՎԱՁԱԳ, գ. **Եղջերուի ձագ**: …. Նա **եղջերվաձագ** էր գետակի ափին …. *(Վուլֆ, էջ 171)*:

ԵՂՋԵՐՎԱՊԱՀ, գ., ած. **Եղջերուներ պահող՝ խնամող:** …. Իմ չորս որդիները հրաժարվեցին **եղջերվապահ** դառնալ …. *(Բակուր, էջ 271):*

ԵՆԹԱՌԼՈՐՏ, գ. **Հիմնական ոլորտի մեջ ներառվող ստորին ոլորտ:** …. [Բնութագրիչները] թույլ են տալիս արտատեքստային ոլորտն էլ պայմանականորեն բաժանելու նախատեքստային և հետտեքստային **ենթաոլորտների** *(Կայարան, 2022, թ. 1):*

ԵՌԱՃԱԿՏՈՆ, ած. **Երեք ճակտոն (շենքի ճակատի եռանկյունաձև կամ շրջանաձև վերին մասը) ունեցող՝ ճակտոնով:** Իսկ դիմացը …. ահագնանում էր …. **եռաճակտոն** արքայարանը …. *(Սուր., էջ 136):*

ԵՌԱՆԿՅՈՒՆԱԳՄԲԵԹ, ած. (արվ.): **Եռանկյունի գմբեթ ունեցող՝ գմբեթով:** Հայտնիներն, անշուշտ, …. 1263 թ. կանգնեցրած և Կարմրաշենի XIII դ. **եռանկյունագմբեթ** քանդակազարդ մատուռներն են …. *(Հակ., էջ 23):*

ԵՌԱՎԱԳՈՆ, ած. **Երեք վագոն ունեցող**: …. «Բանվորական» **եռավագոնը** գիծ մտավ, ու ամեն տնակի մոտ կիսակայարան սահմանեցին *(ԿՍ, էջ 121):*

ԵՍԱԶՈՒՐԿ, ած. **Ինքնությունից զուրկ**: Այս առումով՝ ներշնչանքի րոպեները **եսազուրկ** են *(ԴԳ, էջ 142):*

ԵՎԱՅԱՆՄԱՆ, ած. **Եվայի նման, Եվայի բնավորությամբ:** Տեսնես նրանց մեջ է՞լ կա **եվայանման** տիպ, որը անվերջորեն հյուծի իր ամուսնուն *(Բակուր, էջ 35):*

ԵՏՈՒՐԱՐՏԱԿԱՆ, ած., (պատմ.): **Ուրարտականին հաջորդող**: Ճարտարապետական հուշարձաններից բացի, **Ետուրարտական** դարերի Էրեբունի-Երևանի պատմության համար կարևոր նշանակություն ունեն …. հայտնաբերված բազմաթիվ

դրամները և նյութական կուլտուրայի մնացորդները *(Հակ., Միմ., էջ 27)*:

ԵՐԱԶԱՌԱՏ, ած. **Երազներով առատ՝ լեցուն:** .... Քուն մտավ՝ անհանգիստ, **երազառատ** քուն *(Աթք., էջ 5)*:

ԵՐԱԶԱՎՈՐՎԵԼ, բ. **Երազանք դառնալ:** Իմ անունը.... **երազավորվել** է նրանց երգում ու թևերում *(ՎՀ², էջ 40)*:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆԱՆԱԼ, չբ. **Երաժշտական բնույթ ունենալ՝ ստանալ:** Լսելի է ռնգեղջյուրների վազքի բարձր աղմուկը: Այդ աղմուկները սակայն **երաժշտականացած են** *(XX դար, էջ 357)*:

ԵՐԱՄԱԽԱՂ, գ. **Երամով՝ խմբով խաղը:** Երեկ առաջին «գրադների» թնդյունների մեջ, **երամախաղից** պոկվեց// մի փոքրիկ՝// թոռնիկն իմ, փղձկոցով ընկավ գիրկս .... *(ՎՀ², էջ 300)*:

ԵՐԱՇՏԱԿԱՅՈՒՆ, ած. **Երաշտի նկատմամբ կայուն, երաշտադիմացկուն, երաշտից չվնասվող:** Դավիդովը նախորդ օրը գնացել էր հարևան շրջան, սելեկցիոն կայան՝ գոնե մի քանի հեկտարի համար արտապլանային կարգով ձեռք բերելու **երաշտակայուն** գարնանացան ցորեն .... *(Շոլ., էջ 233)*:

ԵՐԳԱԲԱՌ, գ. **Երգ(եր)ի բառ(եր):** Կհնչեն դարձյալ բոլոր ազգ-ազգի մեղեդիների **երգաբառերի** ու պարային շարժումների հետ թև-թևի .... *(Նիկ., էջ 119)*:

ԵՐԳԱԹԱՔՈՒՅՑ, ած. (բնստ.): **Երգը թաքցրած**: Դեռ կբացվի // Մեր հանճարի աչքը՝ ինչպես // **Երգաթաքույց** բառն է // Որդու // Գերեզմանի նման բացվել մեր Հարությա՛ն համար // Ու մեր կերպի՛ *(Տոն.², էջ 52)*:

ԵՐԵՎԱԿԱՅԱԽԱՂ, գ. **Երևակայության խաղ:** .... Անդրդվելի կերպարի մեջ ի հայտ է գալիս .... **երևակայախաղերին** անձնատուր մեկը *(Ակ, էջ 180)*:

ԵՐԵՎԱՆԱՆՄԱՆ, ած. **Երևան քաղաքի նման:** Բայց խելոք են մտածել հայերը, որ **երևանանման** են կառուցել Ամերիկայի այս անկյունը *(Բակուր, էջ 18):*

ԵՐԹԱՆՄԱՆ, ած. **Երթի նման, երթ հիշեցնող, ինչպես երթի ժամանակ:** Շուբերտն անընդհատ հնչեցնում է իր «աստվածային երկարաբանությունը» հարահոլով, **երթանման** ընթացքով *(-Սուր., էջ 270):*

ԵՐԹԱՔԱՅԼԵԼ, բ. **Քայլել ինչպես երթի դեպքում, երթաքայլ կատարել**... Ինչի համար էին **երթաքայլում** բաճկոնների վրա սև շրջանակներ ունեցող կալանավորները *(Պետ, էջ 49):*

ԵՐԻԶԱՔԱՆԴԱԿ, գ. (արվ.): **Եզրային ժապավենաձև քանդակ:** Չափազանց գեղեցիկ է նաև եկեղեցու նրբահյուս **երիզաքանդակներով** զարդարված հյուսիսային դուռը *(Հակ., էջ 21):*

ԵՐԿԱԹԱԲԻԾ, գ. **Երկաթ պարունակող բիծ: ....** Պալարների մի մասի մոտ նկատվում է**երկաթաբծերի** առկայություն *(Մել., էջ 41):*

ԵՐԿԱԹԱՆՄԱՆ, ած. **Երկաթի նմանություն՝ տեսք ունեցող**: Մերկ ծառերի **երկաթանման** սև ճյուղերը տարուբերվեցին *(Ուայլդ, էջ 223):*

ԵՐԿԱՇՏԱՐԱԿԱՆԻ, ած. **Երկու աշտարակ ունեցող**: Պետրարկան որպես կացարան ստացավ Ռիվա դել Սկյավոնիի վրա գտնվող **երկաշտարականի** մի պալատ *(Պար., էջ 172):*

ԵՐԿԱՐԱԵՂՋՅՈՒՐ, ած. **Երկար եղջյուրներ ունեցող, երկար եղջյուրներով**: Մառախուղի միջոց մեզ ընդառաջ էր գալիս **երկարաեղջյուր** կովերի հոտը *(Դար., էջ 110):*

ԵՐԿԿՈՏՈՇԱՆԻ, ած. **Երկու կոտոշ ունեցող:** Աֆրիկյան ռնգեղջյուր է, որ **երկկոտոշանի** է *(XX դար, էջ 293):*

ԵՐԿԿՈՏՈՇԱՆԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Երկկոտոշանի լինելը, երկու կոտոշ ունենալը:** Ասեք իմանամ, **երկկոտոշանիությունը** ասիակա՞ն ռնգեղջյուրինն է, թե՞ աֆրիկյան *(XX դար, էջ 309):*

ԵՐԿՀՅՈՒՍ, ած. (արվ.): **Երկու-երկու հյուսված:** …. Եկեղեցու հարավային պատուհանի ուղղահայաց շրջանակների **երկհյուս** ոճավորված տերևազարդերը …. *(Հակ., էջ 117):*

ԵՐԿՆԱԼԱՐ, ած. **Երկնքի լարեր՝ ուղիներ:** Ես աչք եմ բացել արևի ծոցում.// Հոգով շափաղել **երկնալարերով** եդեմ ծաղկոցում*(գուս. Աշ.⁴, էջ 15):*

ԵՐԿՆԱԾԱՐԻՐ, ած. **Երկնքի գույնով ներկված, երկնագույն:** Վայրի ծաղիկներ **երկնածարիր** *(ՎՀ², էջ 301):*

ԵՐԿՆԱԾՈՎ, գ. (բնստ., փխբ.): **Երկնակամար:** Ահա տեսա, Արարատը՝ գլխին մութ ամպ,//Ամպից վեր՝ **երկնածովի** ջինջ հայելին…. *(Սարմեն, էջ 85):*

ԵՐԿՆԱԿԱԹ, ած. **Երկնքից թափվող:** Անձրև ցողակաթ, անձրև շողակաթ,// Իմ յարի նման դալար, **երկնակաթ** *(գուս. Աշ.³, էջ 53):*

ԵՐԿՆԱՀԵՂԵՂ. ած. (փխբ.): **Երկինքը հեղեղող՝ ծածկող:** Ձեր փառքն ասեմ, քաջանց-քաջեր,// **Երկնահեղեղ** կրակ շանթեր…. *(գուս. Աշ.⁴, էջ 161):*

ԵՐԿՆԱՃԵՐՄԱԿ, ած. **Երկնքի նման ճերմակ**: …. Ի՜նչ ներքնաշորեր էին քաշում կանացի փխրուն մասերին՝ շղարշե հարթ, կիպ գրկող սպիտակեղեն՝ մգասև կամ նրբափայլ մարմնագույն, …. լոգանքի հոտավետ աղերի անուշ բույրով, որ բողբոջուն ամպի պես բարձրանում էր **երկնաճերմակ** կրծքերից *(ՋՀ, էջ 205)*:

ԵՐԿՇԱՊԻԿԱՆԻ, ած. (տեխն.): **Երկու շերտից պատրաստված**: Խտացումն անցկացնում են նաև **երկշապիկանի** բաց կաթսաներում .... *(Դասագիրք, էջ 126)*:

ԵՐԿՇՆՈՐՀ, գ. **Կրկնակի շնորհ:** 1928-ին Royal Dutch-Shell -ի՝ գրեթե մենաշնորհը դարձել էր **երկշնորհ** (duopoly) *(ՋՔ, էջ 157)*:

ԵՐԿՍԱԿԱԳԻՆ, ած. **Երկու սակագին ունեցող:** Եթե բնակիչը ցանկանում է իր նախաձեռնությամբ տեղադրել **երկսակագին** հաշվիչ, ապա խնայբանկում վճարում է հաշվիչի արժեքը *(Հմ՛g, aravot.am)*:

ԵՐԿՐԱԲԱՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ած. **Երկրաբանական և տընտեսական:** .... Որտեղ հստակ են ուսումնասիրության ձևերը, ... հանքավայրերի **երկրաբանատնտեսական** գնահատումը .... *(ՍԹ, էջ 79)*:

ԵՐԿՐԱԿԱՐՈՏ, գ. (բնստ.): **Կարոտ երկրի հանդեպ**: Ու ձգողության աստղային ծիրում // **Երկրակարոտին** հաղթելու համար // Նա կհաղորդի իր հրթիռ-ձիուն // Նոր Հանդիպումի տենչանք ու ամառ *(Տոն.³, էջ 68)*:

Զ

ԶԱՆԱԶԱՆԱՇԱՐՔ, ած. **Տարբեր չափսերի շարքերով**: Նա ընդամենը սարքի է գցել խոփեր՝ հիսունչորս, մարտական պատրաստականության են բերված տասներկու **զանազանաշարք** ցանիչներ ... *(Շոլ., էջ 259)*:

ԶԱՆԴԱԽԱՉ, գ. **Զրադաշտական խաչ:** .... Քրդուհին ինձ առաջարկում է Վանա կատվի պատկերներով զանազան իրեր,

նաև հայերեն Վան գրությամբ բաժակներ, **զանդախաչեր** ....*(Կայարան, 2015, թ. 4)*:

ԶԱՌԻԹԱՓԱՎՈՐ, ած. **Զառիթափություն՝ թեքություն ունեցող:** Անհայտ բանաստեղծի համար այն փոխարկվում էր համարյա թե Ավերնյան կղզու՝ շրջապատված **զառիթափավոր**, թավ անտառներով աճած ափերով .... *(ԿՎ, էջ 16)*:

ԶԱՎԵՇՏՈՐԵՆ, մկբ. **Զավեշտաբար:** Թիկունքում անդադրում շրխկում էր գլխավոր մուտքի դուռը, **զավեշտորեն** ընդհատելով ուժեղ ու տաք գվվոցը, որ ալիք-ալիք տարածվում էր հանդերձարանում *(Բեեկ., էջ 67-68)*:

ԶԱՎԹԻՉԱԲԱՐ, մկբ. **Զավթիչի նման, ինչպես զավթիչը:** .... Չորս սենյականոց մեծ տունը **զավթիչաբար** ոտքիս տակն առա *(Նիկ., էջ 52)*:

ԶԱՐԴԱԲԱՆՎԱԾ, ած. **Զարդարված:** Կույս Մարիամի դեմքը մութ է, գլխին ալմաստներով և արծաթով **զարդաբանված** թագ է դրված .... *(Վագ., էջ 338)*:

ԶԱՐԴԱՀԱՐԴԱՐԱՆՔ, գ. (արվ.): **Որպես հարդարանք կատարված զարդանախշ:** Խորանների **զարդահարդարանքին** շատ հարազատ են նաև անվանաթերթերը *(Հակ., էջ 57)*:

ԶԱՐԴԱՁԵՎԱՅԻՆ, ած. (արվ.): **Զարդանախշերի ձևային:** Հայտնի է, որ հատկապես վաղ միջնադարում՝ քրիստոնեական **զարդաձևային** համակարգի կազմավորման շրջանում խորանների արտանախշազարդերն ունեցել են խորհրդանշական իմաստ *(Հակ., էջ 40)*:

ԶԱՐԴԱՇԽԱՐՀ, գ. **Զարդերի աշխարհ**: Հանդիպում արվեստի հետ: Զարդ. զարդանախշից՝ **զարդաշխարհ** *(Հմգ, tomsarkgh.am)*:

ԶԱՐՀՈՒԵԼԻՈՐԵՆ, մկբ. **Սարսափելի կերպով:** …. Չկա մի ընտանիք, որի այս կամ այն անդամը կալանավորված, աքսորված կամ գնդակահարված չլինի որպես «ժողովրդի թշնամի». հորջորում, որ **զարհուելիորեն** անիմաստ, անհասկանալի, անհեթեթ էր հնչում մեր ականջին *(Սուր., էջ 102):*

ԶԱՐՄԱՆԱՀՆԱՐ, ած. **Զարմանալի և հնարված, զարմանալիորեն հնարված:** .... Տեսնում եմ, թե ինչպես է ջուրն իր **զարմանահնար** լեզվակներով վստահաբար-դանդաղ մոտենում գրքերին ու ձայնասկավառակներին .... *(Ֆրիշ, էջ 416)*:

ԶԲԱՂՎԵԼԻՔ, գ. **Զբաղվելու բան:** .... Վարսենիկը ուրախ էր, որ երեխաները **զբաղվելիք** ունեն *(Սև., էջ 26):*

ԶԲՈՍՈՒՂԻ, գ. **Ճեմուղի:** …. Շլացուցիչ ձմեռային արևն առկայծում էր մեռած տեչրներով ծածկված **զբոսուղիներում** *(Ռ-ուելբեք 1, էջ 214):*

ԶԳԱՅՈՐՈՇՈՒՄ, գ. **Զգայարաններով որոշելը՝ գնահատելը**: …. Նշվում է տեսակի անվանումը, գինենյութի քիմիական անալիզը, նրա միկրոկենսաբանական բնութագիրն ու **զգայորոշման** գնահատականը *(Դասագիրք, էջ 171)*:

ԶԳԱՑՄՈՒՆՔԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Զգացմունքային կերպով, զգացմունքով:** Նրան երաժշտություն էին սովորեցրել, և նա **զգացմունքայնորեն** բարկարոլաներ ու վալսեր էր նվագում դաշնամուրով *(Մոր., էջ 251):*

ԶԶՎԱԽԱՌՆ, ած. **Միաժամանակ զզվելով, զզվանքի հետ միասին:** .... Դավիդովը նրան վերաբերվում էր թեթևակի **զզվախառն** խղճահարությամբ և անտարբերությամբ .... *(Շոլ., էջ 431):*

ԶԻՆՎՈՐԱԿԱՆԱՎԱՐԻ, մկբ. **Զինվորականների նման, ինչպես զինվորականները:** Նոր կենվորը դուրս եկավ մի անդինջ և **զինվորականավարի** անվայելուչ մարդ *(Շոլ., էջ 223):*

ԶՄՌՍԱԿՆԻՔ, գ. **Զմուռսով կնիք**: .... Փակ էր **զմռսակնիքով** .... *(Վուլֆ, էջ 27)*:

ԶՄՐՈՒԽՏԱԳՈՒՅՆ, ած. **Զմրուխտի գույնի՝ վառ կանաչ:** Երբ ալիքներն սկսում են **զմրուխտագույն** երանգներ ստանալ, նրանց շարժումն ուժեղանում է .... *(Վագ., էջ 234):*

ԶՄՐՈՒԽՏԱԹԵՎ, ած. (բնստ., փխբ.): **Կանաչ թևեր ունեցող**: Գվգվում են **զմրուխտաթև** հավքերը,// Նրանց մեջ էլ տեսնում եմ քո պատկերը *(գուս. Աշ.[1], էջ 26):*

ԶՄՐՈՒԽՏԱՎԱՌ, ած. (բնստ., փխբ.): **Կանաչով պատված, բուսականությամբ առատ: Զմրուխտավառ** մով սարերի շուշան, սուսամբար ունեմ ես *(գուս. Աշ.[1], էջ 72):*

ԶՄՐՈՒԽՏԱՓԱՌ, ած., (փխբ.): **Կանաչով ծածկված:** .... Կարճ խուզված **զմրուխտափառ** սիզամարգերի վրա տարածվեցին զարդասենյակի պահարան հիշեցնող փոքրիկ դղյակի ցածրիկ թևերը .... *(ԱԱ, էջ 224)*:

ԶՈՐԱՀԱՎԱՔՈՒՄ, գ. **Զորահավաք կատարելը:** Բանն այն է, որ **զորահավաքման** կետ պետք է ներկայանային դեռ երեք օր հետո *(Բեեկ., էջ 111):*

ԶՈՐԱՆԱԽՇ, գ. **Զորքերի նախշաձև տեղաբաշխումը:** .... Շարունակում է ի ներս ևս հաստատել ծովից-ծովի **զորանախշը** .... *(Նիկ., էջ 47):*

ԶՈՐԱՋԻՂ, գ. **Ուժեղ՝ հզոր ջիղ՝ կամք:** Խոսքն իմ գոյի էատարրն է անզանցելի: **Զորաջիղը**: Անթացուպը *(ՎՀ[1], էջ 265):*

ԶՍՊԱԿԱՊԵԼ, բ. **Շարժումը կաշկանդելու՝ զսպելու նպատակով կապել**: **Զսպակապեցին**, դրեցին սայլակի մեջ ու տարան մի մեծ սենյակ, ուր ինձ պես շատերը կային *(Կայարան, 2014, թ. 3):*

ԶՍՊԱՆԱԿԱՆՄԱՆ, ած., **Զսպանակի տեսք ունեցող**… Բընի հատակին կար նուրբ արմատներից հյուսված **զսպանականման** փռոց *(Դար., էջ 38):*

ԶՐՈՅԱՆԱԼ, չբ. (փխբ.): **Ոչնչանալ, «հեչ» դառնալ:** Ո՞նց թե դրանից ի՞նչ օգուտ. էն, որ մանկությանս երկու կաթվածները հե՛չ կլինեն: **Կզրոյանան** *(Նիկ., էջ 13):*

ԶՐՈՅԱՆԱԼ, բ. **Զրո դառնալ**: Հաշվիչի **զրոյանալուն** զուգահեռ՝ վերելակդ արդեն քո ուզած հարկում, դու՝ սպասասրահում կլինես *(Կայարան, 2022, թ. 1):*

ԶՐՈՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Զրո լինելը:** Եվ, ընդհանրապես, **զրոյությունը** համարվում է բարձր ծագում, և զրոների առջև լայնարձակ հեռանկարներ էին բացվում …. *(Կայարան, 2014, թ. 3):*

ԶՐՈՒՑԱԽՈՍ, ած. **Զրուցող ու խոսող՝ պատմող** ներգաղթողները՝ հավատավոր, խաչով ու մոմով, **զրուցախոս,** ավանդապահ, շուտով համոզվել էին սակայն, որ խաչամերժ երկիրը առանձնապես հոգատար չէ….իրենց նկատմամբ *(Կայարան, 2015, թ. 4):*

ԶՐՈՒՑԱԿՑՈՒՀԻ, գ. **Զրուցակից կին՝ աղջիկ:** - Միանգամայն ճիշտ է, - ասաց քիմիկոսը և բարյացակամորեն նայեց իր **զրուցակցուհուն** *(Կլ., էջ 143):*

ԶՈՒԳԸՆԿԵՐՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ զուգընկեր:** Լեոն խընդրել էր չմասնակցել մարզումներին, որպեսզի լինի իր 4 տարվա **զուգընկերուհու** կողքին …. *(Կայ., էջ 391):*

ԶՈՒՍՊՈՐԵՆ, մկբ. **Զուսպ կերպով:** Կանացի մի ձայն, **զուսպորեն** սիրալիր *(Սուր., էջ 162):*

Է

ԷԲԵՆԱԳՈՐԾ, գ. **Եբենոսյա փայտից, սևափայտից զանազան իրեր պատրաստող արհեստավոր:** Գուցե սա այն հոգնածությունն է արհեստից, որ **էբենագործին** հանկարծակի բռնում է դազգահի մոտ *(XX դար, էջ 14):*

ԷԳԱԼԱՎՈՐԵԼ, բ. (մսնգ.):**Նույն տեսակի ոգելից խմիչքների կամ դրանց բաղադրամասերի խառնելը այն պայմանով, որ խառնման ենթակա խմիչքները կամ դրանց բաղադրամասերը արտադրվել են նույն մեթոդների կիրառմամբ և ծագել են նույն խաղողագործական տարածաշրջանից:**Առանձին մասերի գինենյութերն **էգալավորում** են և դնում պահպանման*(Դասագիրք, էջ 230)*:

ԷԳԱԼԻԶԱՑՆԵԼ, բ. (մսնգ.): Տե՛ս ԷԳԱԼԱՎՈՐԵԼ-ի բացատրությունը:Մինչև պահորակման դնելը առանձին մասեր փոխլցումից հետո **էգալիզացվում** են …. *(Դասագիրք, էջ 103)*:

ԷԹՆՈԶՏԻՉ, ած. **Ազգային զտում՝ մաքրում կատարող:** Թուրք-ադրբեջանական ագրեսիան **էթնոզտիչ** նկրտումներ հետապնդող գործողություն է *(Հմգ, tert.am):*

ԷԺԱՆԱՀՈՏ, ած. **Ոչ հաճելի հոտ ունեցող, (փխբ.): Էժանագին: Էժանահոտ** օծանելիք (Սև., *էջ 138):*

ԷԿՈԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ, ած. (մսնգ.): **Գոյապահպանական թունաբանությանը վերաբերող:** …. Աղտոտիչների անվտանգ քանակությունը վերահսկվում է **էկոթունաբանական** նորմավորման համակարգով *(ՍԹ, էջ 118):*

ԷԿՈԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Գոյապահպանական լարվածություն:** .... Յուրաքանչյուրի հետ կարող են կապված լինել .... տասնյակ **էկոլարվածության** գործոններ *(ՍԹ, էջ 20):*

ԷԿՈԼՈԳԻԱՑՈՒՄ, գ. **Էկոլոգիացնելը, գոյապահպանության պահանջներին հարմարեցնելը:** Դա .... **էկոլոգիացման** պահանջները հարգող մարդու մարտահրավերն է .... *(ՍԹ, էջ 4):*

ԷՆՈՔԻՄԻԿՈՍ, գ. **Էնոքիմիայի մասնագետ**: Այդ կանոնը սահմանել է **էնոքիմիկոս** Դելլեն *(Դասագիրք, էջ 128)*:

ԷՋԱՆԿԱՐ գ. **Էջում զետեղված նկար:** Հանրագիտարանն ունի նաև հարուստ պատկերազարդում, նրանում տեղ են գտել բանաստեղծի ու նրա ընտանիքի անդամների բազմաթիվ լուսանկարներ, ... տարբեր հանդեսներում տպագրված գործերի **էջանկարներ ....** *(ՊԲՀ, 2021, 1, էջ 240):*

ԷՏՅՈՒԴԱԿԱԼ, գ. **Նկարակալ:** Նա նավասենյակից բերեց իր **էտյուդակալը** և հենց այդտեղ՝ տախտակամածին, սկսեց նկարել *(Վագ., էջ 198):*

ԷՔՍՏՐԱԿՏԵԼ, բ. (մնգ.): **Էքստրակտ ստանալ**: .... Քաղցուն ինտենսիվորեն կապված ներկանյութերը թաղանթի բջիջներից **էքստրակտում** է *(Դասագիրք, էջ 94)*:

Ը

ԸՄԲՇԱՎԱՐԻ, մկբ. **Ընբիշի նման, ինչպես ընբիշը, ընբիշաբար:** Մարինան .... վեր ցատկեց ինչպես ծակոցից և .... , շարժելով լայնեղ ուսերը, սկսեց տղամարդավարի, **ընբշավարի** վեր քշտել թևերը *(Շոլ., էջ 301-302):*

ԸՆԴՈՒՆԵԼԻՔ, ած. **Որը պիտի ընդունվի, ընդունելու:** Հենց այդ ես եմ քո **ընդունելիք** որոշումը .... *(XX դար, էջ 189):*

ԸՆԴՎԶՈՂԱԿԱՆ, ած. **Ընդվզմանը բնորոշ՝ հատուկ**: **Ընդվզողական** շարժումը նրան ավելի հեռուն է տանում .... *(Ակ, էջ 29)*:

ԸՆԾԱՅԱՊԱՐՏ ԱՆԵԼ, բ. **Ընծաներ՝ նվեր տալով պարտավորեցնել:** Այվազովսկին երկու փոքրիկ ծովանկար բերեց, որոնցից մեկը նվիրեց տանտիրոջը, մյուսը՝ Մայկովին .... - **Ընծայապարտ** արեցիք Դուք մեզ, Իվան Կոնստանտինովիչ, - հուզված ասաց Գրիգորովիչը *(Վաղ., էջ 446)*:

ԸՆՉԱԸՂՁՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Ընչասիրություն:** Իրերն արդեն իսկ բարձրակետում են Սովորականի, // Անխուսափելի՝ **ընչաբղձության** պատճառով վաղուց .... *(Տոն.², էջ 32)*:

Թ

ԹԱԽԱՆՁԱԿԱՐՈՏ, ած. **Թախանձագին կարոտող**: Վեպը այս մակարդակում առաջին հերթին խելամտության վարժություն է՝ ի սպաս **թախանձակարոտ** կամ ընդվզող զգայունության *(Ակ, էջ 365)*:

ԹԱԽԾԱԳՈՐՈՎ, ած., մկբ. **Թախծոտ խանդաղատանքով:** Ծույլ կենդանիները **թախծագորով** նայում էին մեզ *(Դով., էջ 76)*:

ԹԱՂԱՆԹԱԿՈՒՅՏ, գ. **Թաղանթների կույտ**: Դիտապատուհանում երևացող նարնջագույն երկինքը ծածկվեց լողացող **թաղանթակույտերով** *(Լեմ, էջ 5)*:

ԹԱՂԱՆԹԱՑՈՒՄ, գ. (մսնգ.): **Թաղանթով ծածկվելը՝ պատվելը**: .... Գինին ծածկվում է սոլերի թաղանթով, և գինու-**թաղանթացման** առաջին փուլից 6 ամիս անց գինին վերալրցվում է *(Դասագիրք, էջ 157)*:

ԹԱՄԲՎԱԾՔ, գ. **Թամբվածի ամբողջությունը: Թամբվածքը** տնտղելով .... կարողացավ որոշել, որ հյուրը եկել է հեռվից և այդ օրը քիչ ճանապարհ չի կտրել *(Շոլ., էջ 6):*

ԹԱՆԱՔԱՔԻԹ, ած. **(փխբ.): Թանաքագույն քթով՝ քիթ ունեցող:** Հայրիկը հավատացնում էր, թե այդ **թանաքաքիթ** Դուենյան շատ նման է իր հորաքույր Ֆիլոմենային .... *(Փափ., էջ 14):*

ԹԱՆՁՐԱՓԵՇ, ած. **Թավ, անթափանց:** Պատկերի **թանձրափեշ** խորքում ինչ - որ մոգական հմայում կար .... *(Կայարան, 2021, թ. 2):*

ԹԱՇԿԻՆԱԿԱՉԱՓ, ած. **Թաշկինակի չափ՝ մեծությամբ:** .... Ծերից մի ճըրթ (մի **թաշկինակաչափ**) կտրեցի ու պահեցի, իբրև հիշատակ .... *(Նիկ., էջ 142):*

ԹԱՌԱԺԱՄ, գ. **Թառելու ժամ՝ իրիկնապահ:** ....Հավուճիվի սովոր տղա է, տուն է գալու քնելու համար, դուրս է գալու **թառաժամից** առաջ .... *(ԿՍ, էջ 117):*

ԹԱՎՇԱԽԱՌՆ, ած. **Թավշով՝ խիտ, նուրբ խավով խառն:** Աննան արդեն հագել էր **թավշախառն** բաց մետաքսե զգեստ .... *(Տոլ., էջ 155):*

ԹԱՏԵՐԱՇԱՐՔ, գ. **Իրար հաջորդող թատերական ներկայացումներ:** Մենք հեռուստացույցի ու **թատերաշարքերի** ուղեկցությամբ ենք իրար նայում .... *(Սև., էջ 49):*

ԹԱՑՏԱԿ, ած. **Տակը՝ ներքևի՝ ջրի մեջ եղած մասը թաց:** Ներսից խշշում եմ, դրսից օրորվում, տատանվում **թացտակ** նավի նման ... *(Նիկ., էջ 55-56):*

ԹԱՓԱՌԱՎԱԶՔ, գ. **Անընդհատ՝ շարունակ թափառելը՝ մի տեղից մյուսը գնալը: Թափառավազք**. Ես հաճախ չեմ իմանում, թե ուր եմ գնում .... *(ՎՀ², էջ12):*

ԹԱՓՈՒԼԱՏՈՒ, գ. **Թափուլ՝ խուրձ մատուցող, կալսելու համար խուրձերը բացող ու փռող:** Նրան էլ կթաղեն, **թափուլատու** Ֆյոդորին էլ կթաղեն մղեղով լեցուն իր գանգուր միրուքով .... *(Տոլ., էջ 503):*

ԹԱՓՔԱԾԱԾԿՈՑ, գ. **Թափքի ծածկոց:** Բրեզենտե **թափքածածկոցը** Լեոն ներկել էր ալյումինե-արծաթավուն ներկով *(Բեեկ., էջ 126):*

ԹԵԺԱԾԱՐԱՎ, ած. **Ուժգին ծարավ ունեցող:** Եվ մի ամբողջ գիշեր, **թեժածարավ** գույների մեջ թավալվելով,// ես ընկղմվել էի հովտի մանուշակներում *(ՎՀ[2], էջ 293):*

ԹԵԼԱՆՄԱՆ, ած., **Թելի ձևի, թելի տեսքով**: Էգերը ձու են դնում փտող բների մեջ, գերադասելով արմավենիների փըխրուն, **թելանման** միջակը *(Դար., էջ 101):*

ԹԵԼԱՔԱՂԵԼ, նբ. **Թելերի միջոցով՝թելերով կարկատել՝ հագուստի մաշված տեղը նորոգել:** Նա ամաչում էր հենց այն .... **թելաքաղած** տեղերի համար .... *(Տոլ., էջ 257):*

ԹԵՐԱԳՆԱՀԱՏԻՉ, ած. **Թերագնահատող, թերագնահատում արտահայտող:** Նրա **թերագնահատիչ** վերաբերմունքը հանդեպ իմ տեսակի ինձ դարձրեց կյանքի ազատամարտիկ *(Նիկ., էջ 38):*

ԹԵՐԱՅՐՈՒԿ, գ. **Որևէ բանի թերի այրված լրիվ չայրված մնացորդ՝ մաս**: ... Փորձել էր արմատախիլ անել նրան որովայնից՝ խոտաբույսերի, մոմի **թերայրուկի**, ժավելաջրով լվացումների և այլ դաժան միջոցներ ... *(ԱԻՊ[1], էջ 209):*

ԹԵՐԱՍՊԱՌՈՒՄ, գ. **Թերի՝ ոչ լիարժեք սպառում, սպառման առարկաների թերի օգտագործում:** .... Մեր դժբախտութ-

յուններն առաջացել են ո՛չ թե գերարտադրությունից, այլ **թերասպառումից** …. *(Յակ., էջ 264):*

ԹԵՐԹԱԹԱՓՎԵԼ, բ. **Թերթերը թափվել:** (փխբ.) **Հուսալքվել, հիասթափվել: Թերթաթափված**, տերևաթափ զգացումներ *(ՎՀ², էջ 258):*

ԹԵՐԹԻԿԱԹԱՓ ԼԻՆԵԼ, բ. **Թերթիկները թափվել:** Խնամքի բացակայության պատճառով վարդը **թերթիկաթափ էր եղել** …. *(Հմգ, Media Info):*

ԹԵՐԽՄՈՐՎԱԾ, բ. (մսնգ.):**Թերի՝ ոչ լիարժեք խմորված**: Փլուշը առանձնացնելուց հետո **թերխմորված** մասը պոմպի միջոցով լցվում է խմորող պահամանների մեջ *(Դասագիրք, էջ 101):*

ԹԵՐՄԱՑՔԱՋՈՒՐ, գ. **Ջրախառն կերակրի մնացորդներ, դրանց ջրային լուծույթ: ....** Իսկ մարագը ես ջուր չեմ տարել. երբեմն **թերմացքաջուր** եմ տանում ... մենք այնտեղ խոզ ունենք ... *(Շոլ., էջ 113):*

ԹԵՓՈՒԿԱՓԱՅԼ, գ. **Թեփուկների փայլ:** Բոլոր այդ հնաոճ ու կարճառոտ երգերի բովանդակությունն էին կազմում սերը .... անտառի աղմուկը և կարմրախայտի **թեփուկափայլը** *(ԱԱ, էջ 208)*:

ԹԵՔՈՏ, ած. **Փոքր-ինչ թեք: Թեքոտ** կրծքին առկայծում էին շքանշաններն ու կրծքանշանները: *(Դով., էջ 76):*

ԹԹՎԱԳՈՅԱՑՈՂ, բ. (մսնգ.): **Մանրէների խումբ, որոնց կենսագործունեության արդյունքում առաջանում են ճարպաթթուներ**: Այդ մանրէները պատկանում են **թթվագոյացողների** խմբին *(Դասագիրք, էջ 252)*:

ԹԹՎԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. (մսնգ.): **Թթուների կուտակվելը**: .... Այդ շտամները միմյանցից տարբերվում են ըստ **թթվակուտակման** չափերի *(Դասագիրք, էջ 252)*:

ԹԹՎԱՆՎԱԶԵՑՈՒՄ, գ. (մսնգ.): **Թթուների քանակի պակասելը՝ նվազելը:** Բոլոր տարբերակներում 10ºC-ի խմորման դեպքում ավելի պակաս **թթվանվազեցում** է դիտվել, քան 15ºC-ի դեպքում *(Դասագիրք, էջ 208)*:

ԹԻԱՆԱՎՈՐԴ, գ. **Թիանավ վարող:** Արբեցնող օդում շարժվում էին **թիանավորդների** ամբոխները .... *(ԿՎ, էջ 25)*:

ԹԻԹԵՌԱՅԻՆ, ած. **Թիթեռին վերաբերող**: Մարդիկ չգիտեին և երբեք չեն իմանա նրանց **թիթեռային** կյանքի տևողությունը և օրատև հրճվանքն ու տրտմությունները .... *(Կայարան, 2014, թ.3)*:

ԹԻԿՆԱԿԱՎՈՐ, ած. **Թիկնակ ունեցող՝ թիկնակով:** Շրջգործկոմի կուշտ, վարսակ կերած ձիերը հեշտությամբ տարան **թիկնակավոր** սահնակը .... *(Շոլ., էջ 13)*:

ԹԽԱՀԱՐՍ, գ. (բնստ., դիպվ.): **Թխամաշկ հարս:** Ով իմ սիրուն **թխահարս**, սև լի աչեր, թխավարս *(գուս. Աշ.[3], էջ 160)*:

ԹԽՍԱԿՈՂՈՎ, գ. **Կողով, որի մեջ հավերը թուխս են նստում, թուխս նստելու կողով:** Լապշինովի կինը դուրս նետվեց խոհանոցից՝ մի ձեռքում կրելով ձվերով լի թխսակողովը .... *(Շոլ., էջ 103)*:

ԹԽՍԱՎԱՐԻ, մկբ. **Թխսի նման:** Եվ հիմա համատարած ոչնչապաշտությունը **թխսավարի** փեշերը փռել ու մեր շնչի վրա ծանրացել է *(ԳԹ, 08.04.2022)*:

ԹՂԹԱՂԱՑ, ած. **Թուղթ մանրող՝ աղացող**: **Թղթաղաց** մեքենաս կուլ է տալիս իմ տեքստերի և այլ թոթովանքների 90 տոկոսը *(Ազն., էջ 133):*

ԹՆԴԱՆՈԹԱՁՈՒԼԱՐԱՆ, գ. **Թնդանոթներ ձուլելու արհեստանոց**: ... Նրա այդ հիշատակությունը միայն մի անորոշ ակնարկ է և թույլ չի տալիս շատ թե քիչ գաղափար կազմել Սարդարի **թնդանոթաձուլարանի** մեծության, արտադրության քանակի, տեսակի ու որակի մասին *(Հակ., Սիմ.,էջ 61-62):*

ԹՈԹՈՎԱԳԻՐ, ած. **Նոր գրել սկսող, գրելում ոչ վարժ**: Ես ինձ զգում էի **թոթովագիր** պոետ, անգրագետ ընթերցող *(Նիկ., էջ 152):*

ԹՈՆՐԱԹԵԺ, ած. **Թոնրի թեժություն՝ տաքություն ունեցող**: Մատներիս փորձը՝ համտեսել արևը// ծնկներիդ վրա,// նման եղավ թաժա հաց վերցնելուն՝// **թոնրաթեժ** պողերը վրան *(ՎՀ[1], էջ 63):*

ԹՈՆՐԱԿՐԱԿ, գ. **Թոնիրի կրակ: Թոնրակրակից** պղնձափայլ է դարձել մոր դեմքը .... *(Կայարան, 2014, թ.3):*

ԹՈՆՐԱՊԱՏ, գ. **Թոնրի պատ**: Պարզ է, որ խմորահացը **թոնրապատից** չի բռնելու *(ՎՀ[2], էջ 33):*

ԹՈՎՉԱԼԻ, ած. (բնստ.): **Թովչանքով լի:** ....Մարդուն տալով հույսեր, լույսեր, ջահելություն, սեր ու երգ // Ու դեպի վեհ բարձունք տանող մի **թովչալի** ճանապարհ *(Սարմեն, էջ 87):*

ԹՌԻՉՔԱԺԱՄԱՆԱԿ, գ. **Թռիչքի համար անհրաժեշտ ժամանակ:** .... Նրան մտահոգում էին Խաղաղ օվկիանոսն ու **թռիչքաժամանակը** *(ՋՀ, էջ 43):*

ԹՌԻՉՔԱԿՈՐ, գ. **Գնդակի թռիչքի կոր՝ հետագիծ:** …. Հանդիպման ելքը կնքեց դարպաս ուղարկած գնդակով, որի **թռիչքակորը** կատարյալ էր *(Կայ., էջ 333):*

ԹՌՉՆԱԳԼՈՒԽ, ած. (արվ.): **Թռչունի գլխի ձևով կատարված:** Դրանց գլխամասերը եզրային լայն, զարդարուն, սյունահատվածների հետ միանում են մարդագլուխ կամ **թռչնագլուխ** քանդակներով *(Հակ., էջ 108):*

ԹՌՉՆԱՊԱՏԿԵՐ, գ. (արվ.): **Թռչուններ պատկերող զարդանախշ:** Որոշակի կարգով դասավորված այդ **թռչնապատկերները** մեր նկարչի նուրբ մշակմամբ զանազանվում են իրենց տեսակներով *(Հակ., էջ 57):*

ԹՌՉՆՈՒՀԻ, գ. **Էգ թռչուն:** Ուզում է կողքի **թռչնուհուն** սեր խոստովանել հավքը *(ՎՀ², էջ 39):*

ԹՎԱՀԱՐԹԱԿ, գ. **Հարթակ (ժամացույցի), որի վրա գրված են թվերը, թվերի հարթակ:** Ույբոն …. մի պահ մտածկոտ նայեց **թվահարթակին.** – մենք դեռ ժամանակ ունենք … *(Բեկ., էջ 109):*

ԹՐԹՆՋՈՒԿԱԿԱՐՄԻՐ, ած. **Թրթնջուկի գույնի կարմիր գույն ունեցող**: …. Ձուլածո **թրթնջուկակարմիր** դեմքը կտրուկ այլանդակվել, դարձել էր խամրած կրամոխրագույն *(ՋՀ, էջ 451)*:

ԹՐԹՈՒՐԱԿԵՐՊ, ած. **Թրթուրի կերպ՝ ձև ունեցող:** ….Կոշիկները մի պահ ծածկվեցին մոտեցող **թրթուրակերպ** շոգեքարշի շոգու քուլաներով *(ԱԳ, էջ 3):*

ԹՐԹՈՒՐԱՓԱՓՈՒԿ, ած. **Թրթուրի նման փափուկ:** Յոսարյանն ուզում էր բռնել Աարֆիի պարարտ, **թրթուրափափուկ** ուսերը …. *(ՋՀ, էջ 539)*:

ԹՐԻՔՈՏ, ած. **Թրիքապատ, վրան թրիք քսված:** Մուտքի գլխին վառվող փոշոտ լամպը լուսավորում էր **թրիքոտ** աստիճանները *(Դով., էջ 76):*

ԹՈՒԼԱՃ, ած. (գղտնտ.): **Թույլ աճ ունեցող՝ աճող**: .... գ) կարգավորել արժեքավոր սորտերի աճն ու պտղաբերումը՝ պատվաստելով դրանք **թուլաճ** կամ ուժեղաճ պատվաստակալների վրա .... (*Սաֆ., էջ 60*):

ԹՈՒՂԹՈՒԳՐՉԱՅԻՆ, ած. **Զեռագիր**: Առաջին.... IQ թեստի **թուղթուգրչային** տարբերակը նոր էր մշակվել Սթենֆորդի համալսարանի հոգեբան Տերմանի կողմից *(ԴԳ, էջ 73):*

ԹՈՒՆԱԶԴՈՒ, ած. **Թունավոր ազդեցություն ունեցող:** Գյուղատնտեսական արտադրանքը .... կարող է պարունակել բազմաթիվ նյութեր՝ օրգանիզմների համար **թունազդու** քանակություններ .... *(ՍԹ, էջ 118):*

ԹՈՒՋԱԿԱՂԱՊԱՐՈՒՄ, գ. **Թուջակաղապարելը**՝ հալած թուջով կաղապարելը: **Թուջակաղապարման** մեխանիկական գործարան *(Հակ., Սիմ.,էջ 125):*

Ժ

ԺԱՄԱԳԻԾ, գ. **Արեգակնային ժամանակը որոշող ցուցիչ (սարք): Ժամագծերը** տարբերվում են իրարից հավասար հեռավորությունների վրա, և կեսօրվա **ժամագիծը** ուղղվում է դեպի հյուսիս *(Հմգ, wikisource.org):*

ԺԱՄԱՆԱԿԱԴԱՇՏ, գ. **Ժամանակաշրջան՝ ժամանակահատված:** Դարերի **ժամանակադաշտում**// փոփոխություններ մտցնելով.... *(ՎՀ[1], էջ 260):*

ԺԱՄԱՆԱԿԱԴԱՐԱՆ, գ. **Ժամանակի պահարան՝ պահելու տեղ:** Իսկ խոսքս… **ժամանակադարան է** *(ՎՀ[1], էջ 118):*

ԺԱՄԱՆԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժամանակային լինելը:** Կըտավը տեղավորվում է կյանքային **ժամանակայնության** միջակայքում, իսկ Դորիան Գրեյ մարդը ձեռք է բերում արվեստի անժամանակության և հավերժական գեղեցկության գծեր *(Կայարան, 2022, թ. 1):*

ԺԱՄԱՆԱԿԱՏԱՐԱԾԱԿԱՆ, ած. **Ժամանակային և տարածական**: .... Չի գտնվում այն նույն **ժամանակատարածական** չափումում .... *(Աթք., էջ 223)*:

ԺԱՄՈՐՈՇՈՒՄ, գ. **Ժամորոշելը, ժամը՝ որևէ բանի (չ)անելու ժամանակահատվածը որոշելը:** ... Վոռնսկին նայեց Աննային այդ **ժամորոշումը** լսելիս **....** *(Տոլ., էջ 154):*

ԺԱՅՌԱԲԵՄ, գ. (բնստ.): **Ժայռի բարձունք**: Կարոտով արբած ելնեմ **ժայռաբեմ**,//Շուրջըս ծաղկունքի ծովը թող բուրի *(Սարմեն, էջ 185):*

ԺԱՅՌԱԳՈԳ, գ. **Ժայռի գոգավոր մասը: Ժայռագոգին՝** խիտ սաղարթների հովանու տակ սառնորակ աղբյուրն էր …. *(Կայարան, 2021, թ.2):*

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐԱԲԱՆ, գ. (պատմ.): **Ժայռապատկերների մասնագետ: Ժայռապատկերաբան** Կ.Թոխաթյանի ընկերակցությամբ եղանք Կաքավաձորում *(Մով.[2], էջ 38):*

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՈՒՄ, գ. (պատմ.): **Ժայռապատկերելը. «սև և սրճագույն քարերի ու ժայռերի վրա» փորագրումը:** … դրանք հին «դասական» ժայռապատկերներ չեն, այլ վկայություն են «միջնադարում **ժայռապատկերման** ավանդույթների հարատևման» *(Մով.[2], էջ 17):*

ԺԱՆԳԱԿՈՒՐ, ած. **Ժանգը կերած, ժանգոտած:** Պապն էլ Գագասին հրամայեց մեր գամփռի բնի գլխի դարսած **ժանգակուր** թիթեղներից չորս հատ վերցնել .... *(Կայարան, 2021, թ. 2):*

ԺԱՆԳԱՓԱՌ ԿԱՊԵԼ, բ. **Ժանգով պատել:** Ընչաքաղցության սնամաղձ ոգի՞ն էր **ժանգափառ կապել** սրտի վրա .... *(Կայարան, 2021, թ. 2):*

ԺԱՆԳԱՓԱՌ, գ. **Ժանգի շերտ:** Չափազանց խոսքը հոգեավերի // Հրահրումն է տիեզերական, // Որ ժառանգել ենք՝ որպես բառերին // **Ժանգափառ** դարձող մի խուլ բառարան*(Տոն.², էջ 35):*

ԺԱՆՅԱԿԵՐԻԶ, ած. **Երիզները ժանյակագործ, ժանյակած երիզներով**: ... Մատների մեջ ճմռթում էր **ժանյակերիզ** թաշկինակը *(Ուայլդ, էջ 103):*

ԺԱՆՏԱԽՏԱԾԻՆ, ած. **Ժանտախտ՝ առաջացնող**: Պառկած էր սեփական ճփճփացող ու **ժանտախտածին** արտաթորանքի մեջ .... *(Ռուշդի, էջ 443)*:

ԺԱՊԱՎԵՆԱՇԵՐՏ գ. (արվ.): **Ժապավենաձև՝ ժապավենանման շերտ:** Հիշյալ թերթերում քառանկյան գլխազարդը հատվում է չորս անկյուններից դուրս եկող **ժապավենաշերտերով** .... *(Հակ., էջ 53):*

ԺԵԼԵԱՎՈՐՈՂ, բ. (մսնգ.): **Ժելեի հատկություն տվող**: Թարմ քամվածքներից կարելի է նաև **ժելեավորող** լուծույթներ ստանալ *(Դասագիրք, էջ 323)*:

ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժողովրդի իշխանություն:** Ժողովրդավարություն նշանակում է **ժողովրդաիշխանություն,** իսկ **ժողովրդաիշխանություն** նշանակում է ինքնիշխանություն, իսկ ինքնիշխանություն նշանակում է պետականություն *(Հմգ, ArmPublik.com):*

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԻ, մկբ. **Ինչպես հասարակ ժողովուրդը կաներ, նրա նման:** Դա կարող էր նույնիսկ լինել, ես ձեզ ասել եմ, մի քիչ գռեհիկ, մի քիչ **ժողովրդավարի** …. *(XX դար, էջ 254):*

ԺՊՏԱՆՄԱՆ, ած. **Ժպիտի նման, ժպիտ հիշեցնող:** Մեր քահանայի աչքերում կարծես մի մութ **ժպտանման** շվարու՞մ կար, թե զարմանք *(Սուր., էջ 5):*

Ի

ԻԺԱՎԱՐԻ, մկբ. **Իժ օձի նման, ինչպես իժ օձը:** Տե՛ս ԲԱՐԱԿԱԳԼՈՒԽ-ի օրինակը:

ԻՆԱԿՏԻՎԱՑՆԵԼ, բ. (մսնգ.): **Ապաակտիվացնել, ակտիվացումը կանխել:** Ծծմբային թթվի կիրառումը մինչև խմորում սկսելը **ինակտիվացնում** է այդ մանրէներին *(Դասագիրք, էջ 91):*

ԻՆՔՆԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնապապահովելը, ինքը իրեն ապահովելը, ինքը իր համար ապահովության միջոցներ ստեղծելը՝ գտնելը՝ հայթայթելը:** «Մենք ամենից առաջ անց ենք կացնում ազգային **ինքնապապահովության** քաղաքականություն» *(Յակ., էջ 297):*

ԻՆՔՆԱԲԱՆՏԱՐԿՎԵԼ, բ. **Ինքն իրեն՝ ինքնուրույն բանտարկվել:** Տասներկուերորդ դարում հարյուրավոր երեխաներ **ինքնաբանտարկվել** են այստեղ …. *(Աթք., էջ 461):*

ԻՆՔՆԱԳԱՅԹԱԿՂԵՑՈՒՄ, գ. **Ինքը իրեն գայթակղեցնելը:** …. Կարծես թե ապրում էինք երջանիկ, բայց այդ բոլորը եղել է ինքնախաբեություն և **ինքնագայթակղեցում** *(Բեեկ., էջ 205):*

ԻՆՔՆԱԳՐԱԽՈՍԱԿԱՆ, գ. **Գրախոսություն ինքը իր ստեղծագործության մասին:** Հ.Գ.1. - **Ինքնագրախոսական:** Պատմվածքը դեռևս բարուրված է ոճաբանորեն *(Նիկ., էջ 42):*

ԻՆՔՆԱԴԻՐՔԱՎՈՐՎԵԼ, բ. **Ինքն իրեն դիրքավորվել**: Հետևաբար, եթե մենք հավակնում ենք **ինքնադիրքավորվել** աբսուրդայնության դաշտում, ապա մենք պետք է պատրաստվենք սպանելուն .... *(Ակ, էջ 16)*:

ԻՆՔՆԱԵՐԻՏԱՍԱՐԴԱՆԱԼ, բ. **Ինքն իրեն երիտասարդանալ**: .... Նա ոչնչացրել ու կլանել է դրանց, մնացորդները ի մի ձուլելով հավերժ ապրող, **ինքնաերիտասարդացող** մի գերբջջային մարմնի կառուցվածքի մեջ .... *(Լեմ, էջ 31)*:

ԻՆՔՆԱԶԱՎԹՈՒՄ, գ. **Ապօրինի զավթելը**: Հողերի **ինքնազավթումը** կարող է կապված լինել ցանկացած քրեական հանցագործության հետ *(Հմգ, angaraleshoz.ru)*:

ԻՆՔՆԱԸՆԿԱԼՈՒՄ, գ. **Ինքն իրեն ընկալելը**: Բարձր հուզական ինտելեկտով կանայք .... հաստատակամ են, անկեղծորեն արտահայտում են իրենց զգացմունքները և դրական **ինքնաընկալում** ունեն*(ԴԳ, էջ 83)*:

ԻՆՔՆԱԹԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ. **Ինքը իրեն թերագնահատելը**: .... Նա փոխակերպվեց իր պետերի հանդեպ ունեցած ատելությունից դրդված. **ինքնաթերագնահատման** բարդույթ .... *(XX դար, էջ 351)*:

ԻՆՔՆԱԼԼԿՈՒՄ, գ. **Ինքնալլկանք, ինքը իրեն դաժան չարչարանքների, տառապանքների, տանջանքների ենթարկելը**: Միթե՞ քո սեռին ու տարիքին ավելի սազական այն պարզ ու հասարակ միտքը չեկավ քո գլուխը, որ նվիրաբերվես աղոթքներին ու **ինքնալլկման** ապրելակերպին ... *(XX դար, էջ 231)*:

ԻՆՔՆԱԼՈՒՍԱՃԱՌԱԳՈՒՄ, գ. **Ինքն իրեն լուսաճառագելը**: .... Պատմության տարիներին շատ ավելի ուժեղ էր **ինքնալուսաճառագման** մղումը ... *(ԱԱ, էջ 275)*:

ԻՆՔՆԱԽՈՐՏԱԿՎԵԼ, բ. **Ինքն իրեն խորտակել:** .... Նիցշեն մարդուն առաջարկում էր **ինքնախորտակվել** տիեզերքում .... *(Ակ, էջ 110)*:

ԻՆՔՆԱԾԱՂՐԱՆԿԱՐԱՅԻՆ, ած. **Ինքը իրեն ծաղրելու բնույթ ունեցող:** Ամբողջ այդ սահմանափակ, բութ, **ինքնաածաղրանկարային** դոգմատիզմի վրա կարելի էր ծիծաղել պարզապես, եթե .... *(Սուր., էջ 194)*:

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնակարգապահ լինելը, առանց օտար միջամտության, ներքին մղումով կարգապահության պահանջները կատարելը: Ինքնակարգապահությունը** շատ կարևոր է յուրաքանչյուր մարդու կյանքում և կատարվում է ինքնավերահսկման միջոցով *(Տան., էջ 33)*:

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎԵԼ, չբ. **Ինքը իր գործերը առանց ուրիշների միջամտության, օգնության կարգավորել:** - Մարդկային հասարակարգը պետք է սովորի **ինքնակարգավորվել** *(Բակուր, էջ 85)*:

ԻՆՔՆԱՀԱՂԹԱՀԱՐԵԼ, բ. **Ինքն իրեն հաղթահարել**: Տե՛ս ԳԵՐԱԶԱՏ-ի օրինակը:

ԻՆՔՆԱՀԱՃԱԲԱՐ, մկբ. **Ըստ իրենց ցանկության, որպես իրենց ցանկությամբ կատարվող բան:** Մեր կարիքների համար մենք այս անձանց կստիպենք մեռնել, **ինքնահաճաբար,** համաձայն մեր կազմած ցուցակի *(XX դար, էջ 374)*:

ԻՆՔՆԱՀԱՅՏՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքն իրեն հայտնաբերելը, ինքն իրենով հայտնաբերություն կատարելը:** Սա միակ պահն է՝ իմ **ինքնահայտնաբերության** *(ՎՀ², էջ 296)*:

ԻՆՔՆԱՀԱՏՈՒՑՈՂ, 1. **Ենթ. դերբայ ինքնահատուցել բայի**: 2 ած. **Ինքը իր ծախսերը հատուցող՝ ծածկող:** Իհարկե, ես

ստիպված կլինեմ իմ կենդանաբանական այգին բացել այցելուների առջև, դա կլինի մի յուրովի **ինքնահատուցող** լաբորատորիա… *(Դար., էջ 6)*:

ԻՆՔՆԱՀԱՐԴԱՐՎԵԼ, բ. **Ինքն իրեն հարդարվել**: Եվ Մեյզի Ջոնսընը, միանալով այդ նուրբ ճեմող, հայացքախույս, զեփյուռով շոյված խմբին – բարձր ճյուղերին **ինքնահարդարվող** սկյուռներ .... վստահորեն զգաց .... *(Վուլֆ, էջ 35)*:

ԻՆՔՆԱՀԵԳՆԱԿԱՆ, ած. **Ինքը իրեն հեգնող:** Նույնիսկ մի դառնորեն **ինքնահեգնական** հաճույք էի զգում *(Սուր., էջ 153)*:

ԻՆՔՆԱՀՂԿՎԵԼ, չբ. **Ինքը իրեն հղկել:** Ոչ թե ծանոթացանք, այլ իրար գտանք պահի մեջ ամբարված հավերժության կանչով, **ինքնահղկվեցինք** .... *(Նիկ., էջ 33)*:

ԻՆՔՆԱՀՂԿՈՒՄ, գ. **Ինքը իրեն հղկելը, այստեղ՝ հեղինակի՝ ինքնահղկմամբ զբաղվելը:** Ծաղկաձորում հիմնական շարժիչս **ինքնահղկումն** է .... *(Նիկ., էջ 32)*:

ԻՆՔՆԱՀՅՈՒՐԱՍԻՐՎԵԼ, չբ. **Ինքը իրեն հյուրասիրել:** Շարունակ փող չունենք, նույնիսկ՝ **ինքնահյուրասիրվելն** է դժվարին .... *(Նիկ., էջ 73)*:

ԻՆՔՆԱՀՊԱՏԱԿԵՑՈՒՄ, գ. **Ինքն իրեն հպատակեցնելը**: Ընդվզման արվեստը նույնպես ավարտվում է «Մենք ենք» կարգախոսով՝ դրանով իսկ բռնելով վեհերոտ **ինքնահպատակեցման** .... *(Ակ, էջ 380)*:

ԻՆՔՆԱՀՈՒՍԱԴՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն հուսադրելը**: Հույսի մեծ չափաբաժին ունեցող մարդիկ .... օժտված են մի շարք ընդհանուր հատկանիշներով, որոնց թվում են ինքնամոտիվացիան, ... ծանր իրավիճակներում **ինքնահուսադրումը**....*(ԴԳ, էջ 136)*:

ԻՆՔՆԱՄԱՐՄՆԱԽԵՂՈՒՄ, գ. **Սեփական մարմինը վնասելը**: Մեր հերոսը, ... մոլեռանդ շիաների .... կողմից իրականացվող **ինքնամարմնախեղումներով**, հետաքրքված է կարմրելով *(Ռուշդի, էջ 194)*:

ԻՆՔՆԱՄՈՐՄՈՔ, գ. ած. Այստեղ՝ **Ինքն իրեն մորմոքելը**: Նրա համար սկսվեց **ինքնամորմոքի** մի տառապալից շրջան.... *(Կայարան, 2015, թ.4)*:

ԻՆՔՆԱՆԵՐԾԾՎԵԼ, բ. **Ինքն իրեն ներծծվել**: .... Պրոլետարական պետությունն ինքնակլանվում, **ինքնաներծծվում** է *(Ակ, էջ 318)*:

ԻՆՔՆԱՆՎԻՐԱԲԵՐՎԵԼ, բ. **Ինքն իրեն նվիրաբերել**: Կալյանն **ինքնանվիրաբերվեց** պատմությանը .... *(Ակ, էջ 244)*:

ԻՆՔՆԱՇՈՂԱՆՔ, ած. **Ինքն իրեն շողալը**: .... «Ներաշխարհ» երկն էլ ընկալելի է լոկ իր զոհաբերական, անբացատրելի **ինքնաշողանքով** կամ ներքնափայլով *(Կայարան, 2014, թ. 3)*:

ԻՆՔՆԱՊԱՐՏԱՎՈՐՈՒՄ, գ. **Ինքը՝ իրենք իրեն(ց) պարտավորեցնելով:** .... **Ինքնապարտավորման** կարգով պարտիայի բոլոր անդամները պետք է հենց այդ օրը շրջեն տնից տուն *(Շոլ., էջ 165)*:

ԻՆՔՆԱՍՏՎԵՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն ստվերելը:** Ազոտական պարարտանյութերի ավելցուկի առկայությամբ առաջանում է բույսի գերաճ և **ինքնաստվերում** .... *(ՍԹ, էջ 110)*:

ԻՆՔՆԱՍՏՐԿԱՑՎԵԼ, բ. **Ինքն իրեն ստրկացնել, ինքնուրույն ստրկանալ**: Նրանք **ինքնաստրկացվում** են սեփական իշխանության կողմից *(Ակ, էջ 247)*:

ԻՆՔՆԱՎԱՅԵԼՈՒՄ, գ. **Ինքնավայելելը:** Ֆ. Ռուզվելտը չէր ուզում խանգարել ներքին գործերի մինիստրի .... **ինքնավայելումը** *(Յակ., էջ 339):*

ԻՆՔՆԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքն իրեն ատելը:** Քանի դեռ այն չի անցել տնական հպատակության, **ինքնատելության**, ծաղրի, սոսկալի կասկածների միջով, ի զորու չէ տեղ գրավել հավատարմությունների շարքում *(ԹՎ, էջ 169):*

ԻՆՔՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքն իրեն արդյունավետ լինելը: Ինքնարդյունավետությամբ** օժտված մարդիկ վերականգնվում են ձախողումներից հետո .... *(ԴԳ, էջ 140):*

ԻՆՔՆԱՕՔՍԻԴԱՆԱԼ, բ. **Ինքն իրեն օքսիդանալ**: Այն մտցնելուց հետո գործում է որպես վերականգնիչ՝ հեշտությամբ **ինքնաօքսիդանալով** .... *(Դասագիրք, էջ 176)*:

ԻՍՊԱՆԱԼԵԶՈՒ, ած. **Իսպաներեն գրված**: Արդի **իսպանալեզու** պատմվածք *(Պատմվածքների ժողովածուի վերնագիր):*

ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱԿԱՆ, գ. **Իրավական հարցերով խորհրդական՝ իրավախորհրդատու**: .... Նա աստիճանաբար դարձավ իր հայրենիքի գրեթե ողջ խոշոր հողատեր ազնվականության **իրավախորհրդականը** .... *(ԱԱ, էջ 194):*

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ, ած. **Իրավիճակից բխող, իրավիճակով պայմանավորված:** Եթե ձեզ առաջադրվում են **իրավիճակային** խնդիրներ .... *(Տան., էջ 235):*

ԻՐԱՐԱՀԱՋՈՐԴԵԼ, բ. **Իրար հաջորդել:** Միայն պատմաբանը կարող էր հավակնել մանրամասնորեն ի ցույց դնելու **իրարահաջորդող** ուսմունքներն ու շարժումները *(Ակ, էջ 23)*:

Լ

ԼԱԹՈՒՄԱԹ, գ. **Մաշված ցնցոտի:** Եվ այդ ժամանակ ինչ-որ տեղից, ասես գետնի տակից հանկարծակի դուրս գլորվելով հայտնվեց կլորավուն, տասը տակ **լաթումաթով** և գլխաշորերով փաթաթված, գնչուհին *(Բեեկ., էջ 46):*

ԼԱՄՊԱՍԱՎՈՐ, ած. **Շքերիզավոր:** Բակից գնաց **լամպասավոր** լայն շալվարով, ճռճռացող սապոգներով, միանգամից տաս տարով ջահելացած *(Շոլ., էջ 171):*

ԼԱՅՆԱԳՈՏԻ, գ. **Լայն գոտի:** Թևի տակ նա խնամքով ու հոգատար պահել էր մեջտեղը **լայնագոտիով** կապած մի մեծ կապոց *(Բեեկ., էջ 141):*

ԼԱՅՆԱԹՌԻՉՔ, ած. **Լայն՝ մեծ տարածություն թռիչքաձև վարգով**: Ձիավորը .... փաթաթեց դեմքը և սլացավ **լայնաթռիչք** ընթացքով *(Շոլ., էջ 4):*

ԼԱՅՆԱՀՈՍ, ած. (փխբ.): **Լայնորեն հոսող՝ տարածվող:** Արևի **լայնահոս** շողերը խաղում էին նրա ոտքերի մոտ *(Վուլֆ, էջ 87):*

ԼԱՅՆԱՍՄԲԱԿ, ած. **Լայն սմբակներով, սմբակները լայն:** Նա գնաց Շկուրայի ետևից՝ .... դժվարությամբ փոխելով **լայնասմբակ** ոտքերը *(Շոլ., էջ 306):*

ԼԱՆԴՇԱՖՏԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. (մսնգ.):**Լանդշաֆտաէկոլոգիային բնորոշ: Լանդշաֆտաէկոլոգիական** տեսակետից առավել անկայուն են եղել .... անտառային էկոհամակարգերը .... *(ՍԹ, էջ 41):*

ԼԱՆՋԱՂԲՅՈՒՐ, գ. **Լեռնալանջի ակունք՝ հոսող ջուր:** Այ **լանջաղբյուր**, մեկ լսիր,// Քո կարկաչով ինձ օգնիր .... *(գուս. Աշ.[2], էջ 13):*

ԼԵԶՎԱՂԱՆԴԱԿԱՆ, ած. (բնստ.): **Լեզվական աղանդին հատուկ: Լեզվաղանդական** իր սնած թեմը // Առկայծեց հանձին Թ. Տոնոյանի *(Տոն.[2], էջ 85):*

ԼԵՌՆԱԾԱՆՐ, ած., (փխբ.): **Չափազանց ծանր**: .... Կքեց հուսահատության **լեռնաածանր** բեռի տակ *(ՋՀ, էջ 269)*:

ԼԵՌՆԱՀՈԳԻ, գ. (բնստ., փխբ.): **Լեռնային՝ անկոտրում հոգի:** Մեր Լաստը աշխարհի պահող մի սար է,// Սև քամիներ է ճամփել, **լեռնահոգին** հզոր է .... *(գուս. Աշ.[3], էջ 117):*

ԼԵՌՆԱՁԻԳ, ած. (բնստ.): **Լեռան նման ձգվող:** Ճամփաբաժան ձորակում, մի **լեռնաձիգ** ժայռի տակ, // Գիշեր-ցերեկ երգում է «Հովվի աղբյուրը» հստակ *(Սարմեն, էջ 253):*

ԼԵՌՆԱՄՈՐՈՒՍ, ած. (փխբ.): **Լեռան նման սուր մորուք ունեցող**: Մոտեցող **լեռնամորուս** ճամփորդ *(ՎՀ[1], էջ 145):*

ԼԵՌՆԱՉՈՐԱՍԵՐ, ած. (մսնգ.):**Լեռնային չոր վայրերում աճող:** Լանդշաֆտաէկոլոգիական տեսակետից առավել անկայուն են եղել .... **լեռնաչորասեր** բուսական համակեցությունները *(ՍԹ, էջ 41):*

ԼԵՌՆԱՊԱՐԱՐ, ած. **Լեռներով պատված:** Տե՛ս ՀԱՅԿԱՀՆՉՅՈՒՆ-ի օրինակը:

ԼԻԱԼՐՈՒՄ, գ. **Լիարժեք լրացում**: Այստեղից էլ նրա ձգտումն առ վերականգնում, մինչև նախնական իմաստի **լիալրումը** *(Կայարան, 2014, թ. 3):*

ԼԻԱԽՄՈՐՈՒՄ, գ. (մսնգ.): **Լիարժեք խմորում:**Սովորաբար **լիախմորումն** ավարտվում է 2-3 օրվա ընթացքում *(Դասագիրք, էջ 101)*:

ԼԻԱՀԱԳՈՒՐԴ, ած. մկբ. **Լիակատար հագեցմամբ:** Եվ պատանի նկարիչը բերկրանքով ու **լիահագուրդ** կլանում էր բնության ընձեռած այս նոր տպավորությունները *(Կագ., էջ 111):*

ԼԻԱՀԱՏԻԿ, ած. **Լի՝ լիքը հատիկներով**: .... Տկտկացող պտուտաթևերի տակից շաղ էր տալիս քաղված **լիահատիկ** գարու խուրձերը *(Շոլ., էջ 56):*

ԼԻԱՆԱՅԱՊԱՏ, ած. **Լիանաներով պատված**: .... Զրադաշտի նախորդ նշանակումը նույն տեղում է եղել, որտեղ **լիանայապատ** տաճարն ու կոկոսներով լողափն են .... *(Ռուշդի, էջ 70)*:

ԼԻՑՔԱԿՈՒՏԱԿԻՉ, գ. (մնգ.):**Լիցքեր կուտակող:** Իսկ ժամանակակից մարդու օրգանիզմը .... կարող է էլեկտրականանալ՝ զրկված լինելով լիցքաթափվելու հնարավորությունից, և այդպիսով վերածվել **լիցքակուտակչի**՝ կոնդենսատորի *(ՍԹ, էջ 87):*

ԼԻՔԲԱԺԱԿ, ած. **Բաժակը լիքը, լիքը լցրած: Լիքբաժակ** սուրճը պարեց ձեռքիս, բայց այդպես էլ .... մի կաթիլն ինչ է՝ չընկավ *(Նիկ., էջ 138):*

ԼՈԳԱՐԻԹՄԱՎՈՐՈՒՄ, գ. **Լոգարիթմավորելը, լոգարիթմում:** .... Բաշխումը նորմալ տեսք է ընդունում տվյալների **լոգարիթմավորումից** հետո *(Մել., էջ 67):*

ԼՈԶՈՒՆԳԱՇԱՏ, ած. **Շատ լոզունգ կրող՝ ունեցող**: Երեքչորս ամսվա **լոզունգաշատ** պայքարում Արցախում չավելացավ գեթ մեկ տուն, մեկ ճանապարհ, մեկ դպրոց.... *(Հմգ, Media 24):*

ԼՈՌԱՄՐԳԱԿԱՐՄԻՐ, ած. **Լոռամրգի գույնի կարմիր գույն ունեցող**: .... Օրրը պատասխանեց՝ փայլատակելով **լոռամրգակարմիր** հրճվանքից .... *(ՋՀ, էջ 408)*:

ԼՎԱՑՔԱՍԵՆՅԱԿ, գ. **Սենյակ, որտեղ լվացք են անում:** .... Դմբուզը սմբակով ծակեց **լվացքասենյակի** գարեջրի տակառը *(Օրուել, էջ 25):*

ԼՐԲԱՎԱՐԻ, մկբ. **Լրբաբար, լրբորեն, ինչպես լիրբը, լրբի նման**: Գեորգինան առաջվա պես ցատկոտում էր մահճակալի վրա՝ **լրբավարի** ծամածռություններով զվարճացնելով մայթին հավաքված անբաններին *(Դար., էջ 136)*:

ԼՐՋԱՔԱՅԼ, մկբ. **Լուրջ քայլելով:** Նրա ետևից **լրջաքայլ** դուրս եկավ Ատամանչուկովը .... *(Շոլ., էջ 114):*

ԼՈՒԾԱՀԱՆԵԼ, բ. (մսնգ.): **Լուծիչի ազդեցությամբ տարբեր նյութեր ստանալ:** Թրմեցման ժամանակ քաղցուն խաղողի քայ-քայված թաղանթից **լուծահանում է** էքստրակտիվ, մասնավո-րապես դաբաղա-, ներկա- և բուրավետ նյութեր .... *(Դասագիրք, էջ 45)*:

ԼՈՒԾՈՒՅԹԱՋՐԻՐ, գ. **Ջրային լուծույթ**: Փալասով ու մի դույլ ախտահանող **լուծույթաջրով** լվացել էր հատակը... *(ԱԻՊ[1], էջ 206):*

ԼՈՒՍԱԳԱՀ, ած. (բնստ., փխբ.): **Լուսավոր, արքայական լույս ճառագող:** Աստղերի մեջ **լուսագահ,**// Անհոգ, անցավ այն հեռվում // Ես ապրեցի դյութական //Ցնորքների աշխարհում *(ԳՋ, էջ 81):*

ԼՈՒՍԱԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Լույսերով՝ լույսերի երա-ժշտություն:** Իսկ վառած մոմդ **լուսաերաժշտության** դասեր է տալիս ծլող աստղերին *(ՎՀ[2], էջ 10):*

ԼՈՒՍԱԾԱՂԿՈՒՆ, ած. (բնստ., փխբ.): **Փայլփլուն**: Տե՛ս ԳՈՀԱՐԱԿՈՒՆՔ-ի օրինակը:

ԼՈՒՍԱՀԵՂՈՒՄ, գ. (փխբ.): **Լույսի հեղում՝ հորդում:** Սպասումների միջից // Բացվում է հմայանքի ծաղիկը .... Մինչև **լուսահեղման** սկիզբը ... *(Տն.[1], էջ 17):*

ԼՈՒՍԱՃԱՌԱԳՈՒՄ, գ. **Լույս ճառագելը:** Աշխարհն այսօր բռնկված է ոչ թե ընդվզման, ոչ էլ նրա առաքինության **լուսաճառագումով**, այլ նիհիլիզմով *(Ակ, էջ 146)*:

ԼՈՒՍԱՓԵԼՓ, գ. **Լույսի փայլք՝ ցոլք:** Առավոտյան **լուսափելփը,** որն առաջ չէր կարելի չտեսնել, այժմ պետք էր փնտրել .... *(Տլ., էջ 224):*

ԼՈՒՍԸՆԹԱՑՈՒՆԱԿ, ած. **Դեպի լույսը, լուսավորությունը ընթանալու ունակ՝ ընդունակ:** .... Այնտեղ, ուր մեզ դեռ ուզում են հիշել // Լույսի կերպարով, **լուսընթացունակ**.... *(Տն.[3], էջ 19):*

ԼՈՒՍՀՍՏԱԿ, ած. (բնստ.): **Լույսի նման պարզ, հստակ:** Ահա մեր գուռը, որից **լուսհստակ**// Ջուր են ըմբոշխնում և՛ գոմեշ, և՛ եզ....*(Սարմեն, էջ 79):*

ԼՈՒՍՆԱԼԱՐ, գ. (բնստ., փխբ.): **Լուսնի լարեր՝ շողեր:** Փերին է իջնում **լուսնալարերով**,// Ձորերը լցնում հրաշք խաղերով *(գուս. Աշ.[3], էջ 3):*

ԼՈՒՍՆԱԼՈՒՍՈՏ, ած.Այստեղ՝ **լուսնի լույսով շաղախված**: Փողքերը քշտեց, կոշիկները հանեց դրեց ավազի վրա, և կոշիկներն էլ **լուսնալուսոտ** թաց ավազին հարմար եղան որպես գետաքար.... *(ՎՍ, էջ 154):*

ԼՈՒՍՆԱՄԵՏ,ած. **Լուսնի կողմ հակված:** Թռչունների գիշերը ծվարում է ծառի **լուսնամետ** ճյուղերի վրա *(ՎՀ[2], էջ 164):*

Խ

ԽԱԿԱՀՈՏ, գ. (դիպվ.): Այստեղ՝ **խակ պտուղի, մրգի հոտ:** Բույրի զառամյալ հիշողությունը բերում-տանում էր սեխի խաբուսիկ ծաղկահոտը, ձմերուկի **խակահոտը,** արև առած բազալտ քարի մետաղահոտը…. *(ՎՍ, էջ 382):*

ԽԱՂԱԴՐՈՒՅՔ, գ. **Խաղի ելքի գուշակման դեպքում դրամ շահելու համար վճարվող գումար: Խաղադրույքների** սկանդալային պատմություն *(Կայ., էջ 323):*

ԽԱՂԱԿՈՇԻԿ, գ. (մարզ.): **Մարզակոշիկ:** …. Մեսսին պատկերված էր իր նոր՝ զեբրի նախշով **խաղակոշիկներով,** որը պատրաստվել էր հատուկ այդ առիթով *(Կայ., էջ 537):*

ԽԱՂՈՂԱՃԶՄԻՉ, ած. **Խաղողը ճզմող**: Տե՛ս ԲԱՄԲԱԿԱՍԵՂՄԻՉ-ի օրինակը:

ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. (մսնգ.): **Խաղողից և տարբեր պտուղներից գինու արտադրությունը կամ գինի պատրաստելը**: Մուսկատի լավ գինիներ են ստացվել նաև **խաղողապտղագինեգործության** գիտական կենտրոնում *(Դասագիրք, էջ 133)*:

ԽԱՄՐԱԴԵՄ, ած. **Խամրած դեմքով:** Միայն **խամրադեմ** կինն էր լուռ լալիս .... *(ՋՀ, էջ 535)*:

ԽԱՄՐԱՇՈՒՔ, ած. **Խամրած շքեղությամբ**: Ինքնագոհ ու **խամրաշուք** բազմած զույգ մերկ աղջիկների արանքում .... նա քամահրանքով քմծիծաղեց Նեյթլիի վրա *(ՋՀ, էջ 319)*:

ԽԱՆՈՒԹՊԱՆՈՒՀԻ, գ. **Կին խանութպան**: Նա հիշեցնում էր ակնեղենի-ոսկեղենի փորձված- շնացած **խանութպանուհու** …. *(ՎՍ, էջ 214):*

ԽԱՉԱՂԲՅՈՒՐ, գ. **Սրբատեղի, որտեղ կա ջրի ակունք՝ հոսող ջուր:** Մախմուր լանջի գլգլան **խաչաղբյուրն** է հմայում *(գուս. Աշ.[4], էջ 177):*

ԽԱՉԱՄԵՐԺ, ած. **Խաչ մերժող:** Տ ե՛ս ԶՐՈՒՅԱԽՈՍ-ի օրինակը:

ԽԱՉԱՊԱՐՏ, ած., **Խաչվելու դատապարտված** ... Նրան **խաչապարտի** նման ուղղակի մի ծայրից մյուսը քարշ տվեցին՝ հարվածելով, սուլելով ու վրան թքելով: *(ԱԻՊ[1], էջ 25):*

ԽԱՉԱՓԼՈՒԶՈՒՄ, գ. **Խաչի փլուզվելը:** Թույլ ֆունդամենտի պատճառով գրանցվել է մեկ **խաչափլուզում**՝ Նորադուսում *(ՉԻ, 27.06.2022):*

ԽԱՌՆԱԺԱՌԱՆԳ, ած. (մսնգ.): **Տարբեր բույսերի խաչաձևումից ստացված:** Մենդելը սիսեռի խաչաձևման փորձերում հետազոտել է **խառնաժառանգ** բույսերի սերմերի ձևը և գույնը *(Մել., էջ 116):*

ԽԱՌՆԱԿԱԶՄ, ած. **Խառը կազմ ունեցող:** Պասսի թաղամասը **խառնակազմ** է *(ԱՄ, էջ 36):*

ԽԱՌՆԱԿՇՌՈՒՅԹ, ած. **Խառը ներդաշնակությամբ:** Բազմաձայն, **խառնակշռույթ,** տենդագին խայտանքով ղողանջում էին բոլոր եկեղեցիների զանգերը .... *(Սուր., էջ 230):*

ԽԱՌՆԱՄՇՈՒՇ, գ. **Խառը մշուշ:** Այդ էլ, տխրությունն էլ՝ լուսումութ **խառնամշուշ** *(Սուր., էջ 334):*

ԽԱՎԱԿՏՈՐ, գ. **Խավոտ՝ աղվամազի բարակ շերտով պատված կտոր:** .... Շալվարը ետևից պայթեց: .... Արտասահմանյան փափուկ **խավակտորի** տհաճ առանձնահատկությունն է *(Դով., էջ 55):*

ԽԱՎԱՐԱՓԵՇ, ած. (փխբ.): **Չարաշունչ, ոչ բարի:** Եվ ինչ **խավարափեշ** մոգությամբ ջանացիք «ցավդ տանեմ»-ի ժողովրդին իր վարքի մեջ մոլորեցնել ու դարձնել «ցավս տանես»-ի ժողովուրդ *(ԳԹ, 08.04.2022):*

ԽԱՐԱԶԱՆԱՀՅՈՒՍ, ած. **Խարազանով հյուսված**: …. Նա, **խարազանահյուս** խսիրը հագին, լեռան ցրտի մեջ գիշերը քնում էր այնտեղ…. *(Կայարան, 2014, թ. 3):*

ԽԱՐԱՄԱՂՅՈՒՍ, գ. **Խարամից պատրաստված աղյուս**: …. Անցավ **խարամաղյուսներին** հանգչող ևս մի կցավագոնի կողքով …. *(ՋՀ, էջ 354)*:

ԽԵՂԱՃՈՒՄ, գ. (դիպվ.): **Խեղում, խեղաթյուրված զարգացում:** ….Այդ մոգի շրջանը անկման շրջան է, **խեղաճումն** է երեխայական արդարամիտ աշխարհընկալման …. *(ՎՍ, էջ 316):*

ԽԵՐԵՍԱՑՎԵԼ, բ. (մսնգ.): **Խերես գինու տեսակին բնորոշ հատկություններ ստանալ**: Խերեսի պատրաստման համար նույնպես օգտագործում են այնպիսի խաղողի սորտեր, որոնց գինենյութը հեշտությամբ **խերեսացվում** է *(Դասագիրք, էջ115)*:

ԽԵՑԱՁԵՎ, ած. **Խեցու ձև ունեցող՝ ձևով: Խեցաձև** տերևազարդեր *(Հակ., էջ 58):*

ԽՂՃՄՏԱԼԻ, ած. **Խղճմտանք առաջացնող:** …. Մուտք ենք գործում կրոնի տիրույթը այդ նույն վերամբարձ ու **խղճմտալի** մղումով *(Ակ, էջ 195)*:

ԽՃՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Խառնամտություն:** …. Ինձ որոշ ժամանակ է պետք, մինչև որ կարողանամ մարսել ձեր այդ ամբողջ **խճողամտություններն** ու փաստարկները …. *(Բեկ., էջ 311):*

ԽՄՈՐԻՉԱԿԵՐՊ, ած. **Խմորիչի հատկություն ունեցող**: Կենսաբանական պղտորումները գինու մեջ խմորիչների և **խը-**

մորիչակերպ սնկերի զարգացման արդյունք են *(Դասագիրք, էջ 267)*:

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՑՈՒՄ, գ. **Խնդիր հարուցելը, առաջացնելը**: …. Հոգեփրկություն ապրելու **խնդրահարուցումը** եթե ոչ առաջնային է, ապա էականորեն զատորոշվում է կենցաղային խաճող մանրուքներից….*(Կայարան, 2022, թ.1)*:

ԽՆՁՈՐԱԿԱԹՆԱԹԹՎԱՅԻՆ ած. (մսնգ.): **Խմորման տեսակ**: **Գործընթաց է, որի արդյունքում գինու ընդհանուր թթվայնությունը նվազում է:**Ռիբերո-Գայոնը իր հետազոտություններում տալիս է **խնձորակաթնաթթվային** խմորման հետևյալ լավագույն ջերմաստիճանային ռեժիմը *(Դասագիրք, էջ 62)*:

ԽՆՁՈՐԱԿԱԹՆԱՅԻՆ, ած. (մսնգ.): **Խմորման տեսակ**: **Խնձորակաթնային** խմորման ինգիբիրացման համար երաշխավորվում է խմորիչների վաղ հանումը ….*(Դասագիրք, էջ 211)*:

ԽՈՅԱՐՇԱՎ, գ. (փխբ.): **Կտրուկ քննադատող արշավ:** Ընդդիմախոսները դարձյալ քո դեմ **խոյարշավ** են սկսել *(ՉԻ, 27.10.2021)*:

ԽՈՅԱՔԱՆԴԱԿ, գ, **Բարձրաքանդակ**: - Իսկ քո բերածը, Ա-բա՛մ, խոյաքանդակի ոլորազարդն է: *(Անգլ., էջ 20)*:

ԽՈՌՈՉԱՊԱՏ, ած. **Խոռոչներով պատված: Խոռոչապատ** բերան, խոռոչապատ այտեր, խոռոչապատ տխուր ու սնկախտավոր աչքեր *(ՋՀ, էջ 19)*:

ԽՈՍՔԱԾԵԾ ՏԱԼ, ած. **Խոսքակովի ժամանակ վիրավորական խոսքեր ասել իրար, բառերով վիրավորել:** Երկու քույր իրար լավ **խոսքածեծ** են տվել ու խռովել *(Նիկ., էջ 85)*:

ԽՈՍՔԵՂԱՆԱԿ, ած. **Խոսքի եղանակ՝ ձև**: Մեկուսացված հայացք,// տխուր **խոսքեղանակ** …. *(ՎՀ[1], էջ 112)*:

ԽՈՏԱՆՄԱՆ, ած. **Խոտի նմանություն ունեցող**: .... Բազմամյա **խոտանման** բույս է (*Սաֆ., էջ 48*):

ԽՈՐԱԽՈՑՎԱԾ, ած. (հեգն.): **Խորը խոցված:** Շարունակենք դեգերել քնքուշիկ հոգով Սայաթ Շիրինյանի **խորախոցված** հոգու խորխորատներում *(Հմգ, Lur.am. 06.05.2022):*

ԽՈՐԱՀՈՒՆ, ած. (բնստ., փխբ.): **Խոր հուն՝ արմատներ ունեցող**: Օ՜, ներհուն հայ, **խորահուն** հայ, դու դեռ ինչեր չես անի *(Սարմեն, էջ 13):*

ԽՈՐԱՆԱԳԼՈՒԽ, գ. (արվ.): **Խորանի գլուխը՝ վերին հատվածը:** Թորոսն ակունթազարդն օգտագործում է հիմնականում **խորանագլուխները** շրջանակող երիզների համար .... ինչպես նաև անվանաթերթերի քառանկյունազարդերում *(Հակ., էջ 42):*

ԽՈՐԱՍՈՒԶՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Խորասուզված վիճակ, խոր մտքերի, ապրումների մեջ ընկնելը՝ գտնվելը:** .... Մի բան, որ նա բուդդայականի **խորասուզվածությամբ** է անում *(XX դար, էջ 442):*

ԽՌՊՈՏԱՎՈՒՆ, ած. **Մասամբ՝ փոքր-ինչ խռպոտ:** Թվում էր, թե նրա մի քիչ **խռպոտավուն** ձայնը անհամեմատ ավելի համապատասխան է ժողովրդական կյանքից վերցված մելոդրամայի համար *(Մոր., էջ 124):*

ԽՍՏԱԳՈՀ, ած. **Խստություն և միաժամանակ զոհունակություն արտահայտող:** Ու իմ աչքին հանդիսավոր էր նրա կերպարանքը .... սպիտակած կախ բեղերով դեմքին **խստագոհ** լրջությամբ *(Սուր., էջ 45):*

ԽՍՏԱԴԻՐ, ած. **Խիստ դրված, սահմանափակող:** ....Մի մեթոդ, որին շատ են սիրում դիմել բոլոր ջղային հռետորները՝

դիտմամբ ձգտելով **խստադիր** շրջանակների մեջ մնալ .... *(Հմ, m.mamul.am)*:

ԽՍՏԱՏԱՐԱԶ, ած. **Տարազին խստագույնս համապատասխան:** Մուգ, **խստատարազ** ու պարզ սանրվածքով անգլուհին շահեկանորեն տարբերվում էր գերզուգված ու ադամանդների մեջ շողշողացող տիկնանց շրջապատում *(Վազ., էջ 367)*:

ԽՏԱՏԻՊ, գ. **Հոգեկերտվածք, մտակերտվածք, կենսակարգ:** 2015-ին Բեյրութի «Հայկազեան հայագիտական հանդես»-ում լույս է տեսել մեր՝ «Հայի **խտատիպի** մի քանի դրսևորումներ Դ. Դեմիրճյանի «Հայը» խորագրության խոհապատկերին» վերնագրով հոդվածը *(ԳԹ, 02.07.2021)*:

ԽՐԱՏԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Խրատադաստիարակչական լինելը**: Ռեալիզմը .... վերածվում է **խրատադաստիարակչականության** *(Ակ, էջ 376)*:

ԽՐԱՏԱԿԱՆՈՐԵՆ, մկբ. **Խրատական տոնով, որպես խրատ:** Իսկ վերջինս տանտիրոջը կրակ մատուցելով, **խրատականորեն** և հորանջը զսպելով ասաց .... *(Շոլ., էջ 224)*:

ԽՑԱՆԱՏԱԽՏԱԿ, գ. **Խցաններից(ով) պատրաստված տախտակ**: Առաջադրանքի ժամանակ մարդկանց տրվում է մոմ, լուցկիներ և տուփով կոճգամներ մոմը **խցանատախտակին** այնպես ամրացնելու համար, որ այն վառվի առանց հատակին թափվելու .... *(ԴԳ, էջ 134)*:

ԽՈՒՄՀԱՐԱՀՈՏ, ած. (փխբ.): **Հարբածությունը կամ հարբած եղած լինելը վկայող:** Նրա **խումհարահոտ** խոսքը սփռվել էր աշխարհով մեկ *(Դով., էջ 39)*:

ԽՈՒՍԱՀՆԱՐՔ, գ. **Խուսափողական հնարք**: .... Գալը և գընալը ավելին չեն քան **խուսահնարքներ** *(Հանդք[1], էջ 123)*:

ԽՈՒՍԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Խույս տալու մոլի հատկություն:** …. Վիճաբանությունները պառլամենտական **խուսամոլության** կերպարանք ընդունեցին …. *(Յակ., էջ 451):*

Ծ

ԾԱԼՔԱԹԻԹԵՂ, գ. **Շինարանության մեջ կիրառվող թիթեղի տեսակ:** Պատվիրեք ձեր ցանկապատի **ծալքաթիթեղը** այսօր *(Հմգ, Semur and Co):*

ԾԱԼՔԱՁԵՎ, գ. **Ծալքի ձև:** Այստեղ ընդհանուր ուրվագծերը զուրկ չեն լարվածությունից … և իրենց են ենթարկում հագուստի **ծալքաձևերն** ու մյուս մանրամասները *(Հակ., էջ 121):*

ԾԱԾԱՆԱՓԱՅԼ, ած. **Շողշողուն**: …. Լուսախաղը հուրհրատում էր **ծածանափայլ** աներևակայելի առկայծումներով *(Լեմ, էջ 226)*:

ԾԱԾԿԱԲԱՂԱԴՐԻՉ, գ. **Գաղտնի՝ ոչ զանգվածային բաղադրիչ**: … Հավաստում է, որ թանկարժեք լուսատիպային նյութերը, **ծածկաբաղադրիչները**… բարձր որակի չեն… *(Պետ, էջ 139):*

ԾԱԾԿԱՇԱՊԻԿ, գ. **Ծածկելու համար նախատեսված շապիկ՝ կտոր**: Ամբողջ փափուկ կահույքը ծածկված է սպիտակ **ծածկաշապիկներով** *(Ֆրիշ, էջ 21):*

ԾԱԾԿՈՑԱՇԱԼ, գ. **Որպես ծածկոց (ոտքերի ևն) օգտագործվող շալ:** «Քամելեոն՝ շերտավոր **ծածկոցաշալով»** …. *(Յակ., էջ 239):*

ԾԱՂԿԱԴՈՒՅԼ, գ. **Ծաղկի դույլ**: …. Մի **ծաղկադույլից** մյուսն անցելով, …., մտքում ասաց …. *(Կուլֆ, էջ 19):*

ԾԱՂԿԱԾՓՈՒՆ, ած. **Ծաղիկներով ծփացող՝ ծաղկաշատ: Ծաղկածփուն** սարով եկար….*(գուս. Աշ.[4], էջ 111):*

ԾԱՂԿԱՀՅՈՒՍԱԿ, գ. **Ծաղկաշղթա**: .... Լոկ կարող էիր այդ խավարում կանաչ խոտին դնել գլխիդ **ծաղկահյուսակը** *(Վուլֆ, էջ 57)*:

ԾԱՂԿԱՀՅՈՒՍՎԱԾՔ, գ. (արվ.): **Ծաղիկների հյուսվածք պատկերով քանդակ:** Աստղաձև զարդարուն շրջանակների ներսում կենդանական ու թռչնական մոտիվներ են. … գեղեցիկ **ծաղկահյուսվածքներ,** բոլորն էլ արված են պլաստիկ զգացողությամբ ու փափկությամբ *(Հակ., էջ 22)*:

ԾԱՂԿԱՊԱՐ, գ.**Ծաղիկներով պար**: **Ծաղկապարում** չքնաղ փերուդ վառ սերն առա *(գուս. Աշ.³, էջ 141)*:

ԾԱՂԿԱՏԱՐԱԾ, ած. **Ծաղիկներով տարածված՝ սփռված:** Մնամ ծաղկանց ծովերում, **ծաղկատարած** ցողերում,// Արևանուշ շող դառնամ, մնամ հավքի տաղերում *(գուս. Աշ.³, էջ 59)*:

ԾԱՂԿՈՒՆՔՎԵԼ, բ. (փխբ.): **Հասունանալ, պտղավորվել:** Աստվածամոր երազից **ծաղկունքվել** ես դու խոնարհ *(ՎՀ², էջ 181)*:

ԾԱՂԿՕՂԱԿ, գ. **Ծաղկաշղթա**: .... Թագը կախվել էր պարանոցից **ծաղկօղակի** նման *(Աթբ., էջ 106)*:

ԾԱՄՈՆԱՓՈՒՉԻԿ, գ. **Ծամելու ժամանակ փչելիս առաջացած փուչիկը:** .... Քրոջս ողջ դեմքը պատել էր աշխարհքիս ամենամեծ **ծամոնափուչիկը** պայթելուն պես .... *(Նիկ., էջ 63)*:

ԾԱՅՐԱՑԻՑ, գ. **Վերևի սուր ծայրը**: .... Արտասվեց նա՝ կառչելով երկաթյա ճաղի գնդաձև **ծայրացցերից** *(Վուլֆ, էջ 36)*:

ԾԱՆՈՒՑԱՆԻՇ, գ. **Հայտանիշ, ցուցիչ:** Այստեղ ցուլը Տիտ աստվածության երկրային մարմնավորումն է, նրա **ծանուցանիշը** *(ՊԲՀ, 2021, 1, էջ 182)*:

ԾԱՌԱՅԱՑՈՒՑԱԿ, գ. **Ծառայողական ցուցակ:** …. Որտեղ լրացնում էին **ծառայացուցակները** …. *(Բեկ., էջ 115):*

ԾԱՌԱՅՈՂՈՒՀԻ, գ. **Կին ծառայող:** Հիմա էլ մյուս կողմից դահլիճ մտավ **ծառայողուհին՝** փոշեկուլով *(Հանդէ[1], էջ 64)*:

ԾԵԾԱՐԱՆ, գ. **Ծեծելու միջոցով կալսելու տեղ:** Հացահատիկների նոր ծածկած **ծեծարան** *(Տոլ., էջ 502):*

ԾԵՐՈՒԿԱՅԻՆ, ած. **Ծերուկին հատուկ, ծերունական:** …. Ահա այդ լրագիրը՝ տպված սույն ամսի չորսին,- առանց շտապելու **ծերուկային** տենորով ասաց ծերունին …. *(Շոլ., էջ 272):*

ԾԵՐՈՒՆԱՄՈՒՏ, գ. **Ծերության տարիքին հասնելը: Ծերունամուտ**: Գալիս է մի տարիք, երբ// իրավունք չես ունենում արդեն// աղջիկներին հարցնելու,// թե ինչո՞ւ են այդքան գեղեցիկ *(ՎՀ[1], էջ 36):*

ԾԵՓԱՆԱԽՇ, ած. **Ծեփելով նախշված:** Հին բարձիթող պալացցոն, **ծեփանախշ** բարձր առաստաղներով …. հենց իր արտաքին տեսքով նպաստում էր Վռոնսկու հաճելի մոլորությանը …. *(Տոլ., էջ 47):*

ԾԻԱԾԱՆԱԶԱՐԴ, ած. **Ծիածանով զարդարված**: …. Նիկելապատ խողովակները պսպղացին **ծիածանազարդ** բեկբեկուն կրակներով …. *(Լեմ, էջ 115):*

ԾԻԱԾԱՆԱՇՌԱՅԼ, ած. (փխբ.): **Ծիածանի նման շռայլ գույներով**: Մտքի բլրի գագաթը բոլորուն փայլատակեց, շողարձակեց **ծիածանաշռայլ** երանգներով …. *(Կայարան, 2021, թ. 2):*

ԾԻԱԾԱՆԵՐԱՆԳ, ած. **Ծիածանի երանգներ՝ գույներ ունեցող՝ գույներով:** Նրա **ծիածաներանգ**, թափանցիկ թևերը թոթռում էին *(Վագ., էջ 181):*

ԾԻԾԱՂԱԿԱՅԾ, գ. **Ծիծաղի նուրբ փայլատակում:** …. Միայն **ծիծաղակայծն** էր խաղում նրա աչքերում, երբ նա առաջինը դիմեց Մարտին «դու»-ով *(Բեեկ., էջ 81):*

ԾԻՍԱՌԿԱՅԾՈՒՄ, գ. (բնստ.): **Ծեսին հատուկ՝ որոշակի կարգ ու կանոնով առկայծելը:** …. Ի՞նչ են արդյոք լուսաբացն ու ծաղկումները. // կարոտների **ծիսառկայծում** չէ՞ ամենն այս …. *(Տոն.[1], էջ 27):*

ԾԻՐԱՆԱՔԱՐԵ, ած. **Ծիրանաքարից պատրաստված**: Մկրտության **ծիրանաքարե** ավազանում …. Կոլա դի Ռիենցոն կատարեց ասպետական լվացում *(Պար., էջ 108):*

ԾԽԱՀԱՐԱՆՈՑ, գ. (մսնգ.): **Ծխահարման համար պատրաստված հարմարանք**: Ծխահարման համար կիրառում են **ծխահարանոց,** որը …. մետաղալարի կտորից պատրաստած հարմարանք է *(Դասագիրք,էջ18)*:

ԾԽԱՓՈՒՆՋ, գ. **Ծխի քուլաների փունջ:** …. Նրբորեն ու թեթևասահ խառնվեցին ամպերին ու **ծխափնջերին** …. *(Վուլֆ, էջ 119):*

ԾՂՈՏԱԳԱՆԱՉ, ած. **Ծղոտագույն կանաչ**: Առանձնանում են բաց ծղոտագույն, **ծղոտականաչ**, բաց և մուգ մանուշակագույն և անգամ սև նրբերանգներ *(Դասագիրք, էջ 34):*

ԾՂՈՏԱՆՄԱՆ, ած. **Ծղոտի նման, ծղոտի տեսք ունեցող**: … Նա նիհար էր, մկանուտ, կապույտ աչքերի ծակող հայացքով և **ծղոտանման** մազերով… *(Պետ, էջ 67):*

ԾՆԿԱՀԱՐԵԼ, բ. **Ծնկով հարվածել**: Արդարությունը **ծնկահարված** է …. *(ՋՀ, էջ 107)*:

ԾՈՌՆՈՒՀԻ, գ. **Կին ծոռ:** Հսկա մոնոպոլիստի **ծոռնուհին** այսօր սգահար մայր է …. *(Նիկ., էջ 76):*

ԾՈՎԱԹԵՎԻԿ, ած. **Ծովի գույն ունեցող թևերով:** Մըրմընջացի ծովափին, **ծովաթևիկ** մի թռչուն,// Մտամոլոր հույզերս առած հեռուն է թռչում *(գուս. Աշ.[4], էջ 43):*

ԾՈՎԱՃԱՄՓԱ, գ. (բնստ.): **Ծովով անցնող ճանապարհ:** Կտրել էիր **ծովաճամփան՝** փոթորկալի ու երկար *(Սարմեն, էջ 25):*

ԾՈՎԱՇԱՂԱԽ, ած. (փխբ.): **Ծովի բույրով հագեցած:** .... Ասես ինքն այրել էր մետաղյա պնակի մոխրագույն գնդիկն ու իրենց մտերմության **ծովաշաղախ** ու աղաբույր շնչառությամբ մի հրաշալի ծառ վեր խոյացրել .... *(Վուլֆ, էջ 59)*:

ԾՈՎԱՋՐԱՆՑՔ, գ. **Ծովերում, գերազանցապես ափամերձ տարածքներուում, ջրանցքանման նեղ անցում**: Քանր որ «Սամոսը» այնքան էլ մեծ չէր, շատ հեշտությամբ անցանք ժայռերը ապրանքից. նեղ **ծովաջրանցքով**... *(Անգլ., էջ 46):*

ԾՈՐԾՈՐԱԼ, չբ. (փխբ.): **Ծորալով թափվել՝ հոսել՝ տիրել՝ պատել:** Երգեր-երգեր սրտեր մտնում, **ծործորում** *(գուս. Աշ.[4], էջ 171):*

ԾՈՑԱՀԱՏ, ած. գ. **Ծոցից փող կամ այլ իրեր գողացող:** - Քաղաքում հազար ու մի գրպանահատներ, **ծոցահատներ** կան *(Բակուր, էջ 10):*

ԾՐԱԳՐԱԹԵՐԹԻԿ, գ. **Նախատեսված ծրագրի թերթիկ**: Բարեբախտաբար, նա իր մոտ գտավ կինոնկարի **ծրագրաթերթիկը** *(Հանդքե[1], էջ 11):*

Կ

ԿԱԶԱԿԱՎԱՐԻ, մկբ., ած. **Կազակների նման, ինչպես կազակները:** .... Տեղ-տեղ արդեն կոմունիստներին խելքի են բերում կազակավարի .... *(Շոլ., էջ 111):*

ԿԱԹՆԱԳՈՐՇԱՎՈՒՆ, ած. **Կաթի գույնին տվող գորշ:** .... Նրանք նստեցին գոնդոլ և լողացին գիշերային Վենետիկը պարուրած **կաթնագորշավուն** մշուշի միջով *(Վագ., էջ 307):*

ԿԱԹՆԱԹՈՐ, ած. **Մեջը կաթ լցնելով, կաթի գույն ստացած:** Նա դարձավ կարծես մի **կաթնաթոր** լճակ, գիշերվա մեջ լեցուն կայծկլտացող աստղերով *(XX դար, էջ 410):*

ԿԱԹՆԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Կաթնագույնին տվող կանաչ, բաց կանաչավուն:** Երազախոսության օրերին, երբ իջնում էր մթնշաղը, դերվիշն իրենից **կաթնականաչավուն** լույս էր արձակում .... *(Կայարան, 2021, թ. 2):*

ԿԱԹՆԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Կաթնագույնին տվող սպիտակ**: Մեկ մաշկափոխությունից հետո ծածկվում են **կաթնասպիտակավուն** շերտով և այդպես ձմեռում են (*Սաֆ., էջ 122*):

ԿԱԼԻԳՈՒԼԵԼ, նբ. (փխբ., դիպվ.): **Վարվել, ինչպես իր ժամանակ Կալիգուլան (Հուլիոս Կեսար)՝ ծայրահեղ աղքատության հասցնել, սնանկացնել:** «Դու ինձ **կալիգուլեցիր»,-** ասել էր Լաժեն մի դերասանի *(Մոր., էջ 192):*

ԿԱԽԱՐԴԱԹՈՎ, ած. **Կախարդանքով հմայող:** Տառապանք կա այդ պարի մեջ **կախարդաթով** *(ՎՀ², էջ 23):*

ԿԱԽԱՐԴԱՆՄԱՆ, ած. **Կախարդի նմանվող:** ....Վարորդն ասես քաղաքային խաղարար լիներ, **կախարդանման** մեկը....*(ԴԳ, էջ 22):*

ԿԱԽՈՒՅԹԱՀԵՂՈՒԿ, գ. (մսնգ.): **Հեղուկ, որի մեջ պինդ նյութի մասնիկները կախված վիճակում են:** Տվյալ փուլում քաղցուն որոշ չափով մաքրվում է վնասատու միկրոօրգանիզմներից և մեխանիկական **կախույթահեղուկներից** *(Դասագիրք, էջ13):*

ԿԱՂՆԱՀԱՄՈՒԹՅՈՒՆ, գ. (մսնգ.):**Կաղնու համ ունենալը**: Գինու մեջ **կաղնահամությունը** անբավարար մշակած նոր կաղնե տակառատախտակների օգտագործման արդյունք է *(Դասագիրք, էջ 261)*:

ԿԱՄԱՐԱԵՐԻԶ, գ. (արվ.): **Կամարի երիզ:** Նարեկում (մատ. №1568) դրանով են զարդարված Նարեկացու դիմանկարների **կամարաերիզները** *(Հակ., էջ 42)*:

ԿԱՅԼԱԿԱՎՈՐ, ած. (փխբ.): **Ցայտուն:** Այդ դեմքի մեջ կար մի ինչ-որ սարսափելի մոտիկ, տրամադրող բան, - գուցե նրա սրտաբաց, մոխրագույն, **կայլակավոր** աչքե՞րը ...*(Շոլ., էջ 241)*:

ԿԱՅԾԱԿՆԱՇԵՐՏ, գ.. (փխբ.): **Կայծակի նման փայլը:** Հետո նկատելով աչքերիս թաց **կայծակնաշերտը**, սնգրտոցս, ... զիջեց .... *(Նիկ., էջ 141)*:

ԿԱՅՍԵՐԱՏԻՊ, ած. **Կայսերական, կայսրի կողմից ղեկավարվող: Կայսերատիպ** պետություն *(Բակուր, էջ 204)*:

ԿԱՅՍԵՐԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Իշխանություն, որը միանձնյա ղեկավարում է կայսրը**: ... Նույն Քեմալը, որն այն ժամանակ երիտասարդ զինվորական էր ու որպես վկա էր հանդես գալիս, միանշանակ ասաց.... «Մեր հայրենակիցները **Կայսերատիրության** բոլոր միջոցներով աննախադեպ ոճիրներ գործեցին, ... ողջ-ողջ այրեցին օրորոցի մանուկներին, բռանաբարեցին կանանց...» *(Անգլ., էջ 148)*:

ԿԱՆԱՉԱԲԱՇ, ած. (փխբ.): **Բաշի նմանվող ալիքներով**: .... **Կանաչաբաշ** ծովը փրփրում էր ինքնաթիռի շուրջը .... *(ՋՀ, էջ 398)*:

ԿԱՆԱՉԱՍԵՎԱՎՈՒՆ, ած. **Կանաչին տվող սև**: Միայն մի կարճ **կանաչասևավուն** մակերես էր տեսնում և ամպե մի շղարշ ջրի երեսին *(ԱԻՊ[1], էջ 195)*:

ԿԱՆԽԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Կանխագործելը, ժամկետից շուտ իրագործելը** :... Այս բաղձալի հեռանկարի **կանխագործումով** ... *(ԱԻՊ[1], էջ 37):*

ԿԱՆԽԱՀԱՇՎԱՐԿՎԵԼ, չբ. **Կանխապես՝ նախապես հաշվարկվել:** ՄԿԲ.թ.ա. III դարում **կանխահաշվարկված** էին մոլորակների շարժումներն ու արեգակի և լուսնի խավարումները *(Շախ., էջ 162):*

ԿԱՆՈՆԱՑՆԵԼ, նբ. **Օրինականացնել:** Քրիստոնեական Աստվածաշունչը **կանոնացնելիս** մեծ կասկածներ ծագեցին սուրբ գրքերի շարքը դասելու հնարավորության վերաբերյալ *(Շախ., էջ 133):*

ԿԱՆՉՈՂԱԲԱՐ, մկբ. **Կանչելով՝ հրապուրելով:** .... Ապագան **կանչողաբար** թրթռում էր նրա շուրթերից կես մետր հեռավորության վրա .... *(Կայարան, 2014, թ. 3):*

ԿԱՇԱՌԱԽՏ, գ. (փխբ.): **Կաշառակերության ախտ՝ հիվանդություն:** ԲՀԿ-ի մահը վրա է հասել տարիներ շարունակ **կաշառախտ** կոչվող հիվանդությամբ տառապելու արդյունքում *(ՉԻ, 10.07.2021):*

ԿԱՇԱՌԱՌԱՏ, ած. **Շատ կաշառք պարունակող:** Նրանց **կաշառառատ** քաղաքականությանը արժանի պատասխան չի տրվում *(Հմg, hraparak.am)::*

ԿԱՌԻՉՈՒԿԱԿԻՐ, ած. **Կառչուկ տվող, կառչուկատու:** .... **Կառչուկակիր** ջունգլիների .... *(Բեեկ., էջ 282):*

ԿԱՊԿՊՈՒԿ, ած. **Կապկպված: Կապկպուկ** չինովնիկը .... արդեն յոթ անգամ եկել էր .... խնդրելու ինչ-որ բանի մասին .... *(Տոլ., էջ 126):*

ԿԱՊՏԱԳԻՍԱԿ, ած. **Կապույտ գիսակներ ունեցող**: Ճանապարհին Գագասը պատմում էր **կապտագիսակ** ջրահարսի մասին .... *(Կայարան, 2021, թ.2):*

ԿԱՊՏԱԹԽԱԳՈՒՅՆ, ած. **Կապույտին տվող թխագույն:** .... Մաշկը փայլուն է, փափուկ, **կապտաթխագույն** .... *(Ֆրիշ, էջ 413):*

ԿԱՊՏԱԼՈՒՅՍ, ած. **Կապույտ լույս արձակող, կապույտ լույսով ողողված:** Արդեն **կապտալույս** այգաբաց է .... *(Սուր., էջ 266):*

ԿԱՊՏԱՀԵՐ, ած. **Կապույտ մազերով, մազերը կապույտ:** Աչքի զարնող **կապտահեր** տիկինը և նրա ուղեկիցը անսպասելիորեն անցան նրանց մոտով .... *(Բեկ., էջ 186):*

ԿԱՊՏԱՊՈՂՊԱՏԱԳՈՒՅՆ, ած. **Կապտին տվող պողպատագույն:** Լիճն այստեղ անհամեմատ լայն է, ջուրը **կապտապողպատագույն** երանգներ ունի .... *(Վագ., էջ 253):*

ԿԱՊՏԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Կապտին տվող վարդագույն:** Նկարով հմայված երիտասարդը երկար կանգնեց վառ կանաչ ալիքների, մշուշի միջից ելնող արևի ոսկե և **կապտավարդագույն** շողերի առջև *(Վագ., էջ 377):*

ԿԱՊՏԱՓԻՐՈՒԶԱԳՈՒՅՆ, ած. **Կապտին տվող փիրուզագույն:** Նրան թվում էր, որ դեռ գտնվում է ջրի **կապտափիրուզագույն** երանգների գերության՝ նախկին նկարելակերպի ազդեցության տակ *(Վագ., էջ 452):*

ԿԱՊՏԱՓՈՐ, ած. **Կապույտ փոր ունեցող**: .... Հանրային արշավ սկսվեց ընդդեմ մանր ու **կապտափոր** ծովախեցգետինների իրացման *(Ռուշդի, էջ 188):*

ԿԱՌՔԱՆՈՑ, գ. **Կառքերի հավաքական**: Մայրս վազ տվեց եկավ, իսկ ես շան լակոտի հետ միասին պառկել եմ **կառ-**

քանոցի մոտ՝ գետնի վրա և ոտքերս եմ թափահարում .... *(Շոլ., էջ 269)*:

ԿԱՎԱՀԵՂՈՒԿ, գ. **Կավի ջրային խառնուրդ**: Արմատները թաթախում [են] **կավահեղուկի** մեջ .... (*Սաֆ., էջ 75*):

ԿԱՎԱՀՈՂԵ, ած. **Կավահողից պատրաստված**: .... Խաղացողը **կավահողե** հրապարակում մենակ, մեկը մյուսի հետևից գլորում էր վեց գնդերը .... *(Հանդքե², էջ 92)*:

ԿԱՎԱՆՅՈՒԹ, գ. (փխբ.): **Կավե նյութ**: Իմ **կավանյութից** է իմ բառը *(ՎՀ¹, էջ 125)*:

ԿԱՎՃԱԳԻՐ, ած. **Կավճով գրված**: .... **Կավճագիր** տախտակների վրա հույսի բառեր որոնող լարված աչքեր .... *(Յակ., էջ 199)*:

ԿԱՎՃԱԹՂԹԵ, ած. **Կավճաթղթից պատրաստված**: .... Մաթեմատիկական բանաձևեր էին առկայծում **կավճաթղթե** էջերի վրա *(Լեմ, էջ 25)*:

ԿԱՏԱԿԱԳԻՐ, գ. **Կատակով՝ որպես կատակ գրված գիր**: .... Գործնական նամակին պրեզիդենտը գրեց հետևյալ **կատակագիրը** .... *(Յակ., էջ 579)*:

ԿԱՏՎԱՔԱՅԼ, ած. **Կատվի նման քայլելով**: Վագրը **կատվաքայլ**, գաղտագողի մոտենում էր իր զոհին .... *(Բեկ., էջ 58)*:

ԿԱՐԱՄԵԼԱՎՈՐՈՒՄ, գ.(մսնգ.):**Տաքացման պայմաններում շաքարների քիմիական փոփոխությունների բարդ գործընթաց**: **Կարամելավորումը** գործընթաց է, որի ընթացքում տեղի է ունենում շաքարների հալում *(Դասագիրք, էջ 297)*:

ԿԱՐԱՄԵԼԱՑՈՒՄ, գ. (մսնգ.): Տե՛ս ԿԱՐԱՄԵԼԱՎՈՐՈՒՄ-ի բացատրությունը: .... Շապիկային տարածությունը

լցնում են մեքենայի յուղով, որը նպաստում է քաղցուի նվազ **կարամելացմանը** *(Դասագիրք, էջ134)*:

ԿԱՐԲԻԴԵ, ած. **Կարբիդից պատրաստված**: .... Պարեկը **կարբիդե** լապտերի լույսի տակ ստուգեց անձնագրերը .... *(ԱԻՊ[1], էջ 133)*:

ԿԱՐԳԱՊԱՀԱՑՆԵԼ, նբ. **Կարգապահ դարձնել, ստիպել ենթարկվելու առկա կարգուկանոնին:** Կանոնավոր ընտանիքնե-րի շառավիղները դրսևորեցին արտասովոր հնարամտություն՝ նորեկներին **կարգապահացնում** էին՝ ստիպելով ծալվել երեք-տակ *(Յակ., էջ 24)*:

ԿԱՐԴԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կարդացած՝ զարգացած, գիտե-լիքներով հարուստ լինելը:** Աբխազ սպան ազատ խոսում էր ռու-սերեն ու ֆրանսերեն և աչքի էր ընկնում իր **կարդացածությամբ** *(Վագ., էջ 216)*:

ԿԱՐԾՐՈՒՂԵՂ, ած. **Համառ**: .... Ծաղրեց **կարծրուղեղ** ծե-րունին .... *(ՋՀ, էջ 320)*:

ԿԱՐՃԱՏԵՍՈՐԵՆ, մկբ. **Կարճատեսի նման, ինչպես կար-ճատեսը:** Դավիդովը գնաց դեպի ձայները՝ **կարճատեսորեն** աչ-քերը կկոցած *(Շոլ., էջ 1162)*:

ԿԱՐՄՐԱԳՈՐՇԱԴԵՂՆԱՎՈՒՆ, ած. **Կարմրագորշադե-ղին երանգ ունեցող**: Տե՛ս ԳՈՐՇԱԴԵՂՆԱԿԱՐՄԻՐ-ի օրինակը:

ԿԱՐՄՐԱԴԵՂՆԱԳՈՐՇ, ած. **Կարմրին տվող դեղնագորշ**: Տե՛ս ԴԵՂՆԱԳՈՐՇԱԿԱՐՄԻՐ-ի օրինակը *(Հանդէ[2], էջ 99)*:

ԿԱՐՄՐԱԿՈԹ, ած. **Կարմիր կոթով, կոթը կարմիր:** Կեղ-տոտ անկողնու գլխին աչքիս ընկավ հրացանը: Տուլայի ծանր, **կարմրակոթ** երկփողանին *(Դով., էջ 214)*:

ԿԱՐՄՐԱՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Կարմրին տվող մանուշակագույն: Կարմրամանուշակագույն** նախշերը որսի տեսարաններ էին պատկերում *(Ուելբեք 1, էջ 132):*

ԿԱՐՄՐԱՍԵՎ, ած. **Կարմիր և սև**:… Քունքոսկրի ելունդի վրա սարսափով նկատեցի նարնջի կեսի չափ մի խոշոր ուռուցք, որը ծածկված էր **կարմրասև** գույնի մաշկով *(Դար., էջ 228):*

ԿԱՐՄՐԱՍՊԻՏԱԿ, ած. **Կարմիր և սպիտակ գույներով ներկված:** Մորսկայա ծառուղում երևաց **կարմրասպիտակ** ավտոբուսը *(Կլ., էջ 155):*

ԿԱՐՈՏԱՁԵՌՔ, ած., մկբ. **Կարոտած ձեռքերով**: Թվում է՝ Մեկը միշտ **կարոտաձեռք** // Մեր ճակատագրի գրքերն է թերթում ....*(Տոն.³, էջ 15):*

ԿԱՐՊԵՏԱԾԱԾԿ, ած. **Կարպետով ծածկված:** ….Հատակը սալապատ էր, պատերը սրբատաշ քարերից, նստարանները՝ **կարպետածածկ** քար….*(ՎՍ, էջ 202):*

ԿԱՑԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կացարաններ՝ բնակվելու, մնալու տեղեր կառուցելը՝ շինելը:** Ժայռապատկերներում նկատվում են **կացարանաշինության** ու ճարտարապետության որոշ տարրեր …. *(Մով.², էջ 20):*

ԿԵՂԵՎԱՄԱՇԿԵԼ, բ. **Կեղևը հանելով արտաքին մաշկը հեռացնել**: Վալտերի աչքերը փայլատակում էին ինչպես թարմ **կեղևամաշկված** շագանակները .... *(ԱԱ, էջ 289)*:

ԿԵՂԾՈՒՇԻՏԱԿ, ած. **Կեղծ ու ճշմարիտ:** Մորս մխիթարելու էին գալիս տասնյակ **կեղծուշիտակ** բարեկամներ …. *(Կայարան, 2021, թ. 2):*

ԿԵՂՏԱԹՈՒՅՐ, ած. **Կեղտի գույն՝ երանգ ունեցող:** Ամենախորհրդավորը, սակայն, Աբդուլի **կեղտաթույր** կոմբինիզոնն էր….*(ՎՍ, էջ 80):*

ԿԵՆԱՑԱՍԱՑ, ած. **Կենաց ասող՝ առաջարկող:** Տե՛ս ԱՄՊԱՊՆԱԿ-ի օրինակը:

ԿԵՆԱՑԱՏՈՒ, ած. **Կենաց տվող՝ առաջացնող:** Տե՛ս ԱՄՊԱՊՆԱԿ-ի օրինակը:

ԿԵՆԴԱՆԱԹՌՉՆԱԿԱՆ, ած. (արվ.): **Կենդանիների և թռչունների:** Տե՛ս ԱՌԱՍՊԵԼԱԲՆՈՒՅԹ-ի օրինակը:

ԿԵՆԴԱՆԱՎԱՃԱՌ, գ. **Կենդանիներ վաճառող անձ**: Ես պետք է **կենդանավաճառ** դառնամ հայրիկիս պես *(Աթք., էջ 275):*

ԿԵՆԴԱՆԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Կենդանու տեսք ունեցող՝ տեսքով:** …. Ուշագրավ այս խումբը կազմված է դիցաբանական էակների մարդատեսք և **կենդանատեսք** արձանիկներից *(Մով.[2], էջ 69):*

ԿԵՆՍԱԳԵՆԵՐԱՏՈՐ, գ. (մնգ.): **Սարք, որը գինենյութից հեռացնում է թթվածինը:**Միաժամանակ **կենսագեներատորի** մեջ մտցնում են խմորիչների մերան …. *(Դասագիրք, էջ 194)*:

ԿԵՆՍԱԴԵՂ, ած. **Կենսատու՝ կենսարար:** Այստեղ փըթթում է անեզրական վարդ՝ // Բույրով եդեմի, գույնով **կենսադեղ** …. *(Տոն.[4], էջ 80):*

ԿԵՆՍԱԵՌԱՆԴ, գ. **Կենսական՝ կյանքը ապահովող ե-ռանդ:** …. Խոսենք տիեզերքից մեզ հասնող **կենսաեռանդի** տեղաբաշխման մասին …. *(Բակուր, էջ 321):*

ԿԵՆՍԱԵՐԿՐԱՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. (մնգ.):**Բուսակենդանական համակեցություն:**Այսպիսով, կենսահամակեցությունը, բնության անկենդան բաղադրիչների հետ միասին,

կազմում է մեկ ամբողջություն, որը կոչվում է **կենսաերկրահամակեցություն** (բիոգեոցենոզ)*(ՍԹ, էջ 9)*:

ԿԵՆՍԱԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ, ած. (մսնգ.):**Կենսաերկրաքիմիային վերաբերող:** .... Թե՛ կենսաերկրահամակեցությունը, թե՛ էկոհամակարգն իրականացնում են միևնույն էկոլոգիական գործառույթը՝ կենսածին տարրերի **կենսաերկրաքիմիական** շրջապտույտը *(ՍԹ, էջ 10)*:

ԿԵՆՍԱԶՕԾՈՒՄ, գ. **Կենսազօծելը, կյանք՝ շունչ հաղորդելը:** Մի զույգ հարազա՛տ, հարազա՛տ աչքեր // Անթարթ նայում են, // **Կենսազօծումով** նայում են դեպի ինձ ... *(Տոն.[1], էջ 14)*:

ԿԵՆՍԱԸՄԲՌՆՈՂՈՒԹՅՈՒՆ, գ, **Կյանքի ըմբռնողություն**: .... Պետք է որ լուրջ անախորժությունների հետ ընդհարված լիներ .... եթե նկատի ունենանք նրա քաղքենիական **կենսաըմբռնողության** կերպը *(ԱԱ, էջ 158)*:

ԿԵՆՍԱԽԱՂ, գ. (փխբ.): **Կենդանի՝ բնական խաղ:** Նրա խառնվածքն ու **կենսախաղի** ծարավն այնպիսին է .... *(Հմգ, rubmagic.ru)*:

ԿԵՆՍԱԿԱՐԵՎՈՐ, ած. **Կենսականորեն կարևոր:** Աշակերտները.... պարտավոր են որոշակի մակարդակի տիրապետել **կենսակարևոր** այդ հմտություններին *(ԴԳ, էջ 10)*:

ԿԵՆՍԱՀԱՆՔԱՅԻՆ, ած. (մսնգ.): **Կենսական և հանքային նշանակություն ունեցող:** Կենսոլորտի հիմնական բաղադրամասերը խմբավորվում են՝ 1.կենդանի նյութ ...., 2.կենսածին նյութ ...., 3.հանքային նյութ ...., 4.**կենսահանքային** նյութ .... *(ՍԹ, էջ 17)*:

ԿԵՆՍԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Կյանքը՝ կենսագործունեությունը ճանաչելը, դրանց բոլոր հանգամանքներին ծանոթ**

լինելը:... Մարդու տեսակը, հավասար հողն ու ստեղծագործությունը պետք է որ ամբողջական **կենսաճանաչողությունից** ելնեին ... *(ԱԻՊ[1], էջ 61):*

ԿԵՆՍԱՓԱՅԼ, ած. **Կյանքի փայլ ունեցող, կենսաշող:** ....Մտքով վերադառնալով դեպի իր պսակը, նա նայում էր **կենսափայլ** Ստեփան Արկադևիչին .... *(Տոլ., էջ 33):*

ԿԵՆՏՓԵՏՐԱՁԵՎ, ած. **Միակ և փետրաձև**: Տերևները բութ են, **կենտփետրաձև** (*Սաֆ., էջ 46*):

ԿԵՌՄԱՆԱԶԱՐԴ, ած. (արվ.): **Ոլորանաձև զարդարված:** Այստեղ էլ վերին անկյուններից իջնում են **կեռմանազարդ** ժապավեններ .... *(Հակ., էջ 57):*

ԿԵՏԱՆՇԱՆ, գ. (պատմ.): **Կետերով արձանագրված նշան:** ... Թվերը նշված են ... հայաստանյան **կետանշաններով** *(Մով.[1], էջ 55):*

ԿԵՑԱՍԵՆՅԱԿ, գ. **Կացարան**: Կովկասի հայ ուսանողները .... Նոյից առաջ տեղափոխվել, լավագույն **կեցասենյակներում** հաստատվել էին *(ԳԹ, 22.04.2022):*

ԿԻՆՈՎԵՊ, գ. **Նկարահանված վեպ**: «Զանգեզուր» **կինովեպը** արժանացավ բարձր գնահատականի .... *(Հակ., Սիմ.,էջ 398):*

ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Կիպրոսում բնակվող հայերը որպես մի ամբողջական համայնք:** Եվ նա այդ գագաթին տվել է «Կիլիկյան դիտարան» անունը, որ տարածված էր **կիպրահայության** մեջ *(Սուր., էջ 72):*

ԿԻՊՐՈՍԱՀԱՅ, գ. **Կիպրոսից եկած հայ:** Ամառային արձակուրդին նա ևս, ինչպես մյուս **կիպրոսահայ** սաները, տուն էր գնում *(Սուր., էջ 51):*

ԿԻՍԱԱՄԱՅԻ, ած. **Կիսով չափ՝ մասամբ ամայի**: Հարկ է նշել Արարատյան դաշտի.... **Կիսաամայի** հողային տարածությունների ուսումնասիրմանը և յուրացմանը նվիրված աշխատանքները *(Հակ., Սիմ.,էջ 367)*:

ԿԻՍԱԱՆԳԼԻԱՅԻ, ած. **Կիսով չափ անգլիացի:** .... Շրջապատված իր չորս **կիսաանգլիացի** թոռներով՝ նա, կարծես թե, բավականություն է ստանում իր նոր դերից՝ .... *(Աթք., էջ 474)*:

ԿԻՍԱԱՆՇԱՐԺ, ած. **Մասամբ շարժվող, կիսով չափ անշարժ**: ... Գրեթե առաջ չէր գնում, աջ ոտը **կիսաանշարժ** էր ցրտի պատճառով, թևերը թմրած ու ծանրացած *(ԱԻՊ[1], էջ 196)*:

ԿԻՍԱԱՌԱՍՊԵԼ, գ. **Կիսով չափ առասպելական բնույթ ունեցող մտածողություն՝ կարծիք:** Բոլոր այս հայացքներում, **կիսաառասպել** – կիսահիպոթեզներում նշմարվում է տարերային մատերիալիզմը *(Շախ., էջ 159)*:

ԿԻՍԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած. **Մասամբ՝ կիսով չափ առասպելական:** Չինաստանում սկսեցին .... դասականության **կիսաառասպելական** հիմնադիր Լաու-ցզիին դարձնել մատերիալիստ փիլիսոփա .... *(Շախ., էջ 202)*:

ԿԻՍԱՔՍՈՐ, գ. **Կիսով չափ աքսոր**: Եվ հիմա, 50 տարի **կիսաաքսորում** անցկացնելուց հետո անգամ, շարունակում եմ ինքս ինձ համարել ֆրանսիացի արտիստ .... *(Ազն., էջ 112)*:

ԿԻՍԱԲԱՐՁՐԱԲՈՒՆ, ած. (գոտնտ.): **Բունը կիսով չափ բարձր**: ....2)**Կիսաբարձրաբուն՝** բնի բարձրությունը հասնում է 80-120 սմ-ի (*Սաֆ., էջ 149*):

ԿԻՍԱԲՈԲԻԿ, ած. **Կիսով չափ՝ մասամբ բոբիկ:** Ինչպիսի՜ դժվարություն ենք մենք կրում, **կիսաբոբիկ** ու կիսամերկ ենք շրջում, բայց ատամներս ենք սեղմում ու աշխատում *(Շոլ., էջ 182)*:

ԿԻՍԱԳԵՐՄԱՆԱՑԻ, գ. ած. **Ծնողներից մեկը ոչ «մաքուր» գերմանացի**: Իսկ դուք որտե՞ղ եք տեղավորվել, խարտյաշ **կիսագերմանացի** *(Պետ, էջ 124)*:

ԿԻՍԱԴՐԱՄԱ, գ. **Կիսով չափ՝ մասամբ դրամատիկական ստեղծագործություն:** Ճիշտն ասած «Քրիստինան», «Հենրիխ III-ի և նրա արքունիքի» չափ արժեքավոր չէր: Սա խառնածին ժանրի ստեղծագործություն էր. **կիսադրամ,** կիսառողբերգություն *(Մոր., էջ 100)*:

ԿԻՍԱԵՐԱԶ, գ. **Կիսով չափ երազ:** .... **Կիսաերազում** ծանր քարը սարն ի վեր բարձրացրել էր ... *(Բակուր, էջ 341)*:

ԿԻՍԱԶԱՅՐԱՆԱԼ, չբ. **Կիսով չափ՝ մասամբ զայրանալ:** Գտավ ու **կիսազայրացած**-կիսավախեցած նայեց սանամորը *(Նիկ., էջ 93)*:

ԿԻՍԱԸՆԴՀԱՏԱԿՅԱ, ած. **Կիսով չափ ընդհատակյա**: .... Պահանջեցին մի սրահ տրամադրել՝ իրենց **կիսաընդհատակյա** ժողովների համար *(Կունդերա, էջ 82)*:

ԿԻՍԱԹԻԿՆԵԼ, չբ. **Կիսով չափ՝ մասամբ՝ ոչ լրիվ թիկնել: ....** Նկարիչը մոտեցավ այն բազկաթոռին, որի մեջ **կիսաթիկնած** էր նա **....** *(Վագ., էջ 267)*:

ԿԻՍԱԺՊՏՈՒՆ, ած. **Կիսով չափ ժպտուն՝ ժպիտ արտահայտող:** .... Ընկողմանում էր մեր կողքին՝ ունկնդիր **կիսաժըպտուն** դեմքը մեր «փիլիսոփայական» զրույցին դարձրած *(Սուր., էջ 54)*:

ԿԻՍԱԻՍՊԱՆՈՒՀԻ, ած. **Կիսով չափ իսպանուհի**: .... Նախօրոք պայմանավորվել եմ ...., որ Ձեզ և Օրրին երկու **կիսաիսպանուհի** ութնամյա կույսերով ապահովի *(ՋՀ, էջ 303)*:

ԿԻՍԱԽՆԱՄ, ած. **Կիսով չափ խնամված**: Դա **կիսախնամ** մի այգի էր .... *(ԱԱ, էջ 189)*:

ԿԻՍԱԽՈՆԱՐՀԵԼ, նբ. **Ոչ լրիվ, կիսատ խոնարհել, այստեղ՝ մասամբ իջեցնել:** .... Լուշկան ծիծաղն իր **կիսախոնարհած** աչքերի թարթիչների տակ պահած՝ խնդրեց իր համար մի «որևէ ետ ընկած փեսացու գտնել» .... *(Շոլ., էջ 431)*:

ԿԻՍԱԾԱՆՈԹ, գ., ած. **Կիսով չափ ծանոթ:** .... Ինչ-որ հեռավոր զարմիկներ, **կիսաածանոթներ** ու կատարյալ անծանոթներ էին .... *(Ռուշդի, էջ 125)*:

ԿԻՍԱԿԱՄԱՎՈՐ, ած. **Կիսով չափ կամավոր**: .... Նա անվերջ շուռումուռ էր գալիս անկողնում որպես խոնարհ ու **կիսակամավոր** վտարանդի *(ՋՀ, 261)*:

ԿԻՍԱԿԱՌԱՊԱՆԱՅԻՆ, ած. **Մասամբ՝ կիսով չափ կառապանային, կառապանայինի նման, կառապանայինը հիշեցնող: Կիսակառապանային** գդակ *(Տոլ., էջ 292)*:

ԿԻՍԱԿԱՐՈՏ, ած. **Կիսով չափ կարոտ, ոչ լիովին բավարարված՝ հագեցած:** Ինձ թվում էր, թե էլ երբեք չեմ հավասարակշռվելու, որ **կիսակարոտ** եմ մնալու, ի՛մ պարից, ի՛մ երգից, ... լռությունից ու ձայնից *(Նիկ., էջ 23)*:

ԿԻՍԱԿՈՐԻԶԱՀԱՆ, ած. **Կիսով չափ կորիզահան**: Կանեփով բեռնված «Մեսսերշմիտ»-ը պատրաստ կանգնած է Բելգրադում, պետք է փոխանակել մեկուկես ՍԻ-*47* ինքնաթիռ **կիսակորիզահան** խուրմայով .... *(ՋՀ, էջ 481)*:

ԿԻՍԱՀԱԼՎԱԾ, 1. Հկտր. դրբ. **Կիսահալվել բայի**: 2. ած. **Կիսով չափ՝ ոչ լրիվ հալված, կիսահալ**:... Չամլին սպասում էր, որ լայն բացված բերանի մեջ սահի **կիսահալված** շաքարը *(Դար., էջ 109)*:

ԿԻՍԱՀԱՍԱԾ, 1. Հկտր. դրբ. **Կիսահասնել** բայի: 2. Այստեղ՝ ած. **Կիսով չափ՝ ոչ լրիվ հասունացած, կիսահասուն**:… Դժբախտաբար չենք կարող ապահովել լրիվ կանաչ բանաններով, կարելի է վերցնել **կիսահասածները** *(Դար., էջ 116):*

ԿԻՍԱՀԱՍԿԱՆԱԼԻ, ած. **Ոչ լրիվ՝ մասամբ հասկանալի:** Դավիդովը բավականությամբ լսեց նրա ճառը՝ տեղ-տեղ ոչ բոլորովին հասկանալով առանձին արտահայտությունները, որոնք մթագնվում էին նրա համար **կիսահասկանալի** ուկրաիներեն լեզվով .... *(Շոլ., էջ 211):*

ԿԻՍԱՀԱՐՈՒՍՏ-ԿԻՍԱԱՂՔԱՏ, ած. **Կիսով չափ՝ մասամբ հարուստ, կիսով չափ՝ մասամբ աղքատ: Կիսահարուստ-կիսաաղքատ** Նինա Մանթաշովան երկու աղջկա մայր է *(Նիկ., էջ 76):*

ԿԻՍԱՀԻՊՈԹԵԶ, գ. **Կիսով չափ հիպոթեզ՝ ենթադրություն, վարկած:** Տե՛ս ԿԻՍԱԱՌԱՍՊԵԼ-ի օրինակը:

ԿԻՍԱՀՈՐԻՆՎԱԾՔ, գ. **Կիսատ՝ անավարտ հորինվածք:** Եվ այն փշուր-փշուր եղավ, ..., քանի որ **կիսահորինվածք** էր .... *(Վուլֆ, էջ 69)*:

ԿԻՍԱՀՐԵԱ, գ. **Ծնողներից մեկը ոչ հրեա**: Նա կտրականապես արգելում է... իր մորը համեմատել հանցագործ **կիսահրեայի** ծնողի հետ... *(Պետ, էջ 146):*

ԿԻՍԱՃԱՂԱՏ, ած. **Մասամբ ճաղատ:** …. Խոշոր **կիսաճաղատ** գլխով տարեց մարդ …. *(Սուր., էջ 34):*

ԿԻՍԱՄԻՍՏԻԿԱԿԱՆ, ած. **Կիսով չափ խորհրդազգացական, խորհրդապաշտական:** Բուրժուական շատ իդեալիստ փիլիսոփաներ պնդում են, թե .... եղել է բարոյախոսական փիլիսո-

փայության մի յուրահատուկ **կիսամիստիկական,** կիսառացիոնալիստական սիստեմ …. *(Շախ., էջ 224):*

ԿԻՍԱՄՇՏԱԿԱՆ, ած. **Կիսով չափ մշտական:** Յոթ տարիները, որոնց ընթացքում շարադրեցի իմ ատենախոսությունը, ապրեցի Հյուսմանի ընկերակցությամբ, **կիսամշտական** ներկայությամբ *(Ուելբեք 1, էջ 10):*

ԿԻՍԱՅՐԻ, ած. **Կիսով չափ այրի:** «Ինձ համար լիուլի բավական են այդ քերծե շները», - արհամարհանքով ասում էր նա աղջիկներին ու կանանց, որոնք մատնանշում էին նրա **կիսայրի** վիճակը (*Շոլ., էջ 429*):

ԿԻՍԱՇՇՄԵԼ, բ. **Կիսով չափ շշմել:** …. Նկատելով գետնին նստած **կիսաշշմած** մի պատանու …. հարցրին, թե ինչ է պատահել …. *(Կոելյու, էջ 30)*:

ԿԻՍԱՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Կիսով չափ՝ մասամբ ողբերգական ստեղծագործություն:** Տե՛ս ԿԻՍԱԴՐԱՄԱ-յի օրինակը:

ԿԻՍԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ, ած. **Կիսով չափ պատերազմական: Ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն: Կիսապատերազմական** այս վիճակը պատերազմի սպառնալիք է *(Հմg, 1in.am):*

ԿԻՍԱՊԼԱՏՈՆԱԿԱՆ, ած. **Մասամբ, փոքր-ինչ պլատոնական:** Այս **կիսապլատոնական** իդիլիան սկսվեց 1833 փվականին և տևեց, թեթև ընդհատումներով, մի քանի տարի *(Մոր., էջ 183):*

ԿԻՍԱՊՈԿ, ած. **Կիսով չափ՝ ոչ ամբողջովին պոկված:** Թրթուրը ձմեռում է **կիսապոկ** կեղևի տակ (*Սաֆ., էջ 129*):

ԿԻՍԱՌԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ, ած. **Մասամբ՝ կիսով չափ ռացիոնալիզմի հետևորդ:** Տե՛ս ԿԻՍԱՄԻՍՏԻԿԱԿԱՆ-ի օրինակը:

ԿԻՍԱՍՈՎԱԾ, ած. **Կիսով չափ սոված:** Կես դրույքով աշխատել հիմնարկում **կիսասոված** ապրուստի համար *(Սուր., էջ 5):*

ԿԻՍԱՎԱԳՐ, գ., ած. **Կիսով չափ վագր:** Տալման պատկերում էր մավրի .... Քինը՝ վայրենի, գազանի, **կիսավագրի,** կիսամարդու .... *(Մոր., էջ 69):*

ԿԻՍԱՎԱՅՐԵՆԱՑԱԾ, 1. **Հրկտ. դերբայ կիսավայրենանալի:** 2. ած. **Կիսավայրենի՝ ոչ լրիվ վայրենի դարձած:** .... Անտառում հանդիպեցին տանտիրոջ կողմից լքված մի խուտորի, որի մոտ նրանց ասելով, երկու **կիսավայրենացած** տնային խոզեր էին թափառում *(Բեեկ., էջ 118):*

ԿԻՍԱՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Կիսատ՝ թերի՝ անավարտ խոսք՝ խոսելաձև:** Հորս ձենը **կիսատախոսություն** էր միշտ՝// հատու հստակ վերջակետերով *(ՎՀ[1], էջ 253):*

ԿԻՍԱՏԵՐԵՎԻԿ, գ. **Փոքրիկ կիսատերև:** .... Արմավենու ոճավորված **կիսատերևիկների** հյուսվածքները ... *(Հակ., էջ 58):*

ԿԻՍԱՓԱՅՏԱՇԵՆ, ած. **Կիսով չափ փայտաշեն**: Այն արհեստական մի քաղաքի տեսք ունի՝ նորակառույց բնակարանների կույտ, ... ու միջնադարյան **կիսափայտաշեն** տներ .... *(Աթք., էջ 494):*

ԿԻՍԱՓԼԱՏԱԿ, ած. **Կիսով չափ փլատակ**: .... **Կիսափլատակ** դարձած ինչ-որ հնամենի բնակավայրի հետ եղած նմանությունը ցնցող էր *(Լեմ, էջ 25):*

ԿԻՍԱՔՆԱԾ, ած., **Կիսով չափ քնած, դեռ լրիվ չարթնացած**: Ինձ տեսնելով, նա իսկույն ողջունեց թույլ ձայնով և, դեռ **կիսաքնած**, ձեռքը մեկնեց ինձ: *(Դար., էջ 232)*

ԿԻՍԱՔՆՆԱԴԱՏԱԲԱՐ, մկբ. **Կիսով չափ՝ մասամբ քննադատելով**: Ոստիկանները դեռևս նրանց խնդրում էին ներում

հայցել... կիսավախեցած, **կիսաքննադատաբար** շշուկով ավելացնելով, որ դա «Օլիվայի արածն էր» *(ԱԻՊ[1], էջ 103):*

ԿԻՏՐՈՆԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Կիտրոնի կանաչությանը տվող գույնի**: **Կիտրոնականաչավուն** կազմի վրա նկարված էին ոսկեզօծ վանդակներ և կետագծային նռնաքարեր *(Ուայլդ, էջ 228):*

ԿԼԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կլանելու հատկություն:** .... Բույսերի ընտրողական **կլանողականության** շնորհիվ՝ կենսաբանական կարևոր սննդատարրերը կուտակվում են երկրի մակերևույթի կենսածին նստվածքային շերտերում .... *(ՍԹ, էջ 19):*

ԿԼՈՐԱՀԱՏԱԿ, ած. **Կլոր հատակ ունեցող**: Մարմինը .... մրոտ սալիկներով **կլորահատակ** կիսավեր նախասրահից անհոգ ու անտարբեր դեպի վերև էր շտապում .... *(ՋՀ, էջ 258):*

ԿՂՄԻՆԴՐԱԿԱՐՄՐԱՎՈՒՆ, ած. **Կղմինդրի կարմիր գույնին մոտ:** Ավետարանիչները ներկայացված են ոսկու ֆոնի վրա, որը մասամբ թափվել է՝ թողնելով **կղմինդրակարմրավուն** հատակը *(Հակ., էջ 61):*

ԿՅԱՆՔԱՍԵՐ, ած. **Կյանքը սիրող: Կյանքասերներին** սպանել չի կարելի .... *(Սև., էջ 146):*

ԿՅԱՆՔԱՍՈՒՐՃ, գ. (փխբ.): **Կյանք տվող, նրան նպաստող, այն աշխուժացնող սուրճ: ....** Ճիշտ պահին ավելացրած սառույցը ձեր **կյանքասուրճի** մեջ ստիպում էր երբեմն հաճույքից փակել աչքերը՝ .... միևնույն ժամանակ չհոգնելով, հասարակ չդառնալով, չնույնականանալով *(Սև., էջ 38):*

ԿՆՃՌԱԿՈՍ, գ. **Կնճիռների միջև գոյացած ակոս:** Ճակատների վրա ընդգծվում է **կնճռակոսը** .... *(Հակ., էջ 78):*

ԿՇՌԱՐԿԵԼ, նբ. **Կշռադատել, մտքով ծանր ու թեթև անել:** Նա **կշռարկում** էր, թե ինչպես հայրը հանկարծ կստանա և՛ Վլադիմիր, և՛ Անդրեյ .... *(Տոլ., էջ 128):*

ԿՈԼԵԿՑԻՈՆԵՐՈՒՀԻ, գ. **Կին կոլեկցիոներ, կոլեկցիա կազմող՝ հավաքող կին:** Դրանց մեջ ամենահետաքրքիրը Ադել Կոսսեն էր, մի շատ հարուստ **կոլեկցիոներուհի** .... *(Մոր., էջ 541):*

ԿՈԿԻԿԱՄԻՏ, ած. **Վայելուչ ու ճաշակավոր մտքով:** Ծաղկաձորն ի՛մ մեջ է, ու ես՝ Ծաղկաձորի: Ու նստեցի: Այստեղ **կոկիկամիտ** ու պայծառատես եմ դառնում: Գրածներս միա՛յն հղկում եմ *(Նիկ., էջ 32):*

ԿՈԿՈՍԱՊԱՏ, ած. **Կոկոսով պատված**: .... Կրկնում է իր խոհարարական գրքի թխվածքների անունները՝ .... **կոկոսապատ** չամչով բլիթներ .... *(Աթք., էջ 257)*:

ԿՈԿՈՐԴԱԲԱՌ, գ. (փխբ.): **Կոկորդում մնացած՝ չիրացված, անկատար իղձ՝ ցանկություն:** Կարոտի տեսակ կա, որ դառնում է **կոկորդաբառեր**, հետո վրափոխվում է ֆիզիկական ցավի *(Սև., էջ 101):*

ԿՈԿՈՐԴԱՏԱԿ, գ. **Կոկորդի տակը, ներքևի հատվածը: ....** - Մի բոթիր, աղմկարար ... Այ, ես ինքս կբոթեմ **կոկորդատակիդ** .... *(Շոլ., էջ 189):*

ԿՈՂՄԱՅԻՆ, ած. **Կողքի:** Իմիջայլոց, **կողմային** սեղանի մոտ նստած ճերմակած քունքերով տղամարդը բավական հետաքրքիր է .... *(Կլ., էջ 9):*

ԿՈՂՔԱՆՑՈՒՄ, գ. **Կողքի վրա՝ կողքի թեքվելով**: Տրոլեյբուսը վերևի գծերից թափով պոկվել ու **կողքանցումով** հայտնվել է ջրի տակ *(Նիկ., էջ 11):*

ԿՈՅՈՒՂԱՁՏԻՉ, ա. **Կոյուղին զտող, կեղտը նրա միջից հանող՝ տեղափոխող:** - Ընկերս **կոյուղազտիչ** բեռնատար էր քշում *(Դով., էջ 69):*

ԿՈՊՏԱԽՈՍ, ած. **Կոպիտ խոսող, խոսելու գործընթացում կոպիտ արտահայտություններ թույլ տվող:** Մարիան **կոպտախոս** էր: Ինձ հետ էլ էր կոպիտ խոսում *(Նիկ., էջ 113):*

ԿՈՊՏԱՀՅՈՒՍ, ած. **Կոպիտ հյուսված**: .... Բարձրացրեց բրդե **կոպտահյուս** սվիտերը .... *(Կայարան, 2014, թ. 3):*

ԿՈՊՏՈՐԱԿ, ած. **Կոպիտ՝ ոչ բարձրորակ:** .... Էժան-էժան **կոպտորակ** սովետական բամբակը հիմնականում տանն էինք հագնում, միայն որպես ներքնաշոր *(Նիկ., էջ 8):*

ԿՈՏՈՐԱԿԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Անջատ-անջատ հնչող:** Ամբողջ գիշերը գարնանային քամուց տարբերվող փեղկերի ճռռոցը Մակարն ընդունում էր որպես երաժշտություն, երկաթածածկ կտուրի դղրդոցը՝ **կոտորոկահնչյուն** դոփյուն *(Շոլ., էջ 240):*

ԿՈՏՐԱԾԱՏԱՄ, ած. **Կոտրած ատամ(ներ)ով, ատամները կոտրած**: .... Արձակելով նրա երեսն ի վար իր երեխայական մաքուր, սուր-գինեհոտ, **կոտրածատամ** բերանի հոտը, Լյուբիշկինի ելույթի ժամանակ ասաց .... *(Շոլ., էջ 58-59):*

ԿՈՐԻԶԱՊԱՏՅԱՆ, գ. (զտնտ.): **Կորիզի պատյան:** Ընդավորների սերմը թաղանթապատ է, կորիզավորների սերմը նուրբ թաղանթի վրայից ունի նաև կարծր, փայտացած **կորիզապատյան,** դրա համար էլ սրանց սերմը կոչվում է կորիզապըտուղ (*Սաֆ., էջ 100*):

ԿՈՐՈՆԱԹԻՎ, գ. **Կորոնավիրուսով վարակվածների թիվը:** ՀՀ-ում **կորոնաթվերը** կտրուկ աճել են *(Հմց, Հայ լուր):*

ԿՈՐՈՆԱՏՈՒՐԻԶՄ, գ. **Համավարակի ժամանակ իրականացվող զբոսաշրջություն** (հիմնականում անվճար պատվաստվելու նպատակով):....Իսկ մեր երկրում մեծ հեռանկար ունի **կորոնատուրիզմը** *(ՉՒ, 10.07.2021):*

ԿՊՐԱՍԵՎ, ած. **Կուպրի գույնի նման սև:** Բայց ինչ-որ գրավիչ և անմաքուր գեղեցկություն կար նրա **կպրասև** աչքերում, նրա ամբողջ նիհար, բարեձև կազմվածքի մեջ *(Շոլ., էջ 131):*

ԿՌԱՀՈՂԱԲԱՐ, մկբ. **Կռահելով:** Բայց Յոնասը **կռահողաբար** որսաց նրա միտքը *(Կլ., էջ 147):*

ԿՐԱԿԱՅՐԻՉ, գ. **Կրակ վառող փոքրիկ սարք, կրակավառ, կրակվառիչ, լուցիչ:** .... Ինձ նվիրեց իր **կրակայրիչը** .... *(Նիկ., էջ 128):*

ԿՐԱՄՈԽՐԱԳՈՒՅՆ, ած. **Կրագույնին տվող մոխրագույն**: Տե՛ս ԹՐԹՆՋՈՒԿԱԿԱՐՄԻՐ-ի օրինակը:

ԿՐԵՏԱԿԱՆ, ած. **Կրետե կղզու:** .... Այն առաջացած է համարում **կրետական** պատկերագրությունից .... *(Մով.², էջ 83):*

ԿՐԾՔԱՄԵՋ, գ. **Միջկրծքային հատված:** Եվ նա արձակում է խալաթի վերին կոճակը, որը **կրծքամիջին** է և ստինքների ձգությունից միշտ թուլացած է լինում *(ԿՍ, էջ 42):*

ԿՐԿՆԱԲԱԺԻՆ, գ. **Երկրորդ՝ կրկնվող բաժինը**: ... Արամը **կրկնաբաժին** չէր ուզում, երբեք չուզեց: *(Անգլ., էջ 64-65):*

ԿՐԿՆԱՃՈՒՐԴԱՅԻՆ, ած. **Կրկնակի աճուրդային:** «Ազարակի ջերմոցային տնտեսություն» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի **կրկնաճուրդային** վաճառքի մասին հայտարարություն *(Հմg, azdarar.am):*

ԿՐԿՆՈՐԴ, գ. (իմ., նորբ.): **Պահեստային դերասան, անհրաժեշտության դեպքում հիմնական դերակատարին փոխարի-**

նելու համար։ - Ինչո՞ւ են նրան **կրկնորդ** անվանում, - կրկնեցի ես։ - Էդպես անվանում են նրանց, ովքեր փոխարինում են դերասանին, եթե հիվանդության կամ ուրիշ պատճառով նա ներկայացման չի կարողանում մասնակցել *(Պալ., էջ 251)։*

ԿՐՈՆԱԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ, ած. **Կրոնական առասպելների։** …. **Կրոնաառասպելական** հավատը խթանում էր … իմացությունը *(Շախ., էջ 268)։*

ԿՐՈՆԱԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ, ած. **Կրոնական մտածողությամբ դիցաբանական։ Կրոնադիցաբանական** գիտակցության ծոցից փիլիսոփայության ծննդյան պրոցեսը չի կարելի հասկանալ հասարակացրած ձևով …. *(Շախ., էջ 269)։*

ԿՐՊԱԿԱՎԱՃԱՌ, գ. **Կրպակի վաճառող, կրպակում վաճառք կատարող անձ**։ Նավահանգստի **կրպակավաճառները**, որ մեզ արդեն ճանաչում էին, դերձակները... բոլորը միայն այդ մասին էին խոսում *(Անգլ., էջ 92)։*

ԿՐՔԱԹԱԹԱԽ, ած. **Կրքի, ցանկության մեջ թաթախված։** Թե կարդաս հոգիս … //Կտեսնես այնտեղ կարոտի բորբոք// Հնոցում այրվող՝ մի կրակ Արև, //Որի պատկերը քո սիրատոչոր ու **կրքաթաթախ** գրչով երգեցի *(Հմգ, Vahe Lorents Fb էջ)։*

ԿՑԱՆՎԱՆՈՒՄ, գ. **Կից՝ կցված՝ վերջից հավելված անվանում։** Ես դա գտա Թարթառի Ձորի հին՝ Կուանք-կյումանք անվան, այդ ձորում հնուց պահպանված բնակավայրերի «Կյումեր» **կցանվանումների,** ինչպիսիք են՝ Կետին Կյումեր … Արությունա Կյումեր գյուղերը …. համադրման միջոցով *(Բակուր, էջ 337)։*

ԿՈՒԼՏՈՒՐՈՌՈԳԵԼԻ, ած. (գղտնտ.)։ **Գյուղատնտեսական նպատակներով օգտագործելի և հնարավոր ոռոգման են-**

թակա: Այս գոտու բոլոր հողերը **կուլտուրոռոգելի** են (բացառությամբ ազատների և բարձր խորքային ջրեր ունեցող տեղերի) .... (*Սաֆ., էջ 76*):

ԿՈՒՊԱԺԱՎՈՐՈՒՄ, գ.(մնգ.):**Կուպաժելը:** Նորաշեն տեսակավոր սեղանի կարմիր գինին, սեղանի և թունդ օրդինար գինիները հիմնականում ստանում էին **կուպաժավորմամբ** .... *(Դասագիրք, էջ 26)*:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԱՑՎԵԼ, բ. **Կուսակցական դարձվել, որևէ կուսակցության պատկանել:** ԱՄՆ-ում գործող Նժդեհի հիմնած Ցեղակրոն Ուխտերը **կուսակցականացվել** էին .... *(ՎԱ, էջ 28)*:

Հ

ՀԱԳՆԵԼԱՌՃ, գ. **Հագնվելու ոճ**: Այո, ընդունել էր հիպիական **հագնելառճը** .... *(Կոելյու, էջ 263)*:

ՀԱԶԱՐԿՏՈՐԱՆԻ, ած. **Հազար կտորից բաղկացած**: .... Ցարական Ռուսաստանի Գարդների խեցեգործարաններում պատրաստված սպասքի **հազարկտորանի** այդ հավաքածուն վերածվել է ընտանեկան մի առասպելի .... *(Ռուշդի, էջ 7)*:

ՀԱԿԱԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, գ. **Առողջապահությանը հակառակ կատարված արարք:** Դեզի. – Փոշին ափսեները պիտի կեղտոտի: Բերանժե. - Ինչպիսի **հակաառողջապահություն** *(XX դար, էջ 354)*:

ՀԱԿԱԳԼՈԲԱԼԻՍՏԱԿԱՆ, ած. **Համաշխարհայնացման դեմ ուղղված:** .... **Հակագլոբալիստական** կենտրոնների նկատմամբ ՌԴ կողմից թեև ուղղակիորեն արձագանք չկա .... *(Իր., 31.05.2019)*:

ՀԱԿԱԴՈՄՊԻՆԳԱՅԻՆ, ած. **Խաղը խթանող արհեստական քիմիական միջոցների օգտագործումը ստուգելու նպատակով կատարվող:** Հաղթանակից հետո նրանք պետք է անցնեին **հակադոմպինգային** ստուգումները *(Կայ., էջ 459):*

ՀԱԿԱԹՈՒՐՄ, գ. 1. **Հակադեղամիջոց:** 2. (փխբ.): **Որևէ բան կանխելու հակամիջոց՝ հակամիջոցառում:** Նա «Ռեալի» նախագահ էր ընտրվել որպես կատալոնական կախարդանքի **հակաթուրմ** *(Կայ., էջ 336):*

ՀԱԿԱԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Իրականությանը չհամապատասխանող, անհեթեթ, անտրամաբանական:** Իմ այս համեստ պատմությունը .... հորինել է կյանքը ինքը ... այն դաժան տարիների իրականության, պիտի ասեի **հակաիրականության** ոլորտում *(Սուր., էջ 100):*

ՀԱԿԱԻՐԱՔՅԱՆ, ած. (քղք.): **Իրաքին հակառակ գործող**: ԱՄՆ-ը **հակաիրաքյան** պատժամիջոցների փաթեթ է մշակում *(Հմգ, shantnews.am):*

ՀԱԿԱՀԱՆՃԱՐ, ած. **Ոչ հանճար:** - Չլինի՞ թե հանճար է: - Որպես տեսակ՝ **հակահանճար** է: Նրանք երբեք երկար-բարակ ոչինչ չեն քննարկում: Ուղեղը եկած բանը իսկույն կատարում են *(Բակուր, էջ 172-173):*

ՀԱԿԱՁԳՈՂԱԿԱՆ, ած. **Ձգողականության դեմ գործող**: .... ՆԱՍԱ-ն թողարկել է **հակաձգողական** հաբ *(Ռուշդի, էջ 132)*:

ՀԱԿԱՆԱՎԱՏՈՐՄԻՂԱՅԻՆ, ած. **Նավատորմի դեմ գործող:** .... **Հականավատորմիղային** պարեկի ստեղծման գործում Ֆ. Ռուզվելտի եռանդուն գործունեությունը շատ շուտով առաջ բերեց բախումներ ... *(Յակ., էջ 95):*

ՀԱԿԱՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Չեզոքությանը՝ չեզոք լինելու՝ մնալու հակառակ՝ դեմ:** «Ես ճշտությամբ գիտեմ, որ կատարելու եմ սարսափելի **հակաչեզոքության** արարք» *(Յակ., էջ 86):*

ՀԱԿԱՊԱՌԿԵԼԱԽՈՑԱՅԻՆ, ած. **Պառկելախոցի դեմ:** Այն կանխելու լավագույն տարբերակը **հակապառկելախոցային** ներքնակն է *(Հմց, Yerevan Home Care, LLC):*

ՀԱԿԱՌԱՍԻՍՏ, ած. **Ռասիզմի, ռասսայականության հակառակորդ:** Ես ռասիստ չեմ, նույնիսկ **հակառասիստ** եմ *(XX դար, էջ 300):*

ՀԱԿԱՍՈՂԱՆՔԱՅԻՆ, ած. **Սողանքի դեմ ուղղված, սողանք չառաջացնող**: Վերին Լարսի սահմանային անցակետում լուրջ **հակասողանքային** միջոցառումներ են անհրաժեշտ *(Հմց, mediamax.am):*

ՀԱԿԱՏՐԵՍՏԱՅԻՆ, ած. **Ի վնաս տրեստների:** Որ կառավարող դասակարգերը, անկասկած, պետք է դրա հետ հաշվի նստեին, ապացուցում է **հակատրեստային** օրենսդրությունը *(Յակ., էջ 57):*

ՀԱԿԱՑԵՑԱՅԻՆ, ած. **Ցեցի դեմ:** Այսօր՝ դեռ կեսօրին, նա մորթին հանեց արկղի միջից, մի կողմ դրեց **հակացեցային** դեղափոշին …. *(Կայարան, 2022, թ. 1):*

ՀԱԿԱՔԱՅԼ, գ. **Որևէ բանի դեմ ուղղված միջոցառում:** Ստիպողական **հակաքայլը** ամբոխի երթն էր դեպի ֆրանսիական դեսպանատան մերձակա հրապարակը *(Բակուր, էջ 144):*

ՀԱԿԵՐԱԿԱՆ, ած. **Հակերների:** Վարդգեսը, որ պատանեկության տարիներին հակեր է եղել, հիմա անդուլ պայքար է մղում այդ հակերների, «սատանայական» կոչվող **հակերական** այդ կազմակերպության դեմ *(Բակուր, էջ 26):*

ՀԱՂԹԱՀՈՒՆՉ, ած. (բնստ.): **Հաղթական հնչողություն ունեցող:** Ու իմ հույզերով հորդ ու **հաղթահունչ**// Քեզ եմ բերում այդ երգափունջն անբիծ …. *(Սարմեն, էջ 58):*

ՀԱՂԹԱՍԱՆԴՈՒՂՔ, գ. (փխր): **Հաղթանակի հասնելու փուլերը՝ աստիճանները**: ... Ֆրագան ստիպված էր ջանքեր գործադրել՝ լիովին ընտունելու իր վերելքը փառքի **հաղթասանդուղքի**ն, աստիճան առ աստիճան... *(ԱԻՊ[1], էջ 70):*

ՀԱՂՈՐԴԱՆՅՈՒԹ, գ. Գովազդային **հաղորդանյութի** տեքստն ամբողջությամբ համապատասխանում էր մոլորեցնող և «անբարեխիղճ» գովազդների **հաղորդանյութերին** *(ՊԲՀ, 2021, 1, էջ 102):*

ՀԱՃԱԽՈՐԴԱՄԵՏ, ած. **Հաճախորդին կողմ, հաճախորդի օգտին:** Օրեցօր ավելի կարևոր է դառնում **հաճախորդամետ** աշխատակիցների ներգրավումը *(Հմգ, hrcommunity.am):*

ՀԱՃԱԽՈՐԴԱՇԱՏ, ած.**Շատ հաճախորդներ՝ այցելուներ ունեցող:** ….Անտեսենք ներկա հայաստանյան **հաճախորդաշատ** մթնոլորտին հարիր եզրահանգումները *(Հմգ, panorama.am):*

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՀԻ, գ. **Կին համագործակից:** Եվ միայն 1952 թվականին մի ուրիշ սլավոնական գեղեցկուհի, իշխանուհի Նադեժդա Նարիշկինան, Լիդիա Նեսսելրոդեի մտերմուհին ու **համագործակցուհին** բանավոր կհաղորդի նրան բաժանության մասին *(Մոր., էջ 336-337):*

ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ, ած. **Համաժամանակին վերաբերող:** …. Մեր ոչ հեռավոր անցյալն է ճշմարտանման ներկայացնում՝ լինելով հայաստանյան այդ օրերի գեղարվեստապատում խրոնիկա՝ անսքող հեղաբեկումներով շարունակվող, ցայժմ՝ **համաժամանակային** *(Կայարան, 2022, թ. 1):*

ՀԱՄԱԻՍԼԱՄԱԿԱՆ, ած. **Բոլոր իսլամ դավանողներին վերաբերող**: .... **Համաիսլամական** կոնֆերանսի ժամանակ, երբ աշխարհի բոլոր ծայրերից երկրի ղեկավարներ էին ժամանել ի-րենց մայրերի հետ .... *(Ռուշդի, էջ 392)*:

ՀԱՄԱԽՈՀԱԲԱՐ, մկբ. **Համախոհի նման:** .... Այս անգամ պարզապես **համախոհաբար** ժպտաց *(Կոելյու, էջ 110)*:

ՀԱՄԱԽՑԵՑԻ, ած., գ. **Նույն խցի բանտարկյալները մեկը մյուսի նկատմամբ:** Ապա .... սպանել է **համախցեցուն**, կոտրր-ված շշով, Մարիամ Աստվածածնի պատկերը պատռած լինելու համար .... *(Նիկ., էջ 118)*:

ՀԱՄԱԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ, գ. **Կրթաթոշակառուներից յուրաքանչյուրը**: ....Ի տարբերություն Մանթաշյանցի մնացյալ երկու հարյուր **համակրթաթոշակառուների՝** ինքն ամսական 30 ռուբլուց ավել էր ստանում .... *(ԱԳ, էջ 30)*:

ՀԱՄԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ, գ. **Միասնական և փոխադարձ հաղորդակցում**: .... Որևէ արարածի լիակատար տիրումը, նրա հետ բացարձակ **համահաղորդակցումը** կյանքի ամբողջ ընթաց-քում անհնարին պահանջ են *(Ակ, էջ 361)*:

ՀԱՄԱՀԱՇՏԵՑՎԵԼ, բ. **Բոլորին հաշտեցնել**: .... **Համահաշ-տեցված** հասարակության մեջ արվեստը չի կարող տեղ ունե-նալ *(Ակ, էջ 350)*:

ՀԱՄԱՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ, ած. **Բոլոր հրեշտակների կողմից կատարվող:** .... Բոլորին համոզի, որ իր պաշտպանյալը համա-մարդկային, գուցեն՝ **համահրեշտակային** կամ համամանրէա-կան հատուկ առաքելություն ունի .... *(Բակուր, էջ 153-154)*:

ՀԱՄԱՄԱՆՐԷԱԿԱՆ, ած. **Բոլոր մանրէների կողմից կա-տարվող:** Տե՛ս ՀԱՄԱՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ-ի օրինակը:

ՀԱՄԱՌԸՆԹԱՑ, մկբ. **Համառ ընթացքով՝ հաստատակամ**: .... Գետը, անդավաճա՛ն .... // .... Հոսում է դեռ անհա՛ղթ, // **Համառընթա՛ց** ու խու՛ռ .... *(Տոն.[2], էջ 47):*

ՀԱՄԱՍՏԵՂՈՒՄ, գ. (դիպվ.): **Համաստեղելը կամ մեկ միասնություն՝ ամբողջություն կազմելը:** Աստղերը իրենց տեղն են որոնում, // Ու**համաստեղման** կարոտով վառված՝ // Նրանք սլանու՛մ, սլանում են հար ....*(Տոն.[1], էջ 18):*

ՀԱՄԱՐԱԿԱՆՉ, գ. **Համակենտրոնացման ճամբարների բանտարկյալների ներկա-բացական ըստ բանտարկյալին «շնորհված» համարի (ոչ անուն-ազգանունով)**: Մեզ շարք կանգնեցրեցին դարպասի մոտ և սկսեցին **համարականչը** *(Պետ, էջ 47):*

ՀԱՄԱՐԱՊԻՏԱԿ, գ. **Համարի պիտակ՝ նիշ:** Լայն մարմարե աստիճանի անդորրը խախտեց **համարապիտակների** քաղցրալուր զնգզնգոցը. հանդերձապահները դրանք կախում էին կախիչներից *(Փափ., էջ 73):*

ՀԱՄԲԱՎԱԲԵՐՈՒՀԻ, գ. **Համբավը բերող կին՝ աղջիկ:** Թե ինչպես **համբավաբերուհին** կբռնի իրեն առաքողի տեղը, մենք կիմանանք ժամանակին *(Մոր., էջ 337):*

ՀԱՄԵՐԳՈՒՄ, գ. **Միասին՝ միաժամանակ երգելը:** .... Գալիս եմ ահա, // Որ քո **համերգմամբ** // Լցնես մարդկանց մեջ դեռ անդնդացող // Անէությունը .... *(Տոն.[1], էջ 13):*

ՀԱՅԱՑՈՒՅՑ, ած. (բնստ.): **Հայությունը, հայկականը ցույց տվող:** Դե, ինչպե՞ս հաշտվեն մեր այս **հայացույց** «յան» մասնիկի հետ .... *(Սարմեն, էջ 164):*

ՀԱՅԱՑՔԱԽՈՒՅՍ, ած. **Հայացքներից խուսափող**: Տե՛ս ԻՆՔՆԱՀԱՐԴԱՐՎԵԼ-ի օրինակը:

ՀԱՅԿԱՀՆՉՅՈՒՆ, ած. **Հայկական հնչեղություն ունեցող: Հայկահնչյուն** գողթան երգեր ու երգիչ,// Չի պակասի լեռնապարար մեր երկրից *(գուս. Աշ.[2], էջ 11):*

ՀԱՅՀՈՅԱԿՌԻՎ, գ. **Կռիվ իրար հայհոյելով:** .... Հոտաղների և ցաքանողների միջև հաճախ ծագում էր մեծ **հայհոյակռիվ**, որը փոխարկվում էր դաժան տուրուդմփոցների (*Շոլ., էջ 429*):

ՀԱՅՀՈՅԱՄԱՂԶ, ած. **Մաղձոտ և հայհոյախառն:** .... [Ձեր խոսքը] չարությամբ հունցված **հայհոյամաղձ** փղձուկ էր *(ԳԹ, 08.04.2022):*

ՀԱՅՈՏ, ած. (դիպվ.): **Հայկական, հայաբնույթ, հայաշունչ:** Արցախս, մայրս, հայաստանոտ ու միշտ **հայոտ,** անսկիզբ ու անվերջ .... *(ԳԹ, 08.04.2022):*

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒՀԻ, գ. **Հայրենասեր կին՝ աղջիկ**: ... Հավաքվեց ... «Երևանի **հայրենասիրուհ**ի» էսկադրիլիայի համար ավելի քան 3 մլն. ու ավելի *(Հակ., Սիմ., էջ 251):*

ՀԱՅՑԱԳԻՆ, գ. (իրավ.): **Դատարանին ներկայացվող գործի համար նախատեսվող գինը՝ գումարը:** Հայցվորի կողմից որոշված **հայցագինը** պահանջվող գույքի իրական արժեքին ակնհայտ կերպով չհամապատասխանելու դեպքում, **հայցագինը** որոշում է դատավորը *(Հմգ, arlis.am):*

ՀԱՅՑԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. (դիպվ.): **Շատ հայց ներկայացնել**: Համոզված ենք, որ եթե տեսներ, ապա հաստատ չէր հանդուրժի և **հայցախեղդ կաներ** Ամալյանին և մյուսներին *(ՉԻ, 12.07.2021):*

ՀԱՆԳԱԹՈՒԽ, ած. **Շինծու հանգեր ստեղծող**: Հաճախ քննադատներն ինձ նույնացրել են **հանգաթուխ** բանաստեղծների հետ .... *(Ազն., էջ 113):*

ՀԱՆԴԱՄՈԼՈՐ, ած. (բնստ.): **Հանդի՝ դաշտի ճանապարհը կորցրած:** Դու մենակ ես, **հանդամոլոր**// և անհեռու, անարահետ *(ՎՀ[1], էջ 155):*

ՀԱՆԴԵՐՁԱԿԱԽԻՉ, գ. **Հանդերձանքի կախիչ**: .... Մի կողմում՝ չվառվող բուխարին, որի վրա դրված էր մի փունջ ծաղիկ, մյուսում՝ **հանդերձակախիչը** .... *(Հանդք[1], էջ 124)*:

ՀԱՆԴԵՐՁԱՍԵՂԱՆ, գ. **Հագուստ դնելու համար հատկացված սեղան**: Եղիսաբեթի մահճակալի կողքին բնական փայտից և հայելիով **հանդերձասեղան** կար .... *(ԱԳ, էջ 189):*

ՀԱՆԴԻՍԱՇՈՒՔ, ած. **Հանդիսավոր և շքեղ:** Ցանկանում է անհապաղ, բարձրաձայն պատմել այդ նոր պատմությունը՝ այն վերափոխելով շեփորների **հանդիսաշուք** նվագախմբի .... *(Կունդերա, էջ 198)*:

ՀԱՆԿԱՐԾԱԿԻՈՐԵՆ, մկբ. **Հանկարծակի, անակնկալ՝ անսպասելի կերպով:** .... **Հանկարծակիորեն** վրա հասած հոգնածությունը հիշեցնում էր գեներալ պապի .... վիատության նոպաները *(Մոր., էջ 573):*

ՀԱՆՑԱԿՑԱԲԱՐ, մկբ. **Հանցակցի նման, ինչպես հանցակիցը**: Այդպիսով այդ հայացքը համարժեք էր անպատկառ, **հանցակցաբար** աչքով անելուն, կաշասելու մի փորձի... *(ԱԻՊ[1], էջ 35-36):*

ՀԱՆՑԱՐԱՐՔ, գ. **Հանցավոր արարք:** .... Կատարված **հանցարարքը** ողջամիտ է .... *(Ակ, էջ 13)*:

ՀԱՇՄԱՍԱՅԼԱԿ, գ. **Հաշմանդամների համար նախատեսված սայլակ:** Քթի պիրսինգի պատճառով աղջիկը հայտնվել է **հաշմասայլակին** *(Հմg, med.news.am):*

ՀԱՇՎԱՐԿԱԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ, ած. **Հաշվարկային և դրրամարկղային:** Հաճախորդների **հաշվարկադրամարկղային** սպասարկումն իրականացվում է երկուշաբթիից ուրբաթ *(Հմմ, acba.am):*

ՀԱՍԿԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Հասկի տեսք ունեցող՝ տեսքով, հասկանման :** …. Աջից ձախ պատկերված են **հասկատեսք** նշան և …. յոթ կետ *(Մով.[2], էջ 86):*

ՀԱՍՈՒՅԹԱՎՈՐԵԼ, բ. **Հասույթ հասցնել, տալ**: Գյուլբենկյանը ցանկանում էր իր հավաքածուն նվիրաբերել Ազգային պատկերասրահին և **հասույթավորել**, որ կցաշենք կառուցվի դրանք տեղավորելու համար *(ՋՔ, էջ 251):*

ՀԱՍՏԱՏԸՆԹԱՑ, ած., մկբ. **Հաստատուն ընթացքով:** Կըտրուկ ու սահուն, **հաստատընթաց** ու անձայն, ճիշտ ժամանակային մեքենան կանգնեց դռան առաջ *(Վուլֆ, էջ 70)*:

ՀԱՍՑԵԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. (իրավ.): **Հասցեն՝ բնակության վայրը փոխելու կարգը:** ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկում է ՀՀ ոստիկանություն՝ **հասցեափոխություն** կատարելու համար *(Հմմ, iravaban.net):*

ՀԱՎԱՍԱՐԱՌԻԺ, ած. **Հավասար ուժ ունեցող:** Կարելի է իրար հետ լծել **հավասարաուժ** եզների (*Շոլ., էջ 199*):

ՀԱՎԱՔԱՍԵՆՅԱԿ, գ. **Որևէ նպատակով նախապես հավաքվելու սենյակ**: Երբ **առավոտյան** գնում ես դպրոց, նախ այդ սենյակն ես գնում և **հավաքասենյակի** ուսուցիչն այնտեղ ձեզ հետևում է, ուրիշ բաներով է զբաղեցնում *(Պալ., էջ 32):*

ՀԱՎԵՐԺԱՀՅՈՒՍ, ած. (բնստ.): **Հավերժ հյուսվող**: Ա՜խ, իմ ողջ կյանքի, իմ հոգու, իմ սրտի հետ է ձուլվել քո սերը որպես անբաժանելի, **հավերժահյուս** երգ *(ԳՋ, էջ 151):*

ՀԱՎԵՐԺԱՏԵՂ, գ. **Հավերժական՝ հիմնական տեղ**: Ես՝ դագաղիս մեջ արդեն՝ մահվան սկուտեղի, // Ինձ տանում են այնտեղ, ուր որդեղեն ժանգն է // Ծաղիկներին ողջունում **Հավերժատեղից** *(Տոն.[2], էջ 8)*:

ՀԱՎՔԱԹԱՌ, գ. **Հավքերի՝ թռչունների թառ լինելը:** Սիրտս թև է առնում թռչում, աչքը՝ հառած **հավքաթառին** *(գուս. Աշ.[4], էջ 179)*:

ՀԱՎՔԵՂԵՆ, գ. **Հավքերի՝ թռչունների միս, թռչնեղեն և դրրանից պատրաստված ուտելեղեն:** Դուք ինձ հյուրասիրեցիք **հավքեղենով** *(Տոլ., էջ 220)*:

ՀԱՏԻԿԱՀԱՆ, ած. **Հատիկները՝ մասերը իրարից անջատված, քանդված:** Հատուկենտ լույսերը **հատիկահան** եղած զնջիլի էին նման *(Նիկ., էջ 120)*:

ՀԱՏՈՒՂԻ, գ. **Հատվող ուղի՝ գիծ:** Հայելիի պատկերով միևնույն անկյան տակ ձևավորվում է երկու **հատուղի**՝ հավասարաչափ կտրվածք, ուստի դրանք իդեալականորեն միանում են իրար *(Հմg, santorpack.ru)*:

ՀԱՐԱՍՏԵՂԾ, ած. **Հավերժ ստեղծող, արարող**: .... Իր ստեղծած սարքուկարգի կողքը ապրողը մեծ բնության **հարաստեղծ** ընթացքին հետևելու հնարավորությունից զրկված.... մնում է տգետ .... *(ՎՍ, էջ 312)*:

ՀԱՐԴԱՏՈՒՆ, գ. **Հարդանոց:** Եվ, սեփական հայտնությամբս անտեսանելի դարձած, հասա **հարդատուն** .... *(Կայարան, 2014, թ. 3)*:

ՀԱՐԹԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ, ած. (արվ.): **Հարթապատկերներին հատուկ, հարթապատկերների:** Զգացվում է, որ որմնանկարնե-

ը ևս ունեցել են **հարթապատկերային** բնույթ՝ մեկնաբանման զարդադեկորատիվ գծերով …. *(Հակ., էջ 48):*

ՀԱՐՃԱԿԱՏԱՅԻՆ, ած. **Ճակատային մասին կից**: Որպես կանոն, **հարճակատային** շրջանները հենց սկզբից կառավարում են մեր հուզական հակազդումները *(ԴԳ, էջ 58):*

ՀԱՐՆԵՐԿԱ, ած. **Մշտապես ներկա՝ գոյություն ունեցող:** ….Ուր անցյալն է ու ներկան իմ // Ու **հարներկա** իմ ապագան …. *(Տոն.[4], էջ 82):*

ՀԱՐՍԱՆԻՔԱՆՄԱՆ, ած. **Հարսանիքի նման, ինչպես հարսանիքը:** Մենք **հարսանիքանման** մի բան արեցինք *(XX դար, էջ 496):*

ՀԱՐՎԱԾԱԽԱՌՆ, ած., մկբ. **Հարվածի հետ միասին, միաժամանակ հարվածելով:** Նա՛ է հրամայողը ու բռնում, ծալումբեկանում է դավաճան որդու դաստակը՝ **հարվածախառը** *(Նիկ., էջ 45):*

ՀԱՐՑԱԽԱՂ, գ. **Խաղ հարցերի միջոցով, վիկտորինա: Հարցախաղը** շատ պարզ է և ոչ պաշտոնական: Դուք և ձեր զուգընկերը հերթով հարցնում եք միմյանց այն ամենի մասին, ինչը հետաքրքրություն է առաջացնում *(Հմգ, hy.healthy-food-near-me.com):*

ՀԱՐՑԱՏԵՍԱԿ, գ. **Միևնույն հարցի տարբեր ձևակերպումներ:** Շատ **հարցատեսակներ** են ի հայտ գալիս, որոնք խանգարում են Ալիևին *(Հմգ, like-info.ru):*

ՀԱՐՑԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձաբար իրար հարց տալը:** …. Անհանգիստ ուշադրությամբ հետևում էր **հարցափոխանակությանը,** որպեսզի հանկարծ հարց բաց չթողնի …. *(XX դար, էջ 107):*

ՀԱՔԵՐԱՅԻՆ, ած. **Հաքերներին հատուկ:** Քաջքը նստեց մեծ վահանակի առաջ և սկսեց **հաքերային** արագ շարժումներով ստեղները սեղմել *(Բակուր, էջ 145):*

ՀԵԾԵԼԱՎՈՐ, գ. **Հեծյալ զինվորական**: …. **Հեծելավորի** օգնականի երկայնակի օգնականի սպիտակ երիզն ուսադիրի վրա …. *(Շոլ., էջ 106):*

ՀԵԾՎՈՐՈՒՀԻ, գ. **Կին հեծվոր:** …. «Մարիուսի պարահանդեսների» նախկին պարուհին, իսկ անցյալում Ֆրանկոնիա կրկեսի **հեծվորուհին** …. նրան տխուր գտավ *(Մոր., էջ 397):*

ՀԵԿԵԿՈՑԱՆՄԱՆ, ած. **Հեկեկոցի նման: ….** Տղամարդը ծածկեց իր դեմքը ու փոթկաց, քրքջաց, ուշաթափվեց՝ **հեկեկոցանման** ձայներ արձակելով *(Նիկ., էջ 135):*

ՀԵՆԱՍԵՂԱՆ, գ. **Հենվելուն հարմար բարձր սեղան**: Ես ատում եմ այն վա՛յ քաղաքական գործիչներին, որոնք բիստրոնների **հենասեղանի** մոտ կանգնած …. մեծ-մեծ խոսում են …. *(Ազն., էջ 146):*

ՀԵՇՏԵՐԱԶ, գ. **Հեշտ՝ (հնց.) հաճելի, դուրեկան երազ:** Մի՞թե սա **հեշտերազ** չէ, թեկուզ **հեշտերազի** պատրանք միայն, բայց ինձ համար նույնիսկ ավելի թանկ …. *(Սուր., էջ 116):*

ՀԵՌԱԳՐԱԿԱՅՄ, գ. **Հեռագրասյուն, հեռագրաձող:** Հսկաների այս անվար **հեռագրակայմը** ոչ գեղեցիկ է, ոչ էլ տգեղ *(ԱՄ, էջ 20):*

ՀԵՌԱԳՐԱՍԱՐՔ, գ. **Հեռագիրը հասցեատիրոջը ուղարկելու սարք:** …. **Հեռագրասարքը** վատ էր աշխատում *(ԱԳ, էջ 147):*

ՀԵՌԱԽՈՍԱՏԵՏՐ, գ. **Հեռախոսի տետր:** …. **Հեռախոսատետրը** ձեռքն առնելով՝ ինքն իրեն ասաց …. *(Վուլֆ, էջ 39):*

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑԱՅԻՆ, ած. **Հեռահաղորդակցմանը վերաբերող**: …. Օժանդակեցին դեռևս սաղմնային վիճակում գտնվող էլեկտրական և **հեռահաղորդակցային** արդյունաբերությունների զարգացմանը *(ՋՔ, էջ 54)*:

ՀԵՌՈՒՍՏԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեռուստատեսային մենախոսություն**: Սա է պատմական անառարկելի ճշմարտությունը, որից երբևէ **հեռուստամենախոսությամբ** շյուղ անգամ չի պակասում *(Հմg, Lur. Am, 03.02.2022)*:

ՀԵՌՈՒՍՏԱՇՔԵՐԹ, գ. **Հեռուստատեսային շքերթ**: …. Անգամ եթե նրանք **հեռուստաշքերթների** առիթ չէին տալիս իրեն *(Կունդերա, էջ 60)*:

ՀԵՌՈՒՍՏԱՏԱՂԱՎԱՐ, գ. **Հեռուստատեսային տաղավար**: Նրան իր հետ **հեռուստատաղավար** էր բերում ժողովրդի առաջ իր ելույթների ժամանակ …. *(Ռուշդի, էջ 397)*:

ՀԵՌՈՒՍՏԱՕԲՅԵԿՏԻՎ, գ. **Հեռուստատեսային օբյեկտիվ**: - Ծերու՛կ, գոռում էր, - ես, ախր, **հեռուստաօբյեկտիվով** եմ աշխատում *(Դով., էջ 62)*:

ՀԵՏԱՔՆՆՉԱԿԱՆ, ած. **Հետաքննչությամբ զբաղվող**: …. Վերջինս զբաղված էր **հետաքննչական** բաժնի աշխատակիցներով …. *(Կլ., էջ 9)*:

ՀԵՏԲԵՐՔԱՀԱՎԱՔ, գ.**Բերքահավաքից հետո**: Այդ բաղկացուցիչներից յուրաքանչյուրը պտուղների հասունացման, նրանց **հետբերքահավաքի** պահպանման և հատկապես վերամշակման գործընթացում …. փոփոխությունների է ենթարկվում *(Դասագիրք, էջ 212)*:

ՀԵՏԲԻԱՅՆԱԿԱՆ, ած. (պատմ.)։ **Բիայնականին հաջորդող։** Հայկական մեհենագրության գործածությունը **հետբիայնական** ժամանակաշրջանում (վերնագիր) *(Մով.[1], էջ 41)։*

ՀԵՏԴԱՐՁ, գ. **Հետ դառնալը, գաղթածի տուն՝ հայրենիք վերադառնալը**։ Մենք «գնալ-գալու» տոմս կգնեինք ու անպայման տուն կվերադառնայինք, և ոչ թե ինչպես հիմա, առանց **հետդարձի** հույսի, երկրե երկիր կգաղթեինք, անհայրենիք կմնայինք։ *(Անգլ., էջ 118)։*

ՀԵՏԶԱՏԿԱԿԱՆ, ած. **Զատկին հաջորդող**։ .... Առաջացել էր **հետզատկական** արձակուրդի ընթացքում ..... *(Հանդէ[2], էջ 32)*։

ՀԵՏԽԱՂՅԱ, ած. **Խաղին հաջորդող, խաղի ավարտից հետո կատարվող։ Հետխաղյա** 11-մետրանոց մրցաշարում նա գրավեց մրցակցի դարպասը .... *(Կայ., էջ 352)։*

ՀԵՏԽԵԹԱԿԱՆ, ած. (պատմ.)։ **Խեթականին հաջորդող։** ... **Հետխեթական** սկզբունքների կամ լուվիական պետություններում ... *(Մով.[1], էջ 53)։*

ՀԵՏՏԵՔՍՏԱՅԻՆ, ած. **Հիմնական տեքստին հաջորդող**։ Տե՛ս ԵՆԹԱՌԼՈՐՏ-ի օրինակը։

ՀԵՐԹԱՊԱՀՈՒՀԻ, գ. **Կին հերթապահ։** Առաջին իսկ օրը նրան կուսությունից զրկեց «Սոկոլ» հյուրանոցի հարկի **հերթապահուհին** *(Դով., էջ 177)։*

ՀԵՐՅՈՒՐԱԳԻՐ, գ. **Զրպարտագիր։** Նման տեքստի կամ երևույթի համար, երբ ամեն ինչ մոգոնված, հորինված է, օգտագործում են **«հերյուրագիր»** «զրպարտագիր» կամ ավելի խիստ բառ, որ դեռ գոյություն չունի *(Հմg, Lur.am, 23.06.2022)։*

ՀԵՐՅՈՒՐԱՍՏԵՂԾԵԼ, բ. **Հերյուրանքով ստեղծել։** Նա հերյուրաստեղծել է մի հորինովի, կեղծ աշխարհ .... *(Ակ, էջ 74)։*

ՀԵՔԻԱԹԱԳՈՒՅՆ, ած. **Հեքիաթային, հեքիաթին հատուկ:** .... Կյանքը տեսնում էին **հեքիաթագույն** .... *(Վուլֆ, էջ 132):*

ՀԵՔԻԱԹԱՇՈՂ, ած. (բնստ.): **Հեքիաթի պես շողացող:** Վատ է, երբ գիշերվա վաստակած աչքերդ պարուրող **հեքիաթաշող** երազից հետո արթնացումը խոստանում է հիվանդագին կյանքի առավոտ .... *(ԳՋ, էջ 98):*

ՀԵՔԻԱԹԵՂԵՆ, ած. (բնստ.): **Հեքիաթային:** Մեկի հետ այնպես անհուն է կյանքը, այնպես խոր՝ երազը, և այնպես **հեքիաթեղեն**՝ մենակությունը *(ԳՋ, էջ 149):*

ՀԻԵՐՈԳԼԻՖԱԿԻՐ, ած. (պատմ.): **Պատկերային գրանշաններ ունեցող**: Վանի թագավորության առաջին **հիերոգլիֆակիր** հուշարձանները հայտնի դարձան դեռևս XIX դարի երկրորդ կեսին ... *(Մով.[1], էջ 22):*

ՀԻՄՆԱԹՈՒՄԲ, գ. **Հիմքային մասի թումբ:** Ամենածայրի խրճիթի մոտ, **հիմնաթմբի** վրա նստել էր ծեր, բայց առույգ մի պապ *(Շոլ., էջ 342-343):*

ՀԻՄՆՈՐՄ, գ. **Հիմքի պատը:** Մոնսարը կազմեց հրապարակի հատակագիծը՝ **հիմնորմը** .... *(ԱՄ, էջ 28):*

ՀԻՏԼԵՐԱՊԱՇՏ, ած. **Հիտլերին պաշտող: Հիտլերապաշտ** էր դարձել *(Սուր., էջ 306):*

ՀՄԱՅԱՇՈՒՆՉ, ած. (բնստ.): **Հմայող, հմայուն: Հմայաշունչ** հոգիների// ոսկե անձրև *(ՎՀ[1], էջ 266):*

ՀՅՈՒԹԱՐՏԱԴՐՈՒՄ, գ. (մսնգ.): **Հյութ առաջացնելը՝ ստեղծելը՝ դուրս բերելը:** Նախապատվությունը տրվում է մրճաղացներին, քանի որ տրորիչների հետ համեմատած նրանք ավելի մաքուր են տրորում պտուղներն ու ուժեղացնում **հյութարտադրումը** *(Դասագիրք, էջ 203):*

ՀՅՈՒՐԵԿԱՅԻՆ, ած. **Հյուրախաղային («գաստրոլային»)**: ... Ավելի հաճախակի ու բազմաբովանդակ են դառնում դրսից ե-կող խմբերի **հյուրեկային** ներկայացումները *(Հակ., Սիմ.,էջ 163):*

ՀՆԱԳՈՐՇ, ած. **Հին և գորշ:** .... Տան բազում շքեղ իրերը թողած, ես խնդրեցի միայն խոհանոցի **հնագորշ** նեղ պահարա-նը *.... (Հմգ, Mediamax.am):*

ՀՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ, ած. **Հին դավանանքների՝ կրոնական սովորույթների:** Կոնդրատը ծունկ էր չոքում **հնադավանական** տիպի մռայլ սրբապատկերի առաջ, աղոթում էր և աչքերը լավ սրբում-չորացնում .... *(Շոլ., էջ 178-179):*

ՀՆԱԿԱՆՈՆ, ած. **Հին կանոններով՝ սովորույթներով. օ-րենքներով առաջնորդվող:** .... Ես **հնականոն** մարդ եմ, բայց պահանջ եմ զգում ինչ-որ անանցողիկ բարոյագիտական գա-դափարների *(Բեեկ., էջ 148):*

ՀՆԳԱՀԵԾԱՆ, ած. **Հինգ հեծան ունեցող՝ հեծանով:** Այդ ըն-թացքում անասաունները Ջոնզին ու իր մարդկանց արդեն ֆերմայի սահմաններից դուրս էին քշել՝ նրանց հետևից թրխկացնելով **հնգահեծան** դարպասը *(Օրուել, էջ 22):*

ՀՆՉԵԼԻՔ, ած. **Որը պիտի հնչի:** Նկատում է՝ վիրահատա-րանում **հնչելիք** երաժշտությունը փոքր-ինչ բարձրացրել են .... *(Սև., էջ 96):*

ՀՈԳԵԲԵՌ, գ. (փխբ.): **Հոգս**: Երբ ծանրանում են **հոգեբեռ-ները** ու // Հոգեսափորը մեր ազնվացեղ .... *(Տոն.[3], էջ 39):*

ՀՈԳԵԳԱՐՈՒՆ, գ. **Հոգեկան հրճվանք՝ զվարթություն՝ բերկրանք՝ խինդ:** Մենակ մնացած ամեն մի հնչյուն, // Արդյոք կընծայի՞ մեզ համանվագ // **Հոգեզարունի** հնչյունների չուն *(Տոն.[1], էջ 7):*

ՀՈԳԵԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգեկան ներդաշնակություն**: .... Տարագի՛ր են հնչյունները բոլոր. // Եվ խորհուրդն են կրում // Սլացքներում իսկ պահվող **հոգեդաշնության** *(Տն.[1], էջ 3):*

ՀՈԳԵԵՐԱՁ, գ. **Հոգու երազ**: Նա դեռ փորձում է մեզ էլ ա-ռինքնել՝ // Ընծա բերելով **հոգեերազներ** ... *(Տն.[3], էջ 35):*

ՀՈԳԵԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգեկան զգացողություն:** Ես այդ զգում եմ **հոգեզգացողությամբ:** Ահա ճիշտ բառը՝ **հոգեզգա-ցողությամբ** *(XX դար, էջ 347):*

ՀՈԳԵԽԱՆԳԱՐՎԵԼ, բ. **Հոգեկան աշխարհը խանգարվել՝ շեղվել:** Երդողանը **հոգեխանգարվել** է Օսմանյան կասրության հողի վրա *(Հմg, akunq.net):*

ՀՈԳԵԽԵՂ, ած. **Հոգին խեղող, խաթարող**: Արտագաղթած ամուսին (ամուսիններ). մարդկային հոգեբանության նաև մտածողության **հոգեխեղ** դրսևորումներ .... *(Կայարան, 2022, թ.1):*

ՀՈԳԵՀԵՂՁՈՒՄ, գ. **Հոգին խեղդելը:** Աշխարհն է դարձել ձիգ **հոգեհեղձում***(Տն.[3], էջ 27):*

ՀՈԳԵՀԵՐՁՈՒՆ, ած. **Հոգին կտրատող՝ մասնատող:** Ծե-րությունից մեր հոգնել է ներկան՝ // Մերկանդամ, մեռյալ ու **հո-գեհերձուն** *(Տն.[4], էջ 73):*

ՀՈԳԵՄԱՐՄԻՆ, գ. (բնստ.): **Հոգևորին հատուկ ձև:** .... Ով ձյունեղ իր **հոգեմարմնով** մեզ է պատանում *(Տն.[2], էջ 10):*

ՀՈԳԵՄՂՎԵԼ, բ. (բնստ.): **Հոգեպես տրամադրվել:** Ու մենք վերստին // **Կհոգեմղվենք** խորքն աշունների ... *(Տն.[1], էջ 17):*

ՀՈԳԵՋԻՆՋ, ած.գ. (բնստ.): **Մաքուր, ջինջ հոգի ունեցող:** Նայիր ինչ **հոգեջինջ** է այս հայուհին *Սարմեն, էջ 86):*

ՀՈԳԵՍԱՓՈՐ, գ. (բնստ.): **Հոգու պարունակությունը՝ նե-րաշխարհը**: Տե՛ս ՀՈԳԵԲԵՌ-ի օրինակը*:*

ՀՈՂԱԱՆԴԱԿ, գ. **Հողային հանդակ՝ մշակման հնարավորություն ունեցող հողատարածք**: Երևանում խոշոր **հողաանդակներ** ունեցողների միայն մի մասն էր ապրում այստեղ *(Հակ., Սիմ.,էջ 35)*:

ՀՈՂԱԳՈՄԱՂԲԱՅԻՆ, ած. **Հողի և գոմաղբի խառնուրդից կազմված:** .... Սածիլները հողախառնուրդով վերատնկում են **հողագոմաղբային** խորանարդիկներում կամ պլաստիկ ամանների մեջ *(ԳՄ,ՎԹ, էջ 2)*:

ՀՈՂԱՀԱՄՈՒԹՅՈՒՆ, գ.(մնգ.):**Հողի համ ունենալը: Հողահամությունը** ի հայտ է գալիս հողին մոտ գտնվող խաղողի վազերի ստորին պտուղներից պատրաստած գինիներում *(Դասագիրք, էջ 260)*:

ՀՈՂԱՀԱՏԿԱՑՈՒՄ, գ. **Հող՝ հողատարածք հատկացնելը: Հողահատկացման** գործը կազմվում է ամբողջ օբյեկտի շինարարության համար *(Հմգ, irtek.am)*:

ՀՈՂԱՊԱՀՊԱՆՈՒՄ, գ. (գղտնտ.): **Հողը հողատարումից («էրոզիա») պաշտպանելը**: Այս եղանակով տնկում են հիմնականում թեք լանջերի վրա **հողապահպանման** նպատակով (*Սաֆ., էջ 85*):

ՀՈՂԱՓԼՎԱԾՔ, գ. **Հողի փլվածք:** Զառիվայրերի **հողափլվածքների** դեմ պետք է պայքարել .... *(Շող., էջ 143)*:

ՀՈՆՔԱՂԵՂ, գ. **Հոնքերի աղեղ, աղեղնաձև հոնքեր**: Հիշողության մեջ առանձնապես մնում են անթերի **հոնքաղեղները**, քնքուշ հայացքն ու նուրբ շուրթերը *(Պար., էջ 197)*:

ՀՈՌԵՏԵՍԻԼՔ, գ. **Հոռի՝ վատ տեսիլք:** Դրա ամենացնցող ցուցադրումը եղավ *1945*-ի հիտլերյան հայտնութենական **հոռետեսիլքը** (l'apocalipse) *(Ակ, էջ 18)*:

ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ, ած. **Հովանավորչության և լուսավորչության ասպարեզներում օգտագործվելիք:** Ես ձեզ .... հարցնում եմ՝ երբևէ ձեր գրպանին դիպե՞լ են, ձեզանից պարտքով գումար կամ որևէ մեծաքաշ ողորմություն կամ **հովանավորչալուսավորչական** միջոցներ .... խնդրե՞լ են *(Նիկ., էջ 70):*

ՀՍԿԱՅԱԳԱՆՁ, ած. (փխբ.): **Մեծարժեք:** Օրինելու՛ է նրա դեռևս .... հեթանոս սրտում ամբարված քրիստոնեական **հսկայագանձ** պաշարները ... *(Նիկ., էջ 48):*

ՀՍԿԱՅԱՄԵԾ, ած. **Շատ մեծ, հսկայական:** .... Ուրեմն **հսկայամեծ** ոչնչացումների գնով իշխանության գագաթին հայտնված մարդն ինքնին այլևս չի բավարարվում արյան ծարավով .... *(Ակ, էջ 71):*

ՀՍԿԱՅՈՐԵՆ, մկբ. **Հսկայի նման, ինչպես հսկան,** այստեղ՝ **արտակարգ կերպով: Հսկայորեն** խորհրդավոր մի բանից վախեցած ... նայեցի Օսկան աղային ... *(Սուր., էջ 26):*

ՀՐԱԴԱՇՏ, գ. **Կրակագույն դաշտ:** Երկար ու ձիգ **հրադաշտերի** վրա կախվել էին ոսկով ցողված բոցավառ ամպեր *(Վագ., էջ 441):*

ՀՐԱԶԱՐԿԵԼ, նբ. **Հրացանազարկ անել, հրացանով կրակել:** .... Երեքի համար **հրազարկելու** տեղ չկար *(Տոլ., էջ 205):*

ՀՐԱԹԵՐԹԻԿ, գ. **Հրեղեն՝ բոցագույն թերթիկ**: ... Հսկայական ջահը բոցավառվում էր, ինչպես **հրաթերթիկներով** վիթխարի մի գեորգին *(Ուայլդ, էջ 117):*

ՀՐԱԹՈՎ, ած. (բնստ.): **Հրով և թովչանքով:** Հավերժ լինել նրա քով, // Սիրել, այրվել կրակով՝// Սրա մեջ է մինչև վերջը // Կյանքի տենչը **հրաթով** *(ԳՋ, էջ 68):*

ՀՐԱՀՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Հրահրում, հրահրելը, մի բան անելու դրդելը:** Ձնագնդու **հրահրությամբ** նրանք դավադրություն էին ծրագրել Նապոլեոնին սպանելու նպատակով *(Օրուել, էջ 103):*

ՀՐԱՇԱԳԵՂՈՐԵՆ, մկբ. **Հրաշագեղաբար, հրաշալի և գեղեցիկ կերպով:** Շատ **հրաշագեղորեն** (իսկ երբ նա ցանկանում էր, կարողանում էր խիստ հմայիչ լինել) և նրբանկատորեն նա քննադատեց դերերի բաշխումը .... *(Մոր., էջ 77):*

ՀՐԱՇԸՆԹԱՑ, ած. (բնստ.): **Հրաշալի ընթացող:** Ու՞մ են կանչում անմահության// **Հրաշընթաց** նավերից *(ԳՋ, էջ 74):*

ՀՐԵՇՏԱԿԱԵՐԹ, գ. (բնստ.): **Հրեշտակների երթ**: Երկնքից առաջ՝ այս կյանքից հետո // Հարազատները մեր օղորմածիկ // Տիեզերական **հրեշտակաերթով** // Գալու են՝ նստեն մեր հոգեհացին *(Տոն.[3], էջ 23):*

ՀՐԵՇՏԱԿԱԿԵՐՊՈՒՄ, գ. **Հրեշտակային կերպարանք ստանալը**: .... Պատմում էին իրենց որդու **հրեշտակակերպման** պատմությունը .... *(Ռուշդի, էջ 210)*:

ՀՐԵՇՏԱԿԱՊԱՏ, ած. **Հրեշտակների պատկերներով (կամ քանդակներով) պատված**: .... Դիմում էր **հրեշտակապատ** հայելուն, հենց որ հայրն աշխատանքի էր գնում .... *(Ռուշդի, էջ 90)*:

ՀՐՇԵՋԱԿԱՅԱՆ, գ. **Հրշեջների, հրդեհը մարողների, հանգցնողների կայան:** Օրիորդ Դեզի, մտեք իմ գրասենյակը և զանգահարեք **հրշեջակայան** *(XX դար, էջ 312):*

ՀՈՒԶԱԶԳԱՅՈՒՆ, ած. **Հույզի նկատմամբ զգայուն**: .... **Հուզազգայուն** էր .... *(ԱԱ, էջ 247)*:

ՀՈՒԶԱԽՌՈՎՅԱԼ, ած. **Հույզերից խռովված, հուզախռով**: Տառապող, **հուզախռովյալ** մարդը իզուր է փնտրում այն ձևը .... *(Ակ, էջ 361):*

ՀՈՒՄՈՐԱԶՈՒՐԿ, ած. **Հումորից զուրկ:** Նա փառամոլ և **հումորազուրկ** լեյտենանտ Շայսկոպֆն էր .... *(ՋՀ, էջ 93):*

ՀՈՒՆԱԳԻՐ, ած. **Հունարեն՝ հունական տառերով գրված: Հունագիր** հուշարձանը կարող էր վերաբերել Տիգրան Բ-ի իշխանության ժամանակաշրջանին .... *(Մով.[1], էջ 116):*

ՀՈՒՇԱԹԱՍ, գ. **Որպես հուշանվեր տրված թաս:** ... Պաշտոնաթող Ռուզվելտին մատուցեցին արծաթյա **հուշաթաս** *(Յակ., էջ 121):*

ՀՈՒՇԱՀՈՒՅԶ, ած. **Հուզառատ հուշերով համակված:** Տե՛ս ԱՐԾՎԱՆԱԼ-ի օրինակը *(Տոն.[4], էջ 139):*

ՀՈՒՇԱՊԱՀ, ած. **Հուշեր պահող՝ արտաբերող՝ պատմող:** Մեր **հուշապահ** շուրթերին մայրենին է կարկաչում *(գուս. Աշ.[4], էջ 85):*

ՀՈՒՇԱՌԱՐԿԱ, գ. **Որպես հուշանվեր տրված առարկա:** Ի թիվս **հուշառարկաների** դրված էր այն սեղանը .... *(Յակ., էջ 132):*

ՀՈՒՇԱՎԱՅՐ, գ. **Հուշատեղի, որևէ իրադարձության՝ պատմական անցքի ևն հիշատակը խորհրդանշող տեղ՝ վայր:** Արգելոցը բաղկացած էր երեք **հուշավայրից** *(Դով., էջ 167):*

ՀՈՒՇԱՏԵՐԵՎ, գ. **Որպես հուշ պահված տերև:** Եթե մեկը հիշողության տոհմածառ կազմի աշխարհի սկզբից մինչև հիմա, ապա տեսանելի և անտեսանելի **հուշատերևներից** կհառնի մարդկության իրական պատկերը *(Կայարան, 2014, թ. 3):*

ՀՈՒՇԱՑԱՎ, գ. (բնստ.): **Հուշերից ծնված ցավ:** .... Ու համատարած խո՛ր մի **հուշացավ** //Մենա՛կ է բացվում ձյուներիդ տակից *(Տոն.[4], էջ 45):*

ՀՈՒՇԱՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ, գ. **Պատմական կարևոր իրադարձություններին նվիրված ցուցահանդես**: Երբեմն **հուշացուցա-**

հանդեսում մեր դիմանկարները կախում են կողք կողքի... *(Պետ, էջ 130):*

ՀՈՒՍԱՎԱՌՈՒՄ, գ. **Հուսավառություն՝ խանդավառություն:** Եվ **հուսավառման** մի խրոխտ պահի, ... // Ա՛ռ արշալույսի թուրը ճակատիդ .... *(Տոն.[4], էջ 76):*

Ձ

ՁԵՌԻԿ, գ. (նվազափոքշ.) **Փոքրիկ քնքուշ, արտակարգ դուրեկան ձեռք:** .... Պատահե՞լ է, որ դուք տեսնեք այդպիսի ձեռիկներ .... *(Մոր., էջ 168):*

ՁԵՌՆՈՑԱԿԻՐ, ած. **Ձեռնոց կրող:** ....Իր սև **ձեռնոցակիր** ձեռքով ամուր սեղմում էր Նելլի ձեռքը .... *(Աթք., էջ 51):*

ՁԵՌՔԱՏԵՐ, գ. **Ձեռքի տեր. անձ, որի ձեռքի մասին խոսվում է:** .... **Ձեռքատերը** տարբեր ժեստեր է օգտագործում, ու մատների թրթռոցին առանձին-առանձին ես սիրահարվում *(Սև., էջ 8):*

ՁԵՎԱՄԱՆ, գ. **Ձև տվող աման:** Խմորը լցնել **ձևամանների** մեջ *(Հմց, Ինֆո Երևան, 06.03.2022):*

ՁԵՎՕՐԻՆԱԿ, գ. **Նմուշ, ձևաթուղթ**: .... Ամբողջացված **ձևօրինակն** անխոռով դեմքով մեկնեց հարկի բուժքրոջը *(ՋՀ, էջ 109)*:

ՁԻԱԾԱԾԿՈՑ, գ. **Ձիու մեջքի վրա, չթամբած դեպքում, գցվող ծածկոց:** Տնքալով լվաց արյունը երեսից ու վզից, սրբվեց արտասանդուղքի վրա կախված **ձիաձածկոցով** և նստեց շեմքի վրա *(Շոլ., էջ 364):*

ՁԻԳԻՐԱՆ, ած. **Ձիգ իրան ունեցող**: Բուժքույր Սյու Ան Դաքեթը բարձրահասակ, նիհար, հասուն, **ձիգիրան** .... կին էր .... *(ՋՀ, էջ 380)*:

ՁԻԹԵՆԱԳՈՒՅՆ, ած. **Ձիթենու՝ ձիթապտղի գույնի՝ գույն ունեցող:** Հայրս իր **ձիթենագույն** դեմքով, թուխ մազերով ու հպարտ կեցվածքով ասես մարմնավորում էր իր ժողովրդի բազմադարյան պատմությունը *(Փափ., էջ 22):*

ՁԿՆԱՎԱՐԻ, մկբ. **Ձկան պես:** Իր բաժին որդն ուտում ու իր օրերի քանակն ապրում էր **ձկնավարի**, առանց դրանք հաշվելու *(Կայարան, 2022, թ. 2):*

ՁՅՈՒՆԱԾԱՂԿԱԾ, ած. **Ձյունով ծածկվելով ծաղկած ծառի տպավորություն թողնող:** Ընթրելուց հետո ես ու Ռուզանը երկու **ձյունածաղկած** ճյուղերի հանգույն .... ելանք վարձով տուն հարցնելու .... *(Նիկ., էջ 34):*

ՁՅՈՒՆԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Ձյունի գույնին տվող սպիտակ**: Թիթեռը **ձյունասպիտակավուն** է, առաջին թևերը ծածկված են սև կետերով (*Սաֆ., էջ 128*):

ՁՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Մշակվող հողակտորի վրա ձյան կուտակում խոնավության պահպանման նպատակով:** Իսկ հասկս ափիս վրա չի տեղավորվում: Այդ բոլորը նրանից է, որ **ձնակալություն** եմ արել, հողին ջուր եմ տվել *(Շոլ., էջ 142):*

ՁՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Վարելահողում ձյան կուտակում, ձնկուլ:** Ես թե հացահատիկն էի ախտահանում, թե **ձնակալություն** էի կատարում *(Շոլ., էջ 23):*

ՁՎԱՍՏԵՂԾ, ած. (դիպվ.): **Ձվի ստեղծմամբ՝ արտադրությամբ զբաղվող:** Նա կազմեց **Ձվաստեղծ** կոմիտե հավերի համար.... *(Օրուել, էջ 34):*

Ղ

ՂԵԿԱՊԱՀ, գ. **Ղեկը վարող, ղեկորդ:** Եվ առանց **ղեկապահի** մեր նավը գնում էր դեպի հյուսիս *(XX դար, էջ 70):*

ՂԵԿԱՎԱՐԱՄԵՐՁ, ած. (փխբ.): **Ղեկավարին մոտ՝ հարազատ՝ ծանոթ: Ղեկավարամերձ** մի շարք պաշտոնյաներ տեղյակ չեն երկրում կատարվող լուրջ իրադարձություններից *(Հեռ., 5-րդ ալիք, 05.10.2022):*

Ճ

ՃԱԳԱՐԱՁԵՎ, ած. **Ճագարի ձև ունեցող**: Մեծ **ճագարաձև** ամպերը կախվել էին երկնքից .... *(Աթք., էջ 277)*:

ՃԱԼԱՔԱՐԱՅԻՆ, ած. **Ճալաքարի՝ գետաքարի ձև՝ տեսք ունեցող:** .... վրդովված բացականչեց Բալաբինը, և նրա կլոր, **ճալաքարային** գլխի փայլող կատարը մի րոպե ծածկվեց կաթվածահար եղողի մորեգույն կապուտածով *(Շոլ., էջ 337):*

ՃԱԿՏՈՆԱՍՅՈՒՆ, գ. (արվ.): **Ճակտոնի՝ շենքի ճակատի վերին եռանկյունաձև կամ շրջանաձև մասի սյուն:** Այսպես, գմբեթի արևմտյան ճակատի տիմպանի ներսում Հիսուսի պատկերն է, ավելի ցած, **ճակտոնասյուների** ներսում՝ «մեղսագործության» տեսարանը *(Հակ., էջ 19):*

ՃԱՀՃԱԳՈՒՅՆ, ած. **Ճահճի գույնի**: ... Դարչնագույն թևքերով **ճահճագույն** թավշե բաճկոնակ .... *(Ուայլդ, էջ 100):*

ՃԱՂԱԴՈՒՌ, գ. **Ճաղերով դուռ: Ճաղադուռը** փակվում է ժամը քսանին *(Ուելբեք 1, էջ 131):*

ՃԱՂԱՊԱՐԻՍՊ, գ. **Ճաղերով պարիսպ**: Շքամուտքի **ճաղապարիսպով** էի մտել....*(Կայարան, 2022, թ.1):*

ՃԱՃԱՆՉԱՑՈԼՔ, գ. **Ճաճանչների ցոլքը**: Բուն օվկիանոսը կտրտված էր լինում .... սկավառակների .... **ճաճանչացոլքերով** *(Լեմ, էջ 225)*:

ՃԱՄԲԱՐԱԳԵՏ, գ. (դիպվ.): **Գերմանական համակենտրոնացման ճամբարներին լավ տեղյակ:** Ընդամենը մի շաբաթ ապրելով 19-րդ բլոկում, այդ փորձված «**ճամբարագետը**» հասկացավ... *(Պետ, էջ 126)*:

ՃԱՄԲԱՐԱԿԻՑ, գ. Այստեղ՝ **նույն համակենտրոնացման ճամբարի բանտարկյալ**: ... Ընդհանուր տառապանքներն էին ինձ կապել իմ **ճամբարակիցների** հետ *(Պետ, էջ 45)*:

ՃԱՄՓԱԿԵՌ, գ. (բնստ.): **Ճանապարհի թեքվող մասը, կեռման, ոլորան:** .... **Ճամփակեռին** // Տունդարձի ցավն է անվերջ խաչվողի .... *(Տոն.[4], էջ 10)*:

ՃԱՅԱՆԱԼ, չբ. (փխբ.): **Պարի ընթացքում ճային հատուկ շարժումներ անել:** Շարժվում եմ ջրերի վրայով, քայլում ու դարձյալ **ճայանում** եմ ես *(Նիկ., էջ 108)*:

ՃԱՆԱՊԱՐՀԱՆՇԱՆ, գ. **Ճանապարհի նշան:** Մթության մեջ հայտնվեց կլոր **ճանապարհանշանը** և մի քանի վայրկյան փայլատակեց ցոլալապտերի լույսի տակ. մեր քաղաքում արագությունը պետք է լինի ոչ ավելի, քան 60 կիլոմետր *(Կլ., էջ 182)*:

ՃԱՆԱՊԱՐՀԱՓՈՍ, գ. **Ճանապարհին բացված փոս:** Վարչական տարածքը .... ավիաջոկատի ճամբարատեղի ճիշտ կենտրոնում էր՝ ժանգոտած երկաթգծերով **ճանապարհափոսի** և ասֆալտապատ սև, թեք ճանապարհի միջև *(ՋՀ, էջ 34)*:

ՃԱՊՈՆԱՉԻՆԱԿԱՆ, ած. **Ճապոնական և չինական:** .... Գլխիս ամրացրի **ճապոնաչինական** «անտենաներս»՝ զույգ քարազարդ փայտիկներ .... *(Նիկ., էջ 121)*:

ՃԱՐՏԱՐԻՄԱՍՏ, ած. **Ճարտար իմաստ ունեցող՝ արտահայտող:** .... Խումբը երգեց **ճարտարիմաստ** ու բարդ մի սաղմոս .... *(Տոլ., էջ 35):*

ՃԳՆԱԿԵՑԱԿԱՆ, ած. **Ճգնակյացներին հատուկ այդ բնույթը ունեցող**: ... Ոչ թե վանքում, այլ հենց աշխատասենյակի լռության մեջ ստեղծվեց նրա **ճգնակեցական** հիասքանչ ստեղծագործություններից մեկը*: (Պար., էջ 153):*

ՃԵՄԵԼԱՏԵՂ, գ. **Ճեմելու՝ զբոսնելու վայր:** Եվ որ Սադախլու կայարանի կառամատույցին- ողջ հովտում միակ ասֆալտապատ **ճեմելատեղին**, թուրքի ոտ է դիպել *(ՎՍ, էջ 272):*

ՃԵՐՄԱԿԱԳԼՈՒԽ, ած. **Ճերմակ՝ սպիտակ գլուխ ունեցող՝ գլխով**:... Հնչում է **ճերմակագլուխ** ճայի հապշտապ, հուզված շաղակրատանքը *(Դար., էջ 155):*

ՃԵՐՄԱԿԱԴԵՄ, ած., **Ճերմակ՝ սպիտակ դեմքով, դեմքերը սպիտակ**: **Ճերմակադեմ** քնկոտիկները, որոնք ամբողջ օրը նմանվում են փտած ծառի գորշավուն կտորտանքի, այժմ բացում են ոսկեգույն աչիկները և բարկացած նայում ձեզ վրա *(Դար., էջ 169):*

ՃԵՐՄԱԿԱԶԱՐԴ, ած. **Ճերմակով զարդարված, սպիտակած**: Եվ հիմա Քլարիսան ուղեկցում էր իր վարչապետին տնով մեկ՝ վսեմաքայլ, շողշողուն, վեհ կեցվածքով ու **ճերմակազարդ** վարսերով *(Վուլֆ, էջ 219)*:

ՃԵՐՄԱԿԱԹՂԹԵ, ած. **Ճերմակաթղթից պատրաստված**: .... Ճանապարհներ, որ .... ձգվում էին նրանով մեկ՝ բոլոր ուղղություններով, ինչպես լուսաճերմակ զինվորական զոլավոր խտակտավի կապերը՝ շուլալելու պես պարուրելով երկրները կառավարման **ճերմակաթղթե** ձեռքով *(ԱՍ, էջ 229)*:

ՃԵՐՄԱԿԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Ճերմակ՝ կապույտ գույնի շերտերով:** Էսպեն դեռ աշխատանքի սկզբին **ճերմակակապույտ** փոքրիկ դրոշակ էր դրել .... *(Կլ., էջ 39):*

ՃԵՐՄԱԿԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ած. **Ճերմակ և վարդագույն:** Երկու հերալդիկ կատու՝ ածխասև ու **ճերմակավարդագույն**, ափսեները շրջանցելով, հեզունազ ճեմում էին սեղանին *(Դով., էջ 166):*

ՃԼԹՃԼԹԱՑՆԵԼ, չբ. **Բազմիցս ճլթացնել, ճլթալու ձայն, ճլթոց արձակել:** Նա մի ակնթարթում **ճլթճլթացնելով** միսը խփշտեց *(XX դար, էջ 449):*

ՃՂՐՏՅՈՒՆ, գ. **Ճղրտալու ձայն, ճղրտոց:** .... Ականջի տակ անսպասելիորեն հնչած մի **ճղրտյուն** ցնցեց Բենիամինին *(Բակուր, էջ 255):*

ՃՄԱԲՈՒՍԱՀՈՂԱՅԻՆ, ած. (գղտնտ.): **Ճմաբույսերով հողը պարարտացնելը**: Աշխարհի շատ երկրներում այսօր լայն տարածում ունի ճմակալման **ճմաբուսահողային** տարբերակը, որի դեպքում մշակվող խոտաբույսերի կանաչ զանգվածը պարբերաբար (15-18 սմ բարձրանալուց հետո) հնձում են և թողնում տեղում որպես կանաչ ծածկոց (*Սաֆ., էջ 103*):

ՃՅՈՒՂԱԳՈՐԾ, ած. **Ճյուղերից գործված:** Դատարկ կանգնել են մսուրները, կրնկի վրա բաց են **ճյուղագործ** դռները .... *(Շոլ., էջ 180):*

ՃՅՈՒՂԱՌԱՋԱՑՈՒՄ, գ. (բսբ.): **Ճյուղերի առաջացում:** Պտղատու տեսակների բողբոջների արթնացման և **ճյուղառաջացման** ունակությունը տարբեր է (*Սաֆ., էջ 8*):

ՃՇՄԱՐՏԱՇՈՂ, ած. **Ճշմարտությամբ շողացող:** Լևինն արդեն տեսավ նրա սիրող **ճշմարտաշող** դեմքից, որ ոչինչ դուրս չի գա **....** *(Տոլ., էջ 19):*

ՃՇՄԱՐՏԱՓԱՅԼ, ած. **Ճշմարտությունից՝ ճշմարտություն ասելուց փայլող: Ճշմարտափայլ** աչքերն ասում էին Լևինին, որ Կիտին գոհ էր իրենից .... *(Տոլ., էջ 335):*

ՃՇՏԱԴԱՏՈՂ, բ. **Ճիշտ դատող՝ մտածող:** .... Դեռ գալիս, գալիս է նա, // .... Նահապետի նետով **ճշտադատող** *(Տոն.[4], էջ 139):*

ՃՇՏՈՐԴ, գ., ած. **Ճշտում կատարող: Ճշտորդ** ինքնաթիռը հաղորդեց, որ առաջին անգամ թերաթռիչք էր .... *(Յակ., էջ 104):*

ՃՈԽԱՊԱՏԿԵՐ, ած. **Ճոխ՝ շքեղ պատկեր ունեցող:** Երկնից իջած աստղափունջ ես ձորերի մեջ,// **Ճոխապատկեր** քո երեկոն ցոլքերի մեջ *(գուս. Աշ.[1], էջ 15):*

ՃՈՃԱԶԱՆԳ, գ. **Ճոճվող զանգ:** .... **Ճոճազանգով** ժամացույցը խփում է ժամը տասներկուսը .... *(Ֆրիշ, էջ 54)*:

ՃՏԸՆՏԱՆԻՔ, գ., Ճտերի ընտանիք: Հետագայում մենք ձեռք բերեցինք Դեմիդովի գալագոնների մի ամբողջ **Ճտընտանիք ...** *(Դար., էջ 78):*

Մ

ՄԱԴԵՐԱԽՑԻԿ, գ. (մննգ.): **Ջեռուցվող փակ տարածություն մադերա գինի արտադրելու համար**: **Մադերախցիկն** իրենից ներկայացնում է շենքատարածություն, որի պատերի երկայնքով տեղադրված են շոգեջեռուցման մարտկոցներ ....*(Դասագիրք, էջ 151)*:

ՄԱԴԵՐԱՊԱՍՏԱՐԱՆ, գ. **Մադերային գինենյութի պահման՝ պահպանման վայր**:Պահորակման առաջին տարում երի-

տասարդ գինենյութը …. էգալացվել է և երկու անգամ փոխլցվել, իսկ թնդեցված գինենյութը …. դրվել է **մաղերապաստարան** 6-9 ամիս ժամկետով …. *(Դասագիրք, էջ 153)*:

ՄԱԴԵՐԱՎՈՐՈՒՄ, գ.(մսնգ.):**Մաղերա գինու տեսակի ստացում:** Ն. Բ. Կազումովը, ուսումնասիրելով **մաղերավորման** ժամանակ գոյացող նստվածքի կազմը, սահմանել է ….*(Դասագիրք, էջ 290)*:

ՄԱԴԵՐԱՑՈՒՄ, գ. (մսնգ.): **Մաղերա գինու տեսակի ստացում**: Հայաստանում **մաղերացման** համար բարձրորակ գինենյութ ստանալու նաև այլ եղանակներ են կիրառվում *(Դասագիրք, էջ120)*:

ՄԱԴԵՐԱՑՎԵԼ, բ. (մսնգ.): **Մաղերա գինու տեսակին բնորոշ հատկություններ ստանալ**: Մաղերայի համար նախատեսված խաղողի սորտերը սովորաբար հարուստ են էքստրակտիվ նյութերով և կարող են լավ **մաղերացվել** *(Դասագիրք, էջ 114)*:

ՄԱԾԿԱՆ, գ. **Մածիկ:** …. Կապարե ծովածոցից փչող սառցե քամին թափանցում էր լսարան պատուհանների կեղտոտված և մեխերով մի կերխ ամրացված, առանց **մածկանի** ապակիների ճեղքերից *(Բեկ., էջ 95)*:

ՄԱԿԱԲՈՒԾԱՎԱՐԱԿ, գ. **Մակաբույծներից առաջացող վարակ**: Խաղաղ օվկիանոսը ջրեղեն մարմին էր՝ չորս կողմից շրջապատված **մակաբուծավարակով** …. *(ՋՀ, էջ 43)*:

ՄԱԿԵՐԵՍԱՊԱՏ, գ.**Մակերեսի պատ՝ մակերես:** …. Ավելի տեսակարար կշիռ ունեցող կախված մասնիկները նստում են շրջանագծի **մակերեսապատին** *(Դասագիրք, էջ 246)*:

ՄԱԿՐՈԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Գոյապահպանական խոշոր համակարգ: Մակրոէկոհամակարգի** օրինակ կարող են համար-

վել տարածաշրջանը և անգամ ամբողջ մի մայրցամաք *(ՍԹ, էջ 10)*:

ՄԱՀԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մահ՝ սպանություն պատճառելը:** Աստված չտար, եթե մոտս ատրճանակ լիներ, ի՞նչ պիտի դուրս գար: Զուտ **մահասպանություն** *(Շոլ., էջ 323)*:

ՄԱՀԱՎԱՐՏ, գ. **Մահվան ավարտ:** Մահվան գիտակցությամբ,- մահը՝ գիտակցողի,- ապրող Ասյայի՝ նախկին ուսուցչուհու համար ի վերջո կա՞ սահմանագիծ՝ կյանքից սկիզբ առնող և՝ **մահավարտ** *(Կայարան, 2022, թ. 1)*:

ՄԱՀԵՂ, ած. **Մահվանը հատուկ՝ մահացու:** Կասկածից **մահեղ** *(Տոն.[4], էջ 47)*:

ՄԱՅԹԱՓ, գ. **Մայթեզր:** Ու ողջ աշխարհը դարձել է իմ հայրենիքը, ի՞նձ է սպասում, ո՛վ գիտե ... Երրորդ մասիվ **մայթափերին** զույգ-զույգ …. *(Նիկ., էջ 53)*:

ՄԱՅՐԱՄՏԱՆԱԼ, չբ. **Մայրամուտը վրա հասնել, արևի մայր մտնելու ժամանակը գալ: Մայրամտանում է**, ու արևն այլ գույն է ստանում, ամեն ինչ դառնում է վա՛ռ նարնջագույն .... *(Սև., էջ 124)*:

ՄԱՅՐՈՒՏ, գ. (գղտնտ.): **Մայր բույսերի՝ ծառատեսակների դաշտ**: **Մայրուտին** հատկացված հողամասը պետք է լինի հարթ, քամուց պաշտպանված .... (*Սաֆ., էջ 64*):

ՄԱՆԴԱՏԱԶՐԿԵԼ, բ. **Մանդատից զրկել:** ….Ում է **մանդատազրկում** *(Հմգ, armlur.am)*:

ՄԱՆԴԱՏԱԶՐԿՈՒՄ, գ, **Մանդատից զրկելը:** «Մանդատազրկում» կամ «հաճելի գործընթաց». ՔՊ-ականներն ուզում են «մենակ մնալ» ԱԺ-ում *(Հմգ, news.5tv.am)*:

ՄԱՆԿԱՀՈԳԻ, ած. **Մանկան՝ մանկական հոգի ունեցող՝ հոգով:** …. Իր աջին է, նստեց …. Սամսոնը, բաս երգող գրեթե **մանկահոգի** …. հսկա …. *(Սուր., էջ 126):*

ՄԱՆՈՒՇԱԿԱԹՈՒՐՄ, գ. **Մանուշակից ստացված թուրմ**: …. Անզուգական զգացողությունների և **մանուշակաթուրմի** շունչ էր զգացվում այդ հիանալի ձեղնահարկից *(Ժիռնո, էջ 158):*

ՄԱՆՈՒՇԱԿԱՄՈԽՐԱԳՈՒՅՆ, ած. **Մանուշակագույնին տվող մոխրագույն:** [Ակնոցը] ...., որն այժմ գորշ է, ինչպես մոխիրը, **մանուշակամոխրագույն** …. *(Ֆրիշ, էջ 33):*

ՄԱՆՐԱԿՏՈՐ, գ. **Մանր կտոր**: … Քյուֆթա էին տուն բերում, որն այն ժամանակ հավի ու գառան մսի **մանրակտորներով**, սոխով ու ձավարով էին պատրաստում …. *(Անգլ., էջ 78):*

ՄԱՆՐԱՀՈՂԱՅԻՆ, ած.**Մանրահողի նման, մանրահողին բնորոշ:**Խաղողի և պտղատու այգիները տեղադրված են Մեղրի, Նյուվադի և Շվանի գետակների հովիտներում, որոնք մեծ քանակությամբ **մանրահողային** մասնիկներով ալյուվիալ հողեր ունեն *(Դասագիրք, էջ 10)*:

ՄԱՆՐԱՔԱՆԴԱԿՎԵԼ, բ. **Կերտվել, ստեղծվել:** Տպավորիչ է իշխան Շառոյի՝ ակնթարթի մեջ **մանրաքանդակվող** կերպարը՝ որպես Սասնա պատվական մի զարմ *(ԳԹ, 22.04.2022):*

ՄԱՆՐԷԱՅԻՆ, ած. **Մանրէներից բաղկացած:** Տարբերում են բուսական, կենդանական, սնկային և **մանրէային** համակեցություններ *(ՍԹ, էջ 8):*

ՄԱՇԱԿԱՐԱՆՈՑ, գ., **Մաշիկ կարող արհեստանոց**… Ավելի խղճուկ էին **մաշակարանոցները** …. *(Հակ., Սիմ., էջ 60):*

ՄԱՌԱԽԼԱՔՈՂ, գ. **Մառախուղի շղարշ:** …. Ծով ու ցամաք **մառախլաքողը** ծածկի *(ԳԹ, 22.04.2022):*

ՄԱՌԱՆԱՀԱՐԿ, գ. **Որպես մառան ծառայող ներքնահարկ**: ….Ոչինչ չկար, որ քողարկեր գորշ մանրաքարով շարված պատերը, **մառանահարկի** վրա կախ ընկած, լողակագույն ներկաբծերով պատշգամբը …. *(ՎՍ, էջ 160):*

ՄԱՍՆԱՏԻՉ-ՄԱՄԼՈՒՄ, գ. **Մասնատել-մամլելը:** Տե՛ս ԱՎՏՈԲԵՌՆԱԹԱՓԻՉ-ի օրինակը:

ՄԱՏԱՆԻՔԱՎՈՐ, ած. **Մատանիավոր, մատին մատանի կրող:** …. **Մատանիքավոր** բարձրահասակ ազնվական *(Տոլ., էջ 306):*

ՄԱՏԻՏԱՍՐԻՉ, գ. **Մատիտ սրելու սրիչ**: Շատերը չէին համարձակվի անգամ **մատիտասրիչ** կուլ տալ *(ԱԻՊ[1], էջ 201):*

ՄԱՏՆԱՄՈՄ, գ. (փխբ.): **Մոմի նման բարակ մատներ:** Երկու **մատնամոմ** հանգչում են այրվող շուրթերիս վրա *(ՎՀ[2], էջ 21):*

ՄԱՐԴԱԿԵՐՊԱԿԱՆ, ած. **Մարդուն հատուկ, մարդկային հատկանիշներ ունեցող:** Այն մեկնաբանվում էր մերթ որպես **մարդակերպական** գծերից զուրկ աստվածություն …. *(Շախ., էջ 203):*

ՄԱՐԴԱԿԵՐՊԱՅԻՆ, ած. (փխբ.): Այստեղ՝ **ոչ գիտական, հասարակ, պարզ**: Բայց Գիբարյանը դեն էր գցում չափից դուրս **մարդակերպային** մեկնաբանությունները …. *(Լեմ, էջ 223):*

ՄԱՐԴԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ, ած. **Մարդաճանաչողության, մարդաճանաչողությանը հատուկ՝ վերաբերող: ….** Շարժուձևի վարպետության տիրապետումը կզարգացնի ձեր մեջ **մարդաճանաչողական** արվեստը *(Տան., էջ 10):*

ՄԱՐԴԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Մարդաճանաչություն:**

ՄԱՐԴԱՆՄՈՒՇԻ ԳԱԼ, գ. **Մարդու տեսք ստանալ, մարդ դառնալ:** Նոր-նոր է **մարդանմուշի գալու**, ծնվելու-մեծանալու, նո՛ր-նո՛ր է սովորելու զենքից օգտվելը .... *(Նիկ., էջ 47):*

ՄԱՐԴԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Մարդու տեսք ունեցող՝ տեսքով:** Տե՛ս ԿԵՆԴԱՆԱՏԵՍՔ-ի օրինակը:

ՄԱՐԵԼԱՄՈՏ, ած. **Մարելու՝ հանգչելու մոտ, մարելուն քիչ ժամանակ մնացած: Մարելամոտ** մոմ *(Տոլ., էջ 444):*

ՄԱՐԶԱՏԱԲԱՏ, գ. **Մարզական՝ սպորտային տաբատ՝ շալվար:** Սրբվեցի, հագա **մարզատաբատս** ու ծխախոտ վառեցի *(Դով., էջ 156):*

ՄԱՐՄՆԱՀՈՏ, գ. **Մարմնի հոտ:** .... Անկողինը հավաքելիս բարձերը թափ տալիս ամուսնու **մարմնահոտը** կզգա ու կժըպտա *(Սև., էջ 20):*

ՄԱՐՄՆԱՄԱՇԿՈՂ, ենթ. դերբ. (բնստ.): Տե՛ս ԱՆՈՒՐԵՔՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը *(Տոն.[4], էջ 18):*

ՄԱՐՄՆԱՄԵՐՁ, ած. (բնստ.): **Նյութեղեն՝ ոչ հոգևոր**: Ամեն բան է այս երկրում մոտեցել իր ավարտին՝ // Ե՛վ **մարմնամերձ** մեր կյանքը, և՛ ուծացումը հոգու.... *(Տոն.[2], էջ 9):*

ՄԱՐՄՆԵԼ, նբ. **Մարմնի վրա քաշել, հագնել:** Ապա հնչում էր իմ պարի կանչը: Ու ... հենց լսում էի, հանդերձարանում արագ-արագ **մարմնում** էի պորտապարի հատուկ շորերիցս որևէ մեկը .... ու ելնում սրահ, պարում էի անհոգնել .... *(Նիկ., էջ 101):*

ՄԱՐՋԱՆՈՐՍ, գ. **Մարջան՝ բուսատ կենդանու կրացած մարմիններից գոյացած քար որսացող՝ ծովային հատակից հավաքող**: Արդեն հաստատ է՝ ես ոչ թե երաժիշտ, **մարջանորս**

եմ դառնալու: *(Անգլ., էջ 36)* .... Ես աշխատելու եմ հույն **մարջանորսների** հետ... *(Անգլ., էջ 32):*

ՄԱՐՏԱՀՐԱՎԻՐԱԲԱՐ, մկբ. **Ինչպես մարտահրավերի ժամանակ, մարտահրավերի նման: ....** Ծոցից հանեց սև, դժգունորեն փայլող մաուզերը, շարունակեց նույն կերպ ուրախ ժպտալով, **մարտահրավիրաբար** նայելով կաշվի թմբաձև ծալքի ետևում թաքնված իր անշարժ աչքով *(Շոլ., էջ 223):*

ՄԱՐՏԱՔԼՈՐ, գ. **Աքլորամարտին մասնակցող աքլոր**: Արվեստը տուն պահելու փող չէր բերում, և նա իր եկամուտը մեծացնում էր ցեղական ճարպիկ **մարտաքլորներ** բուծելով *(ԱԻՊ[1], էջ 219):*

ՄԱՑԱՌԱՇԻՎ, գ. (գղտնտ.): **Փշոտ թփաբույսի՝ մացառի շիվ**: Հիմքի մասերից մայիսին առաջանում են բազմաթիվ **մացառաշիվեր** (*Սաֆ., էջ 57*):

ՄԱՑԱՌԱՊԱՏՆԵՇ, գ. **Մացառներից կազմված պատնեշ**: .... Էտում էին վանքերի **մացառապատնեշները** *(ԹՎ, էջ 70):*

ՄԱՔՐԱՇԻՏԱԿ, ած. **Մաքուր և շիտակ:** Իրիկուն է, տուն ես բերում// հանդում գտած մի արահետ՝// **մաքրաշիտակ** իր աղբյուրով *(ՎՀ[1], էջ 155):*

ՄԳԱՍԵՎ, ած. **Մուգ և սև**: Տե՛ս ԵՐԿՆԱՃԵՐՄԱԿ-ի օրինակը:

ՄԵԳԱՏՎՅԱԼ, գ. **ՏՏ ոլորտի եզրույթ:** Կոնֆերանսի ընթացքում քննարկվեցին արհեստական բանականության, **մեգատրվյալների** դերը կայուն զարգացման մեջ և կիբեռանվտանգության թեմաները *(ՀՀ, 1.04.2019):*

ՄԵԴԱԼՎԵԼ, բ. (խսցկ.): **Մեդալ ստանալ՝ պարգևատրվել:** Պատերազմին մասնակցել են իբրև, հիմա էլ **մեդալվում են** *(Հմց, iravunq.am):*

ՄԵԶՈԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Գոյապահպանական փոքր համակարգ:** Որպես **մեզոէկոհամակարգ** կարող է դիտվել առանձին գետահովիտը.... *(ՍԹ, էջ 10)*:

ՄԵԼԱՆԺԵ, ած. **Մելանժից պատրաստված՝ կարված**: .... Մոխրագույն **մելանժե** լայն տաբատով *(ԱԻՊ[1], էջ 168):*

ՄԵԽԱՁԵՎ, ած. (պատմ.): **Մեխի ձև՝ տեսք ունեցող:** Գծի սկիզբը դառնում էր սեպաձև, իսկ գիծը ստանում էր մեխի տեսք (այստեղից էլ արաբական գրականության մեջ սեպագրի «**մեխաձև**» անվանումը ....) *(Մով.[2], էջ 12):*

ՄԵԾԱԿԱՐԻՔ, գ. ած. **Մեծ կարիք՝ ցանկություն՝ տենչանք:** Հասուն ծառ էի և այն հուզմունքը, որն ապրում էի պարելիս կին ծնվելու, կյանք արարելու և սերը վայելելու **մեծակարիքն** էր *(Նիկ., էջ 22):*

ՄԵԾԱԿՏՈՒՑ, ած. **Մեծ կտուց ունեցող:** Տոտին պատկերում էին այդ թռչունի գլխով և անվանում էին **«մեծակտուց»** *(Շախ., էջ 145):*

ՄԵԾԱՔԱՇ, ած. **Մեծ քաշ՝ այստեղ արժողություն, արժեք ունեցող:** Տե՛ս ՀՈՎԱՆԱՎՈՐԱԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ-ի օրինակը:

ՄԵԿՆԱԹՌԻՉՔԱՅԻՆ, ած. **Թռիչքի մեկնարկի:** Ինքնաթիռներից մեկը .... ինքնաթիռը դուրս էր բերում դեպի հորիզոն սլացող **մեկնաթռիչքային** շերտ *(Բեեկ., էջ 320):*

ՄԵՂԱՎՈՐԱՆԱԼ, չբ. **Մեղավոր դառնալ:** Ինչքան ու ինչպես, որ դու **մեղավորացար** .... *(Նիկ., էջ 118):*

ՄԵՂԱՎՈՐՈՒՀԻ, գ. **Մեղավոր՝ մեղք գործած կին՝ աղջիկ:** Իրականում Դյուման անմիջապես հրաժարվեց **մեղավորուհուն** նոր կյանքի համար վերակենդանացնելու գաղափարից *(Մոր., էջ 278):*

ՄԵՂԵԴԱԶՈՒՐԿ, ած. **Մեղեդայնությունից զուրկ:** …. Ընթացքի խառնաշփոթ արագությունը, **մեղեդազուրկ** երաժշտության՝ ուղեղին անդադար միկրոցնցումներ մատուցող ռիթմը լրացնում են սև գործի մնացյալ մասը *(Կայարան, 2014, թ. 3):*

ՄԵՂԵՍԻԿԵ, ած. **Մանուշակագույն**: Աչքերը մթնեցին՝ երկնագույնից դառնալով **մեղեսիկե** *(Ուայլդ, էջ 40):*

ՄԵՂՄԱԾԻԾԱՂ, մկբ. **Մեղմ ծիծաղով**: …. **Մեղմածիծաղ** բացատրեց ներողամտորեն *(ՋՀ, էջ 160)*:

ՄԵՂՄԱՃԿՈՒՆ, ած. **Մեղմ և ճկուն, մեղմորեն ճկվող**: …. Դրանից հետո նրա վարդապետությունը դույզն-ինչ **մեղմաճկուն** դարձավ *(Ակ, էջ 265)*:

ՄԵՂՄԱՊԱՐ, գ. **Հանդարտ պար:** Խավարին տվող կարմիր էր լույսը, նվագը **մեղմապարի** էր…. *(ՎՍ, էջ 199):*

ՄԵՂՍԱԲԵՌ, ած. **Մեղքերով ծանրաբեռնված:** Ինչ պետք է անեին այս աշխարհում ցանկասեր տարփանքը, …. և **մեղսաբեռ** մարմինների երջանկախոստում հրճվանքը *(Ակ, էջ 71)*:

ՄԵՂՎԱՓՉԱԿ, գ. **Մեղուների փչակ**: …. Այս փոքր, հարմարավետ քաղաքում, ուր կային մոխրագույն ձիթենիների պուրակներ և անհամար **մեղվափչակներ** …. *(Պար., էջ 8):*

ՄԵՂՐԱԽՈՍՈՒՆ, ած. (փխբ.): **Քաղցր խոսելու ունակություն ունեցող:** Տե՛ս ՀԱՐՄՆԱՄՈՄ-ի օրինակը:

ՄԵՂՐԱՊՏՈՒՂ, ած. **Մեղրի նման քաղցր՝ անուշահամ պտուղ տվող:** Լեռներ, պահեք ձեր լանջին// **Մեղրապտուղ** էս

այգին.// Սիրուս մատներն են կպել՝// Նռնաաղերն ականջին *(գուս. Աշ.[3], էջ 86):*

ՄԵՂՐՈՐՍՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.) **Մեղրի որս անելը, վայրի մեղր որոնելը:** Ու այս բոլորը թռչնորսության ու նոր **մեղրորսության** հետ լցնում էր Լևինի ամբողջ կյանքը .... *(Տոլ., էջ 500):*

ՄԵՂՔԱՏԵՐ, գ. **Մեղքի՝ մեղքերի տեր, մեղք՝ հանցանք ունեցող:** Որովհետև հասկանում ես վերջապես, որ// բոլորն անմեղ են, **մեղքատերը** միայն դու ես *(ՎՀ[1], էջ 37):*

ՄԵՆԱԵԼՈՒՅԹ, գ. **Մենակատարում:** .... Իսկ նրա **մենաելույթը** սովորաբար համեմված էր լինում հումորային արտահայտություններով.... *(Ազն., էջ 80):*

ՄԵՆԱԽՈՐՔ, գ. **Մեկ՝ միայնակ խորք:** Ուր նա իր **մենախորքի** մեջ ներկայացնում է// տիեզերական Ամբողջը *(ՎՀ[1], էջ 256):*

ՄԵՆԱԿՈՒՀԻ, գ. **Մենակ աղջիկ՝ կին:** Աչքերիդ մեջ լալիս էր մի կապույտ մանուշակ,// մենակ աղջիկ,// **մենակուհիս...** *(ՎՀ[2], էջ 44):*

ՄԵՆԱՄԵՂԵԴԻ, գ. **Առանց բառերի մեղեդի: Մենամեղեդի.** Սիրո դիմաց սեր պահանջելը եսասիրություն է// անփոխադարձ *(ՎՀ[2], էջ 225):*

ՄԵՆԱՆՇԱՆ, գ. (պատմ.): **Մեկ նշան ունեցող նշան:** .... Որոնք կրում են և՛ սիմվոլիկ **մենանշան,** և՛ բազմանիշ գրություն *(Մով.[2], էջ 70):*

ՄԵՆԱՇՆՈՐՀԱԲԱՐ, մկբ., **Որպես մենաշնորհ**: .... Էլեկտրական գծերի անցկացման ու դրանց շահագործման իրավունքը **մենաշնորհաբար** տրամադրել միայն «Ամպեր» ընկերությանը... *(Հակ., Սիմ.,էջ 143):*

ՄԵՆԱՎԱՐՁ, գ. **Մի հոգուց գանձվող վարձ**: ... Պետության ձեռքին մնացել էին Դալմայի և Անգլիական այգիներից բացի՝ միայն 8-10 այգի, որոնք բոլորը տրված էին **մենավարձով** *(Հակ., Սիմ.,էջ 105):*

ՄԵՆԱՏՆՏԵՍԱԲԱՐ, մկբ. **Մենատնտես լինելով, ինչպես մենատնտեսը, մենատնտեսի նման:** .... Առաջ, երբ նա դեռ **մենատնտեսաբար** էր վարում տնտեսությունը, նա իր հացը չէր քաղհանում *(Շոլ., էջ 423):*

ՄԵՋՔԱՏԵՂ, գ. **Մեջքի տեղը՝ մեջքը ծածկող մասը:** .... Երիտասարդները հագել էին ազնվականորեն չկոճկված համազգեստներ՝ ցած **մեջքատեղերով** ու լայն ուսերով .... *(Տոլ., էջ 303):*

ՄԵՌԱՄԱՐՄԻՆ, գ. **Մեռած մարմին, հանգուցյալ:** Դեռ .... հույս ունի, որ կվերականգնվեն, ի հայտ կգան նրանց անմոռաց-անգո աճյունները, արդեն ոչ որպես մոռահար **մեռամարմին**, այլ՝ նոր մարդ դարձած, վերածնված, վերագտնված *(Նիկ., էջ 76):*

ՄԵՏԱԳԻՆԵԹԹՈՒ, գ. (մսնգ.): **Պոլիմերների խառնուրդ, որն օգտագործվում է գինեգործության մեջ գինին կայունացնելու նպատակով**: .... Գինեգործական շատ երկրներում **մետագինեթթու** են օգտագործում: Սահմանվել է, որ **մետագինեթթուն** ոչ միայն կայունացնում, այլև փոփոխում է գինիների և հյութերի համային որակները *(Դասագիրք, էջ 277):*

ՄԵՏԱԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. (հոգեբ.): Նրա բացահայտումը ընդգծում է հուզական ինտելեկտի դերը որպես **մետակարողություն** .... *(ԴԳ, էջ 131):*

ՄԵՏԱՂԱԴՈՒՌ, ած. **Մետաղյա դռնով, դուռը մետաղյա: Մետաղադուռ** փոքրիկ խցում կաթսաների աղմուկը խլացած էր *(Դով., էջ 106):*

ՄԵՏԱՂԱԿԼԱՆԻՉ, ած. **Շատ մետաղներ ծախսող**: ... Մասնագիտանում էր ... ոչ **մետաղակլանիչ** ճշգրիտ մեքենաշինության և սարքաշինության արտադրանքի արտադրության գրծով... *(Հակ., Սիմ.,էջ 265):*

ՄԵՏԱՂԱՀՈՏ, գ. **Մետաղի հոտ:** Տե՛ս ԽԱԿԱՀՈՏ-ի օրինակը:

ՄԵՏԱՂԱՀՈՒՆՉ, ած. **Մետաղի նման հնչող, մետաղի ձայն հանող, մետաղահնչուն:** Օդը զնգում էր .... շչակների .... Միալար վայնասունով, որին ավելանում էր նաև Մոսկվայից հեռարձակվող վայունը՝ **մետաղահունչ** ճարճատյուններով դղրդացող բարձրախոսներից *(Սուր., էջ 141):*

ՄԵՏԱՂԱՄՇԱԿԻՉ, ած. (տեխ.): **Մետաղ մշակող**: **Մետաղամշակիչ** գերճիշտ հաստոցների արտադրությամբ Հայաստանը գրավում է առաջին տեղն ամբողջ երկրում *(Հակ., Սիմ., էջ 277):*

ՄԵՏԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. (հոգեբ.): **Ինքնաճանաչողություն**: Հոգեբաններն օգտագործում են **մետաճանաչողություն** ծանրակշիռ եզրույթը, սեփական մտքերի գիտակցումը և մետատրամադրություն հասկացությունը....*(ԴԳ, էջ 84):*

ՄԵՏԱՔՍԱՀԱՆԴԵՐՁ, ած. **Մետաքսյա հանդերձանքով:** Էվըլինը լրիվ հալից ընկել էր, ասաց Հյուն, իր խնամված, առնական, գեղեցիկ, **մետաքսահանդերձ** մարմնով .... *(Վուլֆ, էջ 9):*

ՄԵՏԱՔՍԱՑԱՆՑ, գ. **Մետաքսե ցանց:** .... Ողողում էր .... պատում նրան նուրբ **մետաքսացանցով** .... *(Վուլֆ, էջ 137)*:

ՄԵՐԿԱՊԱՐՈՐԴ, գ. **Մերկապար կատարող:** Ամուսինները՝ **մերկապարորդի** զույգ, նորություն էին ինձ համար .... *(Նիկ., էջ 103)*:

ՄԵՐԿԱՑՎԵԼԻՔ, ած. **Մերկացման՝ բացահայտման ենթակա:** Տե՛ս ԱՄՐՈՑԱՆՄԱՆ-ի օրինակը:

ՄԵՔԵՆԱՄԱՄԼՈՒՄ, գ. (մսնգ.): **Մեքենայով՝ սարքով մամլելը: Մեքենամամլման** բաժանմունքում են 4 ռեակտորներ հյութը մշակելու համար ....*(Դասագիրք, էջ 255)*:

ՄԹՆԱԹԵԼ, գ. (փխբ.): **Համատարած մթություն:** Մենությունը դառնում է **մթնաթել,** որով Ադրիանան կծկում է օրերը *(ՎՀ[1], էջ 259)*:

ՄԹՆԱՇՈՒՆՉ, ած. (փխբ.): **Մութով պատված, մռայլ:** Խոր աշուն է, **մթնաշունչ**, մուժ է կախվել իմ սրտից *(գուս. Աշ.[3], էջ 168)*:

ՄԻԱԿՈՏՈՇ, ած. **Մեկ կոտոշ ունեցող, մեկ կոտոշով:** .... Արդյոք աֆրիկյան ռնգեղջյուրը **միակոտոշ** է .... *(XX դար, էջ 293)*:

ՄԻԱԿՈՏՈՇՈՒԹՅՈՒՆ, գ. **Միակոտոշ լինելը, մեկ կոտոշ ունենալը: Միակոտոշությունը** աֆրիկյանի՞ն է բնորոշ, թե՞ ասիականին .... *(XX դար, էջ 309)*:

ՄԻԱՌՃ, ած. **Նույն՝ նույնատեսակ ոճով կատարված:** .... Մեր ուշադրությունը գրավեցին **միառճ** մանրանկարներ ունեցող երեք ձեռագիր ավետարան .... *(Հակ., էջ 79)*:

ՄԻԱՍՈՐՏ, ած. **Միայն մեկ տեսակի («սորտի»)**: .... Խաչաձև փոշոտվողներ են, և միասորտ տնկումների դեպքում այդ ծառերը գրեթե բերք չեն տալիս (*Սաֆ., էջ 88*):

ՄԻԱՍՏՂԱՆԻ, ած. **Հյուրանոցների որակը նշող պայմանական նշաններից ամենացածրը: Միաստղանի** հյուրանոց էր շատ փոքր ընդունարանով ... *(ԱԻՊ[1], էջ 146):*

ՄԻԿՐՈԳՈՏԻ, գ. **Փոքր գոտի**: .... Գինենյութերում հիմնական բաղկացուցիչների պարունակության հարցում տարբերություն է դիտվում անգամ այն դեպքում, երբ վերամշակման է ստացվում նույն շրջանի, բայց ուրիշ **միկրոգոտիների** միևնույն խաղողի սորտը *(Դասագիրք, էջ 119)*:

ՄԻԿՐՈՀՈՍՔ, գ. **Շատ փոքրիկ, աննշան հոսք**: Մինչև հոսքը (կամ ավելի փոքր՝ **միկրոհոսքը**) մի վիճակ է, որում ժամանակ առ ժամանակ բոլորս էլ հայտնվելու ենք .... *(ԴԳ, էջ 141):*

ՄԻԿՐՈՄԱՆՐԷ, գ. **Շատ փոքր մանրէ:** Այդ նպատակով ընտրում են խմորման ժամանակ լավ արդյունքներ ցույց տված և **միկրոմանրէներով** չաղտոտված ակրատոֆորների նստվածքները .... *(Դասագիրք, էջ 196)*:

ՄԻԿՐՈՄԱՆՐԷԱՅԻՆ, ած. **Շատ փոքր մանրէին հատուկ:** Նպատակահարմար է համարվում խմորիչային նստվածքների բազմաթիվ օգտագործումը նրանց **միկրոմանրէային** ստուգման պարտադիր պայմանով *(Դասագիրք, էջ 196)*:

ՄԻԿՐՈՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ, գ. **Փոքր, քիչ չափով վարկավորում**: Ակտիվները մեծացվելու էին՝ ավելի քիչ կենտրոնանալով գաղթականներին տրվող անմիջական նվերների վրա և ավելի շատ՝ **միկրովարկավորման** *(ՋՔ, էջ 216):*

ՄԻՆՉԱՂԵՏՅԱՆ, ած. **Մինչև աղետը եղած:** Միայն հատուկ գործերում են նկարագրվում հայերի ու թուրքերի **մինչաղետյան** հարաբերությունները .... *(Կայարան, 2015, թ. 4):*

ՄԻՆՉԱՅԲԲԵՆԱԿԱՆ, ած. (պատմ.)։ **Այբբենականին նախորդած։** Առաջավոր Ասիայում գրի զարգացման սկզբնական, **մինչ այբբենական** փուլերի մասին կա մեծածավալ գրականություն … *(Մով.[2], էջ 10)։*

ՄԻՆՉՇՈՒՄԵՐԱԿԱՆ, գ. (պատմ.)։**Մինչև շումերները (հնագույն ժողովուրդ հարավային Միջագետքում)։** …. Այն տարբերվում էր **մինչշումերական,** հինեգիպտական և չինական գրերում *(Շախ., էջ 82)։*

ՄԻՆՉՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ, ած. (պատմ.)։ **Վաղբրոնզեդարյանին նախորդող։** Նշանագրեր **մինչվաղբրոնզեդարյան** պեղածո իրերի վրա *(Մով.[2], էջ 23)։*

ՄԻՆՉՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ած. (պատմ.)։ **Մինչև փիլիսոփայության, որպես գիտության ձևավորվելը։** Դրա գաղափարական ակունքները եղել է մարդկանց **մինչփիլիսոփայական** գիտակցությունը …. *(Շախ., էջ 76)։*

ՄԻՋԱԿԱՃ, ած. (գղտնտ.)։ **Միջակ՝ միջին չափով աճ ունեցող՝ աճող**։ Բացի նշվածներից, այսօր Հայաստանում օգտագործում են խնձորենու ցածրաճ (Պարադիսկա և Մարգախընձոր) և **միջակաճ** (Դասեն) ձևերի վեգետատիվ ճանապարհով աճեցրած սերմնաբույսերը (*Սաֆ., էջ 61*)։

ՄԻՋԽՄԲԱՅԻՆ, ած. **Խմբերի միջև առաջացող՝ առկա։ Միջխմբային** կոնֆլիկտներ *(Տան., էջ 257)։*

ՄԻՋԾԱՌԱՅԻՆ, ած. **Ծառերի միջև ընկած**։ Ծառի բնի մոտ, **միջծառային** կողմերում 15-20 սմ խորությամբ ակոս են փորում …. (*Սաֆ., էջ 58*)։

ՄԻՋՃԱԿԱՏԱՅԻՆ, ած. (մարզ)։ **Մարզական տարբեր ճակատների՝ խմբերի միջև տեղի ունեցող՝ եղող։** «Բազե» համահայ-

կական երիտասարդական հավաքում շարունակվում են ներ-ճակատային և **միջճակատային** մրցույթները *(Հմգ, armenpress.am):*

ՄԻՋՆԱԹԱՓԱՆՑ, մկբ. **Ներս թափանցող**: Մովսեսը **միջ-նաթափանց** նայեց իշխանի գաղտնախորհուրդ աչքերին .... *(Կայարան, 2014, թ. 3):*

ՄԻՋՆՈՐԴԱՆՅՈՒԹ, գ. **Միջնորդ համարվող նյութ**: .... **Միջնորդանյութերի** ներզատումը արյան մեջ ապահովում է է-ներգիայի բավականաչափ ուժգին մղումը.... *(ԴԳ, էջ 35):*

ՄԻՋՇԱՐՔ, գ. **Շարքամիջյան տարածք**: .... Անհրաժեշտ է ծառերի **միջշարքերում** խորախառնուրդի ցանք կատարել .... (*Սաֆ., էջ 84*):

ՄԻՐԱԺԱԿԵՐՊ, ած. **Միրաժին՝ ցնորքին նմանվող**: Արևել-քում **միրաժակերպ** Վոուլդներն են *(Աթք., էջ 422):*

ՄԿՆԱՀԱՄ, գ. (մնգ.): **Գինու հիվանդություն, որը բնորոշ-վում է մկան կղանքին հատուկ համով և հոտով:** Կաթնաթթվա-յին խմորումը հաճախ ուղեկցվում է մանիտային, պրոպիոնա-յին խմորումով և **մկնահամի** երևան գալով *(Դասագիրք, էջ 253):*

ՄԿՆԱՀԱՄՈՒԹՅՈՒՆ, գ.Բացատրությունը օրինակում: Հիվանդություն, որ բնորոշվում է գինու մեջ մկան կղկղանքի տհաճ համի երևան գալով ....*(Դասագիրք, էջ 254)*:

ՄԿՐԱՏԱՊՈՉԻԿ, գ. **Ծիծեռնակներին տրվող անվանումը բաց մկրատաձև պոչ ունենալու պատճառով:** .... Ինչ գայթակ-ղություն է ստեղծել բնությունը նրանց [մժեղների] համար, որ օդ բարձրանան ու լցնեն անկուշտ **մկրատապոչիկների** ստա-մոքսները *(Բակուր, էջ 116):*

ՄՂՁԱՎԱՆՋԵ, ած. (փխբ.) **Երազային:** Մնացյալը ժամանակավորապես հավերժող ծիածաններ էին **մղձավանջե** կրկներգերով *(Նիկ., էջ 22):*

ՄՆՋԱՇԱՐԺՈՒՄ, գ. **Շարժում մունջ՝ առանց ձայն հանելու:** Սկզբում ես մատներով շուրթ-ականջի, ... ապա ժխտողական **մնջաշարժումն** արեցի, որ կարծի, թե ի ծնե խուլուհամր եմ .... *(Նիկ., էջ 135):*

ՄՇՈՒՇԱՉՅԱ, ած. **Մշուշոտ աչքերով, աչքերը մշուշոտ:** ... Տեսա քեզ, լավ տղա, փոքրիկ, **մշուշաչյա**, սունկ հավաքող տղա .... *(Նիկ., էջ 99):*

ՄՇՏԱՀԱՍՏԱՏ, ած. **միշտ առկա՝ հավերժական**: ...., անմահ Աստվա՛ծ, **մշտահաստատ** իմաստություն, որքան շատ ու կարևոր փոփոխություններ տեղի ունեցան քո կյանքում *(Պար., էջ 39):*

ՄՇՏԱՀՊԱՐՏ, ած. **Մշտապես հպարտ:** Այսօրինակ անհատապաշտությունը վայելք չէ, մշտատև պայքար է .... **մշտահրպարտ** կարեկցանքի գագաթնակետին *(Ակ, էջ 409)*:

ՄՇՏԵՌԱՆԴ, ած. **Մշտապես եռանդուն:** Մեր **մշտեռանդ** Արծրուն Ավագյանը *(ԳԹ, 08.04.2022):*

ՄՈԼԱԽՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Մոլախոտով լցված, առատ լինելը:** ....**Մոլախոտվածության** աստիճանի նվազումն ուղղակիորեն նպաստում է բերքի ծավալի աճին *(Մել., էջ 139)*:

ՄՈԼԱԽՏ, ած. **Մոլի՝ սաստիկ հիվանդ:** .... Եվ վարիչներիդ, որ **մոլախտ**, հուսատ՝ // Քեզ լոկ խոսքեր են ստում երգեցիկ // Ցու՛յց տուր հայացքդ՝ փայլով սուր-բահի .... *(Տոն.[4], էջ 76):*

ՄՈԼԵԿԻՐՔ, ած. **Բուռն կրքով կատարված՝ իրագործված:** .... Աննան ամենայն մանրամասնությամբ հիշեց երեկվա հաշտության տեսարանը և նրա **մոլեկիրք** շոյանքը *(Տոլ., էջ 440):*

ՄՈԽՐԱԳՈՐՇԱՎՈՒՆ, ած. **Մոխրագույնին տվող գորշավուն:** Կոճղերն ու ճյուղերը սևին էին տալիս գունատ, **մոխրագորշավուն** ամպերի ֆոնին.... *(Դով., էջ 216):*

ՄՈԽՐԱԵՐԿՆԱԳՈՒՅՆ. ած., **Մոխրի գույնի նման երկնագույն**: Երկնքի կանաչ ֆոնի վրա **մոխրաերկնագույն** պտերի պես սավառնում էին փոքրիկ, սիրունիկ ճանճորսները… *(Դար., էջ 21):*

ՄՈԽՐԱԿԱՊՏԱՎՈՒՆ, ած. **Մոխրակապույտին տվող:** Վաղորդյան այդ ժամին ծովը **մոխրակապտավուն** էր *(Վագ., էջ 21):*

ՄՈԽՐԱԿԱՐՄԻՐ, ած. **Մոխրագույն երանգով կարմիր:** Լուսաճաճանչ թևերով **մոխրակարմիր** արծիվ *(Սուր., էջ 230):*

ՄՈԽՐԱՊԱՏԵԼ, նբ. **Մոխրով պատել, վրան մոխիր լցնել:** Շամանը քարե հաստ սալը **մոխրապատեց** …. *(Բակուր, էջ 270):*

ՄՈԽՐԱՍԵՎ, ած. **Մոխրագույն սև:** …. Երևում էր այրված անտառի ամբողջ տարածքը **մոխրասև**-սրճագույն մի ընդարձակ տխրություն բնության ծոցում …. *(Սուր., էջ 244):*

ՄՈԽՐԱՍՊԻՏԱԿ, ած. **Մոխրագույնին տվող սպիտակ**: .... Որքա՜ն էր նա սիրում դուրս ու ներս անող **մոխրասպիտակ** ցայգաթիթեռներին .... *(Վուլֆ, էջ 19)*:

ՄՈԽՐԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ, ած. **Մոխրագույնին տվող սպիտակ**: Վարակված պտուղը փակվում է, մակերեսին գոյանում են շրջանաձև դասավորված **մոխրասպիտակավուն** սպորակույտեր (*Սաֆ., էջ 133*):

ՄՈԽՐԱՐԾԱԹԱՎՈՒՆ, ած. **Արծաթագույնին տվող մոխրագույն:** Հենց այդպես՝ չորսով կանգնած զրուցում էինք վելասկեսյան **մոխրարծաթավուն** եթերում *(ԹՎ, էջ 27)*:

ՄՈՂԵՍԱՇԱՏ, ած. **Մոդեսներով առատ**: Ընտանիքից մեկ-երկու հոգի իրար գլուխ էին հավաքվում՝ բակի հեղձուկ ու **մոդեսաշատ** անկյուններում .... *(Ռուշդի, էջ 116)*:

ՄՈՄԱԿԵՐՊ, ած. **Մոմի կերպարանքով: Մոմակերպ** մարդը ոտքի ելավ .... *(ԿՎ, էջ 30)*:

ՄՈՄԱՆՄԱՆ, ած. **Մոմի նմանություն, արտաքին տեսք ունեցող**: Դորիանը թեթևակի դողալով նայեց իր սպիտակ **մոմանման** նուրբ մատներին և շարունակեց կարդալ .... *(Ուայլդ, էջ 228)*:

ՄՈՄԱՊԱՏԿԵՐ, գ. **Մոմից պատրաստված մոմագույն պատկեր**: Ակամա նայեց անշունչ դիակին: Որքան խաղաղ էր: Մահվան ինչ սոսկալի սպիտակություն էր իջել երկար ձեռքերին: Նա **մոմապատկերի** տեսիլքի էր նման *(Ուայլդ, էջ 223)*:

ՄՈՄԼԱԹԱԿԱԶՄ, ած. **Մոմլաթե կազմով: Մոմլաթե** կազմ տետրակ առավ, ինքնահոս գրիչ ու հավելյալ միջուկ *(Դով., էջ 177)*:

ՄՈՆՏԱԺՈՂՈՒՀԻ, գ., **Կին՝ աղջիկ մոնտաժող**: Խորհրդականները նայեցին մեր **մոնտաժողուհուն**, որն օձին իր հետևից բերում էր իրենց կողմը.... *(Դար., էջ 96)*:

ՄՈՌԱՀԱՐ, ած. **Մոռի՝ մորմի՝ թունավոր սարդի խայթոցից մահացած:** Տե՛ս ՄԵՌԱՄԱՐՄԻՆ-ի օրինակը:

ՄՈՐԵԽԱՄՊ, գ. **Մորեխների խումբ:** .... Թաղն ավերող **մորեխամպը,** բնավ էլ **մորեխամպ** չէր՝ վազող տղաների խումբ էր *(Կայարան, 2015, թ. 4)*:

ՄՈՐԹԵՐԻԶ, ած. **Մորթիով երիզված**: .... Պահանջեց իր **մորթերիզ** թիկնոցն ու շղարշը *(ԹՎ, էջ 37)*:

ՄՈՑԱՐՏՅԱՆ, ած. **Մոցարտին հատուկ:** Այդ տողերում **մոցարտյան** մեղեդայնությամբ հնչում էր կախարդական մի համանվագ *(Վագ., էջ 110):*

ՄՍԱԿԵՏԻԿ, գ. **Մսի փոքրիկ կետ:** Այդքան-այդքան պարուհիների մեջ միայն նրա պորտն էր գեղեցիկ (ու մեկ էլ իմը, ուխ, մի ամբողջ, խոշոր, գրավիչ **մսակետիկ**) *(Նիկ., էջ 110):*

ՄՍՈՒՐԱԲԱԺԻՆ, գ. **Մսուրի՝ գոմի բաժին, մաս՝ հատված:** Գնում եմ ձիերի **մսուրաբաժինների** մոտով, օտար ձիեր են կանգնել՝ ուշք չեմ դարձնում .... *(Շոլ., էջ 180):*

ՄՏԱԹՆՋՈՒԿ, գ. **Խառը, խճճված միտք:** Աստիճանաբար **մտաթնջուկ** դարձող իմ ծանր խոհի մեջ նրանց հոր ոչ մի կերպ չպարագծվող արարքն էր .... *(Կայարան, 2021, թ. 2):*

ՄՏԱԼԱՐ, ած. **Մտքերից լարված:** Նայում է **մտալար** դեմքին, խուլ պատին հառած տենդոտ հայացքին և մտածում.... *(ՎՍ, էջ 227):*

ՄՏԱԿԱԶՄ, գ. **Մտավոր կազմ, մտածողության կարողություն՝ եղանակ:** .... Նահանգական այս պարագլուխը .... հին ազնվական **մտակազմի** մարդ էր ...., բոլորովին չէր հասկանում նոր ժամանակի պահանջները *(Տոլ., էջ 300):*

ՄՏԱՓՈՐՁ, գ. **Մտքով՝ ուշադրությամբ փորձելը: Մտափորձերում**// գտնում են իմ նշատողը *(ՎՀ[1], էջ 258):*

ՄՏԵՐՄԱՇՐՇՅՈՒՆ, գ. (փխբ.): **Մտերմիկ շրշյուն:** Տխուր եղանակ՝ անհատակ անցյալ,// ծառերի ծանոթ **մտերմաշրշյուն** *(ՎՀ[2], էջ 118):*

ՄՏՔԱԾԱՌ, գ. (փխբ.): **Մտածության համակարգ (առարկաների շղթա են):** - Բժիշկը դո՞ւ ես, - դուռը փակվում է այնպիսի շխկոցով, որ Դավիթի մտքի ծառերի ագռավները կոկռա-

լով պտտվում են աշխատասենյակով ու թռչում հեռու՝ ուրիշ **մտքածառ** գտնելու *(Սև., էջ 93)*:

ՄՐԳԱԿԱՐԱՄԵԼԱՅԻՆ, ած. **Մրգով և կարամելով պատրաստված**: Այդ հատկությունը լայնորեն կիրառվում է հրուշակեղենի արտադրությունում ....**մրգակարամելային** խորիզներ արտադրելու համար *(Դասագիրք, էջ 322)*:

ՄՐԳԱԿՈՄՊՈՏ, գ. (խսկց.): **Մրգի կոմպոտ՝ քաղցրաջուր, մրգաջուր:** Երկու քույր իրար մոտենում ու նայում են քաղցրմարխոշ-թթվաշ **մրգակոմպոտի** հայացքով .... *(Նիկ., էջ 88)*:

ՄՐԳԱՆՈՑ, գ. **Մրգերը պահելու տեղ (սենյակ, շենք ևն)**: Ավելի նպատակահարմար է պտուղները պահել այդ նպատակի համար հատուկ կառուցված **մրգանոցներում** (*Սաֆ., էջ 200*):

ՄՐՃԱՂԱՑ, գ.(մսնգ.):**Տարբեր տեսակի հումք մանրացնելու համար նախատեսված մեխանիկական տրորիչ մեքենա**: Մանրատիչներից առավել մեծ տարածում են ստացել տրորիչներն ու **մրճաղացները** *(Դասագիրք, էջ 203)*:

ՄՐՋՆԱՆՄԱՆ, ած. **Մրջյունի նման**: Գուցե հենց սպառողական քաղքենին է, որ մեծ հաշվով կանխազգում է նոր, կոլեկտիվ, **մրջնանման** հերոսականության ծնունդը *(ԱԱ, էջ 192)*:

ՄՐՑԱՏԱՐԱԾՔ, գ. **Մրցման տարածություն:** Ամենածանր **մրցատարածք** *(Դով., էջ 84)*:

ՄՐՑԱՐՇԱՎՈՐԴ, գ. **Մրցարշավի մասնակից, մրցարշավ կատարող:** .... Ի հայտ էր գալիս հին մրցարշավորդի հմտությունը *(Կլ., էջ 131)*:

ՄՈՒԼՉԱՆՅՈՒԹ, գ. (գղտնտ.): **Մուլչապատման համար օգտագործվող նյութ**: **Մուլչանյութը** լցնում են ծառի բնից 10-15 սմ հեռու (*Սաֆ., էջ 99*):

ՄՈՒԼՉԱՊԱՏԵԼ, նբ. (գղտնտ.): Բացատրությունը օրինակում: Ջրասակավ տեղերում բաժակներից ջրի կորուստը կանխելու նպատակով բաժակների մակերեսը ծածկում են (մուլչապատում են) փտած գոմաղբի .... 8-10 սմ հաստության շերտով (*Սաֆ., էջ 95*):

ՄՈՒՏԱԾԻՆ, ած. **Գենետիկ փոփոխություն առաջացնող:** .... Որոնց ազդեցությամբ օրգանիզմում սկիզբ են առնում բացասական փոփոխություններ, այդ թվում՝ **մուտածին** և ուռուցքածին փոփոխություններ *(ՍԹ, էջ 121):*

ՄՈՒՏՔԱՅԻՆ, ած. **Մուտքի միջոցով՝ որպես մուտք ստացված:** Բանական խելքը .... կարող է մշակել միայն այն **մուտքային** տվյալները, որոնք անմիջականորեն ստացել է .... *(Տան., էջ 50):*

ՄՈՒՐԱԶԱՎԱՐԻ, մկբ. (խսկց.): **Որպես կատարվող իղձ, փափագ. ի կատարումն իղձի, փափագի:** Ու .... բարձրացնում է Նազիկը **մուրազավարի** հեշտ .... *(Նիկ., էջ 19):*

Յ

ՅՈԹՆԱԾԱՎԱԼ, ած. (փխբ.): **Յոթ անգամ շատ: Յոթնածավալ** սեր բերեմ, էլի կասեն՝ քիչ է դեռ *(գուս. Աշ.[4], էջ 83):*

ՅՈՒՂԱԿՊՐԱՅԻՆ, ած. **Յուղի և կուպրի:** Երկաթուղիներին հատուկ **յուղակպրային** հոտ *(Սուր., էջ 88):*

ՅՈՒՂԱՆԵՐԿԱՆՄԱՆ, ած. **Յուղաներկի նման՝ նմանություն ունեցող**: Ավստրալիայում մի թռչուն կար, որը բույսերի պիգմենտներից **յուղաներկանման** մի բան էր պատրաստում և երփներանգ ներկում իր բույնը *(ԱԻՊ[1], էջ 271):*

ՅՈՒՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնատիպություն, առանձնահատկություն**: ... Նա կարծես նկարելու նոր **յուրաձևություն** է հուշում ինձ *(Ուայլդ, էջ 20)*:

Ն

ՆԱԽԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ, ած. **Ապստամբությանը նախորդած:** Եկավ մի ժամանակ, երբ էլ ոչ ոք չէր հիշում **նախաապըստամբական** օրերը .... *(Օրուել, էջ 135)*:

ՆԱԽԱԲԻԱՅՆԱԿԱՆ, ած. (պատմ.): **Բիայնականին նախորդած, մինչբիայնական**: **Նախաբիայնական** Հայաստանի գրանշանային հուշարձանները դեռևս համակարգված ուսումնասիրության չեն ենթարկվել *(Մով.[1], էջ 8)*:

ՆԱԽԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ, ած. **Գիտակցականին նախորդող**: Այսօրինակ **նախագիտակցական** հուզական գրգիռների աճմանը զուգահեռ դրանք հետզհետե ուժեղանում են .... *(ԴԳ, էջ 95)*:

ՆԱԽԱԽԱՂԱՅԻՆ, ած. **Խաղին նախորդող: Նախախաղային** ասուլիս *(Կայ., էջ 301)*:

ՆԱԽԱԾՐԱԳՐՈՒՄ, գ. **Նախածրագրելը, նախապես որևէ բան անելու ծրագիր կազմելը:** .... Նորից խճճվեց կառքերի շարժման **նախածրագրումների** մեջ *(Տոլ., էջ 21)*:

ՆԱԽԱԿԱԹՆԱՍՈՒՆ, գ. **Կաթնասուններին նախորդող**: Այդ միլիվայրկյանները, հնարավոր է, բազում անգամներ են փրկել մեր **նախակաթնասուն** նախնիների կյանքը .... *(ԴԳ, էջ 57)*:

ՆԱԽԱԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ, ած. **Կոնֆլիկտին՝ բախմանը՝ ընդհարմանը՝ վեճին՝ տարաձայնությանը նախորդող: Նախակոնֆլիկտային** փուլ *(Տան., էջ 253)*:

ՆԱԽԱՀԱՄ, գ. **Համի նախնական զգացում:** Այնուամենայնիվ, նա կանգ առավ ծիծաղելի դառնալուց առաջ կամ **նախահամը** առնելու վրա *(ՎՍ, էջ 318):*

ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿՈՒՄ գ. **Նախահաշվարկելը, կանխահաշվարկելը, նախապես՝ կանխապես հաշվարկելը:** …. Բնության երևույթների հաշվարկման և **նախահաշվարկման** գաղափարը …. առաջին անգամ պարզորոշ արտահայտվել է բաբելոնյան աստղագիտության մեջ …. *(Շախ., էջ 170):*

ՆԱԽԱՀԱՐՍԱՆԵԿԱՆ, ած. **Հարսանիքին նախորդող:** Դերասանուհին **նախահարսանեկան** խնջույք է կազմակերպել *(Հմց, Նոր լուր):*

ՆԱԽԱՁԵՌՆՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Նախաձեռնողունակ լինելը, նախաձեռնողունակ լինելու ունակությունը:** Ձախորդությունները չէին սահմանափակել Դյումայի **նախաձեռնողունակությունը** *(Մոր., էջ 320):*

ՆԱԽԱՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ, ած. **Մինչև ճանաչելը, ճանաչելուն նախորդող**: Լեդուն դրանք անվանում է «**նախաճանաչողական** հույզեր» *(ԴԳ, էջ 57):*

ՆԱԽԱՄՐՑԱՇԱՐԱՅԻՆ, ած. **Մրցաշարին նախորդած:** …. Ոչ մի գոլ չէր ընդունել սեփական դարպասը …. **նախամրցաշարային** ընկերական 4 հանդիպումներից և ոչ մեկում *(Կայ., էջ 451):*

ՆԱԽԱՄՐՑԱՇՐՋԱՆ, գ. **Մրցաշրջանին նախորդող ժամանակահատվածը, այստեղ՝ այդ ժամանակահատվածի ֆուտբոլային խաղերը:** Նա ամենաշատը կարող էր համաձայնել, որ Լեոն մասնակցի «Բարսայի» **նախամրցաշրջանին** …. *(Կայ., էջ 226):*

ՆԱԽԱՄՐՑԱՇՐՋԱՆԱՅԻՆ, ած. **Մրցաշրջանին նախորդած:** …. Որին …. **նախամրցաշրջանային** հանդիպման ընթացքում դաշտ դուրս բերեց …. մի քանի րոպե անցկացնելու համար *(Կայ., էջ 92-93):*

ՆԱԽԱՊԱՀ, գ. **Պահին նախորդող**: Անցնող վայրկյանները **նախապահեր** են, քանի որ// ամեն ինչ միշտ լինում է հետո *(ՎՀ², էջ 51):*

ՆԱԽԱՍԵՂՄՎԵԼ, բ. **Նախապես սեղմվել**: Այդ շինությունները մոդեռնիզմի կատարյալ հաղթանակն էին, իրականում՝ ինչ-որ առումով **նախասեղմված** նոստալգիա …. *(Ռուշդի, էջ 325):*

ՆԱԽԱՏԵՔՍՏԱՅԻՆ, ած. **Նախնական տեքստին վերաբերող**: Տե՛ս ԵՆԹԱՌԼՈՐՏ-ի օրինակը:

ՆԱԽԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ, ած. (դիպվ.): **Արձակուրդին նախորդող**: …. Օրերս կառավարական առանձնատանը պատգամավորների համար **նախարձակուրդային** հավաքույթ-խնջույք է կազմակերպվել *(ՉԻ, 19.07.2022):*

ՆԱԽԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒՅՈՒՆ, գ. **Բուն փիլիսոփայությանը նախորդած փիլիսոփայական հայացքների սաղմերը:** Այդ **նախափիլիսոփայության** կրողները տլամատիններն էին, մարդիկ, որոնք «ինչ-որ բան գիտեին» *(Շախ., էջ 90):*

ՆԱԽԱՓՈՒԼ, գ. **Նախորդած փուլ:** Գրի ծագման ու զարգացման **նախափուլը** Հայկական լեռնաշխարհում *(Մով.², էջ 14):*

ՆԱԽԱՖԵՆՈՄԵՆ, գ. **Բացատրությունը օրինակում:** Այս հեղինակները, որոնք դատում են, թե նախնադարյան դիցաբանությունը եղել է ժամանակակից հոգևոր կուլտուրայի նախամայրը, նրա նախատիպը, **նախաֆենոմենը** …. *(Շախ., էջ 264):*

ՆԱՆՈՏԵԽՆԻԿԱ, գ. **Նանոմասնիկների ուսումնասիրությամբ ստեղծվող տեխնիկա:** Շատերը լսում և զարմանում էին՝ **նանոտեխնիկայի** և ատոմի դարում ջրհո՞ր որն է *(Կայարան, 2014, թ. 3):*

ՆԱՎԱՄՐՑՈՒՄ, գ. **Մրցում՝ մրցություն նավերի միջև:** .... Ե՛Վ **նավամրցումը**, և՛ մյուս բոլոր բաները բավական հաճելի էին .... *(Տոլ., էջ 432):*

ՆԱՎԹԱԼԻՆԱՀՈՏ, ած. **Նավթալինի հոտ արձակող:** Կեպին քաշեց վար, բարձրացրեց կուլակային քուրքի **նավթալինահոտ** օձիքը .... *(Շոլ., էջ 187):*

ՆԱՎԹԱՄՇԱԿՈՂ, գ. **Նավթ մշակող**: .... Դաշնակից շատ ֆրանսիացի **նավթամշակողների** և իրացնողների համար, այնուամենայնիվ, Գյուլբենկյանը թվում էր plus royaliste que le roi *(ՋՔ, էջ 134):*

ՆԱՎԹԱՇԱՏՐՎԱՆ, գ. **Նավթային շատրվան:** Ինչ էլ չլինի, Բաքվի **նավթաշատրվանները** դարձան Կովկասի հայերի բարեկեցության գլխավոր աղբյուրը *(ԱԳ, էջ 195):*

ՆԱՐՆՋԱԴԵՂԻՆ, ած., **Նարնջի գույնի դեղին**: Նրանց մարմինը խոշոր էր, մսեղ ու ծածկված էր **նարնջադեղին** սև, սպիտակ և հյութեղ բալի գույների թեփուկների փայլուն խճանկարով *(Դար., էջ 246):*

ՆԱՐՆՋԱՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Նարնջագույնին տրվող մանուշակագույն:** Տե՛ս ԱՐԾԱԹԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ-ի օրինակը:

ՆԱՐՆՋԱՍԵՎԱՎՈՒՆ, ած. **Նարնջագույնին տվող սևավուն**: .... Հորիզոնը դեռ քնած էր՝ պատված **նարնջասևավուն** մշուշով *(Ժիոնո, էջ 39)*:

ՆԱՐՆՋԱՕԽՐԱՅԱԳՈՒՅՆ, ած. **Նարնջագույնին տվող օխրայագույն: Նարնջաօխրայագույն,** անորոշ նախշերով կրկնակի վարագույր էր կախել *(Ուելբեք 1, էջ 37):*

ՆԵԱՊՈԼԻՏԱՆՈՒՀԻ, գ. **Նեապոլի բնակչուհի՝ կին բնակիչ՝ բնակիչ կին:** Ճղճղան **նեապոլիտանուհիները** դուրս էին կախվել լուսամուտներից ու աշխուժորեն սակարկության բռնվել բանջարավաճառների հետ *(Վագ., էջ 231):*

ՆԵՂԱՉՅԱ, ած. **Նեղ աչքեր ունեցող**: Ամրակազմ ու **նեղաչյա** էին լեռների մարդիկ *(Ռուշդի, էջ 28)*:

ՆԵՂԵԶՐ, ած. **Նեղ եզրերով, եզրերը նեղ:** Նա իր **նեղեզր** գլխարկը գցեց ետևի պատուհանին .... *(Կլ., էջ 4):*

ՆԵՂՃԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Նեղճակատ՝ նեղմիտ, սահմանափակ մտքով լինելը:** Բուրժուական **նեղճակատություն** *(Յակ., էջ 159, մնթ. 11):*

ՆԵՌԱԿԱՆ, գ. **Նեռի ուսմունքը դավանող անձ:** Հետո Բենը պատահականորեն իմացավ, որ նա **նեռականների** գաղտնի ժողովներին է մասնակցում *(Բակուր, էջ 3):*

ՆԵՐԱԶԴՈՒ, ած. **Ներազդուն, ներազդող, ազդեցություն գործող:** Մի **ներազդու** պատվիրակության գլուխ անցած նա .... ներկայացավ Վաշինգտոն *(Յակ., էջ 584):*

ՆԵՐԱՆՁՆԱՅԻՆ, ած. **Անձի ներսում առկա՝ կատարվող՝ դրսևորվող:** .... Պետք է հաղթահարենք բոլոր այն պատճառները, որոնք խանգարում են ձեզ նպատակին հասնելու համար: Դրանք են՝ .... **ներանձնային** հակամարտությունը *(Տան., էջ 30):*

ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ, գ. **Ներդաշնակեցնելը:** .... Հոգեվերլուծական մի շարք տեսություններ թերապևտիկ հարաբերութ-

յունները դիտարկում են որպես **ներդաշնակեցման** շտկողական, նորոգիչ փորձառություն *(ԴԳ, էջ 155):*

ՆԵՐԴՐՈՒՄԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. (խսկց): **Շատ ներդրումներ անել:** Դժգույն տարածք էր, եկանք, **ներդրումախեղդ արեցինք** *(ՉԻ, 14.04.2022):*

ՆԵՐԿԱԲԻԾ, գ. **Ներկի բիծ:** Տե՛ս ՄԱՌԱՆԱՀԱՐԿ-ի օրինակը:

ՆԵՐԿԱԲՈՒՅՐ, գ. **Ներկի բույր**: Նրա մանկությունն անցել էր անդրկուլիսյան օդով ու **ներկաբույրով** լեցուն մի թագավորությունում .... *(ԱԱ, էջ 267)*:

ՆԵՐԿԱԹԱՓՎԵԼ, բ., **Ներկը թափվել, ներկաթափ դառնալ**: Այդ **ներկաթափված** զոլավոր կտորը, այդ գլխարկը... միակ բանն է, որ մնացել է Թադեկից *(ՊԵտ, էջ 40):*

ՆԵՐԿԱԾԱԾԿ, ած. **Ներկով՝ ներկելով ծածկված՝ անտեսանելի դարձրված:** Պրեզիդենտի գնացքը **ներկածածկ** մակագրություններով Վաշինգտոնից հեռացավ …. *(Յակ., էջ 622):*

ՆԵՐԿԱՊԱՐԿՈՒՃ, գ. **Ներկի պարկուճ**: ... Նրա մեջ վերևից դրել էի... երկու **ներկապարկուճ**... *(ՊԵտ, էջ 35):*

ՆԵՐՀՈՂԱՅԻՆ, ած. **Հողի մեջ կատարվող:** Ջուրը բնության մեջ անընդհատ շրջապտույտ է կատարում՝ գոլորշիացում – մթնոլորտային տեղաշարժ - խտացում - տեղումներ - մակերևութային և **ներհողային** հոսքեր շղթայով *(ՍԹ, էջ 54):*

ՆԵՐՀՈՍՔ, գ. **Ներհոսելը: Այստեղ՝ Ներգաղթ**:... Գաղթականների **ներհոսքից** առաջացած մանր արհեստավորական ու տնայնագործական արտադրությունները չնչին նշանակություն ունեին... *(Հակ., Սիմ.,էջ 188):*

ՆԵՐՃԱԿԱՏԱՅԻՆ, ած. (մարզ): **Մարզական միևնույն ճակատի՝ խմբերի միջև տեղի ունեցող՝ եղող:** Տե՛ս ՄԻՋՃԱԿԱՏԱՅԻՆ-ի օրինակը:

ՆԵՐՇԱՐԺ, գ. **Շարժ ներսում, ներքին եռուզեռ:** Ու ոչ էլ **ներշարժն** է ուժեղանում՝ հեռվից նայելիս, միայն հեռվից է քաղաքը գվվացող տեսարան *(Նիկ., էջ 69):*

ՆԵՐՈՒՄՆԱՎՈՐ, ած. **Ներելու կարողություն ունեցող, ներողամիտ:** Սերը մարդուն դարձնում է **ներումնավոր** … *(ՎՀ[1], էջ 17):*

ՆԵՑՈՒԿԱՎՈՐՈՒՄ, գ. (գղտնտ.): **Նեցուկավորելը, ճյուղերի տակ նեցուկներ դնելը**: Պտղաբերող ծառերի **նեցուկավորումը** (վերնագիր) (*Սաֆ., էջ 187*):

ՆԵՖՐԻՏԵ, ած., **Նեֆրիտագույն, կաթնասպիտակավուն**: Թվում էր, թե գիշերային **նեֆրիտե** երկնքում վեր է խոյացել ժամանակակից սևացած մի հրեշավոր փեթակ *(Դար., էջ 51):*

ՆԺՈՒՅԳԱՎԱՐ, գ. **Նժույգ վարող:** …. 1969 թվականին վարպետ- **նժույգավար** Անտոն Դուկալսկին Տալնիկ հովատակով Միութենական մեծ մրցանակ նվաճեց *(Դով., էջ 6):*

ՆԿԱՐԱՀՈՐԻՆՈՒՄ, գ. **Նկարի՝ հիշողությամբ հորինում (ի տարբերություն կենդանի բնության պատկերման):** Այնտեղ բնանկարները նկարում էին ոչ թե բաց օդում, այլ արհեստանոցում: Եվ իզուր չէ, որ այդ ուսուցումն անվանում էին **նկարահորինում** *(Վաղ., էջ 194):*

ՆԿԱՐԱՆԱԽՇ, ած. **Նկարներով նախշված, նկարազարդ**: Կինն այն ամառային **նկարանախշ**՝ առջևը կոճակներով շրջազգեստներից էր հագել … *(ԱԻՊ[1], էջ 257):*

ՆՄԱՆԱՏԵՍՔ, ած. **Նման տեսք ունեցող, տեսքով նման:** … Հայաստանի ժայռապատկերներում և վաղբրոնզեդարյան խեցեղենի վրա հանդիպող **նմանատեսք** ժայռապատկերները …. *(Մով.[2], էջ 28):*

ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ած. **Նյարդային և հոգեբանական**: …. Դրանք երևան են գալիս ավելի թիրախային **նյարդահոգեբանական** չափումների միջոցով *(ԴԳ, էջ 62):*

ՆՅԱՐԴԱՀՈԳԵԿԱՆ, ած. **Նյարդային և հոգեկան**: Ես բողոքներ ունեի **նյարդահոգեկան** ընդհանուր իմ վիճակից …. *(Կայարան, 2014, թ.3):*

ՆՅԱՐԴԱՔԱՅՔԱՅԻՉ, ած. **Նյարդերը քայքայող**: Ալցհեյմերի հիվանդությունը դանդաղ սկիզբ և պրոգրեսիվ ընթացք ունեցող **նյարդաքայքայիչ** հիվանդություն է *(Հմգ, Erevan Home Care. LLC):*

ՆՅՈՒԹԱԷՆԵՐԳԻԱԿԱՆ, ած. **Նյութաէներգիային բնորոշ:** Ցանկացած համակարգ կարող է զարգանալ միայն շրջակա բնական միջավայրի **նյութաէներգիական** …. հնարավորությունների հաշվին *(ՍԹ, էջ 13)*:

ՆՅՈՒԹԱՊԱԳՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Նյութապաշտություն: Նյութապագության** քուրմը գաղտնորեն // Ուզում է դարձյալ կուռքի վերածվել …. *(Տոն.[4], էջ 60):*

ՆՇԱՆԱԽՈՒՄԲ, գ. (պատմ.): **Նշանների խումբ:** …. Վարպետի նշանից կամ դաջից և տարողության նշումներից բաղկացած **նշանախմբերը** *(Մով.[2], էջ 73):*

ՆՇԱՆԱՑԱՆԿ, գ. (պատմ.): **Նշանների ցանկ, որևէ սկզբունքով կազմված ցուցակ:** … Բիայնական մեհենագիր արձանագրությունների ժողովածուն և **նշանացանկը** կազմելիս նկատեցինք …. *(Մով.[1], էջ 29):*

ՆՇԱՏՈՂ, գ. **Նշած՝ ընդգծած տող՝ հատված**: Տե՛ս ՄՏԱՓՈՐՁ-ի օրինակը:

ՆՈՍՐԱՆՏԱՌ, գ. **Նոսր անտառ:** Լանդշաֆտաէկոլոգիական տեսակետից առավել անկայուն են եղել .... անտառային էկոհամակարգերը, առանձնապես՝ արիդային **նոսրանտառները** .... *(ՍԹ, էջ 41):*

ՆՈՐԱԲՈՒՐԴ, գ. **Նոր աճած բուրդը:** Տե՛ս ԱԴԱՄԱՆԴԱԿԱՊՈՒՅՏ-ի օրինակը:

ՆՈՐԱԳՈՅԱՆԱԼ, բ. **Վերստին գոյանալ**: ... Վերականգնողական հատկություններ ունեցող նյութերը **նորագոյանում** և կուտակվում են .... *(Դասագիրք, էջ 38)*:

ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒՑԻՉ, գ. **Նոր գոյացություն**: Ցնդող **նորագոյացուցիչներից** են ալդեհիդները *(Դասագիրք, էջ 65):*

ՆՈՐԱԿԱՐ, ած. **Նոր կարած՝ կարված:** .... Սպայական **նորակար** համազգեստով *(Յակ., էջ 552):*

ՆՈՐԱՁԵՎԱՅԻՆ, ած. **Նոր տարազի՝ նորաձևության (մոդայի) համապատասխան:** Եվ պատկերացնու՞մ ես, Շառլ, որ նրանք մեր **նորաձևային** գլխարկները ձեռք են բերել մեզնից առաջ *(XX դար, էջ 195):*

ՆՈՐԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. (պատմ.): Ք. ա. XV-XII դ. **թագավորություն: Նորխեթական թագավորությունում** ... այն հանդես է գալիս խեթական սեպագրին զուգահեռ *(Մով.[1], էջ 52):*

ՆՈՐՀՈՒՆԱԿԱՆ, ած. **Նոր ժամանակների Հունաստանին բնորոշ**: Տե՛ս ՆՈՐՀՌՈՄԵԱԿԱՆ-ի օրինակը:

ՆՈՐՀՌՈՄԵԱԿԱՆ, ած. **Նոր ժամանակների Հռոմին բնորոշ:** Նորից հանդիպումներ են բարոկոյական, **նորհռոմեական**,

նորհունական ճարտարապետական շինությունների մոտ *(ԿՎ, էջ 120)*:

ՆՈՒՅՆԱԿԱՆԱԼ, չբ. **Նույնական դառնալ:** Տե՛ս ԿՅԱՆ-ՔԱՍՈՒՐՃ-ի օրինակը:

ՆՈՒՅՆԱՏԵՍՔ, ած. **Նույն տեսք ունեցող, նույնանման:** Խեթա-լուվիականում, օրինակ, **նույնատեսք** մի նշան ունի «երկինք» իմաստը .... *(Մով.[2], էջ 99)*:

ՆՊԱՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ, գ. **Կին նպարավաճառ:** Ծերունի պարոն, **նպարավաճառուհի,** նպարավաճառ .... *(XX դար, էջ 268)*:

ՆՌՆԱՇԱՏ, ած. **Նռնենիներով առատ:** Ծաղկող լեռներ, խոր-խոր ձորեր **նռնաշատ**....*(գուս. Աշ.[1], էջ 24)*:

ՆՌՆԱՔԱՐԱԶԱՐԴ, ած. (արվ.): **Նռնաքարի զարդանախշով զարդարված:** .... Ռոմբաձև կամարները հատվում են սուր անկյունով վեր բարձրացող **նռնաքարազարդ** ժապավենաշերտով *(Հակ., էջ 53)*:

ՆՍՏԵԼԱՁԵՎ, ած. **Նստելու ձև, նստաձև:** .... Ամերիկացի մարդիկ մի քանի րոպեում չէին կարող այդպես հեշտ յուրացնել ասիական այս **նստելաձևը** *(Բակուր, էջ 311)*:

ՆՐԲԱԲՈՒՅՐ, ած. **Նուրբ բույր արձակող:** Նա լաքապատում էր եղունգները, **նրբաբույր** օծանելիքներ օգտագործում *(Նիկ., էջ 8)*:

ՆՐԲԱԴԱԼԱՐ, ած. (հեգն.): **Նուրբ և դալար:** Ճիշտ է ասում **նրբադալար** հոգով Սայաթը, Ռ. Քոչարյանի ոստիկանները մըտածելով էին ծեծում խաղաղ ցուցարար տղամարդկանց .... *(Հմգ, Lur.am. 06.05.2022)*:

ՆՐԲԱԹԱՂԻՔԵ, ած. **Նրբաթաղիքից պատրաստված:** .... Ինձ մնում էր միայն նայել նրա կանաչ **նրբաթաղիքե** գլխարկին *(Ֆրիշ, էջ 75)*:

ՆՐԲԱԹԱՎՇԵ, ած. **Նուրբ թավիշից պատրաստված:** .... Ոչ-ինչ չէր մնում անել, քան նայել ...., թե չի հայտնվի արդյոք կանաչ **նրբաթավշե** գլխարկը գյուղական հրապարակում *(Ֆրիշ, էջ 80)*:

ՆՐԲԱՀԱՃ, ած. **Նուրբ հաճույք պատճառող:** .... Հաջորդ տունը նրբառճ – **նրբահաճ** լինի ու դդյակ լինի *(Նիկ., էջ 64):*

ՆՐԲԱՁԵՌ, ած. (բնստ.): **Նուրբ ձեռք ունեցող:** Ալեզարդ օրվա եկել եմ նորից,// Բայց ոչ որպես հյուր թույլ ու **նրբաձեռ** .... *(Սարմեն, էջ 48):*

ՆՐԲԱՄՈՐՄՈՔ, ած. (հեգն.): **Նուրբ և մորմոքվող:** ....Ոնց որ թե սպանում էլ էին (չէ՞, **նրբամորմոք** Սայաթ) *(Հմց, Lur.am. 06.05.2022):*

ՆՐԲԱՆՑՔԱՆՄԱՆ, ած. **Նրբանցքի նման՝ նեղ, ոչ լայն:** Անձուկ, **նրբանցքանման** փողոցները գրեթե զուրկ են լույսից.... *(Պար., էջ 6):*

ՆՐԲԱՌՃ, ած. **Նուրբ ոճով:** Տե՛ս ՆՐԲԱՀԱՃ-ի օրինակը:

ՆՐԲԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Նրբացած վիճակ:** Դրան էլ այս-օրվա **նրբացածությամբ** տիրապետում են շատ կանայք… *(Բեեկ., էջ 187):*

ՆՐԲԵՐՇԻԿԱՆՄԱՆ, ած. **Նրբերշիկի նմանվող**: .... Վոուլ-թերը արձակում է իր կոճակները խոճկորի մատիկներով և **նրբերշիկանման** մատներով տրորում մաշկը *(Աթք., էջ 24)*:

ՆՐԲԻԿ, ած. (նվազափոքշ.) **Արտակարգ՝ հաճելիորեն նուրբ:** Տղամարդը պետք է բարձրահասակ լինի, իսկ կինը, ընդհակառակը, ցածրահասակ և **նրբիկ** *(Տան., էջ 158):*

Շ

ՇԱԳԱՆԱԿԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Շագանակի գույնին մոտ դարչնագույն**: Զուն օվալաձև է, նարնջադեղնավուն, թրթուրը՝ **շագանակադարչնագույն** (*Սաֆ., էջ 129*):

ՇԱԳԱՆԱԿԱՄԵՂՐԱԳՈՒՅՆ, ած. **Շագանակագույնին տըվող մեղրագույն**: .... Հիանում [է] աքաղաղի **շագանակամեղրագույն** փետուրներով *(Աթք., էջ 36)*

ՇԱՀԱԴՐԴՈՒՄ, գ. **Շահ ստանալու՝ շահի դրդում:** .... Նըպատակը որոշակի վարքի **շահադրդումն է** կամ ազդեցությունը դրա վրա (*Տան., էջ 86):*

ՇԱՀԵԿԱՆԵԼ, չբ. **Շահ՝ օգուտ ստանալ:** .... Այդ մարդը մեծատառով այն հարուստն է, ով կարողացել է փողն օգտագործել, ծախսել, ներդնել, շրջանառել, **շահեկանել**՝ կուտակելու և քիլլերներ վարձելու տեղակ *(Նիկ., էջ 74):*

ՇԱՄԱՆՈՒՀԻ, գ. **Կին շաման՝ պաշտամունքի սպասավոր՝ կախարդ:** Դառասկան և տանտրիական քրմերը ծագում են **շամանուհիներից** *(Շախ., էջ 199):*

ՇԱՄՊԱՅՆԱՎՈՐՈՒՄ, գ. (մսնգ.): **Շամպայնացում**: Կուպաժների հետագա պահորակումը .... նախքան **շամպայնավորման** հանձնելը իրագործում են օդի թթվածնով նրանց հարստացումը բացառող պայմաններում *(Դասագիրք, էջ 175)*:

ՇԱՐԺԱԿԱՄՈՒՐՋ, գ. **Շարժական կամուրջ**: Բնապատկերը նույնն էր՝ անծայրածիր հարթավայրերով .... ու **շարժակամուրջներով** .... *(Կոելյու, էջ 113)*:

ՇԱՐԺԱՆԿԱՐԻՉ, գ. **Կինոռեժիսոր:** Արգենտինահայ **շարժանկարչի** նոր ֆիլմը *(Ազգ, 29.04.2022)*:

ՇԱՓԱՂԱԶԱՐԴ, ած. (բնստ., փխբ.): **Պայծառ՝ լուսավոր: Շափաղազարդ**, կաթ երեսը լույսով ձուլված երկնի ձեռքով *(գուս. Աշ.[1], էջ 13)*:

ՇԱՓՅՈՒՂԱԳՈՒՅՆ, ած. **Շափյուղայի գույնի,** այստեղ՝ **կապտագույն:** Երբ դեռ շոգը վրա չէր տվել, երկինքը ջինջ ու կապույտ էր, տները՝ կուրացուցիչ սպիտակ, իսկ ծովի ջուրը՝ **շափյուղագույն** *(Վագ., էջ 231)*:

ՇԱՓՅՈՒՂԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Շափյուղայի գույնի կապույտ գույն ունեցող**: Արեգակն ուղիղ գլխավերևում էր՝ մուգ **շափյուղակապույտ** երկնքում .... *(ՋՀ, էջ 340)*:

ՇԱՔԱՐԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. **Շաքարի կուտակումը, շաքարի շատ լինելը: Շաքարակուտակումների** առավելագույն քանակը նկատվում է համապատասխանաբար ....սևապտուղ տեսակների խաղողներում *(Դասագիրք, էջ 31)*:

ՇԵՄԱԾԱԾԿ, ած. **Շեմը ծածկող:** Գլխից վեր **շեմածածկ** թիթեղի կեծությունը, դիմացը՝ անվրդով թիկունքը ամուսնու.... *(ՎՍ, էջ 41)*:

ՇԵՆԱՇԵՆ, ած. (բնստ., փխբ.): **Նվիրական, բաղձալի:** Հազար ու մի երգ կապեցի իմ **շենաշեն** երազանքին *(գուս. Աշ.[4], էջ 179)*:

ՇԵՐԵՓԱՓԱՅՏ, գ. **Փայտե շերեփ, շերեփի փայտե կոթ:** Վաղուց արժեր **շերեփափայտով** տալ նրա քամակին *(Շոլ., էջ 325)*:

ՇԵՐՏԵՐԻԶ, գ. **Շերտավոր երիզ:** Թերեզի երջանկությունը պիտի հենց ծրարից երևա: Կարմիր **շերտերիզով,** ինքնաթիռի պատկերը վրան ու փայլուն ծրարից *(ՎՍ, էջ 19):*

ՇԻԿԱԲԱՇ, ած. **Շեկ բաշերով, բաշերը շեկ**: .... **Շիկաբաշ** առյուծները ավելի խաղաղ են ու համակերպվող, քան սևաբաշները, չնայած որ իսկապես մի փոքր հիմարավուն են լինում *(Դար., էջ 180):*

ՇԻԿԱԲԵՂ, ած. **Շեկ բեղերով, բեղերը շեկ:** Տե՛ս ԱՐՃՃԱԶՕԾ-ի օրինակը:

ՇԻՆԱՇՏԱՐԱԿ, գ. (հպվ.): **Շինարարական աշտարակ:** Հետևի պլանում **շինաշտարակներն** են *(Կայ., էջ 33):*

ՇԻՆՇԻԼԱՅԵ, ած. **Շինշիլայի (հարավամերիկյան կրծող կենդանի) մորթուց կարված**: **Շինշիլայե** մուշտակ *(ԱԻՊ[1], էջ 71):*

ՇԻՆՏԱՐԱԾՔ, գ. (հպվ.): **Շինարարական տարածք:** Վարդանի համար **շինտարածքից** մեշոկով ցեմենտ գողանալը դարձել էր աշխատանք, բուն շինարարությունը՝ հոբբի *(Սև., էջ 150):*

ՇԻՖԵՐԱՊԱՏ, ած. **Շիֆերով՝ հերձաքարով պատված՝ ծածկված**: Ջրի թափանցումը կանխելու համար բետոնի կամ պանելի վրա լցնում են հող կամ խարամ և հարթ տանիք կառուցում՝ թիթեղապատ կամ **շիֆերապատ** (*Սաֆ., էջ 200*):

ՇՂԱՐՇԱՆՄԱՆ, ած. **Շղարշի նման, շղարշի տեսքով՝ տեսք ունեցող:** Հայացքս անընդհատ գրավում էր ծովը հեռվում, որի վրա մի երկարուն **շղարշանման** մշուշ կար *(Սուր., էջ 65):*

ՇՇԱՆՈԹ, գ. **Շշե անոթ**: Տնային պայմաններում չափավոր հասունություն ունեցող պտուղները պահում են նաև 1-3լ տարողությամբ **շշանոթներում** (բանկաներում), որոնց բերանները

փակում են անթափանցելի (հերմետիկ) կափարիչներով (*Սաֆ., էջ 199*):

ՇՈԿՈԼԱԴՈՏՎԵԼ, չբ. **Վրան շոկոլադ քսվել:** Շորով, քթով, մռթով **շոկոլադոտվեցի** ու դարդոտվեցի՛ .... *(Նիկ., էջ 96):*

ՇՈՂԱՇԵՂՋ, ած. **Շողացող կույտ, դեզ, կուտակ:** Տե՛ս ԱՆՁՐԵՎԱԳՐՈՇ-ի օրինակը:

ՇՈՂԱՓԱՅԼԵԼ, բ. **Շողալ և փայլել:** Տրոիցինը **շողափայլելով** կարդում էր թրջված երկտողը *(ԿՎ, էջ 156)*:

ՇՈՐԵՄԱՐԴ, գ.. **Մարդ շորից՝ տիկնիկ:** Ադյալներով ու յոթ վերարկույով փաթաթվելով պլպլանաաչյա **շորեմարդ** դարձա լուսամփոփի ներքո ու քնեցի *(Նիկ., էջ 36):*

ՇՏԿՈՂԱԿԱՆ, ած. **Անճշտությունը վերացնող:** Տե՛ս ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ-ի օրինակը:

ՇՐԹՆԱՀԵՏՔ, գ. (փխբ.): **Շրթունքի՝ շրթունքների հետք:** Ուր արևը՝ մեր համբույրի տեսքով,// իր **շրթնահետքն** է թողնում ձյուների վրա *(ՎՀ[1], էջ 61):*

ՇՐՋԱԲԱԺԱՆ, գ. .... [Միտքը] կտրում-անցնում է ժամանակային ու տարածքային **շրջաբաժանները** .... *(ԳԹ, 22.04.2022):*

ՇՐՋԱՑԱՏԿ, գ. **Ցատկ՝ շրջվելով: Շրջվելով ցատկելը:** Մեկրոպեանոց տեսահոլովակում ռոբոտը մի բարձրությունից թռչում է մյուսը, կատարում **շրջացատկ** հետ .... *(Հմգ, armenpress.am):*

ՇՐՋԱՑՈԼՔ, գ. **Շրջանաձև ցոլք՝ փայլ:** Բայց էլ Որդու պես չեմ ընդունելու զոհամատուցում՝ // Անտիկ քսության այդ **շրջացոլքը**՝ սրտում դիցերի .... *(Տոն.[2], էջ 13):*

ՇՔԱՇՈՒՔ, ած. **Շքեղ, շքեղաշուք**: Ու տարածվում են շուրջը մեր Հոր տան՝ // Որպես կեղծիքի **շքաշուք** դամբան .... *(Տոն.[3], էջ 24):*

Ո

ՈԳԵՓՈԽԻՉ, ած. **Հոգին՝ հոգեկան վիճակը կտրուկ փոխող:** Անհրաժեշտ էր գաղափար, որը կունենար **ոգեփոխիչ**, ոգեցունց ազդեցություն .... *(ՎԱ, էջ 55)*:

ՈԳԻԱԿԱՆ, ած. **Ոգիների, ոգիներին հատուկ:** Երևի Շուշիի բարբառի տարբերակն էր՝ հարմարեցված **ոգիական** խոսվածքին .... *(Բակուր, էջ 24)*:

ՈԳԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Ոգիների ամբողջությունը:** Բայց հնարավոր է, որ **ոգիությունը** կառավարվում է ինչ-որ կենտրոնից *(Բակուր, էջ 53)*:

ՈՂԲԱՂՈՂԱՆՋ, ած. (բնստ.): **Ողբաձայն**: **Ողբաղողանջ** երգ երկնեց *(գուս. Աշ.[2], էջ 55)*:

ՈՂԲԱՆՋՈՎՔ, գ. **Ողբագին անեծք:** Մենք, մեր երկիրը, մեր ժողովուրդը չենք ուզում **ողբանզովքով** մեր ունկերը խցանած տարտղնվել, վհատվել, հուսահատվել, ընկրկել *(ԳԹ, 08.04.2022)*:

ՈՂԲԱՎԱՐՍ, ած. (փխբ.): **Ողբից՝ կորստի ցավից մազերն արձակած:** Տնտղում զոհված տղաների դիակները, նրանց անդալար պահվածքներից հիասթափված՝ ցատկոտում դես ու դեն՝ ասես հրեշտակ լինի **ողբավարս** *(ՎՀ[2], էջ 312)*:

ՈՂՆԱՇԱՐՈՑ, գ. (փխբ.): **Ողնաշար**: Ու՞ր է տանում մեզ այս հույսը շարունակվող՝ // **Ողնաշարոցը** մեր գեղամեծար ցեղի .... *(Տոն.[2], էջ 28)*:

ՈՂՈՂԱԲԵՐ, ած. (մսնգ.): **Ֆիլտրող լրացուցիչ շերտ ունեցող:**Ներկայումս գինեգործության պրակտիկայում լայնորեն կիրառվում են **ողողաբեր** և թիթեղավոր ֆիլտրեր *(Դասագիրք, էջ 275)*:

ՈՃԱՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ, ած. (արվ.): **Պատկերագրության միջոցով բնութագրվող:** .... Մնում էր դիմել միակ հնարավոր

միջոցին՝ մանրանկարների **ոճապատկերագրական** առանձնահատկությունների և հետագա հիշատակագրական փաստերի մանրազնին քննությանը *(Հակ., էջ 79)*:

ՈՍԿԵԹՈՒԽ, ած., **Թուխ, մուգ ոսկեգույն**: … Մրի պես սև աժդահա, ի տարբերություն **ոսկեթուխ** Օգաստինի *(Դար., էջ 14)*:

ՈՍԿԵԽՑԱՆ, ած. **Ոսկյա՝ ոսկեգույն խցանով, խցանը ոսկուց՝ ոսկյա, ոսկեգույն**: .... Սեղանին դրած **ոսկեխցան** 22ից թաշկինակի վրա օծանելիք լցնելով *(Ուայլդ, էջ 84)*:

ՈՍԿԵԾԱԼ, ած. (բնստ.): **Ոսկե ծալ ունեցող**: Տեսա գանձերդ **ոսկեծալ** *(Սարմեն, էջ 146)*:

ՈՍԿԵԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Ոսկեգույնին տվող կանաչ**: Բալենու երկարակնճիթը **ոսկեկանաչավուն** բզեզ է …. (*Սաֆ., էջ 123*):

ՈՍԿԵԿԱՆԹ, ած. (փխբ.): **Ոսկեգույն կանթով:** Անուշիկս ջուր կառնի իր **ոսկեկանթ** կուժն առած *(գուս. Աշ.[4], էջ 63)*:

ՈՍԿԵԿԱՊՈՒՅՏ, ած. **Ոսկեգույն երանգ ունեցող՝ ոսկեգույնին տվող կապույտ:** …. Դիմացս՝ Պարթենոնի տաճարը Ակրոպոլիսի վրա **ոսկեկապույտ** երկնքում …. *(Սուր., էջ 148)*:

ՈՍԿԵԿԱՐՄՐԱԳՈՒՅՆ, ած. **Ոսկեգույնին տվող կարմիր գույնի**: Կազարկան **ոսկեկարմրագույն**, մետաղական փայլով բզեզ է, որի անոտ թրթուրը սպիտակ է (*Սաֆ., էջ 124*):

ՈՍԿԵՍՊԻՏԱԿ, ած. **Ոսկեգույնին տվող սպիտակ:** …. Արևը …. հայտնվեց այդ **ոսկեսպիտակ** փայլող հորիզոնին *(Սուր., էջ 268)*:

ՈՍԿԵՏԱՌՎԵԼ, բ. **Ոսկե տառերով գրվել:** Փակվեց հայ կինոարվեստում նրա բացած լուսեղեն էջը, որը **ոսկետառված** էր՝ դովլաթյանական *(ՀՀ, 27.05.2022)*:

ՈՍԿԵՓՈՒԼ, ած. **Ոսկյա փուլերով պատրաստված:** Տե՛ս ԱՐՄԱՎԵՆԱՆԱԽՇ -ի օրինակը:

ՈՍԿԵՓՈՔՐԻԿ, ած. **Փոքրիկ և ոսկե:** …. **Ոսկեփոքրի՛կ** խաչը …. այնքա՛ն էր մեծացել …. *(Նիկ., էջ 14):*

ՈՍԿՐԱԲՈՒՅԺ, գ., (բժշկ.): **Կոտրված՝ վնասված ոսկորները բուժող բժիշկ**: Այստեղ բժշկությունը գտնվում էր հեքիմների, նրանց օգնականների, **ոսկրաբույժների** (սնընխչի) և սափրիչների ձեռքին… *(Հակ., Սիմ.,էջ 76):*

ՈՍԿՐԱԾԱՅՐ, գ. **Ոսկորի ծայր:** Սյուրտուկի գրպանից, սպիտակ **ոսկրածայրի** նման երևում էր հրացանի անփութորեն հղկված կոթը *(Շոլ., էջ 64):*

ՈՍԿՐԱՊՈՉ, ած. **Ոսկորից պատրաստված պոչ ունեցող**: …. Հայացքը **ոսկրապոչ** երկար դանակին զցեց …. *(ՋՀ, էջ 406)*:

ՈՐԲԱՀԱՎԱՔՈՒԹՅՈՒՆ, գ. **Որբեր հավաքելը**: Եվ օգնում է ինչով կարողանում է՝…. ապաստան տալիս փախստականներին, զբաղվում **որբահավաքությամբ** …. *(Կայարան, 2015, թ. 4):*

ՈՐԲԱՍՈՒՐԲ, ած. (բնստ., փխբ.): **Որբ և սուրբ:** Ծարավի ենք քեզ, **որբասուրբ** խաղաղություն՝ տենչագին երազ *(ԳՋ, էջ 76):*

ՈՐՄԶԴԱՊԱՀ, գ., ած. **Որմզդեղներ պահող, խնամող:** Չումից դուրս եկավ **որմզդապահը** *(Բակուր, էջ 314):*

ՈՐՄՆԱԳՈՐԳ, գ. **Պատին կախված գորգ**: Ֆլամանդական խունացած **որմնագորգ**, վարագույրով ծածկված ինչ-որ նկար… ահա բոլորը, ինչ կար սենյակում *(Ուայլդ, էջ 217):*

ՈՐՈՇԱՐԿԻՉ, գ. (պատմ.): **Մեպագրության մեջ հաջորդող գոյականի ինչաբառ լինելը մատնանշող նշան:** Սեպագրության մեջ … որևէ գոյական բնորոշելու համար … լայնորեն կիրառվում են **որոշարկիչ** գաղափարագրերը (ցուցիչները, դետերմի-

նատիվները)։ Անվանվում է նաև **որոշիչ, բացահայտիչ**, ցուցիչ *(Մուլ², էջ 44)։*

ՈՐՈՇԱՐԿՅԱԼ, գ. (պատմ.)։ **Որոշարկիչ ունեցող գրանշան։** «**Որոշարկիչ** – գաղափարագրության դրսևորում է կցագրումը», երբ որոշարկիչն ու **որոշարկյալը** «… կցագրվում և հանդես են գալիս որպես մեկ բաղադրյալ գրանիշ» *(Մուլ², էջ 44)։*

ՈՐՈՏԱՆՄԱՆ, ած. **Որոտի նման՝ որոտ հիշեցնող՝ արտակարգ բարձր ձայնով խոսող։** «Ստասովը, բռնկուն ու **որոտանման** Ստասովը» այժմ նստած էր խոնարհ ու հեզ, տարօրինակ կերպով լուռ, ներամփոփ *(Վաղ., էջ 429)։*

ՈՐՈՏՆԱԿԱՆՉ, գ. (բնստ., փխբ.)։ **Որոտալի ձայնով կանչելը՝ սաստկաձայն՝ բարձրագոչ։** Սիրո աստվածն իմ հոգու, իմ **որոտնականչերը**// Սիրտս պոկում-տանում են Ուրցասարի լանջերը *(գուս. Աշ.³, էջ 59)։*

ՈՐՍԱՀԱՃՈՒՅՔ, գ. **Որս անելու՝ որսալու հաճույք**։ Ինչպես են **որսահաճույքի** համար// աղեղը լարում Չինգիզ Խանի ձեռքերը *(ՎՀ², էջ 84)։*

ՈՐՍԱՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Որսի՝ որսի գնալու ժամանակ օգտագործվող՝ կրվող պայուսակ, որսապարկ**։ .... Որսապայուսակը ու փամփշտակալը թեպետև մաշված էին, բայց վերին աստիճանի լավ տեսակի *(Տոլ., էջ 201)։*

Չ

ՉԱՆՉԱՆՋԱՏԻՉ, գ. (մսնգ.)։**Խաղողի չանչերը անջատող՝ առանձնացնող սարք**։Խաղողը …. անցկացնում են **չանչանջատիչով** և մամլիչով*(Դասագիրք, էջ 146)*։

ՉԱՐԱՓԱՌՈՐԵՆ, մկբ. **Չար փառքի արժանի կերպով:** Նա ստոր կերպով խորացնում էր Կլարիսի մեջ այն, ինչը Վալտերն իրեն թույլ չէր տալիս նրա մեջ փորփրել՝ փորձանքի վիհը .... **չարափառորեն** հանճարեղը .... *(ԱԱ, էջ 286)*:

ՉԱՐՔՈՒՀԻ, գ. (փխբ.): **Կին սատանա:** Սենյակս մութ չէ այնքան, որ չերևա սատանան, // Ահա, որպես **չարքուհի**, նստել է մեկն իմ առաջ .... *(Տոն.[2], էջ 76)*:

ՉԱՓԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափի զգացում ունենալը:** .... Նա միաժամանակ այդ մեծերին չի տվել պարզության և խորը բանիմացության ավելի լավ **չափազգացողություն** .... *(XX դար, էջ 202)*:

ՉԲԱՆՈՒԿ, ած. **Ոչ բանուկ՝ շատ երթևեկություն չունեցող, քիչ երթևեկվող:** [Մուժիկը] .... դանդաղ քայլում էր **չբանուկ** չոր ճանապարհի գուղձերի միջով *(Տոլ., էջ 247)*:

ՉԵՄՊԻՈՆԱԲԱՐ, մկբ. **Չեմպիոնի նման, ինչպես չեմպիոնը:** .... Ու փրկվեց երգս մեն-մի ձայնումով – կա՛նչ **չեմպիոնաբար** *(Նիկ., էջ 29)*:

ՉՈՉԱՍԱՅԼԱԿ, գ. **Քայլելուն օգնող սայլակ**: .... Այն տարիքում, երբ անձնական մեքենաս պետք է **չոչասայլակը** լիներ, բավականին սահուն քայլվածք ունեմ .... *(Ազն., էջ 176)*:

ՉՈՐԱՓԱՅՏ, գ. **Չորացած փայտ:** .... Մինչդեռ դրան հակառակ՝ ծառերը այսուայսքան խորանարդ մետր ծավալով, որոշակի որակի **չորափայտ** են նշանակում *(ԱԱ, էջ 200)*:

ՉՈՒՄԱԿԱԿԱՆ, ած. **Չումակների, նրանց պատկանող:** **Չումակական** սայլը քարշ է գալիս ճանապարհով *(Վագ., էջ 507)*:

ՉՐՄՓԱՁԱՅՆ, ած. **Չրմփոցի ձայնով**: **Չրմփաձայն** փնթի քայլքը թվում էր բավականին խելապակաս մարդու մի վայրենի կատակ *(Լեմ, էջ 46)*:

ՉՓՉՓԱՆ, ած. **Չփչփացնող, չփչփոց հանող:** Իսկ երբ նա բարկացած ժամանակ սկսում էր արագ-արագ խոսել, ապա թեթևակի թլվատում էր, որովհետև լեզուն ընկնում էր կոտրված ատամի փոսի մեջ և նրա խոսքերը դարձնում էր **չփչփան**, ոչ պարզ *(Շոլ., էջ 193)*:

Պ

ՊԱԼԱՐԱՔԱՐ, գ. **Չեչաքար:** Այժմ կարող եք **պալարաքարով** հեռացնել կոշտուկներն ու մեռած մաշկը *(Հմg, News 184 Media, 11.12.2021)*:

ՊԱՀԱԿԱԽՄԲԱՅԻՆ, ած. **Պահակախմբի կողմից կատարվող:** .... Բաժիններից մեկը նախատեսում էր **պահակախմբային** ուղեկցություն կատարել .... *(Յակ., էջ 517)*:

ՊԱՀԱԿԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Պահակային ծառայություն:** Նավախմբի պաշտպանությունը **պահակածառայությամբ** *(Յակ., էջ 132)*:

ՊԱՀԱԿԱՈՒՂԵԿՑՈՒՄ, գ. **Ուղեկցում պահակների՝ պահակախմբի միջոցով, պահակաուղեկցելը:** Նավերի **պահակաուղեկցում** *(Յակ., էջ 530)*:

ՊԱՀԱԿՈՒՂԵԿՑԵԼ, նբ. **Պահակային ուղեկցում կատարել, պահակախմբով ուղեկցել:** .... Պահանջեց սանկցիա տալ **պահակուղեկցելու** անգլիական նավահանգիստը գնացող ամերիկյան նավերին *(Յակ., էջ 535)*:

ՊԱՀԱՆԿԱՐ, գ. **Տվյալ պահին՝ վայրկյանին արված նկար:** Սակայն չկարողացա որոշարկել **պահանկարը**, քանի շրջանակ փորձեցի, չստացվեց, միշտ աչքերդ ժպիտներիդ մեջ դուրս են մնում *(ՎՀ², էջ 333):*

ՊԱՀԱՊԱՆՈՒՀԻ, գ. **Կին պահապան:** -Բայց մենք վերստեղծում ենք միջավայրը, մթնոլորտը,- ասաց **պահապանուհին** *(Դով., էջ 168):*

ՊԱՀՈՐԱԿԵԼ, բ. (մնգ.): **Որակը բարելավելու համար համապատասխան պայմաններում պահել:** Խմորիչների վրա գինենյութը **պահորակելիս** .... խմորիչների բջիջների ավտոլիզը ավելի ինտենսիվորեն է ընթանում *(Դասագիրք, էջ 74)*:

ՊԱՀՎԱԾՔԱՅԻՆ, ած. **Պահվածքի ժամանակ՝ ընթացքում կատարվող, պահվածքին հատուկ պահվածքի:** Ներանձնային կոնֆլիկտների ժամանակ **պահվածքային** հակազդումները լինում են .... *(Տան., էջ 257):*

ՊԱՀՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. (գոտնտ.): **Պահելու՝ պահպանելու ունակություն՝ հատկանիշ, դիմացկունություն**: Ապացուցված է, որ ծառերի լավ մշակման, չափավոր ոռոգման, ճիշտ պարարտացման դեպքում պտուղների **պահունակությունը** բարձրանում է (*Սաֆ., էջ 194*):

ՊԱՀՈՒՍՏԱՏՈՒ, գ. **Պահուստ տվողը՝ կուտակողը**: Եթե երաշխիք է տեղադրվում մոսկովյան բորսայում, ապա վերլուծվում են **պահուստատուն**, պահուստի միջոցով անվտանգության վաճառքի ժամկետը և դրա միջնորդությունը *(Հմգ, rioo.ru):*

ՊԱՃՈՒՃԱՊԱՏ, ած. **Այստեղ՝ պաճուճանքներով՝ կեղծ՝ ավելորդ զարդարանքանման հավելվածներով առատ՝ ճոխ:** Հա-

սարակությունը անտարբերությամբ ընդունեց նրա …. «Ռեգենտ Պուաստել» **պաճուճապատ** վիպակը *(Մոր., էջ 257)*:

ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒՄ, գ. **Պայծառ փայլելը:** …. Երբ մարմինները հուրհրատում էին՝ մինչև որ տեսանելի էր դառնում հոգու **պայծառափայլումը**, դա թափանցում էր Վալտերի մեջ սարսափեցնող ուժգնությամբ *(ԱԱ, էջ 285)*:

ՊԱՅՏԱՏԱԿ, գ. **Պայտերի տակի՝ հողի հետ շփվող մասը:** Սառույցը լպրծուն էր, բոլորի **պայտատակերի** բութակները սառույցը մաշել էր *(Շոլ., էջ 162)*:

ՊԱՆԴՈՒԽՏԱԿԱՆՉ, ած. (բնստ., փխբ.): **Պանդուխտներին կանչող՝ տուն բերող: Պանդուխտականչ** զանգակներով,// Սրբամասունք ի՛մ աղբյուրներ *(գուս. Աշ.[4], էջ 147)*:

ՊԱՇՏՈՆԱԿՑՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ պաշտոնակից, պաշտոնակից կին՝ աղջիկ:** Էսպեն շրջվեց ու տեսավ շիկահեր իր **պաշտոնակցուհուն** *(Կլ., էջ 156)*:

ՊԱՇՏՊԱՆԱԹՈՒՄԲ, գ. **Թումբ՝ կառուցված պաշտպանության նպատակով**: Իսկ քարուքանդ եղած աղյուսներից, մարմարից ու քարաբեկորներից ֆեոդալական բարոնները կառուցել էին **պաշտպանաթումբեր** և բարձր ու մռայլ՝ նեղ ու հրակնատներով քարե պարիսպները *(Պար., էջ 45)*:

ՊԱՌԿԵԼԱԹՈՌ, գ. **Պառկելու համար օգտագործվող աթոռ:** Այստեղ **պառկելաթոռներն** ու հովանոցները սպասում էին ենթադրյալ հաճախորդներին *(Ուելբեք[1], էջ 131)*:

ՊԱՍՏԱՌԱՎԱՃԱՌ, գ. **Պաստառ վաճառող:** …. Էրտյե՝ **պաստառավաճառ** …. *(Մոր., էջ 344)*:

ՊԱՏԱՐԱԳՎԵԼ, չբ., (փխբ.): **Փառաբանվել:** Հավատի մեծ գեղագիտությամբ ապրեցի այն և նու՛յնիսկ մրմնջացի. «**Պատարագվա՛ծ** է օրը» *(Նիկ., էջ 34):*

ՊԱՏԵՐԱԶՄԱՄԵՐՁ, ած. **Պատերազմ լինելուն մոտ:** Այն տատանվում է խախուտ խաղաղության և **պատերազմամերձ** վիճակների միջև *(Հմգ, openarmenia.am):*

ՊԱՏԵՐԱԶՄԱՎՏԱՆԳ, ած. **Պատերազմի վտանգ պարունակող:** Դարդանելի նեղուցի **պատերազմավտանգ** իրավիճակն օգնեց, որ 1922-ի հոկտեմբերին .... *(ՋՔ, էջ 145):*

ՊԱՏԺԱԲԱԺԻՆ, գ. **Պատժաչափ**: Էլ ի՞նչը պիտի մեզ մխիթարի, եթե ոչ կիսել // **Պատժաբաժինը** Իսկարիովտացու, Սիմոն-Պետրոսի .... *(Տոն.[2], էջ 7):*

ՊԱՏԿԵՐԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ, ած. (արվ.): **Պատկերների միջոցով արտահայտված գաղափարական:** Այստեղ նկարիչ-վարպետը որմնանկարների **պատկերագաղափարական** և գեղարվեստական խնդիրները լուծել է զուգահեռաբար *(Հակ., էջ 26):*

ՊԱՏԿԵՐԱՄՈՏԻՎ, գ. (պատմ.): **Պատկերներով ստեղծված՝ արտահայտված մոտիվ**: Եղել են նշանագրերի և **պատկերամոտիվների** մասնակի ի մի բերման առանձին փորձեր *(Մով.[1], էջ 11):*

ՊԱՏԿԵՐԱՄՈՒՏ, գ. **Արտատպիչ սարք, սկաներ:Պատկերամուտի** (սկաներ) սարքերի՝ Սկաներ Մաստեք Ա-4 վառարանի ռետինե լիսեռի փոխարինում նորով *(Հմգ, azdarar.am):*

ՊԱՏԿԵՐԱՆՇԱՆ, գ. (իմ. նորբ.) (պատմ.): **Այլ իմաստ՝ գրանշան արտահայտված պատկերով՝ առարկայի նկարով:** ... Բրոնզե թասերի մեծ մասի վրա հանդիպում են առյուծի գլխի և աշտարակատեսք **պատկերանշաններ** *(Մով.[2], էջ 61):*

ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ած. **Պատմական և ազգագրական:** Մենագրությունը վերջին հարյուրամյակի ընթացքում **պատմաազգագրական** վերոհիշյալտարածքում գրառված վիպական, քնարական ու մեծաքանակ նյութերի բանագիտական քննությունն է *(ՊԲՀ, 2021[1], էջ 249):*

ՊԱՏՄԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատմությունը ճանաչելը**: Նժդեհյան գաղափարախոսության մեջ մեծ տեղ ունեն ինքնաճանաչողության և **պատմաճանաչության** դրույթները ..... *(ՎՍ, էջ 43):*

ՊԱՏՄԱՇՈՒՆՉ, ած. **Պատմություն շնչող, պատմական տվյալների մասին հիշեցնող:** .... Շրջում էինք այդ անտառապատ լեռներում, գնալով Հաղարծին, Գոշավանք՝ .... հայրենի **պատմաշունչ** բնության գեղեցկությամբ հմայված .... *(Սուր., էջ 233):*

ՊԱՏՈՒՀԱՆԱԽՈՐՇ, գ. **Պատուհանը տեղադրելու համար պատի մեջ պատրաստված խոռոչ, բատուց:** Տանյան թեթև սահեց **պատուհանախորշի** մեջ *(Դով., էջ 190):*

ՊԱՏՎԵՐԱԽԵՂԴ, ած. **Չափից դուրս շատ պատվերներ: Պատվերախեղդ անել- չափից դուրս շատ պատվերներ տալ:** Հարուստ օտարականներն ու Իտալիա այցելող ռուսները **պատվերախեղդ էին անում** նկարչին .... *(Վագ., էջ 107):*

ՊԱՐԱՎԱԶՔ ԱՆԵԼ, բ. (դիպվ.): **Պարային շարժումներ անել:** |Ավտոմեքենաները| ընթանում էին մութ բեմի վրա լուսարձակի կլոր շողքի մեջ **պարավազք անող** պարուհու նման .... *(ՎՍ, էջ 101):*

ՊԱՐԱՐՏԱՎԻԶ, ած. **Գեր, չաղ վիզ ունեցող՝ վզով:** Ուներ նաև նկարներ, որոնք պատկերում էին երանությամբ ղեյլան քաշող **պարարտավիզ** թուրքերի *(Վագ., էջ 71):*

ՊԱՐԱՖԻՆԱՅՈՒՂ, գ. **Պարաֆինային յուղ:** Առաջացավ **պարաֆինայուղի,** մեխերի, ... պայտերի պակասորդ **....** *(Օրուել, էջ 70):*

ՊԱՐԱՖԻՆԱՊԱՏԵԼ, բ. **Պարաֆինով պատել**: Աշտանակի վրայի մոմերն արդեն վաղուց վառվել-վերջացել էին՝ **պարաֆի-նապատելով** մոմակալների ոսկեզօծ մակերևույթը *(ԱԳ, էջ X///):*

ՊԱՐԵՆԱՏԵՍԱԿ, գ. **Մննդատեսակ կամ սննդամթերքի տեսակ:** Գինին, շնորհիվ իր քիմիական բաղադրակազմի, պատկանում է սննդի առանձնահատուկ **պարենատեսակներին** *(Դասագիրք, էջ 49)*:

ՊԱՐԵՐԵԿՈՒՅԹ, գ. **Պարի երեկույթ:** Կարծում եմ՝ մեր փոքրիկ **պարերեկույթը** վաղաժամ ավարտ կունենա *(Ուելբեք 1, էջ 60):*

ՊԱՐՈՒՅՐԱՆՄԱՆ, մկբ. ած. **Պարուրաձև, ինչպես պարույ-ը**: Եվ իրոք գալարվեց, գալարվեց **պարույրանման**... *(Պետ, էջ 136):*

ՊԱՐՈՒՍԻՆԱԾԱԾԿ, ած. **Պարուսինով ծածկված**: .... Բեռ-նատարները, որոնց մեծ տոնավաճառներում անասուններ տե-ղափոխելու համար օգտագործվող **պարուսինածածկ** կցասայ-լակներ էին միացրած *(ԱԻՊ[1], էջ 275):*

ՊԱՐՏԱՀԱՎԱՔ, ած., գ. **Պարտքը հավաքող:** .... Իրեն կա-րող են տեսնել նախկին գործակատարուհու հետ շփվելիս, որի հայրը **պարտահավաք** էր եղել Բեթերսիում *(ՋՔ, էջ 57):*

ՊԵՄԶԱՔԱՐ, գ. **Պեմզա քար՝ սնկաքար՝ չեչաքար:** - Այո, կամ եթե կուզեք **պեմզաքարի** նման են *(XX դար, էջ 33):*

ՊԼՊԼԱՆԱՉՅԱ, ած. **Պլպլան՝ փայլուն աչքերով:** Տե՛ս ՇՈՐԵՄԱՐԴ-ի օրինակը:

ՊՂՆՁԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ած. **Պղնձագույնին տվող կանաչավուն:** Այդ հովիտը ձգվում էր դեպի արևելք՝ մի **պղնձականաչավուն** տարածք .... *(Ժիոնո, էջ 18):*

ՊՆԴԱՃԱԿԱՏՈՐԵՆ, մկբ. **Համառորեն, կամակորաբար**: ... Իսկ ես **պնդաճակատորեն** կպչում էի նրան իմ նկարներով ու խոսակցություններով... *(Պետ, էջ 58):*

ՊՈԶԱՓՈԿ, ած. **Ոզերին կապված փոկ:** Կախ է ընկնում սատանան եզների **պոզափոկից** և մինչև որ մի երկայնք է գնում քսան անգամ վար է ընկնում *(Շոլ., էջ 388):*

ՊՈՉԱՄԵԾ, ած. **Մեծ պոչ ունեցող**: Մի պահ փորձեցի պատկերացնել գեղանի ջրահարսին, որ **պոչամեծ** Աղվեսի թևը բռնած հանդարտ սուզվում է փրփուր-հորձանքի մեջ.... *(Կայարան, 2021, թ.2):*

ՊՈՌՆՈԿԱՅՔ, գ. **Պոռնոգրաֆիական բովանդակություն ունեցող կայք:** .... Որը տարիների ընթացքում դարձել էր **պոռնոկայքի** չափանիշ *(Ուելբեք 1, էջ 21):*

ՊՏՂԱԲՈՂԲՈՋ, գ. (գոտնտ.): **Բողբոջ, որի ծաղկից կարող է պտուղ առաջանալ:** ... Խառը **պտղաբողբոջները** տալիս են ինչպես ծաղիկներ, այնպես էլ տերևներ կամ ընձյուղներ (*Սաֆ., էջ 7*):

ՊՏՂԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Պտուղ ձևավորելը, ձևավորված պտուղները:** Այս շրջանում ծառերը բուռն աճում են, ... բայց **պտղագոյացությունները** չեն առաջանում (*Սաֆ., էջ 23*):

ՊՏՂԱԸՆՁՅՈՒՂ, գ. (գղտնտ.): **Պտղակիր ընձյուղ**: …. Պըտղաբերում են հիմնականում **պտղաբնձյուղների** և նիզակների վրա …. (*Սաֆ., էջ 159*):

ՊՏՂԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, գ. (գղտնտ.):**Պտղի աճի նպաստավոր պայմանների ստեղծում:** Նման խոնավության պայմաններում լավագույն կերպով է ընթանում **պտղակազմակերպումը** *(ԳՄ,ՎԹ, էջ 14)*:

ՊՏՂԱԿՈԹՈՒՆ, գ. (գղտնտ.): **Պտղի կոթուն**: …. Ձմեռային սորտերի բերքը հավաքում են քաղի հասունացման փուլում, երբ …. **պտղակոթունը** հեշտությամբ անջատվում է պտղաճյուղից …. (*Սաֆ., էջ 191*):

ՊՏՂԱՄԱՇԿ, գ. **Պտուղի մաշկը՝ կեղևը**: Տանձի քաղի հասունացման նշաններն են սերմերի գորշանալը և **պտղամաշկի** գունավորման սկսվելը (*Սաֆ., էջ 192*):

ՊՏՂԱՊԱՅՈՒՍԱԿ, գ. (գղտնտ.): Բացատրությունը օրինակում: **Պտղապայուսակ** է կոչվում պտղաբողբոջ ունեցող օղանիստի ծայրի մասը, որը հաջորդ տարին տալիս է կարճ աճ, բայց ուժեղ հաստանում է և արտաքինից հիշեցնում է պայուսակ (*Սաֆ., էջ 10*):

ՊՏՂԱՌԱՋԱՑՈՒՄ, գ. (գղտնտ.): **Պտղի առաջացումը, գոյացումը:** Ուժեղ գեներատիվ աճի դեպքում պտուղները օգտագործում են չափազանց շատ էներգիա, որը կարող է բացասաբար անդրադառնալ հետագա **պտղառաջացման** և բերքատվության վրա *(ԳՄ,ՎԹ, էջ 16)*:

ՊՏՂԱՏԵՍԱԿ, գ. (գղտնտ.): **Պտղատու տեսակի ծառ:** Հայաստանի պայմաններում գրեթե բոլոր **պտղատեսակների** վեգետատիվ բողբոջները լավ հասունանում են …. (*Սաֆ., էջ 8*):

ՊՏՂԱՐՄԱՏ, գ. **Արմատապտուղ տվող բույս(եր):** .... Վաղ ամռանը **պտղարմատների** համար նախատեսված երկու դաշտը չցանվեցին .... *(Օրուել, էջ 66):*

ՊՏՂԱՓՏՈՒՄ, գ. (գղտնտ.): **Պտուղը փտելը, պտուղի փրտում**: **Պտղափտումը** առաջացնում է Մանիլիա սունկը (*Սաֆ., էջ 198*):

ՊՏՈՒՏԱԿԱԲԱՆԱԼԻ, գ. **Պտուտակների բանալի:** Նա մեջքի վրա պառկած էր մեքենայի տակ, ծնկները դուրս ցցած և զրնգացնում էր **պտուտակաբանալիով** *(Բեեկ., էջ 125):*

ՊՏՏԱԲԱՐՁ, գ. **Պտտվող բարձ: Պտտաբարձը** անկողնային հիվանդների խնամքի համար նախատեսված անփոխարինելի և շատ հարմար պարագա է *(Հմց, Yerevan Home Care, LLC):*

ՊՏՏԱՀՈՐՁՔ, գ. **Պտուտաձև հորձանք**: **Պտտահորձքում** հայտնված ծովը իր հետ գալարում էր կղզիներ .... *(Կայարան, 2014, թ. 3):*

ՊՏՏԱՍՂՈՑ, գ. **Պտտվելով կտրող սկավառակ ունեցող սղոց:** Դա թույլ կտա լուսավորել ու ձմռանը ջերմացնել գոմերը, ինչպես նաև **պտտասղոց** .... ու կթելու էլեկտրական մեքենա բանեցնել *(Օրուել, էջ 54):*

ՊՐԿԱԳՐԿԱԾ, 1. **Հրկտր. դերբայ պրկագրկել բայի:** 2. ած. **Պիրկ գրկած:** Բարձր դասարանների ավելի կանացի աշակերտուհիները նորաձև, ազդրերը **պրկագրկված,** նեղ շրջազգեստներով էին .... *(Բեեկ., էջ 61-62):*

Ջ

ՋԱԽՋԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ջախջախված վիճակ, այստեղ՝ հոգեկան ընկճվածություն**: Պոլովցևի ձայնը անճանաչե-

լիորեն կամացուկ էր, Յակով Լուկիչն այդ ձայնի մեջ զգաց ինչ-որ **ջախջախվածություն**, մեծ տագնապ և հոգնածություն *(Շոլ.)*:

ՋԱՀԱՁՈՂ, գ. **Ձող, որի վրա ամրացված է ջահը:** Ջահաձողի մոտ աթոռ կար դրված .... *(Կլ., էջ 96)*:

ՋԱՐԴԻՉ-ՉԱՆՉԱՆՋԱՏԻՉ, գ. (մսնգ.): **Խաղողի չանչերը ջարդող և անջատող սարք**: .... Խաղողը անցկացնում են **ջարդիչ-չանչանջատիչով** .... *(Դասագիրք, էջ134)*:

ՋԵՐՄԱՀՈՐԴԱՆՔ, գ. **Ջերմության հորդելը**: .... Օմար Խայամը կռահեց, թե .... **ջերմահորդանքն** ու անուժ ոտքերն ինչ էին նշանակում *(Ռուշդի, էջ 432)*:

ՋԵՐՄԱՊԱՀՈՐԱԿՈՒՄ, գ. (մսնգ.):**Ջերմային պայմաններում պահորակելը**:.... Բերքի տարուն հաջորդող գարնանն էգալացվող գինին երկարատև **ջերմապահորակման** է ենթարկվում արևի տակ .... *(Դասագիրք, էջ 153)*:

ՋԵՐՄԱՊԱՇՏՊԱՆԻՉ, ած. **Ջերմությունից, այրվելուց պաշտպանող**: Անպայման օգտագործիր **ջերմապաշտպանիչ** ցողաշիթ՝ մազերը պաշտպանելու համար *(Հմգ, am.orifla,me.com)*:

ՋԻՆՍԵ, ած. **Ջինս կտորից կարված**: Վիան, որ դեռ զարմացած էր, իր կարճատև շապիկն ու **ջինսե** շալվարը հանեց ու երկար զգեստը գցեց վրան *(Պալ., էջ 268)*:

ՋՐԱԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ, գ.**Ջրային գոյապահպանական համակարգ:** .... Ոչ միայն կանխարգելում են **ջրաէկոհամակարգերի** կենսաձին աղտոտումը .... *(ՍԹ, էջ 57)*:

ՋՐԱՄԱՔՐԻՉ, ած. (իմ. նորբ.) **Ջուրը մաքրող՝ սրբող:** Առջևի ապակու վրա **ջրամաքրիչ** սլաքները կոր-կոր շարժվում էին անընդհատ *(Սուր., էջ 240)*:

ՋՐԱՔԻՍԵ, ած. **Ջրաքիսի մորթուց պատրաստված**։ Նա մինչև վիզը փաթաթվել է **ջրաքիսե**... մի մուշտակի մեջ ... *(ԱԻՊ[1], էջ 133)։*

Ռ

ՌԱԲԻԶԱՆՄԱՆ, մկբ., ած. **Ռաբիզի՝ աղավաղված հնչող ժողովրդական երգի նման։** Ծանոթ-անծանոթ երգեր … կարող էին տհաճ էլ գալ ականջիս՝ **ռաբիզանման** հնչելով *(Սուր., էջ 337)։*

ՌԱԴԻՈՀԵՌԱԳՐԱՎԱՐ, գ. **Ռադիոհեռագրիչ։** …. Իմ բախտից այդ մասին իմացավ **ռադիոհեռագրավարներից** մեկը *(Բեեկ., էջ 290)։*

ՌԱԶՄԱԵՐԹ, գ. **Ռազմական երթ։** Իսկ երբ **ռազմաերթից** հետո պահեստ էին հանձնում փամփուշտների արկղերը, մեկը թոցրի *(Բեեկ., էջ 118)։*

ՌԱԶՄԵՐԹԱՅԻՆ, ած. **Ռազմական երթին՝ ռազմարշավին վերաբերող։** ….Այն բրիտանական փոքրաթիվ **ռազմերթային** զորք էր *(ՋՔ, էջ 137)։*

ՌՆԳԵՂՋՅՈՒՐԱԽՏ, գ. **Ռնգեղջյուրների ախտ։** Դե, պարոն Բոտար, դեռ ժխտու՞մ եք **ռնգեղջյուրախտի** հավանականությունը *(XX դար, էջ 314)։*

ՌՈՄԲԱՇՐՋԱՆԱԿ, գ. (արվ.)։ **Ռոմբաձև շեղանկյուն շրջանակ։** Գլխավոր բեմառաջքը զարդարված է երկրաչափական ու բուսական ոճավորված **քանդակամոտիվներով,** որոնք ընդգրկված են խոշոր ռոմբաշրջանակների մեջ *(Հակ., էջ 19)։*

ՌՈՒՍԱԳԻՐ, ած. **Ռուսերեն գրերով, ռուսատառ։** «…. Ահա թերթի անունը։ **Ռուսագիր** է։ Ամիս-ամսաթիվ» *(Նիկ., էջ 155)։*

ՌՈՒՍԱԳԻՐ, գ. **Ռուսերեն գրող՝ ստեղծագործող:** Ճաշարանում սեղանակիցներս էին մի **ռուսագիր** հայ գրող Մոսկվայից և մի անծանոթ ռուս մարդ .... *(Սուր., էջ 169):*

ՌՈՒՍԱՀԱՃՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռուսներին հաճելի լինելը:** Ամեն քայլի դիմեք երկիրը հզորացնելու, ոչ թե **ռուսահաճության** արժանանալու համար *(Հմգ, hanrapetutyun.am):*

Ս

ՍԱԴԱՓԱՆԱԽՇ, ած. **Սաղափով՝ սաղափի գույնով նախշված:** Սազ է կապել իմ սրտին **սաղափանախշ** աշխարհ է *(գուս. Աշ.[4], էջ 107):*

ՍԱԹԵ-ՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Սաթի գույնին տվող ոսկեգույն:Սաթե-ոսկեգույն** է, համամասնական, ամբողջական, մեղրաածաղկային անուշահոտով *(Դասագիրք, էջ 145)*:

ՍԱԼՈՐԱԿԱՊՈՒՅՏ, ած. **Սալորի գույնի կապույտ գույն ունեցող:** Եվ նրա շուրթերն էլ **սալորակապույտ** չեն.... *(Ֆրիշ, էջ 48):*

ՍԱԼՈՐԱՇՈՒՐԹ, գ. **Սալորի նմանվող շուրթ:** .... Եվս մեկ անգամ տեսնում եմ նրա **սալորաշուրթերը** *(Ֆրիշ, էջ 33)*:

ՍԱԿԱՎԱՆԻՇ, ած. (պատմ.): **Քիչ՝ սակավ նիշ(եր) ունեցող:** ... Մեր ունեցած բնագրերը **սակավանիշ են** ... *(Մով.[1], էջ 30):*

ՍԱՀՄԱՆԱԿԵՏ, գ. **Սահմանված կետ**: Մեր ժառանգականությունը յուրաքանչյուրիս օժտում է մի շարք հուզական **սահմանակետերով**, որոնք որոշում են մեր խառնվածքը .... *(ԴԳ, էջ 26):*

ՍԱՀՄԱՆԱՐԱՐ, ած. **Բաժանող՝ անջատող՝ սահմանազատող:** Նախագահը «**սահմանարար**, բաժանարար գծեր» է դնում

իշխանության և արտախորհրդարանական ու խորհրդարանական քաղաքական ուժերի միջև *(Հմց, 168.am)*:

ՍԱՀՆԱԿԱՓԱՅՏ, գ. **Սահնակի տակի ձյան հետ շփվող փայտերը:** Իր դիմաց խոսակցության և **սահնակափայտի** ճռնչոց լսելով, հեծյալը նորից կանգնեցրեց ձիուն *(Շոլ., էջ 4)*:

ՍԱՂՄՆԱՄԱՆՈՒԿ, գ. **Սաղմից նոր մանուկ դարձած, փխբ.՝ սաղմնային վիճակում գտնվող:** Ձեռքը թուլանում է, ասես դեռ **սաղմնամանուկ** է: Հ.Գ.2. - բայց .... նա (պատմվածքը) դուրս գալ չուզեց: Ուզեց բարուրված ու **սաղմնամանուկ** էլ մնա՛լ *(Նիկ., էջ 42)*:

ՍԱՅԼԱՇԱՐԱՆ, գ. **Սայլաշար, իրար հետևից գնացող սայլերի շարք:** Հիշեցրել [են] տափաստանային ճանապարհներով քարշ եկող չումակների գույնզգույն **սայլաշարանների** մասին, որ հայտնվում էին որպես Ղրիմի հարազատ ավետաբերներ *(Վազ., էջ 505)*:

ՍԱՆԴՂԱԿԱՎՈՐՎԱԾ, բ. **Սանդղակների կամ աստիճանների բաժանած:** .... Y-ը ցույց է տալիս այդ խմբի անդամների պատահական փոփոխվող քանակական կամ **սանդղակավորված** երկրորդ հատկանիշի ցուցանիշները *(Մել., էջ 117)*:

ՍԱՆԴՂԱՄՈՒՏ, գ. **Սանդուղքի մուտքը. այնտեղ, որտեղից սկսվում է սանդուղքը:** Փող էր խնդրում միկիտանի **սանդղամուտին** *(Դով., էջ 179)*:

ՍԱՊՆԱՓՐՓՐԵԼ, նբ. (փխբ.): **Օճառագույն՝ ճերմակ դարձնել:** Ինչպես արագ վազքն ու հոգնածությունը ձիուն ծածկում են գորշ փրփուրով, այնպես էլ ժամանակն Օսիպին **սապնափրփրել** էր սպիտակ մազերով .... *(Շոլ., էջ 208)*:

ՍԱՌՆԱԽԵՂԴՈՒԿ, ած. **Սառը և խեղդող**: .... Սուր հոտը, որ բռնել էր մառանի **սառնախեղդուկ** օդը .... *(ԱԱ, էջ 35):*

ՍԱՌՆԱՈՍԿՈՐ, ած. (բնստ., փխբ.): **Սառը՝ ցուրտ, անտարբեր:** Կատարելիս գերի մնաց անկատարին // Անտարակույս աշնան ծոցում **սառնաոսկոր**.... *(Տոն.[3], էջ 57):*

ՍԱՌՑԱԲԱԼԵՏ, գ. **Բալետ սառույցի վրա:** Հետո ինչ-որ աղջիկներ հայտնվեցին՝ **սառցաբալետից** *(Դով., էջ 88):*

ՍԱՌՑԱԲՐԴՈՏ, ած. **Սառցակալած բուրդ ունեցող**: .... Կտրիճ միրզան է, որ սառցադաշտեր է նվաճել .... **սառցաբրդոտ** ոչխարներին պարտության մատնել *(Ռուշդի, էջ 138)*:

ՍԱՌՑԱՊԱՏՆԵՇ, գ. **Սառցե պատնեշ:** .... Աղջիկներից մեկը իր 8 տարեկանում սայթաքեց ձմռան **սառցապատնեշին** ու սառեց .... *(Նիկ., էջ 58):*

ՍԱՏՈՒՐԱՏՈՐԵԼ, բ. (քիմ.): **Սատուրացիայի ենթարկել՝ գազավորել հեղուկը:**Կոնդիցիոն գինենյութը ֆիլտրում են, սառեցնում ...., **սատուրատորում** ...., հագեցնում ածխաթթով *(Դասագիրք, էջ 235)*:

ՍԱՐԱՐՏ, գ. (բնստ.): **Սարն ու արտը:** Իր **սարարտը** հերկող գյուղացին// Անհոգ զլել է մի հին հորովել *(Սարմեն, էջ 143):*

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԿԱՆ, ած. **Սարդարին պատկանող**: Խանության մահալներում գոյություն ունեցող կարգի համաձայն, ձևականորեն Երևանի հողն էլ համարվել է ամբողջությամբ **սարդարապատկան**... *(Հակ., Սիմ.,էջ 67):*

ՍԱՐԴՈՍՏԱՅՆԱԹԵԼ, գ. **Սարդոստայնի թել:** .... Ռիչըրդը թեքվեց .... անհամբեր քայլելու այն **սարդոստայնաթելի** հետագծով, որ ձգվում էր իր ու Քլարիսայի միջև .... *(Վուլֆ, էջ 145):*

ՍԱՐԴՈՍՏԱՅՆՎԵԼ, բ. **Սարդոստայնի նման հյուսվել**: Յոսարյանը պարզորոշ տեսնում էր **սարդոստայնվող** նենգ խելամտությունը *(ՋՀ, էջ 60)*:

ՍԱՓՈՐԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Սափորի տեսք ունեցող՝ տեսքով:** Կավանոթի **սափորատեսք** նշան *(Մով.[2], էջ 87)*:

ՍԱՓՐԱՎՐՁԻՆ, գ. **Սափրվելու վրձին:** .... Բռնեց Վիտորիոյի **սափրավրձինը** *(ՋՀ, էջ 305)*:

ՍԵԼՖԻԱՍԵՐ, ած. (դիպվ.): **Ինքնալուսանկար անել սիրող:** Երկրի **սելֆիասեր** ղեկավարները *(Հմg, m.mamul.am)*:

ՍԵԽԱԿԼՈՐ, ած. **Սեխի կլորություն ունեցող**: Յոսարյանը .... տեսավ .... Աարֆիի բարեհամբույր, **սեխակլոր**, մանրաչք դեմքը .... *(ՋՀ, էջ 374)*:

ՍԵՊԱՆՇԱՆ, գ. (պատմ.): **Սեպագիր՝ սեպաձև նշան:** ... որի ar և ti վանկերը գրված են **սեպանշաններով** ... *(Մով.[1], էջ 29)*:

ՍԵՌԱՀԱՍԱԿԱՅԻՆ, ած. **Սեռին և հասակին բնորոշ՝ հատուկ:** Այն բնութագրվում է արեալով, թվաքանակով, խտությամբ, **սեռահասակային** կազմով և այլն *(ՍԹ, էջ 8)*:

ՍԵՎԱԿԱՆՋԻԿ, ած. **Սև ականջներ ունեցող՝ սև ականջներով**: ... **Սևականջիկ** սկյուռիկ էր... *(Դար., էջ 57)*:

ՍԵՎԱՄՇՈՒՇ, ած. **Սև մշուշի գույնի:** Իջնող մթնշաղում խոհանոցը **սևամշուշ** մի կարմրությամբ էր լցվել *(Սուր., էջ 344)*:

ՍԵՎԱՇՐՋԱՆԱԿ, ած. **Սև շրջանակ ունեցող՝ շրջանակով:** .... **Սևաշրջանակ** հաստ ակնոցի ապակիները .... *(Սուր., էջ 264)*:

ՍԵՎԵՌԱՀԱՅԱՑՔ, մկբ. **Սևեռված հայացքով:** Սակայն նույն հերկով, **սևեռահայացք** // Իմ հորեղբոր ու հոր արյան հետքով // Կգնա, // Կասվի // Ուրիշ շուրթերով *(Տոն.[4], էջ 89)*:

ՍԵՐՄԱԿԵՏ, գ. **Սերման՝ սկզբնավորման կետ:** Կա մի **սերմակետ**, որից ենք սկսել ամենքս *(Նիկ., էջ 77):*

ՍԵՐՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սերնդածնություն:** Հենց միայն այս արատն ունեցող կնոջից չպիտի սպասել, որ նա **սերընդաբերության** իր առաքելությունը կկատարի արժանապատիվ բնականությամբ *(ՎՍ, էջ 30):*

ՍԵՐՈՒՑՔԱՓՐՓՈՒՐ, գ. **Այստեղ՝ ընտրյալ վերնախավ:** .... Հիսունհինգ տարի նա անգլիական հասարակության **սերուցքափրփուրի** մեջ էր նավել *(Վուլֆ, էջ 130):*

ՍԻԳԱՀԱՍԱԿ, ած . **Պերճ՝ փառահեղ հասակ ունեցող՝ հասակով:** Չնայած նա հիսունին մոտ կին էր, բայց հպարտ էր ու **սիգահասակ** .... *(Վագ., էջ 510):*

ՍԻԼԻԿՈՆԱՅԻՆ, ած. (փխբ.): - .... Աշխարհում իմ կրծքերի նմանը չկա: .... – Հա, տղամարդիկդ այդպիսին եք, միայն փչած **սիլիկոնային** եք սիրում, բնականը՝ հեչ *(Բակուր, էջ 10):*

ՍԻՐԱԹԵՎԻԿ, ած. (բնստ., փխբ.): **Սիրուց թևեր առած՝ սիրահարված:** Ես ծնվել եմ վառ գարնան վրանի տակ երկնքի,// Չի դադարի, չի հոգնի, **սիրաթևիկ** իմ միտքը *(գուս. Աշ.[3], էջ 12):*

ՍԻՐԱԹՐԹԻՌ, ած. (բնստ., փխբ.): **Սիրո թրթիռ՝ դող ունեցող:** Երգդ սրտի **սիրաթրթիռ** մի հնք է *(գուս. Աշ.[2], էջ 11):*

ՍԻՐԱԼՈՒՅՍ, ած. (բնստ., փխբ.): **Սիրով լցված:** Նա **սիրալույս** տաղեր բերեց *(գուս. Աշ.[1], էջ 68):*

ՍԻՐԱՀԱԿՈՒՄ, գ. **Հակում՝ նախատրամադրվածություն սիրո նկատմամբ:** Եթե ես զգայի միայն այդ **սիրահակումը՝** այդ փոխադարձ **սիրահակումը** .... որ անձնատուր լինելով իմ **սիրահակումին** .... **,** բայց այս տեսակ բան չկա *(Տոլ., էջ 183):*

ՍԻՐԱՀԱՐԳԱԼԻՑ, ած. **Սիրով և հարգալից:** Նա ավելի, քան առաջ վերաբերվում էր Աննային **սիրահարգալից** .... *(Տոլ., էջ 45):*

ՍԻՐԱՀԵՂԵՂ, ած. (բնստ.): **Սիրով հեղեղված՝ լցված:** Իղձ ու փափագ, հավատ ունեմ **սիրահեղեղ** *(գուս. Աշ.[4], էջ 19):*

ՍԻՐԱՀՈՒՇ, ած. (բնստ.): **Սիրո հուշ:** Ալվան-ալվան **սիրահուշ** վարդեր բազում ժպտացող.... *(գուս. Աշ.[3], էջ 66):*

ՍԻՐԱՌԱՏՈՐԵՆ, մկբ. **Սիրառատ կերպով, սիրառատաբար:** Աշխարհ ման եկած Ռուզանն ու ես, որ ծառի պես պինդ կպած եմ իմ Երևանին, իրարու գտանք **սիրառատորեն** *(Նիկ., էջ 38):*

ՍԻՐԱՏԱԾՈՒՆ, ած. **Սեր տածող:** .... Իսկ նրանց ետքից կաշվե բաճկոնով **սիրատածուն** հարմոնիկա կամ բալալայկա, կամ կիթառ էր նվագում *(ԿՎ, էջ 87)*:

ՍԻՐԵԼԻՔ, գ. **Սիրելու առարկա (զբաղմունք, անձ ևն):** Դավիթի գործն էր **սիրելիքի** վայելքը մարդկանց նվիրելը *(Սև., էջ 104):*

ՍԻՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Սիրողական վիճակ,** այստեղ՝ **իսկական սիրո վիճակ:** Ընդ որում, իհարկե էապես փոխվում է նաև պոռնկության բովանդակությունը, այսպես ասած, դեպի **սիրողականության** կողմը, նման մի բան *(Բեկ., էջ 101):*

ՍԿԱՎԱՌԱԿԱՏԵՍՔ, ած. (պատմ.): **Սկավառակի տեսք ունեցող, սկավառականման:** Տվյալ կնիքը .... միևնույն եռանիշ հիերոգլիֆ արձանագրությունն է կրում և՛ կողային մակերեսին ...., և՛ հատակին՝ **սկավառակատեսք** նշանից ներքև .... *(Մով.[2], էջ 76):*

ՍԿԶԲՆԱԹԵՐԹ, գ. **Սկզբի թերթ:** Զարդագիր սկզբնատառերին հաջորդում է բոլորագրով արված նրանց շարունակությունը՝ մեկական տող յուրաքանչյուր **սկզբնաթերթում** *(Հակ., էջ 57):*

ՍԿԶԲՆԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. **Սկզբում ստեղծվող հանգույց:**.... Պարզապես կանգնած էր անծայրածիր պողոտաների **սկզբնահանգույցում** .... *(Վուլֆ, էջ 67)*:

ՍԿԶԲՆԱՀՆՉՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. (պատմ.): Բացատրությունը օրինակում: .... **Սկզբնահնչունության** (ակրոֆոնիայի) կանոնի համաձայն որևէ բառ արտահայտող նշանը վանկային գրության մեջ ցույց է տալիս այդ բառի առաջին վանկը (մասը) ... *(Մով.[1], էջ 45):*

ՍՅՈՒՆԱՀԱՏՎԱԾ, գ. (արվ.): **Սյունի հատված՝ մաս:** Տե՛ս ԹՌՉՆԱԳԼՈՒԽ-ի օրինակը:

ՍՆԿԱԽՏԱՎՈՐ, ած. **Սնկախտ ունեցող, սնկախտով հիվանդ**: Տե՛ս ԽՈՌՈՉԱՊԱՏ-ի օրինակը:

ՍՆՈՒՑԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ, ած. **Սնուցող և դինամիկ:** .... Ամերիկացի էկոլոգ Ռ. Լինդեմանի էկոհամակարգերի ուսումնասիրման **«սնուցադինամիկական»**մոտեցման հիմնավորումը .... և շատ ուրիշների աշխատություններ և ընդհանրացումներ նպաստեցին այդ գիտությունը մի նոր աստիճանի բարձրացնելուն *(ՍԹ, էջ 96):*

ՍՈՂՈՒՆԱԳԵՏ, գ. **Սողունաբանության մասնագետ (կենդանաբան, որսորդ ևն):** .... **Սողունագետ** ընկերները հսկա գյուրզա էին բռնել, քերթել կաշին ու խորովել *(Բակուր, էջ 87):*

ՍՈՃԵՊԱՏ, ած. **Սոճի ծառերով պատված:** Քիչ հեռու, **սոճեպատ** Արդեստոս բլրի գոգում, անտիկ մարմարակերտ ստադիոնն էր .... *(Սուր., էջ 237):*

ՍՈՎՈՐԵՑՆՈՎԻ, ած. **Սովորելու ենթակա:** Հիմա կասկածում եմ. գուցե ինձ Туз-ի տեղ չէի՞ն դրել, այլ՝ կամ կուտ էին տալիս, **սովորեցնովի** ակնարկներ անում, բերանիս համն իմանալու համար **....** *(Նիկ., էջ 25):*

ՍՈՐՈՍԱԾԻՆ, ած. (փխբ., դիպվ.): **Սորոսի հիմնադրամի կողմից հովանավորվող և ֆինանսավորվող:** Մի շարք **սորոսածին** պաշտոնյաներ պատերազմի նախօրեին «կրծքով» պաշտպանում էին աղրբեջանական նավթամուղներն ու գազամուղները *(Հմգ, aysor.am):*

ՍՈՐՈՍԱԿԱԽՅԱԼ, ած. (դիպվ.): Տե՛ս ՍՈՐՈՍԱԾԻՆ: Սորոսահպատակ, սորոսամերձ, սորոսապաշտ, **սորոսակախյալ** իշխանությունները բոլորին բանտ չեն կարող նստեցնել, բանտերում առանց այդ էլ տեղ չկա, իսկ դատաիրավական համակարգը խիստ ծանրաբեռնված է .... *(Հմգ, analitik.am):*

ՍՈՐՈՍԱՀԱՃՈ, ած. (դիպվ.): **Սորոսին՝ նրա հիմնադրամին ու գաղափարներին հաճելի:** Հայաստանում գործող «**սորոսահաճո**» քարոզչամեքենան փորձում է կեղծ թեզ շրջանառության մեջ դնել *(Հմգ, 168.am):*

ՍՈՐՈՍԱՀՈԺԱՐ, ած. (դիպվ.): **Սորոսին պատրաստակամ, հաճոյացող:** Վերջին երկու-երեք տարիներին, երբ ոստիկանությունը դարձավ սորոսածին, սորոսահաճո և **սորոսահոժար** .... *(Հմգ, irates.am):*

ՍՈՐՈՍԱՀՊԱՏԱԿ, ած. (դիպվ.): **Սորոսին՝ նրա կազմակերպությանը հետևող՝ հպատակվող:** Այ թրքասեր **սորոսահպա-**

տակ, քո կարծիքով «Ադրբեջանում շատ լա՞վ են վարվում մեր ռազմագերիների հետ» *(Հմգ, slaq.am):*

ՍՈՐՈՍԱՄԵՏ, ած. **Սորոսական կողմնորոշում ունեցող:** Խորհրդարանում իշխող քաղաքական մեծամասնության, **սորոսամետ** շրջանակների ջղաձգությունները և անկանոն շարժումները…. փուչիկի էֆեկտ ունեն *(Հմգ, m.mamul.am):*

ՍՈՐՈՍԱՄԵՐՁ, ած. (փխբ., դիպվ.): **Սորոսի կազմակերպությանը՝ հիմնադրամին հարող:** Իշխանամերձ լրատվականները հսկայական գումարներ են վերցնում **սորոսամերձ** արտաքին հիմնադրամներից *(Հմգ, alternativ.am):*

ՍՈՐՈՍԱՊԱՇՏ, ած. (դիպվ.): **Սորոսականության պաշտամունք ունեցող:** Տե՛ս ՍՈՐՈՍԱԿԱԽՅԱԼ-ի օրինակը:

ՍՈՒԼՖԻՏԱԿԱՅՈՒՆ, ած. **Սուլֆիտի ազդեցության չենթարկվող:** Տե՛ս ՍՊԻՐՏԱԴԻՄԱՑԿՈՒՆ-ի օրինակը:

ՍՈՒԼՖԻՏԱՎՈՐԵԼ, բ. (քիմ.): **Սուլֆիտի հատկություններ հաղորդել**: Խնձորների վերամշակումից հետո ստացած հյութը **սուլֆիտավորում են** *(Դասագիրք, էջ 230):*

ՍՈՒԼՖԻՏԱՑՆԵԼ, բ. (մսնգ.):**Սուլֆիտով մշակել:** …. Հետերոտրոֆային զարգացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է գինենյութը **սուլֆիտացնել** …. *(Դասագիրք, էջ 75):*

ՍՈՒՊԵՐԱՍՏՂ, գ. **Գերաստղ, իր ասպարեզում գերհոչակավոր անձ (արվեստագետ-կատարող, գիտնական, մարզիկ ևն):** Ինչպե՞ս կարող էին չծափահարել **սուպերաստղին** և նրա կախարդանքին, թեկուզ մարզական տեսանկյունից …. *(Կայ., էջ 166):*

ՍՈՒՍՐԱԳՈՒՅՆ, ած. **Սուսրի գույն ունեցող՝ կարմրադարչնագույն**: Կառուցվում էին ձեռքով. խողովակներն իրար

էին ամրացնում…. և փաթաթում էին **սուսրագույն** ջուտե կտոր-ով *(ԱԳ, էջ 140):*

ՍՈՒՐՃԸՄՊՈՒՄ, գ. **Սուրճ ըմպելը:** Տարիներ շարունակ համատեղ **սուրճըմպումների** ընթացքում նա կանխագուշակել էր Ռոզիի ամուսնությունը …. *(Կայարան, 2014, թ. 3):*

ՍՊԱՐՏԱՅԱՆ, ած. **Ինչպես Սպարտայի՝ առանց ավելորդ ճոխության: Սպարտայան** այս կայանի միակ զարդարանքը սենյակային ծաղիկներն էին *(Վագ., էջ 532):*

ՍՊԻՏԱԿԱԹԱԳ, ած. (փխբ.): **Գազաթին թագի նման սպիտակ ձյուն նստած:** Նա տիրել էր և մանկապատանեկան որոնումներիս՝ ամբողջանալով որպես **սպիտակաթագ** Արարատի քայլող խորհրդանիշ *(Նիկ., էջ 43):*

ՍՊԻՏԱԿԱԹԱԹԻԿ, ած. **Սպիտակ թաթիկներով, թաթիկները սպիտակ**: Շրջանակի վրա առաջվա նման խաչում էին **սպիտակաթաթիկ** հրեշտակները *(Ուայլդ, էջ 304):*

ՍՊԻՏԱԿԱԿԱՆՋ, ած., **Սպիտակ ականջներով, ականջները սպիտակ**: … Շատ ուրախացա, երբ մեր **սպիտակականջ** կապիկներից մեկը հղիացավ *(Դար., էջ 244):*

ՍՊԻՏԱԿԱՄՈՒԹ, ած. **Սպիտակին տվող մութ:** …. Ամեն ինչ շուրջը աղոտանում էր ու անհայտանում խոնավ, **սպիտակամութ** անորոշության մեջ …. *(Սուր., էջ 49):*

ՍՊԻՏԱԿԱՇԵԿ, ած. **Սպիտակին տվող շեկ:** Ներքևից էլեկտրական **սպիտակաշեկ** լույսով լուսավորված, նա եռում-այրվում է, հոսում է ինչպես հորդող կարմիր արյունը *(Շոլ., էջ 176):*

ՍՊԻՏԱԿԱՈՏ, ած. **Սպիտակ ոտքերով, ոտքերը սպիտակ:** Իսկ ձին, դարձյալ նույն կերպ **սպիտակաոտ** և չորագլուխ, քայ-

լում էր գլուխը բարձր ու հպարտ պահած, վիզն անիվի պես կորացրած *(Շոլ., էջ 240):*

ՍՊԻՏԱԿԱՊԱՐՈՒՅՐ, ած. **Պարուրաձև սպիտակով պատված:** Ու .... ցանկացա՛ծ աչքի ոսպնյակ պարուրված է սպիտակով, **սպիտակապարույր** է, ինչպես ատամնաշարերը .... *(Նիկ., էջ 21):*

ՍՊԻՏԱԿԱՋԻՆՍ, ած. **Սպիտակ գույնի ջինսի:** .... Հագա ճապոնական կոշիկներս գոնդոլ ու կլորիկ՝ նախշազարդված մանրածաղիկ ու **սպիտակաջինս** ֆոնին .... *(Նիկ., էջ 121):*

ՍՊԻՏԱԿԱՅՈՂՈՒՆ, ած. (փխբ.): **Բարձրահասակ ու սպիտակ:** Ինձ թվում է լսում եմ, թե ինչպես են աղմկում ձեր **սպիտակացողուն** գեղեցկուհիները *(Վագ., էջ 544):*

ՍՊԻՏԱԿԵՐԻՋ, ած. **Երիզը սպիտակ: Սպիտակերիզ** ակնոցներս չեմ մոռացել՝ պայուսակիս մեջ են .... *(Նիկ., էջ 12):*

ՍՊԻՐՏԱԴԻՄԱՑԿՈՒՆ, ած. (մսնգ.): **Սպիրտային ազդեցության չենթարկվող:** .... Խմորիչների մերանը քաղցուի մեջ մտցնելուց հետո արագ խմորում են շաքարը, սպիրտի ելքը՝ 0,5-1,0%-ից բարձր է, **սպիրտադիմացկուն** են, սուլֆիտակայուն, ջերմակայուն *(Դասագիրք, էջ 21):*

ՍՊԻՐՏԱԿԱՅՈՒՆ, ած. (մսնգ.): Նույնն է՝ ՍՊԻՐՏԱԴԻՄԱՑԿՈՒՆ: **Սպիրտակայուն** էին, 150-250մգ/դմ^3 սահմաններում ծծմբային թթվի առկայության դեպքում չէին դադարեցնում գործունեությունը .... *(Դասագիրք, էջ 21):*

ՍՊԻՐՏԱՆԱԼ, չբ. **Վերածվել սպիրտի: ....** Քացախելուց հետո հասցրել է **սպիրտանալ** ու հոդս ցնդել *(Սև., էջ 141):*

ՍՊՈՐԱԿՈՒՅՏ, գ. **Սպորների՝ բեղմնիկակենդանիների կույտեր**: Տե՛ս ՄՈԽՐԱՍՊԻՏԱԿԱՎՈՒՆ-ի օրինակը:

ՍՏԱՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սուտ՝ ոչ իրական՝ կեղծ հայրենասիրություն:** «Մասնավորապես այսօր, երեք բան զերծ պետք է պահել **ստահայրենասիրության** պղծանքից՝ հայ խաչը, մանուկը, գիրը» (մեջբերում Գարեգին Նժդեհից) *(Տան., էջ 204):*

ՍՏԵՐՋԱՑԱՎ, գ. (բնստ.): **Անպտղության ցավ:** Դեմ է առել քեզ մի **ստերջացավ**.... *(Տոն.[4], էջ 47):*

ՍՏՈՐԱԳՐԱԽԱՉ, գ. **Խաչը՝ որպես ստորագրություն: Ստորագրված՝ որպես խաչ:** Ինձ հասկանալու համար (դիմում եմ թուրքին) «ձեր» տան// պատի ծեփը մի քիչ քանդիր, այնտեղից// քեզ կնայեն իմ նախնիները՝// քարերին դաջված **ստորագրախաչի** տեսքով *(ՎՀ[2], էջ 259):*

ՍՏՈՐԱԿԵՏԱՆՄԱՆ, ած. **Ստորակետի ձև՝ տեսք ունեցող**: Հայկական **ստորակետանման** վահանակիր (ենթավերնագիր) (*Սաֆ., էջ 122*):

ՍՏՎԱՐԱԶԵՆ, ած. **Արտակարգ զինված:** Վրանիդ մոտով անցնում է **ստվարազեն** մարտիկների զունդը և կաթսաների ու սրերի աղմուկ տարածում .... *(XX դար, էջ 13):*

ՍՏՎԵՐՈՒՀԻ, գ. (բնստ.): **Աղջկա՝ կնոջ ստվեր: Ստվեր՝ աղջկա՝ կնոջ:** Տխուր օդ: Անծանոթ **ստվերուհի** *(ՎՀ[2], էջ 144):*

ՍՐԱՓԱՅԼ, ած. **Սուր և փայլող:** Այսօր էլ **սրափայլ** յաթաղանը հնձում է հայկականության վերջին հետքերը *(Կայարան, 2015, թ. 4):*

ՍՐԲԱՄԱՍՈՒՆՔ, ած. **Սունք մասունք**: Տե՛ս ՊԱՆԴՈՒԽՏԱԿԱՆՉ-ի օրինակը:

ՍՐՃԱՀԱՄ, ած. **Սուրճի համ ունեցող՝ համով**: Եվ այդ կսմթոցը **սրճահամ** քաղցրավենիքի պես այրեց այտս *(ԱԻՊ[1], էջ 267):*

ՍՐՃՈՏ, ա. **Վրան սուրճ թափված: .... Սրճոտ** վերնաշապկից խոսելիս իմ մասին ես պատմում *(Սև., էջ 49):*

ՍՐՆՔԱՄԿԱՆ, գ. **Սրունքի մկան**: ... Հատկապես **սրնքամկանների** վրա էր ջուրը շատ ազդում, նախ՝ անզգայացնելով, ապա ծանրացնելով ոտքերը *(ԱԻՊ[1], էջ 194):*

ՍՐՈՍԿՐ, ած. **Սուր ոսկորներով**: .... Գրկում էր նրան տղամարդկային ուժով և մինչև սպիտակ արշալույսը, նրա **սրոսկը** այտերից չէր իջնում պայծառ շառագույնը *(Շոլ., էջ 55):*

ՍՐՏԻԿԵԼ, բ. **Համացանցում սրտիկ նշան դնել՝ որպես հավանություն:** Մոուրինյոն «**սրտիկել**» է Մխիթարյանին՝ «Յունայթեդի» նկատմամբ տարած հաղթանակից հետո *(Հմg, vnews.am)*:

ՍՐՏԽՓՈՑ, գ. **Սրտի հիվանդագին խփոց՝ բաբախում**: Հիշողությունների տեքստը սերմանել ախտանշաններով, այդ օրվանից սկսած մինչև նրա մահը գլխապտույտներ, սրտխառնոցներ, **սրտխփոցներ** *(ԱԻՊ[1], էջ 165):*

Վ

ՎԱՋՔԱՇՐՋԱՆ, գ. **Վազքի շրջան:** Առանձնացնում է ամեն **վազքաշրջանի** երեք ուժեղագույն ձիերը: Երրորդ **վազքաշրջանից** հետո ինձ վճարեցին վաթսուն ռուբլի *(Դով., էջ 7-8):*

ՎԱԿՈՒՈՒՄԱՎՈՐԵԼ, բ.(ֆիզ.):**Դարձնել վակուումային**: Սառեցրած և ողողած շիշը լցման մեքենային հանձնելուց առաջ անհրաժեշտ է **վակուումավորել**....*(Դասագիրք, էջ 201)*:

ՎԱՀԱԳՆԱՀՈՒՐ, ած. (բնստ., փխբ.): **Դյուցազնածին, անհաղթ: Վահագնահուր** սերունդն ենք *(գուս. Աշ.[2], էջ 31):*

ՎԱՂԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ, ած. (պատմ.): **Վաղ բրոնզեդարի՝ Հայաստանում Ք.թ.ա չորրորդ հազարամյակի վերջից մինչև III**

հազարամյակի վերջը: Այդ դարաշրջանի պատկերագրության արտահայտությունները հատկապես շատ են հանդիպում հայկական լեռնաշխարհի **վաղբրոնզեդարյան** (շենգավիթյան, Կուր-արաքսյան) խեցեղենի վրա …. *(Մով.², էջ 26):*

ՎԱՆԱԽՈՒՑ, գ. **Վանքի խուց:** …. Այդ մեկ ամսվա ընթացքում ժամանակ ունեցավ պատկերացնելու իրեն **վանախցում** …. *(Կոելյու, էջ 64):*

ՎԱՆԱՀԱՅ, ած. **Վանի տարածաշրջանում բնակվող հայ:** Տե՛ս ԱՐԱՐԱՏԱՀԱՅ-ի օրինակը:

ՎԱՆԴԱԿԱՔԱՇ, ած. **Վանդակապատ: Վանդակաքաշ** պատուհանից հեռանալիս չզգաց, որ ժպտացող շրթունքները դառնորեն չորանում են *(ՎՍ, էջ 336):*

ՎԱՆԿԱՆՇԱՆ., գ. (պատմ.): **Վանկի նշան:** Չի բացառվում, որ վերջինս լինի երեք ուղղահայաց գծիկներով կազմված «նու» **վանկանշանը** …. *(Մով.², էջ 79):*

ՎԱՆՔԱԴԱՐԱՆ, գ. **Վանքերով՝ եկեղեցիներով հարուստ վայր՝ տեղ:** Տե՛ս ԱՐՄԱՏԱՐԱՆ-ի օրինակը:

ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԻԱԿԱՆ, ած. **Վառելիքին և էներգիային հատուկ:** Երկրակեղևում կուտակվում է հսկայաքանակ էներգիա՝ **վառելիքաէներգիական** պաշարների՝ քարածխի, նավթի, գազի, տորֆի տեսքով *(ՍԹ, էջ 39):*

ՎԱՐԱԳՈՒՐԱՊԱՏ, ած. **Վարագույրով պատված:** …. Մինչ նա արևի լույսով ողողված կանգնել էր խանութի առաջ, դանդաղ սողացող **վարագուրապատ** ավտոմեքենայի շարժմանը դեմ հանդիման …. *(Վուլֆ, էջ 22):*

ՎԱՐԱԾԱԾԿ, գ. (գղտնտ.): **Վարելով ծածկելը**: Հողը հարընստանում է օրգանական նյութերով՝ **վարածածկ** անելով միջ-

շարքերում միամյա թիթեռնածաղկավոր և հացազգի բույսերի կանաչ զանգվածը (*Սաֆ., էջ 101*):

ՎԱՐԱԾԱԾԿՈՒՄ, գ. (գղտնտ.): **Վարաածածկ անելը, վարելով ծածկելը: Վարաածածկման** խորությունը կախված է ծառերի տեսակից և հասակից (*Սաֆ., էջ 104*):

ՎԱՐԱԿԱԽՏ, գ. **Վարակիչ հիվանդություն(ներ):** Մեզ մոտ հայտնվելու հասանելիությունը հաղթահարել էր այդ **վարակախտը** *(Հմգ, grakantert.am)*:

ՎԱՐԴԱԳՈՒՆԱԿԱՐՄԻՐ, ած. **Վարդագույնին տվող կարմիր**: .... **Վարդագունակարմիրից** վերածվեց ձյունաճերմակի *(Աթք., էջ 312)*:

ՎԱՐԴԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնին տվող դարչնագույն**: **Վարդադարչնագույն** խեցգետինները իրենց չանչերով ողջունում էին մեզ քարերի տակից .... *(Դար., էջ 36)*:

ՎԱՐԴԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. **Վարդաձև, վարդանման հանգույց**: Սրաքիթ ծաղիկների վրա շքեղ կանաչ **վարդահանգույց** կա *(Ուայլդ, էջ 202)*:

ՎԱՐԴԱՄԱՐԳԱՐՏԱԳՈՒՅՆ, ած. **Վարդագույնի մոտ մարգարտագույն**: Կարդում ես, և թվում է, թե թիավարում ես **վարդամարգարտագույն** քաղաքի ջրերում .... *(Ուայլդ, էջ 229)*:

ՎԱՐԴՅԱԿԱՁԵՎ, ած. (արվ.): **Վարդյակի ձև ունեցող:** Բացառիկ տպավորություն են թողնում խոյակների ու կամարների ներքո բարավորի վրայի ու ներսի **վարդյակաձև** նախշազարդերը *(Հակ., էջ 21)*:

ՎԱՐԿԱՐԺԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Վարկային դրական պատմություն ունենալու դեպքում վարկ ստանալու հնարավորություն:** Վարկային գիծը ստանալու համար պահանջվում է ունե-

նալ դրական վարկային պատմություն և համապատասխան **վարկարժանության** գնահատական *(Հմ, idbank.am):*

ՎԱՐՍԱՇՅՈՒՂ, գ. **Վարսերի շյուղ՝ ճաղ**: .... Կիտին .... փաթաթեց ծամերը ծոծրակին և ամրացրեց **վարսաշյուղերով** .... *(Տոլ., էջ 93):*

ՎԱՐՍԼԱՑՔ, գ. **Վար սլանալը:** .... Հոգևոր կյանքում դրանք անվերջորեն խաղացկուն ու անհատնելի են, անսպասելի վերանկումներով ու **վարսլացքներով** .... *(Կայարան, 2014, թ. 3):*

ՎԵՆԵՏԻԿՈՒՀԻ, գ. **Վենետիկցի կին՝ աղջիկ:** .... **Վենետիկուհիներ** պատկերող գեղեցիկ աղջիկներից իր զարմանալի գեղեցկությամբ առանձնանում էր .... Այվազովսկու քեռորդու .... դուստրը *(Վազ., էջ 536):*

ՎԵՐԱԴԱՐԱԿ, գ. **Վերևում գտնվող դարակ:** .... Ահա թե ինչ է նա միգուցե մտածում՝ նայելով մահճակալի **վերադարակին** .... *(Ֆրիշ, էջ 216)*:

ՎԵՐԱԽՄՈՐԵԼ, բ. (մննգ.): **Կրկին՝ վերստին խմորման ենթարկել**: Մ. Ա. Գերասիմովը երաշխավորում է հիվանդ գինիները **վերախմորել** թարմ քամվածքների վրա ....*(Դասագիրք, էջ 251)*:

ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼ, նբ. **Նախորդը փոխելով՝ նոր կերպով ձևավորել:** Խաղը վերսկսվեց, և Մոուրինյոն **վերակազմավորեց** իր թիմը *(Կայ., էջ 135):*

ՎԵՐԱԿԱՊԻՏԱԼԱՑՆԵԼ, բ. **Կրկին կապիտալացնել**: Գյուլբենկյանը .... իր աշակերտելու շրջանը անցել էր ....ամենագունեղ դեմքերից մի քանիսի հետ՝ առաջին ձեռքից սովորելով, թե ինչպես վերակազմակերպել և **վերակապիտալացնել** ընկերությունները *(ՋՔ, էջ 66):*

ՎԵՐԱԿԱՐԿԱՏԱԾ, 1. հրկտր. դերբայ **վերակարկատել բա-յի:** 2. ած. **Կրկին՝ մեկ անգամ ևս կարկատած:** Այն երջանիկնե-րը, որոնց հանձնաժողովը որոշել էր տալ հագուստ կամ ոտնա-ման, ... շտապ բոխչա էին անում իրենց հնոտին, կարկատած, **վերակարկատած** քուրջերը, զգեստավորվում էին նոր հա-գուստներով.... *(Շոլ., էջ 170):*

ՎԵՐԱԿԻՍՎԵԼ, բ. (բնստ.): **Կրկին կիսվել: Վերակիսվեցին** երկինք ու երկիր, // Մեծերն ստացան բաժինն առյուծի *(Սարմեն, էջ 192):*

ՎԵՐԱԿՇՌԱԴԱՏԵԼ, նբ. **Մեկ անգամ ևս՝ կրկին՝ այլ կերպ կշռադատել:** .... Նա **վերակշռադատեց** իր ամբողջ կյանքը այն-պես, ինչպես առաջներում երբեք .... *(Տոլ., էջ 242):*

ՎԵՐԱԿՈՒԼՏԻՎԱՑՈՒՄ, գ. (մսնգ.):**Վերստին կուլտիվաց-նելը:** Հողերի վերակուլտիվացումն իրականացվում է երկու փուլով .... *(ՍԹ, էջ 34):*

ՎԵՐԱՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (մսնգ.): **Վերըս-տին հարմարվելու հատկություն:** .... Օրգանիզմները .... նոր պայմաններում ցուցաբերում են **վերահարմարվողականություն** *(ՍԹ, էջ 14):*

ՎԵՐԱՇԵՐՏԱՎՈՐՈՒՄ, գ. **Վերստին՝ նորից շերտավորելը:** .... Արդյոք դա նոր արվե՞ստ էր լինելու, նոր մա՞րդ, նոր բարոյա-կանությո՞ւն կամ էլ հասարակության մի նոր **վերաշերտավո-ր՞ում** *(ԱԱ, էջ 271)*:

ՎԵՐԱՊԱՏԵՐԱԶՄԵԼ, նբ. 1. **Կրկին՝ կամ նոր ձևով պատե-րազմել:** 2. (փխբ.): **Նորից նույն խնդիրը քննարկման դնել:** Վրա հասան նաև այլ բարդություններ՝ կոնգրեսը **վերապատերազ-մեց** շահած պատերազմը *(Յակ., էջ 115):*

ՎԵՐԱՌԱՔ, ած. **Դեպի վեր առաքված՝ ուղղված**: .... Որպեսզի մեզ էլ մի օր գար, տաներ // Սերը՝ **վերառաք** *(Տոն.[3], էջ 16)*:

ՎԵՐԱՍՊԻՏԱԿԱՑՆԵԼ, նբ. **Կրկին՝ մեկ անգամ ևս սպիտակացնել:** Բայց տանտերը համառորեն ամեն անգամ **վերասպիտակացնում** էր պատը *(Վագ., էջ 57)*:

ՎԵՐԱՏԵՂԱԿԱՅՎԵԼ, բ. **Վերստին՝ կրկին տեղակայվել**: ....Այնպես էր ստացվել, որ նա Դարքինգում **վերատեղակայված** իրենց գրասենյակի մոտ էր ապրում *(ՋՔ, էջ 257)*:

ՎԵՐԱՓՈԽԱԿԵՐՊՎԵԼ, բ. **Վերստին՝ նորից փոխակերպվել:** Իր վիճակի մեջ ընդվզումը **վերափոխակերպվում** է երկնքի դեմ աննախադեպ արշավի .... *(Ակ, էջ 45)*:

ՎԵՐԱՔՆՆԱՐԿՈՒՄ, գ. **Վերաքննարկելը, մեկ անգամ ևս քննարկելը:** Վերջին տարիներին հարցի քննարկումների ընթացքում .... ավելի հաճախ բավարարվում են .... անցյալում արդեն բազմիցս չարչրկված մատենագրական տեղեկությունների անպտուղ **վերաքննարկումներով** *(Մով.[1], էջ 3)*:

ՎԵՐԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ, ած. **Կառավարությունից գերադաս, նրանից բարձր գերակա:** Բայց մարդկությունը, դժգոհ լինելով թագավորներից ու նախագահներից, ստեղծեց **վերկառավարական** կառույց, որը պետք է հսկեր թագավորներին .... *(Բակուր, էջ 62)*:

ՎԵՐՆԱՌԼՈՐՏ, ած. **Բարձր՝ վերին ոլորտին առնչվող**: Բայց նախանձն էլ է դառնում երբեմն ավիշ ստեղծուն, // Եղծում իրեն ու հաճախ **վերնառլորտ** աշխարհներ .... *(Տոն.[2], էջ 73)*:

ՎԵՐՋՆԱԴՐՎԱԳ, գ. **Վերջին դրվագ:** Վեպի **վերջնադրվագը** հերթական անգամ ապացուցում է արվեստի հավերժակա-

նության (=անժամանակության) հատկանիշը .... *(Կայարան, 2022, թ. 1):*

ՎԵՐՋՆԱԿԱՆԳԱՌ, գ. **Վերջին կանգառ,** փխբ. **շիրիմ**: Մի՞թե մարմինն իմ հասել է **վերջնականգառին** *(Տոն.[3], էջ 21):*

ՎԵՐՋՆԱԿԱՆԳԱՌ, գ. **Վերջին կանգառ:** Այն մինչ այժմ էլ կարելի է տեսնել Մեծ շուկայի և Արևելյան ճեպընթացի **վերջնականգառ** Սիրքեջի կայարանի կեսճանապարհին *(ՋՔ, էջ 3):*

ՎԺԼՏՈՒՔ, գ. **Վժլտալու՝ վժժալու ձայն՝ խառնաղմուկ:** Ձայների ընդհանուր **վժլտուքի** մեջ երբեմն գոռգոռոց էր բարձրանում հանկարծ *(Սուր., էջ 75):*

ՎԻՋԾՈՒՌ, ած. **Վիզը ծուռ՝ խեղճ, թշվառ:** Որբ ու **վիզծուռ** նստած եմ, վեր ընկած .... *(Նիկ., էջ 23):*

ՎԻՊԱԿԱՇԱՐ, գ. **Վիպակների շարք՝ ամբողջություն՝ մատենաշար: Վիպակաշարի** հերոսները *(Բակուր, էջ 243):*

ՎԻՊԱՍՏԵՂԾՈՒՄ, գ. **Վիպական երկ ստեղծելը**: Նույն մղումը .... հանգեցնում է նաև **վիպաստեղծմանը** .... *(Ակ, էջ 362):*

ՎԿԱՅԱՑՈՒՅՑ, գ. **Վկայություն՝ ներկայություն կամ վկա՝ ներկա լինելու ապացույցը:** .... Սկսենք նաև // Հավատամք տածել ու ակնածություն՝ // Առ այն գոյերը, // **Վկայացույցը**, որոնց չունենք .... *(Տոն.[1], էջ 16):*

ՎՃՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Վճիռ դնելը՝ ընդունելը:** Ավելին, ընդվզող մարդն իր այս **վճռադրություններում** և ամենախոր պոռթկումի մեջ իրեն ոչինչ չի պահում .... *(Ակ, էջ 31):*

ՎՆԱՍԱՏԵՐ, գ. **Վնաս կրած, վնասի տեր:** ....Թերեզը հաշվեց հինգ հարյուր ռուբլին, իրենց մի տարվա խնայողությունը և սրտի կսկիծով տվեց **վնասատիրոջը** *(ՎՍ, էջ 24):*

ՎՇՏԱԲԵԿՎԵԼ, բ. **Տառապել՝ վշտից ուժասպառ լինել:** Ախ, էն երազ գիշերը, **վշտաբեկված** մնացի *(գուս. Աշ.[2], էջ 85):*

ՎՇՏԱՄՐՄՈՒՌ, ած. (բնստ.): **Վշտից մրմռացող**: Նա հառնում է հար՝ որպես մութ գիշեր,// Ե՛վ վհատելի, և՛ **վշտամրմուռ** *(Սարմեն, էջ 182):*

ՎՐԱՆԱԱՐՇԱՎԱՅԻՆ, ած. **Վրանային և արշավային: Վրանաարշավային** ճամբար *(Բակուր, էջ 189):*

ՎՐԱՆԱՎԱՆ, գ. **Վրաններից կազմված ավան՝ բնակելի տարածք**: Երբ մութն ընկավ, ու խավարն անթափանց դարձավ, եթե կարելի է այդպես ասել, **վրանավան** հիմնեցինք: *(Անգլ., էջ 57):*

ՎՐԱՆԱՏԻՊ, ած. **Վրանի նման՝ ձևով:** Շամանը շրջակայքից ցախ հավաքեց, **վրանատիպ** շարեց ու կրակայրիչով վառեց …. *(Բակուր, էջ 258):*

ՎՐԵԺՎԵԼ, բ. **Վրեժ առնել, հատուցել, պատժել:** Հողն Արցախա **վրեժվում,** որդոց շիրմին մխում է *(ՎՀ[2], էջ 202):*

ՎՐՁՆԱՆՄԱՆ, ած., **Վրձնի նման, վրձինի տեսք՝ ձև ունեցող**: Ականջների ծայրին սև ծվենների պես տնկված են մեծ-մեծ **վրձնանման** մազափնջերը *(Դար., էջ 214):*

ՎՐՁՆԸՆԿԵՐ, գ. **Վրձնի ընկեր**: Երբեմն խմում էի. սկսում էի **վրձնընկերներիս** հետ, ապա շարունակում մենակ, արտաքնապես մենակ *(Կայարան, 2014, թ.3):*

Տ

ՏԱԳՆԱՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Տագնապային վիճակի մեջ գտնվելը, միշտ տագնապ զգալը:** Նրանց հատուկ է մշտական **տագնապայնությունը** …. *(Տան., էջ 257):*

ՏԱԽՏԱԿԱՆՄԱՆ, ած. **Տախտակի նման**: Վիթխարի ծառի… **տախտականման** արմատների խոնավ ու մթին արանքներում ես տեսա մի կույտ միջատների… *(Դար., էջ 34)*:

ՏԱԿԵՐԵՍ, գ. **Հակառակ երես**: Երբ բարձրանում էր քամին, …. լվում էր սաղարթի սոսափը, բացվում էր տերևների **տակերեսը**….*(ՎՍ, էջ 42)*:

ՏԱԿՈՒՑՔԱՅԻՆ, ած. (մսնգ.): **Տակուցքին՝ նստվածքին հատուկ՝ բնորոշ**: Սոդայի լուծույթը լցվում է 2 ժամվա ընթացքում՝ մինչև տակուցքի գունափոխման՝ սպիտակ գինիների **տակուցքային** կանաչագույն, կարմիրները՝ սևագույն են դառնում *(Դասագիրք, էջ 318)*:

ՏԱՂԱՍԱՆ, ած. (բնստ., փխբ.): **Կարկաչուն, երգաձայն:** Աղբյուրները **տաղասան**// Հորդում լուսեղ անուրջներ *(գուս. Աշ.[4], էջ 137)*:

ՏԱՆՁԱԳՆԴԱԿ, գ. **Բռնցքամարտի տանձաձև մարզասարք**: …. Անցնում էր այնտեղ կախված բռնցքամարտիկի **տանձագնդակի** մոտով …. *(ԱԱ, էջ 192)*:

ՏԱՆՁԱԽՈՒՑ, գ. **Խուց, որտեղ տանջանքների են ենթարկում (բանտարկյալներին են)**: … **Տանջախցի** պարտադիր մարմնական կտտանքները: *(ԱԻՊ[1], էջ 95)*:

ՏԱՊԱՆԱՀԱՏԱԿ, ած. **Տապանաձև հատակ ունեցող:** Էլ հող չունես՝ հողդ մեջ-մեջ են արել. // Հավաքվի՛ր քո **տապանահատակ** վանքերում *(Տոն.[4], էջ 74)*:

ՏԱՌԱՊԱՏԱՆՋ, ած. **Տառապանք և տանջանք պատճառած**: … Մենք կարողացանք այդ **տառապատանջ** գաղթի փորձություններից փրկվել …. *(Անգլ., էջ 36)*:

ՏԱՎՐԻԴԱԲՆԱԿ, ած. **Տավրիդայի՝ պատմական Ղրիմի սևծովյան ծովափնյա հատվածի՝ Տավրիկեի բնակիչ: Տավրիդաբնակ** պատանուն, որը սովոր էր հարավի մութ գիշերներին, տարօրինակ էր թվում այս արծաթ յասամանագույն աղջամուղջները գիշեր անվանել *(Վագ., էջ 109):*

ՏԱՐԱԽՈՒՄԲ, ած. **Տարբեր խմբեր ունեցող՝ խմբերի պատկանող**: Միջնադարյան մյուս բոլոր քաղաքների նման Երևանն էլ ուներ սոցիալական **տարախումբ** բնակչություն *(Հակ., Սիմ., էջ 38):*

ՏԱՐԱԾԱՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ, ած. **Որոշակի տարածության մեջ որոշակի մակարդակի բնորոշ:** .... Լուսամուտագոգերի, լողարանի պատերի ու պարիսպների **տարածամակարդակային** հարաբերակցություններից երևում է, որ անկողինները գետնից ճիշտ և ճիշտ կես մետր բարձրության վրա են տեղադրված *(ԱԱ, էջ 159):*

ՏԱՐԱՎԱՐՔ, ած. **Տարբեր՝ ոչ միևնույն վարք ունեցող:** Այլացումների մեջ// ես իմ հակաստվերն եմ,// **տարավարք**, ինչպես// լույսը՝ գույների վրա *(ՎՀ[1], էջ 112):*

ՏԱՐԱՏԱՆՋ, ած. **Տարբեր՝ այլ՝ ուրիշ տանջանք՝ ցավ:** Քո հեռվի հետ **տարատանջ** պսակվել եմ ժամ առաջ *(ՎՀ[2], էջ 21):*

ՏԱՐՐԱՄԵՐՎԵԼ, բ. **Տարրերով՝ մերվել, ամբողջանալ: Տարրամերվել** ենք՝// դիպակներում կյանքի:// Գիծ և գույն *(ՎՀ[1], էջ 223):*

ՏԱՐՕՐԻՆԱԲԱՐ, մկբ. **Տարօրեն կերպով, տարօրինապես:** Քամին .... այլանդակորեն ու **տարօրինաբար** մերկացնելով կեչիների սպիտակ ճյուղերը՝ կռացնում էր դեպի մի կողմ ամեն ինչ .... *(Տոլ., էջ 528):*

ՏԱՐՕՐԻՆԱԿԱԲԱՐ, մկբ, **Տարօրինակ կերպով**: Մայրիկը շատ փնտրեց, որ Օգյուստի հագով ֆեթի հանդերձանք գտնի, բայց, **տարօրինակաբար**, բոլոր տեղերում վերջացել էր ... *(Պալ., էջ 124):*

ՏԱՔՍԱՊԱՐԿ, գ. **Տաքսիների պարկ:** Դիսպետչերի հաճելի մեղմ ձայնը պատասխանեց. - **Տաքսապարկ է** *(Կլ., էջ 162):*

ՏԵՂԱԽՈՒՄԲ, գ. **Տեղային խումբ կամ խմբաքանակ:** .... Էկոլոգիական տարրերը, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ազդել օրգանիզմների, **տեղախմբերի,** համակեցությունների վիճակի և գործունեության վրա, կոչվում են էկոլոգիական գործոններ *(ՍԹ, էջ 5):*

ՏԵՂԱՆՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. (երկրբ.): **Տարածքի՝ տեղանքի ուսումնասիրություն:** Այս ամենից զատ, նա ուսումնասիրում էր նաև երկրաբանություն, ... **տեղանքագրություն,** ինչպես նաև .... *(ՋՔ, էջ 24):*

ՏԵՂԱՐԱՆ, գ. **Շենքի՝ կառույցի որևէ նպատակի համար հատկացված մաս:** .... Վանքի գետնահարկում .... գտնվել էին տնտեսական **տեղարանները՝** մսուրք, մառագ, արհեստանոց, մառաններ *(Սուր., էջ 51):*

ՏԵՂԵԿԱՄԱՏՅԱՆ, գ. **Տեղեկատու մատյան:** Սեղանին է դնում ըմպելիքների տուրիստական կանաչ **տեղեկամատյանը,** հայացքով որոնում է մատուցողին *(Բեեկ., էջ 9):*

ՏԵՆՉՈՒՆ, ած. (բնստ.): **Տենչացող, երազող:** Օ՜, **տենչուն** հայ, հարաճուն հայ, դու դեռ ինչեր չես անի *(Սարմեն, էջ 27):*

ՏԵՍԱԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեսակապով՝ տեսամիջոցներով լուր հայտնելը՝ տեղեկացնելը:** Ինչպիսի՞ն կլինի 2022 թվականի նոր **տեսալրատվության** ծառայությունը՝ ազատված ա-

վանդական հեռուստատեսության բոլոր սահմանափակումներից *(Հմգ, reviews.tn):*

ՏԵՍԱԽՄԲԱԳԻՐ, գ. **Տեսանյութերի խմբագիր**: Առաջին հայացքից կարող է թվալ, որ տեսախմբագրի մասնագիտությունը տեխնիկական լուրջ գիտելիքներ է պահանջում *(Հմգ, panarmenian.net):*

ՏԵՍԱԿԱՅԵՂԱՅԻՆ, ած. **Տեսակներով և ցեղերով պայմանավորված**: Պտղատու ծառերի կողմից պահանջվող ջրի քանակությունը տարբեր է՝ կախված բույսերի **տեսակացեղային** և սորտային առանձնահատկություններից (*Սաֆ., էջ 105*):

ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐԱՌԵԼ բ. **Տեսակապով՝ տեսաձայնային միջոցներով գրառում անել**: Տեսակապի միջոցով վկայի և տուժողի հարցաքննության ընթացքը և արդյունքները **տեսաձայնագրառվում** են տեխնիկական միջոցներով *(Հմգ, arlis.am):*

ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐԱՌՈՒՄ, գ. **Տեսակապով՝ տեսաձայնային միջոցներով գրառում:** Նախաքննության փուլում մեղադրյալի և վկաների հարցաքննության պարտադիր **տեսաձայնագրառում** չի նախատեսվում *(Հմգ, m.mamul.am):*

ՏԵՏՐԱՆՄԱՆ, ած. **Տետրի տեսք ունեցող, տետրի նման: Տետրանման** սիրուն տոմսեր *(Սուր., էջ 265):*

ՏԵՐԵՎԱԲՈՂԲՈՋ, գ. (գոտնտ.): Բացատրությունը օրինակում: Աճի (վեգետատիվ) բողբոջները բաժանվում են երկու տեսակի՝ **տերևաբողբոջներ**, որոնցից առաջանում են տերևային վարդակները և աճող բողբոջներ, որոնցից առաջանում են ընձյուղները (*Սաֆ., էջ 6*):

ՏԵՔՍՏԱՐԱՐՈՒՄ, գ. **Տեքստի ստեղծում, արարում**: Ըստ Բարտի՝ **տեքստարարման** գործում ավելի մեծ դեր է խաղում ընթերցողը *(Կայարան, 2022, թ. 1):*

ՏԻՊԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կարգ՝ տեսակ:** Տարբեր **տիպայնության** գինիների արտադրության համար արդյունաբերական նշանակություն ունեն ոսկեհատը (խարջի), մսխալին .... և այլն *(Դասագիրք, էջ 5):*

ՏԽՈՒՐՄՐՏԻԿ, մկբ. **Տխուր սրտով, տխրասիրտ:** Ու գնում ենք // Ճամփան մեր թանկ, // Ամեն մեկս՝ մի որբ բոբիկ, Քայլ-քը՝ զարկով **տխուրսրտիկ** .... *(Տոն.[4], էջ 107):*

ՏՆԱԲՈՒՅԾ, ած. (փխբ.): **Տնային պայմաններում բուծված**: Սակայն անհնար է 100 տոկոսով խուսափել **տնաբույծ** քննադատների այդ տեսակետից (*Ազն., էջ 120):*

ՏՆՏԵՍԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ, ած. **Տնտեսական և գոյապահպանական:** Բնության պահպանության հիմնական սկզբունքներից է **տնտեսաէկոլոգիական** կանոնը *(ՍԹ, էջ 14):*

ՏՈՀՄԱԽԱՉ, գ. **Տոհմական՝ տոհմի խաչ:** Միտքս է թռչում, վիշտս մրմնջում, **տոհմախաչ** քարին *(գուս. Աշ.[4], էջ 17):*

ՏՈՂԱԳԾԵԼ, նբ. (պատմ.): **Տողագիծ քաշել:** Թոփրաք Կալեյի **տողագծման** սալիկի .... առաջին տողի գրությունը ավարտվում է ձախ եզրին չհասած *(Մով.[2], էջ 75):*

ՏՈՆԱԽՆՋՈՒՅՔ, ած. **Տոնական խնջույք, խնջույք, որը կատարում են տոնի կապակցությամբ:** Իմ անվան տակ մենք որտեղ ասես չէինք սողոսկում. հրավերքների, **տոնախնջույքների** .... *(XX դար, էջ 497):*

ՏՈՆԱՇՔԵՐԹ, գ. **Տոնական շքերթ:** Այժմ փորձեր են արվում.... պլանավորված «հաղթողների **տոնաշքերթի**» փոխարեն բավարարվելով դավաճանների «դեմարշով» *(Հմg, aravot.am):*

ՏՈՉՈՐԱԲՈՐԲ, ած. (բնստ.): **Այրող և տաք:** Ընդունի՛ր խնդությամբ զոհն այս անմեղ, կարոտի **տոչորաբորբ** ամառ *(ԳՋ, էջ 110):*

ՏՈՊՐԱԿԱՁԵՎ, ած. **Տոպրակի ձև՝ տեսք ունեցող**: Պարտիայի շրջկոմի քարտուղարը .... կկոցելով աչքերը, նրանց տակ **տոպրակաձև** ծալքեր հավաքելով, սկսեց կարդալ նրա փաստաթղթերը *(Շոլ., էջ 7):*

ՏՊԱԳՐԱԹԵՐԹ, գ. **Տպագրական՝ տպագրված թերթ:** Սեղանին՝ **տպագրաթերթեր,** թանաքաման, գրչակոթեր *(XX դար, էջ 297):*

ՏՐՈՓԱՆՔ, գ. **Տրոփյուն:** Ամբողջ պատմվածքն է արյան **տրոփանքներ** տալիս *(ԳԹ, 08.04.2022):*

Ց

ՑԱԾԿԱԽ, ած. **Ցած կախված**: Մայոր դը Քավըրլին .... նրան ուղղեց իր փոթորկուն կերպարանքի ամբողջ կատաղությունը՝ ահաբեկելով խորդուբորդ, **ցածկախ**, հեղեղատ-կնճիռներով ծածկված ճակատով .... *(ՋՀ, էջ 177)*:

ՑԱԾՐԱԹԹՈՒ, ած. (մսնգ.): **Ցածր թթվայնություն ունեցող, քիչ թթվահամ ունեցող**: Թերհաս կամ **ցածրաթթու** խաղողի գինենյութերը պահորակման դնել չի կարելի *(Դասագիրք, էջ 177)*:

ՑԱԾՐԸՆԹԱՑ, ած. **Ցածր ընթացող:** Առաջավոր ամպերը, **ցածրընթաց** ու սև .... արտասովոր արագությամբ վազում էին երկնքով *(Տոլ., էջ 527):*

ՑԱՆՑԱՐԳԵԼ, գ. **Պաշտպանիչ ցանց:** .... Ասես նստած էր Փիմլիքոյի տան բուխարու **ցանցարգելի** առաջ .... *(Վուլֆ, էջ 27):*

ՑԱՔԱՆՈՂ, ած. **Ցաքան անող (անձ):** Տե՛ս ՀԱՅՀՈՅԱ-ԿՌԻՎ-ի օրինակը:

ՑԵԼԱՏԵՂ, գ. **Տարածք, որտեղ ցել են անում:** Շատ քիչ էր պատահում, որ մեկնումեկը գնար **ցելատեղը՝** մայիսյան վար անելու *(Շոլ., էջ 422):*

ՑԵԽԱԲԻԾ, գ. **Ցեխի բիծ՝ փոքր, ոչ շատ մեծ հետք:** Քայլեցինք դեպի կապույտ, **ցեխաբծերով** պատված ավտոբուսը *(Դով., էջ 199):*

ՑԵԽԱՑԱՅՏ, գ. **Ցեխի ցայտ՝ շիթ՝ բիծ:** .... ֆիլեմոնի սև ավտոմեքենան, ջրափոսերի միջով երթևեկելու պատճառով **ցեխացայտերով** պատված, թեքված դիրքով կանգնած է ճամփեզրի այն կողմում .... *(Ֆրիշ, էջ 257):*

ՑԵՂԱՐՅՈՒՆ, գ. **Ցեղի արյուն:** Ու՞ր է գլորվում այս արևը, որ կարծես // Որդան մի գնդիկն է իմ **ցեղարյան** .... *(Տոն.², էջ 62):*

ՑԵՄԵՆՏԲԵՏՈՆՅԱ, ած. **Ցեմենտ - բետոնից կառուցված:** Փայտը ներքևի մասում **ցեմենտբետոնյա** ամուր հիմքի մեջ էր ամրացված *(Բակուր, էջ 161):*

ՑԻՑԵՐՈՆԱԳԵՏ, գ. **Ցիցերոնի ստեղծագործությունների հմուտ ուսումնասիրող՝ գիտակ....** Գտավ Ցիցերոնի երկու ճառը, դրանցից մեկը .... նա հետագայում լայնորեն տարածեց իր դարաշրջանի **ցիցերոնագետների** շրջանում .... *(Պար., էջ 29):*

ՑԻՑԿԱՏԱՐ, ած. **Կատարը ցից՝ ձիգ:** Հներին **ցիցկատար** աքլորներ էին փոխարինելու գալիս… *(ՎՍ, էջ 59):*

ՑՆՈՐԱՊԱՏԿԵՐ, գ. **Ցնորքների՝ իրականության մեջ գոյություն չունեցող պատկեր:** Նյութական աշխարհը «մայայի

ծածկույթն» է, պատրանք, երևութակայություն, **ցնորապատկեր** *(Շախ., էջ 215):*

ՑՈԼԱՍՓՅՈՒՌ, ած. **Շողարձակ, փայլփլուն: Ցոլասփյուռ** լճակներ,// Ոսկե համբույր լճակներ .... *(գուս. Աշ.[2], էջ 50):*

ՑՈՐՆԱՄԱՇԿ, ած. **Ցորենագույն մաշկ ունեցող**: Ահա նրան մոտեցավ **ցորնամաշկ** մի երիտասարդ համալսարանական .... *(Վուլֆ, էջ 218)*:

ՑՈՐՆԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Ցորենի գույնի նման ոսկեգույն:** Նա արտակարգ ուրախ է և կարծես ամբողջովին փայլում է իր **ցորնաոսկեգույն** մազերի լուսապսակի մեջ *(Փափ., էջ 9):*

ՑՐՏԱԿԻՐ, գ.(մսնգ.):**Հեղուկ, որն օգտագործվում է ջերմությունը հեռացնելու համար**:Ցրտով մշակելու համար կիրառում են տարբեր կոնստրուկցիայի՝ թիթեղավոր, խողովակավոր ...., ջերմափոխանակիչներ, սառեցնում են **ցրտակիրով** (աղաջուր) *(Դասագիրք, էջ 265)*:

ՑՑԱՓԱԿՈՑ, գ. **Ցցերով փակոց՝ պատնեշ:** Լենինգրադյան խճուղու վա հաղթահարելով **ցցափակոցը**՝ նա արհամարհական հայացք գցեց դեպի վեր սողացող հին մաշված ավտոմեքենաները *(Կլ., էջ 25):*

ՈՒ

ՈՒԺԱԾՎԱՏԻՉ, ած. **Ուժը սպառող՝ քայքայող**: .... Ոգու ազատությունը .... ձեռք են բերում հոգեմաշ անող **ուժածվատիչ** պայքարի գնով *(Ակ, էջ 106)*:

ՈՒԺԵՂԱՃ, ած. (գղտնտ.): **Ուժեղ աճ ունեցող**: Տե՛ս ԹՈՒԼԱՃ-ի օրինակը:

ՈՒԼՈՒՆՔԱԹԻԹԵՂ, գ. **Թիթեղաձև ուլունք:** Տե՛ս ՓՈՒԼ-ի բացատրությունը:

ՈՒԼՈՒՆՔԱՁԵՎ, ած. **Ուլունքի ձև ունեցող՝ ձևով:** .... **Ուլունքաձև** նոնաքարազարդերով ծածկված կամարները հատվում են վերևի անկյուններից իջնող ժապավենազարդով *(Հակ., էջ 57):*

ՈՒԼՈՒՆՔԱՄԱՆՐ, ած. **Ուլունքի մանրություն ունեցող, ուլունքի նման մանր:** .... Նշեց՝ նեղացած ու հուսահատ ճըպ-ճպացնելով **ուլունքամանր** փայլուն, շագանակագույն աչքերը *(ՋՀ, էջ 53):*

ՈՒԽՏԱՅՑ, գ. **Այց՝ որպես ուխտ՝ ուխտի նպատակով:** Նախորդ, 5-րդ օրվա եկեղեցու **ուխտայցից** թեև խաղաղ էի ու պայծառ .... *(Նիկ., էջ 33):*

ՈՒԽՏԱՍԱՐ, գ. **Ուխտ գնալու սար, ուխտագնացության սրբավայր:** Վարդավառ է ցողակաթ, հարս ու աղջիկ զարդարված,// **Ուխտասարեր** կելնեն .... *(գուս. Աշ.², էջ 25):*

ՈՒԽՏԵՐԹ, գ. **Ուխտ գնացողների երթ: Ուխտերթ** դեպի Մայրաթոռ. խաղախության համար աղոթք կատարվեց *(Հմg, Lav BLOG):*

ՈՒՂԵԳԵՐԱՆ, գ. **Ուղեփակոց:** Առավոտյան եկավ մեքենայով ու մինչ Ցոլակը **ուղեգերանը** մի կողմ կհրի, հազար խոսք ասաց *(Կայարան, 2022, թ. 2):*

ՈՒՂԵԹՈՒՂԹ, գ. **Ճանապարհորդությունը արտոնող փաստաթուղթ, ուղեթերթ, ուղեգիր:** Բժիշկը..., հակառակ իր կամքի, օգնեց, որ **ուղեթղթերը** արագ ձևակերպեն: *(Անգլ., էջ 86):*

ՈՒՂԵԿՑԱՆՔ, գ. **Ուղեկցություն, ուղեկցելը:** .... Նրանց ասեցի, թե ինչպես եմ պատկերացնում այդ **ուղեկցանքը** *(Նիկ., էջ 140):*

ՈՒՂՂԱՁԵՎ, ած. **Ուղիղ ձևով:** Բարձր կաղնին, կայմի երկարությամբ և բացառիկորեն **ուղղաձև,** հպարտորեն կախվել էր կարճահասակ, թաթաձև տերևներով կնձիների և զառամած ծփիների վրա *(Շոլ., էջ 442):*

ՈՒՆԵՑՎԱԾՔԱՏԵՐ, գ., **Ունեցվածքի տեր**: ... Ընտրություններին մասնակցում էին միայն համեմատաբար մեծ **ունեցվածքատերը**... *(Հակ., Սիմ.,էջ 120):*

ՈՒՐԱԽԱՀՈՒՅԶ, ած. (դիպվ.): **Ուրախ հույզերով՝ զգացմունքներով համակված:** .... Ի՜նչ **ուրախահույզ** ինքնավերադարձ պիտի հայտնվի *(Տոն.[1], էջ 16):*

ՈՒՐԲԱՆԻԶԱՑՈՒՄ, գ. **Քաղաքների դերի գերակշռում հասարակության զարգացման գործընթացում:** Հնում է քաղաքը: Ընթացք: Մոնոպոլիա: **Ուրբանիզացում** *(Նիկ., էջ 70):*

ՈՒՐԹԱՏԵՂ, գ. **Ուրթի գտնվելու տեղը:** Այդ լեռնաբազկի վրա մի տեղ պետք է որ պապիս **ուրթատեղը** լինի *(ՎՍ, էջ 276):*

Փ

ՓԱԿԱՇՂԹԱՅԵԼ, բ. **Փակել և շղթայել:** Զույգ արմունկների վրայով վիրակապերը կարված էին **փակաշղթայված** շրթունքներին .... *(ՋՀ, էջ 12)*:

ՓԱՄՓՇՏԱԳԼԽԻԿ, գ. **Փամփուշտների գլխիկ, ծայրի սուր մասը:** .... Պտտացրեց թմբուկը, և բների անցքերում փայլուն շրջանակի պես պսպղաց պարկուճների մեջ սեղմված **փամփշտագլխիկների** նիկելը *(Շոլ., էջ 116-117):*

ՓԱՄՓՈՒԼԱՎՈՐ, գ. **Փափուկ՝ գիրգ մարմին ունեցող՝ մարմնով:** Քանի որ դու արդեն մի հավ մորթել ես, ուրեմն դիր պարկի մեջ ու մի հատ էլ խփիր փայտով, դրան չէ, այլ այ, նրան, որ ձու չի ածում, այն **փամփուլավորին** …. *(Շոլ., էջ 395):*

ՓԱՅԼԱՏԱՌ, ած., մկբ. **Փայլող՝ փայլուն տառերով:** …. Անունը **փայլատառ** դրոշմելու համար տպարանի պահեստում մի բուռ բրոնզափոշի ճարվում էր *(ՎՍ, էջ 12):*

ՓԱՅՏԱԿԵՐ, ած. **Փայտ ուտող:** …. Հետագայում այնտեղ **փայտակեր** բզեզներ երևացին …. *(Կլ., էջ 92):*

ՓԱՅՏԱՁՈՂԻԿ, գ. **Փայտյա փոքրիկ ձող:** Հին Եգիպտոսում կարողանում էին բուժել ոսկրի կոտրվածքները, վիրակապեր, **փայտաձողիկներ** դնել, օգտագործել արյունահոսությունը կանգնեցնող միջոցներ *(Շախ., էջ 153):*

ՓԱՌԱՊԵՐՃ, ած. (բնստ.): **Փառք և պերճություն բերող:** Այս ի՜նչ պատկեր է՝ վառ, նորահրաշ, // Անակնկալներ, գյուտեր **փառապերճ** …. *(Սարմեն, էջ 78):*

ՓԱՍՏԱԹՂԹԱՇԱՐԺ, գ. **Փաստաթղթերի շրջանառություն:** Էլեկտրոնային **փաստաթղթաշարժի** Mulberry համակարգից օգտվելու հնարավորություն ունի Հայաստանի 129 համայնք *(Հմգ, panarmenian.net):*

ՓԱՓԿԱԲՆՈՒՅԹ, ած. **Ոչ ծանր, հեշտ հաղթահարելի, փափուկ բնույթ ունեցող**: **Փափակաբնույթ** աշխատանք *(Պետ, էջ 73):*

ՓԵՏՐԱԽՈՏԱՆՄԱՆ, գ. **Փետրախոտի նման, նրա տեսքն ունեցող:** Տե՛ս ԱԼԵՀԵՐՈՒԹՅՈՒՆ-ի օրինակը:

ՓԵՏՐԱՓԱԹԻԼ, գ. (փխբ.): **Փետուրի նման փաթիլ**: Ձյան **փետրափաթիլները,**// մինչև ոտքդ գետնից կբարձրանա, ծածկում են ոտնահետքերդ *(ՎՀ², էջ 121):*

ՓԽՐԱՓԱՓՈՒԿ, ած. **Փխրուն և փափուկ:** Չնայած նա փոքրամարմին էր ու ավելի շատ **փխրափափուկ**, քան նուրբ կազմվածքով, նա իր վրա ուշադրություն էր գրավում .... *(ԱԱ, էջ 289)*:

ՓՄՓՈՒՇԱՆԱԼ, բ. **Փմփուշ դառնալ:** .... Չքնաղ ծամերը նրա համար նորություն են՝ այդ ճերմակավուն, այժմ արդեն ազատ արձակված **փմփուշացած** ծամերը *(Ֆրիշ, էջ 13)*:

ՓՆՋԱՃՅՈՒՂ, գ. (գղտնտ.): **Փնջաձև ճյուղ**: Պտղաբերում է միամյա շիվերի և կարճ **փնջաճյուղերի** վրա .... (*Սաֆ., էջ 42*):

ՓՆՋԱՃՅՈՒՂԻԿ, գ. (գղտնտ.): Բացատրությունը օրինակում: **Փնջաճյուղիկներ** են կոչվում 36 սմ երկարություն ունեցող այն կարճ ճյուղերը, որոնք ծայրում ունեն մեկ վեգետատիվ բողբոջ, որի կողքերին իրար կից դասավորված են 3-4 ծաղկաբողբոջներ (*Սաֆ., էջ 13*):

ՓՇԱՀԱՂԱՐՋԱԳՈՒՅՆ, ած. **Փշահաղարջի գույն ունեցող**: Իր խոշոր **փշահաղարջագույն** աչքերը հառելով Քլարիսային, ... միսս Քիլմընը մտքում ասաց՝ հիմա՛ր, պարզամի՛տ *(Վուլֆ, էջ 158)*:

ՓՇՐՈՆ, գ. **Փշրվածք:** Ույբոն .... խնամքով սփռոցի վրայից ափով թափ տվեց ծխախոտի **փշրոնը** *(Բեկ., էջ 106)*:

ՓՈԽԱԴՐԱՎԱՆԴԱԿ, ած., գ. **Փոխադրման վանդակ**: Երկար չարչարվելուց հետո մենք կարողացանք լորիներին մտցնել իրենց **փոխադրավանդակների** մեջ *(Դար., էջ 189)*:

ՓՈԽԱՐԻՆԱԳՐՈՒՄ, գ. (պատմ.): **Փոխարինագրելը (ծածկագրի մի տեսակ):** ... հնչյունային **փոխարինագրման** սկզբունքների կիրառման դեպքերի վերլուծության հիման վրա *(Մով.[1], էջ 27)*:

ՓՈԽԱՐՁԱԳԱՆՔ, գ. **Փոխադարձ արձագանք**: Նշահամալիրը ունակ է հուզական պատասխան տալու, նույնիսկ, երբ զուգահեռ **փոխարձագանք** է սկսվում նշահամալիրի ու նեոկորտեքսի միջև *(ԴԳ, էջ 50)*:

ՓՈԽԼՑՆԵԼ, բ. (մսնգ.): Բացատրությունը օրինակում: Խրմորումից և մասնակի ինքնապարզեցումից հետո գինին հանում են նստվածքից, այսինքն՝ **փոխլցում** են *(Դասագիրք, էջ 242)*:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՎԵԼ, չբ. **Փոխադարձ հարաբերվել,փոխադարձ հարաբերության վիճակում գտնվել՝ հայտնվել ևն:** .... Դրանք կդառնան ձեր սեփականությունը՝ մարդկանց հետ **փոխհարաբերվելու** և հաջողության հասնելու հարցում *(Տան., էջ 10)*:

ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՎԵԼ, չբ. **Փոխադարձաբար՝ յուրաքանչյուրը մյուսի մեջ ներթափանցվել:** Դրանք երկու հասկացություններ են, որոնք հիմա համարյա **փոխներթափանցված են** *(XX դար, էջ 175)*:

ՓՈՂԱՀԱՎԱՔ, գ. **Փող հավաքող:** Մարիայի շնորհիվ **փողահավաքի** իմ գործն էլ հեշտ էր .... *(Նիկ., էջ 113)*:

ՓՈՂՈՑԱՆՄԱՆ, ած. **Փողոց հիշեցնող: Փողոցանման** ամայությունից հետո կանաչ դաշտ *(Սուր., էջ 318)*:

ՓՈՍԻԿԱԶԱՐԴ, ած. **Փոսիկներով զարդարված**: Նստել, երկյուղած վավաշոտությամբ աչքերը չռել էր աղջկա լիքը, կարմրակարմիր շրթունքներին ու **փոսիկազարդ** այտերին .... *(ՋՀ, էջ 284)*:

ՓՈՍՏԱՏԱՐՈՒՀԻ, գ. **Կին փոստատար**: Մինչ օրս պահպանում եմ այն բացիկը, որի վրա գրված է՝ «ձեր **փոստատարուհի** Ագնես» .... *(Հանդէ², էջ 20)*:

ՓՈՐՁԱԸՆՏՐԻՉ, գ. (մսնգ.): **Փորձանմուշ ընտրելու համար նախատեսված սարք:** Ներկայումս մի շարք ավտոմատ **փորձաընտրիչներ** են առաջարկվում *(Դասագիրք, էջ 55)*:

ՓՈՒԼ, գ. **«Տափակ հուլունք, ուլունքաթիթեղ»:** (Բացատրությունը բնագրի հեղինակի) *(Նիկ., էջ 101)- ծնթ.4:*

ՓՈՒԼԱՓԱԹԵԹԱՅԻՆ, ած. **Փուլային և փաթեթային:** ՌԴ փոխարտգործնախարար Յուրի Մերզլյակովը գտնում է, որ հնարավոր է Ղարաբաղի խնդրի լուծում **փուլափաթեթային** տարբերակներով.... *(Հմգ, armenpress.am):*

ՓՈՔՐԱԾՈՒ, ած. **Փոքր ածուի նմանվող:** Մոտի՛կ է պահն ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՀԱԲԵՐՄԱՆ,// Զոհաբերման պահը նրանց, // Ովքեր հին են ու **փոքրաածու**.... *(Տոն.[4], էջ 113):*

ՓՏԱՆԵԽՈՒՄ, գ. **Փտելը և նեխելը:** Երկրորդ երգում հրեշտակի դեմ պայքարն ավարտվում է հրեշտակի պարտությամբ և մարմնի **փտանեխմամբ** *(Ակ, էջ 125)*:

ՓՐՓՐԱԿԱՆԱՉ, ած. **Փրփրանման ու կանաչ**: Ջրի եռալուց կաթսայի կափարիչը պար էր գալիս, և բացախուփ ճեղքից գարշահոտ գոլորշի ու **փրփրականաչ** լորձունքէր դուրս գալիս *(ԱԻՊ[1], էջ 269):*

ՓՐՓՐԱԿՈՒՅՏ, գ. **Փրփուրների կույտ՝ կուտակ**: ... Լարված սպասում էի հաջորդ ալիքի հասնելուն, որը գալիս էր անաղմուկ, հաղթական, առջևից մի **փրփրակույտ** քշելով *(ԱԻՊ[1], էջ 192):*

Ք

ՔԱՂԱՔԱԿԵՆՏՐՈՆԱՑԱԾ, ած. **Քաղաքում կենտրոնացած:** .... Շվեդական մեր բարձր **քաղաքակենտրոնացած** հասա-

բակության մեջ մեկուսացածության կոմպլեքսը հասել է անհավատալի մասշտաբների *(Բեկ., էջ 147)*:

ՔԱՂՎԱԾՔԵԼ, բ. **Հատվածաբար մեջ բերել:** …. Դանթեն իր «Աստվածային կատակերգության» գաղափարը Պլուտարքոսի ասեղներով է կարել, ինչքան էլ համեմատական զուգահեռներ **քաղվածքեմ** նրանց միջև *(Կայարան, 2014, թ. 3)*:

ՔԱՂՑՐԱԲՈՒՅԼ, ած. **Այստեղ՝ քաղցրությամբ լցված**: …. Ասես երեկոյան բեհեզազգեստ աղջիկները դուրս էին եկել քաղելու **քաղցրաբույլ** ոլոռնածաղիկները …. *(Վուլֆ, էջ 18)*:

ՔԱՄԻԱԿԱՆ, ած. (փխբ.): **Թեթևակի, անցողիկ:** Սվետան Մոսկվայում էր, իսկ **քամիական** սերը՝ Երևանում *(Բակուր, էջ 29)*:

ՔԱՅԼԱԴՈՒԼ, գ. (դիպվ.): **Քայլելուց՝ քայլ անելուց՝ որևէ բան փոխելուց հրաժարվելը՝ որպես բողոքի արտահայտություն:** Ի՞նչ անեն այժմ **քայլադուլ** հայտարարած մնացած խմբերը …. *(Հմց, irates.am)*:

ՔԱՅԼԱՃՈՃՔ, գ. **Ճոճվելով քայլելը**: Բայց որքան տարօրինակ էր պուրակ մտնելիս. լռություն, …., փորահավերի **քայլաճոճք** …. *(Վուլֆ, էջ 8)*:

ՔԱՅԼԱՇՐՋԱՆ, գ. **Քայլելու շրջան:** Դատապարտեցին հիսուն տուգանային **քայլաշրջանի** *(ՋՀ, էջ 107)*:

ՔԱՆԴԱԿԱՁԵՎ, ած. (արվ.): **Քանդակների ձև ունեցող:** «XII-XIIIդդ/ արևմտաեվրոպական քարե պորտալների **քանդակաձևերին** հակվող …. այդ որմնանկարների ոճը կրում է հայկական, վրացական և իսլամական նախշամոտիվների խառնածին կնիքը» *(Հակ., էջ 27)*:

ՔԱՆԴԱԿԱՄՈՏԻՎ, գ. (արվ.): **Քանդակներով արտահայտված թեմա:** Տե՛ս ՌՈՄԲԱՇՐՋԱՆԱԿ -ի օրինակը:

ՔԱՆԴԱԿԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Քանդակի նման, ինչպես քանդակը:** …. Քիչ առաջ իր ծերունական առօրյայում մոռայլված Փափազյանից, ինչպես մաշված մի ժայռի կտորից, **քանդակայնորեն** հայտնվել էր մեծ դերասան Փափազյանը … *(Սուր., էջ 300):*

ՔԱՆԴԱԿԵՆ, ած. **Քանդակի նման, ինչպես քանդակը:** Նիհար ազդրերին **քանդակեն** ծեփվել էր երկար բանակային վարտիքը *(Դով., էջ 70):*

ՔԱՆՔԱՐԵԼ, բ. **Տաղանդավոր դառնալ, ձիրք ունենալ:** Նա **քանքարեց**, տաճարեց,// Արևի պես ճառագեց,// Չցանածը նա ցանեց *(գուս. Աշ.[2], էջ 55):*

ՔԱՌԱԿՈՂԻԿ, գ. **Քառակող մանկական խաղալիք:** Ձյութի հոտ արձակող, երբեմն հենց աղացի տակից դուրս եկած տաք, փայտյա, փոքրիկ **քառակողիկներ,** այնքան հարթ ու մաքուր, որ կարող էիր հաճույքով հպել այտիդ …. *(Բեկ., էջ 76):*

ՔԱՌԱՆԿՅՈՒՆԱԶԱՐԴ, գ. (արվ.)։ **Քառանկյունաձև զարդ**։ Տե՛ս ԽՈՐԱՆԱԳԼՈՒԽ-ի օրինակը։

ՔԱՐԱԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. (փխբ.)։ **Քարի նման պինդ՝ անմատչելի բնավորություն:** Տե՛ս **Քարագունդ**-ի օրինակը *(Սև., էջ 49):*

ՔԱՐԱԳՈՒՆԴ, գ. (փխբ.)։ **Անտարբերություն, դժվարամատչելիություն:** Բնավորության **քարագունդը** երբեմն փափկացնում են զգացմունքների առվակները, որոնք ոչ մի դեպքում չպետք է գետակի վերածվեն, թե չէ քարաբնավորությունն ընդդիմանում է ու սկսում խանգարել դրանց հոսել *(Սև., էջ 93):*

ՔԱՐԱԴԱՄԲԱՆ, գ. **Քարից պատրաստված՝ քարե գերեզման:** Եգիպտոսի աստվածացյալ փարավոններին …. զմռսելով

փաթաթում էին, դնում ոսկեպատ դագաղի և **քարադամբանի** մեջ *(Սուր., էջ 143):*

ՔԱՐԱԶԱՐԴ, ած. **Քարերով զարդարված:** Տե՛ս ՃԱՊՈՆԱ-ՉԻՆԱԿԱՆ-ի օրինակը:

ՔԱՐԱԶԱՐԴ, գ. (արվ.): **Քարե զարդերիզ:** Նույնիսկ թմբուկի նիստերը պսակված են **քարազարդ** պաննոյով *(Հակ., էջ 21):*

ՔԱՐԱԾԻՆ, ած. (բնստ., փխբ.): **Քարից ծնված՝ ստեղծված:** Այս քարափները, այս ժայռերը խոլ// Արցունք են՝ դարձած արձան **քարածին** *(Սարմեն, էջ 64):*

ՔԱՐԱԿԱԹԻԼ, ած. **Քարերի վրայից կաթող:** Տե՛ս ԱՎԱԶԱԿԱՆՉ -ի օրինակը:

ՔԱՐԱՑՐՈՆ, գ. **Հրաբխի հետևանքով ցրված քարերի ամբողջությունը**: Հրաբխային ծագում ունեցող Սև սարի շրջակայքում շատ են **քարացրոնները,** տեղաբնակների խոսվածքում՝ խնջիկները *(ՀՀ, 15.06.2019):*

ՔԱՐԱՑՐՈՒԿ, գ. Նույնն է՝ ՔԱՐԱՑՐՈՆ: Տարածքում առկա **քարացրուկներում** նաև դամբարաններ կան *(ՀՀ, 15.06.2019):*

ՔԱՐՇԱԿԱՆԱՎ, գ. **Քարշակող նավ**: Տեսավ, թե ինչպես են կամուրջների տակով անցնում **քարշականավերը** ... *(ԱԻՊ[1], էջ 151):*

ՔԱՐՈԶՉԱԲԱՆԱԿ, գ. **Քարոզչություն կատարող բանակ:** Իշխանական **քարոզչաբանակը** տապալում է բանակցությունների գործընթացը *(Հեռ., 5-րդ ալիք, 13.08.2022):*

ՔԱՐՈԶՉՈՒՀԻ, գ. **Կին քարոզիչ, քարոզիչ կին:** «Կոհլեթ» բառը «կահալ» (ժողով) բառի իգական ձևն է: Կոհլեթը կարելի կլիներ թարգմանել **քարոզչուհի** *(Շախ., էջ 135):*

ՔԱՐՏԱՏԵՍԱԿ, գ. **Քարտի տեսակ:** Հաճախորդը պետք է ապահովի տվյալ **քարտատեսակի** համար սահմանված սպասարկման վճարը *(Հմ՛ց, conversebank.am):*

ՔԱՓՈՏ, ած. **Փրփրոտ, վրան փրփուր կապած:** .... Արդեն եռում էր ջուրը, վեր-վեր էր թռչում եփվող կորեկը և կտոր-կտոր արած հավերից հոսում էր **քափոտ** ճարպը *(Շոլ., էջ 395):*

ՔԵՐԹԱՄԱՇԿԵԼ, բ. **Քերթելով մաշկել:** .... Ասես կանացի այդ մարմինը **քերթամաշկված** է .... *(ԱԱ, էջ 280)*:

ՔԵՖԱՐԱՐ, գ. **Քեֆ՝ խնջույք՝ կերուխում անող:** Նա միշտ էլ սիրում էր բարեսիրտ **քեֆարար** Տուրովիցինին .... *(Տոլ., էջ 358):*

ՔԹԱԿՈՂՄ, գ. **Սուր ծայր ունեցող, օդային և ջրային փոխադրամիջոցների առջևի մասը:** .... Ցույց տվեց օդանավի **քթակողմը** *(Սուր., էջ 320):*

ՔԹԱՊԱՐԿ, գ. **Որոշ անասունների քթամասին (դունչին) հագցվող պարկ:** Տե՛ս ԱՂԲԱԽԱՐՈՒՅԿ -ի օրինակը:

ՔԹԱՏԱԿ, գ. **Քթի ներքևի մասը:** Դերենիկը տրորեց **քթատակը,** որ սրբի խուտուտ տվող հիմարավուն ժպիտը .... *(Կայարան, 2015, թ. 4):*

ՔԾՆԱՐՇԱՎ, գ. **Քծնելու՝ շողոքորթելու համար արվող արշավ**: Ի տարբերություն հանուն կոչումների ու մեդալների **քծնարշավ** սկսած բազմաթիվ մտավորականների.... *(Հմ՛ց, aravot.am):*

ՔՄԾԻԾԱՂՈՏ, ած. **Փոքր-ինչ քմծիծաղ պարունակող, քըմծիծաղով:** Անհայտ բանաստեղծը քնքշանքով նայում էր Կոստյա Ռոտիկովին՝ **քմծիծաղոտ** և սրամիտ .... *(ԿՎ, էջ 68):*

ՔՆԱՓԱԽ, ած. **Քունը փախած՝ քնաթաթախ մարդուն հատուկ**: .... Տաղավարից տղամարդկանց ձայներ են լսվում, քնկոտ ձայներ, **քնափախ** ձայներ....*(ՎՍ, էջ 96):*

ՔՆԿՈՏԻԿ, ած. (նվազափղքշ.) **Արտակարգ շատ քնել սիրող**: Հատկապես շատ էր մեզ զվարծացնում մի **քնկոտիկ,** որի մեջքին ասես խարանված էր սպիտակ բիծ *(Դար., էջ 121):*

ՔՆՆԱՀԱՅԱՑ, ած. **Քնող հայացքով**: .... Այժմ **քննահայաց** դեմքը մոտեցրեց պատուհանին .... *(Վուլֆ, էջ 20)*:

ՔՆՆԱՐԿՎԵԼԻՔ, ած. գ. **Այն, ինչ-որ պիտի քննարկվի, քննարկելու նյութը:** .... Այսօրվա **քննարկվելիքը** հենց Մզուզի կապ ունի .... *(Սև., էջ 76):*

ՔՆՔՇԱՃԵՐՄԱԿ, ած. **Քնքուշ և ճերմակ**: Մի **քնքշաճերմակ** ամպ միանգամից// արձակեց կայծակե գոտին ու փուլ եկավ սարի կրծքին *(ՎՀ², էջ 313):*

ՔՈԹՈՒԿԱՑՈՒ, ած. (փխբ.) **Կենսունակ ծեր:** Նախահավս էլ նույն քոքուբուսն է, նույն բունը, նույն **քոթուկացուն** .... *(Նիկ., էջ 56):*

ՔՈԼՈՒՏ, գ. **Քոլերով ծածկված տարածք:** Նրա քայլերից անհանգստացած**, քոլուտի** խոզանից բարձրացավ մի հղի գայլ *(Շոլ., էջ 372):*

ՔՈՂԱՆԵՐԿՎԵԼ, չբ. **Այնպիսի ներկով ներկվել՝ պատել, որ քողարկվի՝ անտեսանելի՝ դժվար տեսանելի դառնա:** Դրանց հետևից երևաց **քողաներկված** դրված էր գծանավի վիթխարի զանգվածը *(Յակ., էջ 547):*

ՔՈՐՈՑԱՅԻՆ, ած. **Քորոցի միջոցով կատարվող: Քորոցային** սրսկում *(Յակ., էջ 604):*

ՔՍԱՆՅՈՒԹ, գ. **Քսելու նյութ՝ շփումը նվազեցնելու համար:** ….Ստանում էր կերոսինի, **քսանյութերի** , և այլ նյութերի արտադրանք…. *(ՋՔ, էջ 61):*

ՔՎԵԱԱՊԱՀՈՎՈՒՄ, գ. **Քվե ապահովելը:** Իշխանական ուժերի **քվեապահովումը** որոշ շրջաններում ուղղակի ամոթալի է *(Հեռ., 5-րդ ալիք, 08.10.2021):*

ՔՐԹՄՆՋԱՆ, ած., **Քրթմնջացող, քրթմնջյունի նման**: ... Երրորդ օրը առավոտյան թեյ խմելիս հանկարծ զարմանքով լսեցի ծանոթ **քրթմնջան** ձայնը *(Դար., էջ 183):*

ՔՐՏՆԱԿԱԹԻԼ, գ. **Քրտինքի կաթիլ**: Դաղող **քրտնակաթիլները** հովացնում էին ճակատը *(ՋՀ, էջ 401)*:

ՔՐՏՆԱՀԱՏԻԿ, գ. **Քրտինքի հատիկ:** Տե՛ս ԱՄՐԱՀԱՏԻԿ-ի օրինակը:

ՔՐՏՆԱՀԵՏՔ, գ. **Քրտինքի հետք**: Մի սիգարեթ ծխեցի, զընեցի գրամեքենայի ստեղների վրա մատներիս թողած **քրտնահետքերը**… *(Դար., էջ 8):*

ՔՈՒՂԱՈՏ, ած. **Քուղի նման՝ բարակ ոտքեր ունեցող, լարաոտ**: Առաջինը հայտնվեցին նողկալի տեսքով արարածներ, այսպես կոչված **քուղաոտ** կարիճները .... *(Դար., էջ 44):*

Օ

ՕԳՆԱՇՌԱՅԼ, ած. **Շռայլ՝ օգնություն տալու՝ օգնելու գործընթացում:** Մի վերջին անգամ ես քեզ ձեռք պիտի մեկնեմ, **օգնաշռայլ** մեծ ձեռքը քո Մոր, որն ուզում է քեզ ետ առնել իր գիրկը և փրկել կորստից *(XX դար, էջ 239):*

ՕԳՏԱՊԱՇՏ, գ. **Շահ, եկամուտ պաշտող**: …. Մարդը միշտ դատապարտված է կործանման, քանի դեռ կան **օգտապաշտներ**, ճղճիմ ու խորամանկ չարագործներ…. *(Ազն., էջ 148):*

ՕԹԵՎԱՆԱԶՈՒՐԿ, ած., գ. **Օթևան՝ գիշերելու՝ գիշերը մնալու տեղ չունեցող (անձ):** …. Հազարավոր **օթևանազուրկներ** հեղեղել էին գիշերօթիկ տները …. *(Յակ., էջ 152):*

ՕՁԱԹԵԼ, գ. **Օձի նմանվող թել:** Պահանջս կարմիր **օձաթելի** նման լողում էր ինտերնետի օվկիանոսում *(Կայարան, 2015, թ. 4):*

ՕՁԱՊԱՏԿԵՐ, ած., **Օձ պատկերող**: Տանը մատի արծաթյան գավաթ կա՝ ոտքն **օձապատկեր** նախշող … *(ԱԻՊ[1], էջ 16):*

ՕՂԱԿԱՀՅՈՒՍՎԱԾՔ, գ. (արվ.): **Օղակաձև հյուսվածք:** Տե՛ս ԱՆԿՅՈՒՆԱՎԱՆԴԱԿ-ի օրինակը:

ՕՂԱՆԻՍՏ, գ. (գղտնտ.): Բացատրությունը օրինակում: **Օղանիստ** է կոչվում այն ամենակարճ պտղագոյացումը, որն ունի 0,5-2,5 սմ, երկարություն և տերևավարդակ՝ բաղկացած սովորաբար 2-3, երբեմն՝ 8-10 տերևներից (*Սաֆ., էջ 10*):

ՕՇԻՆԴՐԱԽԱՌՆ, ած. **Օշինդրի հետ խառնած, կեսը օշինդր խառնած:** Քրտինքի, ձիու թրիքի և մեզի հոտը խառնվել են տափաստանային **օշինդրախառն** խոտի թեթև բույրի հետ *(Շոլ., էջ 159):*

ՕՇՈՇԱՅԻՆ, ած. **Օշոշի՝ երիցուկի նման:** …. Շատ խոժոռ տեսք ունեին կանանց խիտ լաչակների **օշոշային** դաշտի ետևում խմբված տղամարդիկ *(Շոլ., էջ 349):*

ՕՊԱԼԵ, ած. **Այստեղ՝ օպալի՝ արևակնի, արևաքարի, ծիածանաքարի գույնի՝ կաթնագույն կապույտ:** Այստեղից ես դիտել

եմ արևի մայրամուտը, ... **օպալե** երկինքը և նրա անդրադարձը ջրի մեջ ... *(Վագ., էջ 330):*

ՕՍՄԱՆԱՀԱՅ, գ. **Օսմանյան կայսրությունում ծնված հայ**: Երեք եղբայրներից ավագը՝ Գալուստը ծնվել է ....Օսմանյան կայսրության մայրաքաղաք Ստամբուլում, **օսմանահայ** հարուստ ընտանիքում *(ՋՔ, էջ 3):*

ՕՎԿԻԱՆՈՍԱԲՆԱԿ, գ., ած. **Օվկիանոսում բնակվող:** Պրոմեթևսը ազգակցական կապերի մեջ է օվկիանոսի և **օվկիանոսաբնակների** հետ *(Շախ., էջ 279):*

ՕՏԱՐԱՑԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Օտարացած վիճակ:** Ուղևորության առաջին պոռթկումը աննկատելիորեն անցավ, տեղը զիջելով բնական **օտարացածության** *(Բեկ., էջ 21):*

ՕՐԱՏԵՎ, ած. **Օրվա տևողությունունեցող**: Տե՛ս ԹԻԹԵՌԱՅԻՆ-ի օրինակը:

Ֆ

ՖԻԼՏՐԱՄԱՄԼԻՉ, գ. (մսնգ.): **Պինդ և հեղուկ զանգվածները առանձնացնող սարք:** Սարքը բաղկացած է .... բարձող մասից, որ բաղկացած է կարգավորվող պլունժերային առաջին պոմպից ...., թիթեղավոր **ֆիլտրամամլիչից** *(Դասագիրք, էջ 193)*:

ՖԻՏՈՀՆԱՐՔ, գ. (գոտնտ.): **Բույսերի, բուսատեսակների խնամքի համար կատարվող միջոցառումներ:** Բարձրորակ խաղող ստանալը կախված է բազմաթիվ գործոններից՝ խաղողի տեսակից, բնակլիմայական պայմաններից, **ֆիտոհնարքներից,** հողի մշակումից, ջրելու քանակից .... *(Դասագիրք, էջ 11):*

ՖԻՐՄԱՅԱՏԵՐ, գ. **Ֆիրմայի տեր:** - Ինչ-որ **«ֆիրմայատերեր»** են **....** *(Կլ., էջ 39):*

ՖՈՍՖՈՐԱԹԵՎ, ած. **Ֆոսֆորի նման խավարում փայլող թևերով**: ... Քայլել էին ծխախոտի տերևների տակով՝ **ֆոսֆորաթթ** մժղուկների ու աստղանախշ թիթեռների միջով *(ԱԻՊ[1], էջ 218):*

ՖՈՏՈԽՈՇՈՐԱՑՈՒՑԻՉ, գ. **Ֆոտոնկարները խոշորացնող սարք:** Դա նշանակում էր, որ Միշան մտադրվել է փող ճարել: Իսկ եթե չհաջողվի՝ խմիչքի տալ պետական արտասահմանյան **ֆոտոխոշորացուցիչը** *(Դով., էջ 139):*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. ԳՐՔԵՐ

XX դար XX դարի արտասահմանյան դրամատուրգիա, 2 հատոր, Եր., ԵՊՀ հրատ, 1986:

ԱԱ Ավստրիական արձակ, կազմ. Ա. Առաքելյան, Եր., Անտարես, 2014:

ԱԳ Արմեն Գասպարյան, Կովկասի արքան, ռուս. թարգմ.՝ Դավիթ Սամվելյան, Եր., Էդիթ Պրինթ, 2020:

Ազն. Շառլ Ազնավուր, Քանի սիրտս բաբախում է, թարգմ.՝ Սամվել Գասպարյան, Եր., New mag, 2020:

Աթք. Աթքինսըն Ք., Թանգարանի հետնաբեմում, Եր., Դարակ, 2020:

ԱԻՊ Արդի իսպանալեզու պատմվածք, հ. 1, թարգմ.՝ Կ. Չոբանյան, Եր., Գրական էտալոն, 2011:

ԱԿ Ալբեր Կամյու, Ընդվզող մարդը, թարգմ.՝ Աշոտ Ալեքսանյան, Եր., Անտարես, 2022:

ԱՄ Անդրե Մորուա, Փարիզ, ռուս. թարգմ.՝ Արամայիս Սարգսյան, Եր., Սովետական գրող, 1976:

Անգլ. Անգլ. Մարիա Անխելս, Արամի հուշատետրը, թարգմ.՝ Գր. Ջանիկյան, Եր., ԱՕԿՍ, 2008:

Բակուր Բակուր, Նեռը իմ մեջ, Եր., ՀԳՄ հրատ., 2010:

Բեեկ. Բեեկման Վ., Տրանզիտային ուղևորը, թարգմ.՝ Ե. Մասումյան, Եր, Սովետ. գրող, 1976:

ԳՄ, ՎԹ Մարտիրոսյան Գ., Թոռչյան Վ., Պոմիդորի մշակությունը ջերմատան պայմաններում, Եր., Ոսկան Երևանցի, 2009:

գուս. Աշ[1] Գուսան Աշոտ, Սիրո կրակներ, Եր., Հայաստան, 1971:

գուս. Աշ[2] Գուսան Աշոտ, Ծովաստղիկս, Եր., Սովետ. գրող, 1982:

գուս. Աշ[3] Գուսան Աշոտ, Լեռները կանչում են, Սովետ. գրող, 1988:

գուս. Աշ[4] Գուսան Աշոտ, Հավերժություն, Եր., Գրաբեր, 2010:

ԳՋ Գևորգ Ջահուկյան, Բանաստեղծական գիրք, Եր., Ոսկան Երևանցի, 2001:

Դասագիրք Կազումով Ն. Բ., Կազումյան Կ. Ն., Սուքոյան Մ. Ռ., Հայաստանի խաղողի և պտղա-հատապտղային գինիների տեխնոլոգիա, Եր., 2016:

Դար. Դարբել Ջ., Ուղեբեռը գազանանոցն է, թարգմ.՝ Ջ. Ղազարյան, Եր., Սովետ. գրող, 1979:

ԴԳ Դենիել Գոուլման, Հուզական ինտելեկտ, անգլ. թարգմ.՝ Լիլիթ Հայրապետյան, Եր., Զանգակ, 2020:

Դով. Դովլաթով Ս., Կոմպրոմիս, Արգելոց, թարգմ.՝ Ն. Աթաբեկյան, Եր., «Հայաստան» հրատ., 2011:

ԹՎ Թորնթրն Վայլդեր, Սուրբ Լուիս արքայի կամուրջը, թարգմ.՝ Արտաշես Էմին, Եր., Անտարես, 2021:

Ժիոնո Ժիոնո Ժ., Հուսարը տանիքի վրա, թարգմ.՝ Լիլիթ Գասպարյան, Եր., Անտարես, 2013:

Լեմ Լեմ Ս., Սոլարիս, թարգմ.՝ Մ. Գրոխոլսկա, Եր., Անտարես, 2014:

Կայ. Կայոլի Լուկո, «Մեսսի» Լեգենդ դարձած տղայի պատմությունը, թարգմ.՝ Լ. Զաքարյան, Եր., New mag, 2019:

Կլ. Կլաուզվեր Ռայմոնդ, Պտուտակաձև սանդուղք, թարգմ.՝ Է Մասումյան, Եր., Սովետ. գրող, 1983:

Կոելյու Կոելյու Պ., Հիպի, թարգմ.՝ Աննա Մարության, Եր., Անտարես, 2018:

Կունդերա Կունդերա Մ., Դանդաղություն, թարգմ.՝ Շուշանիկ Թամրազյան, Եր., Անտարես, 2020:

ԿՎ Կոնստանսին Վագինով, Այծերգություն, թարգմ.՝ Վարդան Ֆերեշեթյան, Եր., Ակտուալ արվեստ, 2018:

Հակ. Հակոբյան Հրավարդ, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ, Եր., Խորհրդային գրող, 1989:

Հակ., Սիմ., Հակոբյան Թ. Խ., Սիմոնյան Ա. Դ., Երևան 2750, Եր., Հայաստան, 1968:

Հանդքե[1] Հանդքե Պ., Դարպասապահի վախը տասնմեկմետրանոցի ժամանակ, թարգմ.՝ Կարլեն Մատինյան, Եր., Անտարես, 2020:

Հանդքե[2] Հանդքե Պ., Երկրորդ սուրը. մայիսյան պատմություն, թարգմ.՝ Կարլեն Մատինյան, Եր., Անտարես, 2022։
Մել. Մելքոնյան Լ. Մ., Կենսաչափություն, Եր., ՀՊԱՀ, 2008։
Մով[1] Մովսիսյան Արտակ, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգը, Եր., ԵՊՀ հրատ., 2003։
Մով[2] Մովսիսյան Արտակ, Հայկական մեհենագրություն, Եր., ԵՊՀ հրատ., 2003։
Մոր. Մորուա Անդրե, Երեք դրամա, թարգմ.՝ Ա. Ղուկասյան, Եր., «Հայաստան» հրատ., 1965։
Յակ. Յակովլև Ն.Ն., Ֆրանկլին Ռուզվելտ. մարդը և քաղաքագետը, Եր., «Հայաստան» հրատ., 1972։
Նիկ. Նիկողոսյան Գոհար, Լրջացող խաղ, Եր., ՀԳՄ հրատ., 2012։
Շախ. Շախնովիչ, Փիլիսոփայության ծագումը և աթեիզմը, թարգմ.՝ Հ. Մարտիրոսյան, Եր., Հայաստան, 1979։
Շոլ. Շոլոխով Մ., Հերկած խոպան, գիրք առաջին, թարգմ.՝ և խմբագիր՝ Ղ. Կոմունի, Եր. Հայպետհրատ, 1950։
Ուայլդ Ուայլդ Օսկար, Դորիան Գրեյի դիմանկարը, թարգմ.՝ Ռ. Խաչատրյան, Եր., Էդիթ Պրինտ, 2014։
Ուելբեք Ուելբեք Միշել, Հնազանդություն, թարգմ.՝ Դ. Միրզոյան, Եր., Անտարես, 2016։
Պալ. Պալացիո Ռ. Ջ., Հրաշքը, Եր., Փրինթինֆո, 2012։
Պար. Պարանդովսկի Յան, Պետրարկա, Եր., Սովետ. գրող, 1979։
Պետ. Պետեր Էդել, Երբ խոսքը վերաբերում է կյանքին (Իմ պատմությունը), թարգմ.՝ Էդ. Սարդարյան, Եր., Հայաստան, 1987։
ՋՀ Ջոզեֆ Հելլը, Ծուղակ 22, թարգմ.՝ Արամ Արսենյան, Եր., «Ջանգակ», 2019։
ՋՔ Ջոնաթան Քոնլին, Պարոն հինգ տոկոս, անգլ. թարգմ.՝ Սիլվա Հովակիմյան, Եր., Էդիթ Պրինթ, 2019։
Ռուշդի Ռուշդի Ս., Ամոթ, թարգմ.՝ Լուսինե Կարապետյան, Եր., Անտարես, 2020։
Սևադա Սևադա Ս., Կախվածություն, Եր., «Էջ» հրատ., 2019։

Սարմեն Սարմեն, Կարոտի կանչ, Եր., Լույս, 2001:
Սաֆ. Սաֆարյան Խ. Է., Պտղաբուծություն բոլորի համար, Եր., Լույս, 1991:
ՍԹ Թամոյան Ս. Ջ., Շրջակա միջավայրի պահպանություն և ագրոէկոլոգիա, Եր., ՀԱԱՀ, 2018:
Սուր. Սուրենյան Կ., Ճիշտը կյանքն է, Եր., «Ամրոց գրուպ» հրատ., 2001:
ՎԱ Վարդան Աթոյան, Գարեգին Նժդեհի ուսմունքը. հավիտենարժեք դասեր, Եր., «Օր-Դար», 2011:
Վազ. Վազներ Լ., Գրիգորովիչ Ն., Այվազովսկու կյանքը, թարգմ.՝ Մ. Թերզյան, Եր., 2018:
ՎՀ[1] Վարդան Հակոբյան, Նշանագրություն լուսնի վրա, Եր., Անտարես, 2016:
ՎՀ[2] Վարդան Հակոբյան, Ընտրանի, Եր., Անտարես, 2017:
Վուլֆ Վուլֆ Վ., Միսիս Դելոուեյ, թարգմ.՝ Վահե Արսեն, Եր., «Զանգակ», 2021:
ՎՍ Վանո Սիրադեղյան, Դուռը, Եր., Վանո Սիրադեղյան հիմնադրամ, 2021:
Տան. Տանանյան Է., Հաղորդակցման հմտություններ, Մարդաճանաչողության արվեստը, Եր., հեղ. հրատ., 2012:
Տոլ. Տոլստոյ Լ.Ն., Երկերի ժող. 10 հատորով, հատոր 8. Աննա Կարենինա, երկրորդ հրատ. Եր., Հայպետհրատ, 1980:
Տոն.[1] Թադևոս Տոնոյան, Սերմաստղ, Եր., Նաիրի, 1994:
Տոն.[2] Թադևոս Տոնոյան, Երկրից հետո, Եր., Զանգակ-97, 2002:
Տոն.[3] Թադևոս Տոնոյան, Երկնքից առաջ, Եր., Աղբյուր, 2010:
Տոն.[4] Թադևոս Տոնոյան, Սահմանումներ Հայաստանի մասին, Եր., Աղբյուր, 2015:
Փափ. Փափազյան Մարիա, Հուշերի թևերով, Եր., Սովետ. գրող, 1978:
Օրուել Օրուել Ջորջ, Անասնաֆերմա, թարգմ.՝ Ա. Էմին, Եր., Անտարես, 2013:
Ֆրիշ Ֆրիշ Մ., Ենթադրենք անունս Գանթենբայն է, թարգմ.՝ Կարլեն Մատինյան, Եր., Անտարես, 2020:

Բ. Ամսագրեր և հանդեսներ

Կայարան-Կայարան
ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

Գ. Լրագրեր

ԳԹ – Գրական թերթ
Իր. – Իրատես
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ՉԻ - Չորրորդ Իշխանություն
Ազգ - Ազգ

Դ. Այլ աղբյուրներ

Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հմց (համացանց):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր.,Լույս, 1973:
3. Էլոյան Ս. Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Իսպիրյան Մ. Ս., Մարզանունների բացատրական բառարան, Եր, Հայաստան, 1984:
6. Խլղաթյան Ֆ. Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան,1982:
7. Ղարիբյան Ա. Ս., Ռուս-հայերեն բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1982:
8. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ պետ.հրատ.,հհ. 1-3, 1944, հ.4, 1945:
9. Մեյթիխանյան Փ. Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
10. Մեսրոպեան Հ., Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրէալ, 2000:
11. Նոր բառեր. Ա պրակ (Գալստյան Ա. Ս., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե.), Եր., 2015:
12. Նոր բառեր. Բ պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե.), Եր., 2016:
13. Նոր բառեր. Գ պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ.), Եր., 2017:

14. Նոր բառեր. Դ պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հակոբյան Ֆ. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սահակյան Ա. Գ., Սահինյան Լ. Ե.), Եր., 2018:
15. Նոր բառեր. Ե պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հակոբյան Ֆ. Ա., Հովսեփյան Գ. Կ., Մուշեղյան Ա. Հ., Սահակյան Ա. Գ.,), Եր., 2020:
16. Նոր բառեր. Զ պրակ (Գալստյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա., Հակոբյան Ֆ. Ա., Հովսեփյան Գ. Կ., Սարգսյան Ն. Մ.), Եր., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021:
17. Չիլինգարյան Դ. Ս., Երզնկյան Լ. Ե., Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., 2015:
18. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Հացագործյան Զ.Ա., Դարբինյան Ա.Հ., Հովումյան Հ. Գ., Սրվանձտյան Գ. Հ.), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
19. Սաքապետոյան Ռ. Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2000:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ…… 5
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ…… 6
ԲԱՌԱՑԱՆԿ…… 8
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ…… 250
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ……... 255

Նշումների համար

Գալստյան Անահիտ Սերգեյի, Գալստյան Սերգեյ Աշոտի
Հովսեփյան Գայանե Կառլենի, Մարգարյան Ինգա Աշոտի,
Մկրտումյան Արմինե Արամայիսի, Սարգսյան Նռանե Մանվելի

ՆՈՐ ԲԱՌԵՐ

Է պրակ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Հ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

Հրատ. պատվեր № 1061
Ստորագրված է տպագրության՝
Չափսը՝ 60x84 1/16 տպագրական մամուլ։
Տպաքանակը՝ 100 օրինակ։
Գինը՝ պայմանագրային։

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։